

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlb.am/>

E-mail: info@artsakhlb.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlb.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԿԵՎԻՆԱՆ ՈՊՅԱՆՆԻ ՂԱԵՈՎՏԱԳԻՌ

ՈՎԱՂՎԱՅԺՎԱՏԱԳՆՈՂՈՒՄԻ ՎՂՏՈՒՄԵՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ԿՆՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՆՏԱՐԱՆՆԵՐԻ
ՎՂՏՈՒՄԻ ԿՆՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՆՏԱՐԱՆՆԵՐԻ
ԻՎՏՈՒՄԻՆԵՐԻ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԴԱՎԻԹ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՅՐԱՄ ԴԱՎԻԹԻ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ

ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ

ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Երևան

ԵՊՀ հրատարակչություն

2013

ՀՏԴ 347.72(479.25)

ԳՍԴ 67.99(2Դ)3

Ա 791

***Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը***

Գրախոսողներ՝

***իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյան,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Հայկյանց***

Ավետիսյան Վահրամ Դավիթի

Ա 791 Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը
Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերություն-
ների օրինակով) / Վ.Դ. Ավետիսյան–Եր.: ԵՊՀ հրատ., 2013– 448 էջ:

Մենագրությունում, տնտեսական ընկերությունների օրինակով, պարզաբանվում են կորպորատիվ իրավահարաբերությունների էությունը, կորպորատիվ արժեթղթերի, կորպորացիայի մասնակցի իրավունքների, կորպորացիայի կառավարման, կորպորացիայի հիմնադրման, վերակազմակերպման և լուծարման կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում առկա հիմնախնդիրները, և ներկայացվում են դրանց լուծման ուղիները:

Աշխատանքը շարադրված է ճշված հիմնախնդիրներին վերաբերող դատական պրակտիկայի, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա օրենսդրության, միջազգային իրավական ակտերի և Հայաստանի Հանրապետությունում դրանց գործնական կիրառության ուսումնասիրման հիման վրա:

Այն նախատեսված է իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, փաստաբանների, դատավորների, իրավաբանական անձանց կառավարման գործընթացում ներգրավված սուբյեկտների, ինչպես նաև կորպորատիվ իրավահարաբերություններին առնչվող քաղաքացիների ու կազմակերպությունների համար:

ՀՏԴ 347.72(479.25)

ԳՍԴ 67.99(2Դ)3

ISBN 978-5-8084-1817-2

© Ավետիսյան Վ.Դ., 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ ԱՈՒԱԾԻՆ	
Կորպորատիվ իրավահարաբերությունների էությունը	9
§ 1.1. Կորպորատիվ իրավահարաբերությունների հասկացությունը, սկզբունքները և առանձնահատկությունները	9
§ 1.2. Կորպորատիվ տիպի իրավաբանական անձինք.....	41
§ 1.3. Հսկող և հսկվող կորպորացիաները և դրանց էությունը ..	86
§ 1.4. Կորպորացիայի հիմնադրման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները	103
§ 1.5. Կորպորացիայի դադարման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները	129
1.5.1. Կորպորացիայի վերակազմակերպումը	130
1.5.2. Կորպորացիայի լուծարումը.....	159
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
Կորպորատիվ արժեթղթերը և կորպորացիայի մասնակցի իրավունքները	180
§ 2.1. Կորպորատիվ արժեթղթերի ընդհանուր բնութագիրը.....	180
§ 2.2. Կորպորացիայի մասնակցի կորպորատիվ իրավունքների հասկացությունը և կորպորացիայի մասնակցի բացարձակ իրավունքները	212
2.2.1. Կորպորացիայի կառավարմանը մասնակցելու իրավունքը	221
2.2.2. Կորպորացիայի գործունեության մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը	228
2.2.3. Շահույթի բաշխմանը մասնակցության իրավունքը...237	
2.2.4. Կորպորացիայի լուծարման դեպքում ընկերության գույքից որոշակի բաժին ստանալու իրավունքը	247
§ 2.3. Կորպորացիայի մասնակցի՝ կորպորացիայի կազմակերպիչի իրավական ձևով պայմանավորված իրավունքները	252
2.3.1. Բաժնետիրական ընկերության տեսակով պայմանավորված իրավունքները	253
2.3.2. Արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքները	263

2.3.3. Այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքը	269
2.3.4. Ցանկացած պահի ընկերությունից դուրս գալու մասնակցի իրավունքը	273
§ 2.4. Կորպորացիայի մասնակցի՝ որոշակի հանգամանքների ի հայտ գալով պայմանավորված իրավունքները	277
2.4.1. Որոշակի քանակությամբ բաժնետոմսերի փաթեթ կուտակելու արդյունքում բաժնետիրոջ մոտ ծագող իրավունքները	278
2.4.2. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման մասին որոշումներ ընդունելու, ընկերության կողմից խոշոր գործարք կնքելու կամ ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու արդյունքում բաժնետիրոջ՝ ծագող իրավունքները	282
2.4.3. Ընկերության տեղաբաշխած բաժնետոմսերը ձեռքբերելիս բաժնետիրոջ մոտ ծագող իրավունքները	292
2.4.4. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին ընկերությունից հեռացնելու պահանջի իրավունքը.....	299
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
Կորպորատիվ իրավաբանական անձանց կառավարման մարմինները և դրանց տեսակները	303
§ 3.1. Կորպորատիվ կառավարման ընդհանուր բնութագիրը և կառավարման մարմինների հասկացությունը .	303
§ 3.2. Ընդհանուր ժողովը որպես կառավարման բարձրագույն մարմին	334
§ 3.3. Խորհուրդը որպես ընդհանուր ղեկավարումն իրականացնող մարմին	383
§ 3.4. Գործադիրը որպես ընթացիկ ղեկավարումն իրականացնող մարմին	407
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	
Իրավունքի չարաշահման առանձնահատկությունները կորպորատիվ իրավահարաբերություններում	426
Summary	440
Резюме	443

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո հասարակությունը կանգնեց հասարակական գիտակցության բազմաթիվ արժեքների վերաինաստավորման և փոփոխման փաստի առջև: Շուկայական տնտեսության անցումը պահանջեց մշակել նոր տնտեսական համակարգերի սպասարկման համար անհրաժեշտ իրավական հասկացություններ, կառուցակարգեր և մեխանիզմներ, որոնց շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կորպորացիաները և կորպորատիվ իրավունքը:

Քաղաքացիական շրջանառության մեջ քաղաքացիների հավաքական մասնակցության հիմնական ձևն իրավաբանական անձի կառուցակարգն է, իսկ ժամանակակից հասարակության կյանքը՝ թե մասնավոր և թե հանրային ոլորտում, անհնարին է պատկերացնել առանց մարդկանց տարատեսակ միավորումների, որոնք ստեղծվում են դրա մասնակիցների կողմից այս կամ այն նպատակին հասնելու համար:

Արդի շուկայական տնտեսությանը հատուկ կազմակերպական հարաբերություններն սկզբունքորեն տարբերվում են խորհրդային ժամանակաշրջանի տնտեսության կազմակերպական հարաբերություններից: Ներկայումս քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, ղեկավարվելով հասարակական հարաբերությունների կարգավորման մասնավոր և հանրային մեթոդներով, ելնելով իրենց մասնավոր շահերից, կայացնում են կորպորացիայի ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումներ, կորպորացիայի կառավարման մարմիններն ընդունում և ապահովում են կորպորատիվ որոշումների իրականացումը, որոշում են համապատասխան կորպորացիայի զարգացման ռազմավարությունը, բաշխում են շահույթը կամ ստեղծում են հավելյալ կառուցակարգեր իրենց սոցիալական, մշակութային կամ ոչ առևտրային շահերի իրացման համար, այսինքն՝ կազմակերպում և կառավարում են կորպորա-

ցիայի գործունեությունը քաղաքացիաիրավական նորացված սկզբունքներով:

Ներկայումս կորպորատիվ կառավարումը համարվում է տնտեսական արդյունավետության և աճի բարելավման, ինչպես նաև ներդրողների վստահության ամրապնդման կարևոր տարր: Արդյունավետ կորպորատիվ կառավարումը պետք է խթանի կորպորացիայի կառավարման մարմինների ձգտումը՝ հասնելու ընկերության և դրա հիմնադիրների շահերին համապատասխանող նպատակներին, ինչպես նաև նպաստելու արդյունավետ վերահսկողությանը:

Պատշաճ կորպորատիվ կառավարումն ընկերություններին հնարավորություն է տալիս բարձրացնել իրենց մրցունակությունը, տնտեսական գործունեության արդյունավետությունը և աճը, ներգրավել տնտեսական աճի համար անհրաժեշտ ֆինանսներ, ինչպես նաև նպաստել ընկերության գործունեության մեջ օրինական շահ ունեցող շահառուների պաշտպանությանը և նրանց հետ համագործակցությանը:

Նոր իրականությունը որակապես նոր իրողության առջև է կանգնեցրել նաև քաղաքացիական իրավունքի գիտությանը, ինչը թույլ է տալիս արձանագրել քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակի ընդլայնման փաստը և կորպորատիվ իրավահարաբերությունները բնութագրել որպես քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն տեսակ՝ համալիր իրավահարաբերություններ, որոնք հասարակական հարաբերությունների կարգավորման մասնավոր և հանրային մեթոդների հիման վրա կարգավորում են գույքային և դրանց սերտորեն առնչվող ոչ գույքային բնույթի բարիքներին վերաբերող կազմակերպական ավարչական հարաբերություններ:

Ինչպես ցույց տվեց շուկայական հարաբերություններ մուտք գործող Հայաստանի Հանրապետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունը, սոցիալ-տնտեսական նոր հա-

րաբերություններին անցման դժվարին պայմաններում հապշտապ և մակերեսորեն կատարված օրենսդրական փոփոխությունները, տարբեր իրավական համակարգերի անհարկի և գրեթե մեխանիկական ընդօրինակման արդյունքում ձևավորված օրենսդրությունն ի զորու չէ համալիր կարգավորելու տնտեսական հարաբերությունները, ապահովելու տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ու շահերի պաշտպանությունը¹:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մի շարք կորպորատիվ հարաբերությունների անկատար կարգավորումը, խոշոր բաժնետերերի և ընկերության շահերի միջև հստակ սահմանագծի բացակայությունը, օտարերկրյա իրավունքի՝ առանց ազգային առանձնահատկությունների հաշվառման փոխառումը մեր իրականությունում ստեղծել են մի իրավիճակ, երբ խոշոր բաժնետերերն առանց որևէ հիմնավորման կարող են ընկերության ֆինանսական միջոցների, ինչպես նաև բաժնետերերին հասանելիք շահութաբաժինների հաշվին ազատվել փոքրամասնություն կազմող բաժնետերերից (մասնակիցներից), տիրանալ նրանց շահութաբաժիններին և անարգել իրագործել կապիտալը մի քանի անհատների ձեռքում կենտրոնացնելու արատավոր երևույթը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ներկայումս անհրաժեշտ է վերախնայաբար և վերաարժեվորել կորպորատիվ իրավահարաբերությունների, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց, հսկող և հսկվող կորպորացիների, կորպորատիվ կառավարման դերն ու նշանակությունը, ապահովել կորպորացիայի մասնակցի իրավունքների պաշտպանությունը, լուծել այս ոլորտում զոյացած ինչպես տեսական, այնպես էլ գործնական հիմնահարցերը:

Նշված նկատառումներից ելնելով, սույն աշխատանքում ուսումնասիրման առարկա են դարձել կորպորատիվ հարաբե-

¹ Տե՛ս Բարսեղյան Տ. Կ. Գուլքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնախնդիրները, Երևան, 2006, էջ 5:

րությունների առանձնահատկությունները, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց ստեղծման, վերակազմակերպման և լուծարման ընթացքում ի հայտ եկող հիմնախնդիրները: Առանձնակի ուշադրություն է դարձվել կորպորատիվ արժեթղթերին, կորպորացիայի մասնակիցների իրավունքների իրականացման և պաշտպանության խնդիրներին, կորպորատիվ կառավարմանը, կառավարման մոդելներին և այլն:

Աշխատանքում կատարվում է վերը նշված հիմնախնդիրներին վերաբերող դատական պրակտիկայի վերլուծություն, օտարերկրյա պետությունների օրենսդրության և պրակտիկայի համեմատական վերլուծություն, ինչը թույլ է տվել բացահայտել այս ոլորտում Հայաստանի Հանրապետությունում առկա հիմնախնդիրները, ներկայացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության փոփոխման և դրա կիրառման պրակտիկայի կատարելագործման կոնկրետ առաջարկներ:

ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ

Կորպորատիվ իրավահարաբերությունների էությունը

§ 1.1. Կորպորատիվ իրավահարաբերությունների հասկացությունը, սկզբունքները և առանձնահատկությունները

Կորպորատիվ իրավունքն իրավագիտության նորագույն հիմնախնդիրներից մեկն է: Մինչև 20-րդ դարի 90-ական թվականները խորհրդային շրջանի իրավագետների կողմից ակտիվորեն քննարկվում էին արևմտյան գիտնականների համար անընդունելի կամ անհասկանալի այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք էին, օրինակ, օպերատիվ կառավարման կամ լրիվ տնտեսավարման իրավունքները: Արևմտյան իրավակարգում իր հերթին առկա էին բազմաթիվ ինստիտուտներ, որոնք անընդունելի կամ անհասկանալի էին խորհրդային իրավագետների համար, որոնց շարքին կարելի է դասել, օրինակ, կորպորացիաները կամ կորպորատիվ կառավարմանը վերաբերող հարցերը: Նման մոտեցումները հիմնականում պայմանավորված էին տարբեր տնտեսական համակարգերին բնորոշ առանձնահատկություններով, որոնց սպասարկման համար պահանջվում էր այս կամ այն իրավական հասկացությունը:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, երբ անցում կատարվեց շուկայական տնտեսությանը, պահանջվեց մշակել նոր տնտեսական համակարգն սպասարկելու համար անհրաժեշտ իրավական հասկացություններ, կառուցակարգեր և մեխանիզմներ, որոնց շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կորպորացիաները և կորպորատիվ իրավունքը:

Շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում տնտեսության մեջ կարևոր նշանակություն ձեռք բերեց քաղաքացիական իրավահարաբերությունները շուկայական տնտեսության պահանջներին համահունչ կարգավորելու հիմ-

ճախնդիրը: Այս ոլորտը կարգավորող օրենսդրությունը մշտապես զարգանում է, որի հետ մեկտեղ կատարելագործվում է նաև իրավակիրառ պրակտիկան: Արդյունքում՝ քաղաքացիաիրավական նորմերի կատարելագործման հարցում կարևոր դերակատարություն են ստացել դատարանների որոշումները²:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորման գործընթացում գտնվող շուկայական հարաբերությունների իրավակարգավորումը, 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի³ միջոցով, դրվեց որակական նոր մակարդակի վրա: Սակայն օրենսգրքի մոտ 14 տարվա կիրարկումը թույլ տվեց վեր հանել օրենսգրքում և դրա հիման վրա ընդունված հարակից օրենքներում առկա բազմաթիվ թերություններ ու բացեր, որոնց մի մասը թույլ չի տալիս հստակ արձանագրել քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հասարակական հարաբերությունների փաստացի շրջանակը, իսկ մյուս մասն էլ խոչընդոտում է շուկայական հարաբերությունների բնականոն զարգացման գործընթացը: Այդպիսի հիմնախնդիրների առատությամբ աչքի է ընկնում կորպորատիվ իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը⁴:

Մասնավոր իրավահարաբերությունների դուալիզմը բացառող մեկ օրենսգրքի և դրա հիման վրա ընդունված մի շարք օրենքների միջոցով, ըստ էության, փորձ կատարվեց կարգավորել ինչպես ֆիզիկական անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ առաջացող «առօրյա» կամ դասական քաղաքացիա-

² Стен Мкртумян А. Ю. Судебный прецедент в гражданском праве России и Армении, Ер., 2011, էջ 6:

³ ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.98:

⁴ Սույն ուսումնասիրության շրջանակներում այս ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրներն առավելապես քննարկվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և բաժնետիրական ընկերությունների մասին օրենսդրության հենքի վրա, քանի որ այդ ոլորտն օրենսդրորեն առավել մանրամասն կարգավորված բնագավառներից է, բաժնետիրական ընկերությունների օրինակով վեր հանված առկա խնդիրները և առաջարկվող լուծումները կիրառելի են նաև կորպորատիվ տիպի այլ իրավաբանական անձանց պարագայում ևս:

կան հարաբերությունները, այնպես էլ՝ գործարարական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ առաջացող հարաբերությունները: Արդյունքում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասով ամրագրվեց քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունների շրջանակը, մասնավորապես, սահմանվեց, որ քաղաքացիական օրենսդրությունը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները (այսուհետ՝ այլ իրավական ակտեր) սահմանում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգը, կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորություններ, ինչպես նաև այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ:

Քաղաքացիական օրենսգրքի և դրա հիման վրա ընդունված իրավաբանական անձանց տարատեսակ կազմակերպարավական ձևերի հետ կապված օրենքների կիրարկումն ու ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների շրջանակը վերը նշված նորմում ամբողջությամբ արտացոլված չէ: Մասնավորապես, քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվում է հասարակական հարաբերությունների մի ինքնուրույն խումբ, որոնք տեսական գրականության մեջ ստացել են կորպորատիվ իրավահարաբերություններ անվանումը: Իրավահարաբերություններ, որոնց շահառուները ոչ միայն մասնավոր անձինք են, այլև հանրությունը⁵:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 15-ի Կոլլիոֆերը և Մինարիկն ընդդեմ Չեխիայի վճիռը (application 32921/03, 28464/04):

«Կորպորատիվ իրավունք» եզրույթը հետխորհրդային պետությունների իրավագետների համար անընդունելի էր կամ անսովոր: Հեղինակները խուսափում էին վերը նշված եզրութաբանությունը պարունակող վերտառություններով աշխատություններ հրապարակելուց և փոխարենն օգտագործում էին առավել տարածված կամ սովորական եզրույթներ⁶: Հետագայում «կորպորատիվ իրավունք» եզրույթն սկսեց օգտագործվել ավելի հաճախ, մտավ իրավաբանական եզրութաբանության մեջ և սկսեց օգտագործվել տարատեսակ աշխատությունների վերտառություններում⁷, իսկ հետագայում՝ հետխորհրդային շրջանի այս կամ այն պետության օրենսդրությունում⁸:

Կորպորատիվ իրավահարաբերությունների էությունը հասկանալու և իրավունքի ճյուղային կառուցվածքում դրա տեղը որոշելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ է բովանդակում «կորպորացիա» եզրույթը՝ պատմական և ժամանակակից իմաստով:

Սույն աշխատության շրջանակներում Հայաստանում կորպորատիվ իրավունքի զարգացման պատմությանը վերաբերող հարցը մեր կողմից չի ուսումնասիրվել, քանի որ Հայաստանի Հանրապետությունում կորպորատիվ իրավահարաբերություններն ըստ էության սկսվել են ձևավորվել անկախացումից հետո, իսկ առաջին և երկրորդ հանրապետությունների օրոք գրեթե գոյություն չեն ունեցել: Հայաստանում առկա մասնավոր հարաբերությունները կարգավորող օրենսդրության բովանդակությունը հիմնականում պայմանավորված է եղել Ցարական Ռուսաստանի և Խորհրդային Ռուսաստանի օրենսդրության ուղղակի կամ անուղղակի գործողությամբ կամ կիրառությամբ⁹: Իսկ այդպի-

⁶ Տե՛ս, օրինակ՝ Кашанина Т. В. Хозяйственные общества и товарищества: правовое регулирование внутрифирменной деятельности. М. 1995:

⁷ Տե՛ս, օրինակ՝ Кашанина Т. В. Корпоративное право, М. 1999:

⁸ Այս խնդրին առավել մանրամասն կանդիդատնաճը սույն աշխատության հետագա շարադրանքում:

⁹ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Айкянц А. М., История развития частного права в Армении, Ереван, 2006, էջեր 176-226:

սիք ռուս իրավագետների կողմից մանրակրկիտ ուսումնասիրվել և տարբեր աշխատությունների ձևով հրապարակվել են¹⁰:

«Կորպորացիա» եզրույթը ծագել է լատիներեն «corpus habere» արտահայտությունից, որը հավաքական ձևով արտահայտում էր անձանց միավորումների իրավունքները¹¹:

Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների իրավական համակարգերում «կորպորացիա» եզրույթը միևնույն կերպ չի ընկալվում: Բազմաթիվ երկրներում այս հասկացությունն օրենսդրորեն բնորոշված չէ, և այդ եզրույթն օգտագործվում է հիմնականում տեսական և մասնագիտական գրականության մեջ: Բացի դրանից, «կորպորացիա» եզրույթն անգլո-սաքսոնական և մայրցամաքային իրավական համակարգերում ունի տարբեր բովանդակություն: Ներկայումս ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում «կորպորացիա» եզրույթն ընկալվում է լայն իմաստով և արտահայտում է որևէ միության ամբողջություն և դրա՝ իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսանալը: Առևտրային կորպորացիաներ ասելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում հասկանում են միայն այն կազմակերպությունները, որոնց բնորոշ են արժեթղթերի թողարկումը և դրանց ազատ վաճառքը: Կազմակերպությունների մյուս խումբը, որն արժեթղթեր չի թողարկում, կորպորացիաների շարքին չի դասվում, այլ դասվում է ինկորպորատիվ կազմակերպությունների շարքը¹²:

Ամերիկյան առևտրային կազմակերպություններն ըստ երկրանման են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

¹⁰ Սյդ մասին առավել մանրամասն տես՝ Долинская В. В. Акционерное право: Учебник, М., 1997, Лаптев В. В. Акционерное право, М., 1999, էջեր 4-14, Могилевский С. Д., Самойлов И. А. Корпорации в России: Правовой статус и основы деятельности, М., 2006, Кашанина Т. В., Частное право: Учебник, М., 2009 և այլն:

¹¹ Տե՛ս Покровский И. А., История римского права, М., 1917, էջ 75, Козлова Н. В. Понятие и сущность юридического лица. М., 2003, էջ 210:

¹² Տե՛ս Сыродоева О. Н. Проблемы юридической личности в законодательстве США // Правоведение. 1992, N 4, էջ 26:

ճախատեսված հաշվետու թողարկող ընկերություններին, որոնց կողմից թողարկված արժեթղթերը կարող են ցուցակվել որևէ կարգավորվող շուկայում:

Անգլիական օրենսդրությամբ «կորպորացիա» եզրույթն արտահայտում է իրավաբանական անձ հասկացությունը, որը բաժանվում է մի քանի անձանցից կազմված կորպորացիաների (corporations aggregate) և մեկ անձից կազմված կորպորացիաների (corporations sole): Առևտրային կորպորացիաներն անվանվում են կոմպանիաներ (company) և իրենց հերթին բաժանվում են հանրային և մասնավոր կորպորացիաների¹³:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը «կորպորացիա» եզրույթի հասկացությունը չի բանաձևում, այլ, ըստ էության, որպես այդ հասկացության հոմանիշ օգտագործում է «կազմակերպություն» եզրույթը: Սակայն ՀՀ օրենսդրության մեջ «կորպորացիա» եզրույթի առանձին դրսևորումները օգտագործվում են, օրինակ՝ «Անդրազգային կորպորացիաների մասին» կոնվենցիան, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքը¹⁴, որի 3-րդ հոդվածը տալիս է կորպորատիվ ֆոնդի հասկացությունը և այլն: Օտարերկրյա օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս մատնանշել այն հանգամանքը, որ վերջին շրջանում ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգրքի հիման վրա քաղաքացիական օրենսդրություն ձևավորած որոշ երկրներ փորձում են օրենսդրական ձևակերպում տալ կորպորատիվ իրավահարաբերություններին և բանաձևել կորպորատիվ կազմակերպությունների հասկացությունը: Օրինակ, ՌԴ քաղաքացիական օրենսգրքում 2012 թվականի դեկտեմբերի 30-ին կատարված փոփոխություններով կորպորատիվ հարաբերությունները բնորոշվում են որպես կորպորատիվ կազմակերպություններում մասնակցության կամ դրանց կառավարման

¹³ Ст'я Гражданское и торговое право капиталистических государств: Под ред. Е. А. Васильева. М. 1993, т. 84:

¹⁴ ՀՀՊՏ 2010/69 (803), 30.12.10:

հետ կապված հարաբերություններ (ՌԴ քաղ. օր. հոդվ. 1)¹⁵, Ուկրաինայի Հանրապետության տնտեսական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին կետը տալիս է կորպորատիվ իրավունքների հասկացությունը, այդպիսիք բնութագրելով որպես այն անձանց իրավունքները, որոնց բաժնեմասի չափը որոշվում է տնտեսական ընկերության կանոնադրական կապիտալում (գույքում) նրանց ունեցած մասնակցությամբ, որը ներառում է այդ անձի՝ տնտեսական ընկերության կառավարմանը մասնակցելու, տվյալ կազմակերպության շահույթից որոշակի մաս (դիվիդենդների) և ընկերության լուծարման դեպքում մնացած գույքից, օրենքով սահմանված կարգով, որոշակի մաս ստանալու, ինչպես նաև օրենքով և կանոնադրական փաստաթղթերով նախատեսված այլ իրավագործությունները¹⁶:

Տեսական գրականության մեջ «կորպորացիա» եզրույթն ընկալվում է լայն և նեղ իմաստներով. նեղ առումով կորպորացիա ասելով հասկացվում են միայն առևտրային, կորպորատիվ տիպի կազմակերպությունները, իսկ լայն առումով՝ ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպությունները¹⁷: Մենք «կորպորացիա» եզրույթն ընկալում ենք նեղ առումով, և այդ հենքի վրա էլ սույն աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվում են կորպորատիվ իրավահարաբերությունները¹⁸: Մենք կիսում ենք մայրցամաքային իրավական համակարգի երկրների այն տեսաբանների կարծիքը, ովքեր գտնում են, որ կորպորացիա եզրույթի ներքո ընկալվում են օրենսդրությամբ նախատեսված մասնավոր իրավունքի իրավաբանական

¹⁵ Տե՛ս <http://base.garant.ru/10164072/>:

¹⁶ Տե՛ս <http://www.yurist-online.com/uslugi/yuristam/kodeks/016/165.php>:

¹⁷ Տե՛ս Ломкин Д. В. Корпоративные отношения и предмет гражданско-правового регулирования // Законодательство, N 5, 2004, էջ 63:

¹⁸ Սույն աշխատանքի շրջանակներում առավել մանրակրկիտ ուսումնասիրության կենթարկվեն գործարարական գործունեության ոլորտում լայն տարածում գտած բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ կապված կորպորատիվ իրավահարաբերություններում առկա հիմնախնդիրները:

անձի բոլոր կազմակերպատիրական ձևերը՝ բաժնետիրական, սահմանափակ և լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունները, վստահության վրա հիմնված և լիակատար ընկերակցությունները, կոոպերատիվները, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների միությունները (ասոցիացիաներ, կոնցեռններ, հոլդինգներ և այլն)¹⁹:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձնացնել կորպորացիաներին բնութագրական հատկանիշներ, որոնց միաժամանակյա առկայությունն անհրաժեշտ է, որպեսզի կազմակերպությունը դիտվի որպես կորպորատիվ տիպի կազմակերպություն, մասնավորապես.

- կորպորացիա համարվելու համար կազմակերպությունը պետք է ունենա իրավաբանական անձի կարգավիճակ,

- կորպորացիան իրենից ներկայացնում է իրավունքի սուբյեկտ համարվող իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց միություն կամ միավորում, որոնք արդյունքում ձեռք են բերում կորպորացիայի մասնակցի (անդամի) կարգավիճակ,

- կորպորացիան բնութագրվում է որպես կամային կազմակերպություն, որը կոչված է իրագործելու կորպորացիայի և դրա մասնակիցների հավաքական շահերը,

- կորպորացիան որպես իրավաբանական անձ շարունակում է գոյություն ունենալ անկախ մասնակիցների կազմի փոփոխությունից,

- կորպորացիան ոչ միայն մասնակիցների միություն է, այլև նրանց գույքի միություն,

- կորպորացիայի մասնակիցները, որպես կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտներ, հանդիսանում են ինչպես միմյանց, այնպես էլ կորպորացիայի հանդեպ ունեցած սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կրողներ,

- կորպորացիան իրենից ներկայացնում է մի կազմակեր-

¹⁹ Стен Корпоративное право, под ред. И. С. Шиткина, М., 2007, էջ 7, Кашанина Т. В., Корпоративное право, Учебник, М. 1999, էջ 1:

պական միասնություն, որն արտահայտվում է կառավարման մարմինների առկայությամբ, այդ թվում բարձրագույն կառավարման մարմնի՝ մասնակիցների (բաժնետերերի) ընդհանուր ժողովի առկայությամբ:

«Կորպորատիվ իրավահարաբերություններ» հասկացության բանաձևումը, ինչպես նաև այդպիսի իրավահարաբերությունների կառուցվածքի վերլուծությունն անհնարին է առանց դրանց բնույթին, օբյեկտին և բովանդակությանը վերաբերող ընդհանուր հարցերի ուսումնասիրության²⁰: «Իրավահարաբերություն» եզրույթն ունի բավականին հետաքրքիր պատմություն: Մինչհեղափոխական ռուսական իրավունքում քաղաքացիական իրավահարաբերությունները կառուցվում էին պարտապանի և պարտատիրոջ միջև ծագող քաղաքացիաիրավական կապերի մոդելով: Այսպես, ըստ Կ. Դ. Կավելինի և Գ. Ֆ. Շերշենևիչի տեսակետի՝ իրավաբանական հարաբերություններն իրենցից ներկայացնում են երկու անձանց կապ, որոնց միջև առկա են փոխադարձ իրավունքներ և պարտականություններ²¹: Այդպիսի մոտեցումը նպաստեց իրավահարաբերությունների սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների մանրամասն ուսումնասիրմանը: Սակայն նման մոտեցման պայմաններում ուսումնասիրության ոլորտից դուրս մնաց իրավունքի՝ հասարակական հարաբերությունները կարգավորող բնույթը:

Խորհրդային գրականության մեջ իրավակարգավորումը համարվում էր առաջնային և հիմնարար կատեգորիա²², և դրա ուսումնասիրությանը հատուկ ուշադրություն էր դարձվում:

²⁰ Ст'ю Ломакин Д. В. Корпоративные правоотношения как составная часть системы гражданско-правовых отношений: на примере хозяйственных обществ, дисс. ... док. юрид. наук, М., 2009, էջ 24:

²¹ Ст'ю Кавелин К. Д. Избранные произведения по гражданскому праву. М., 2003, էջեր 221-237, Шершеневич Г. Ф. Общая теория права. Т. II, М., 1995, էջեր 168-172:

²² Ст'ю Пашуканис Е. Б. Общая теория права и марксизм. М., 1926, էջեր 41-42:

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ «իրավահարաբերություն» հասկացության նկատմամբ ձևավորվել է երկու հիմնական մոտեցում: Առաջին դեպքում իրավահարաբերությունը սահմանվում է որպես հասարակական հարաբերության իրավական ձև: Իրավահարաբերություն ասելով հասկանում են իրավունքի սուբյեկտների վարքի անհատական մոդելը ներկայացնող սուբյեկտիվ իրավունքները և պարտականությունները: Հաշվեկանոնը գործում է հետևյալ կերպ. իրավունքի նորմը որոշակիացվում է իրավահարաբերությունում, ինչն այնուհետև ներգործում է փաստացի հասարակական հարաբերության վրա: Այդպիսով, իրավահարաբերությունը, որպես *sui generis* հարաբերություն, հասարակական հարաբերության իրավական ձևն է: Ընդ որում, ընդունվում է փաստացի հասարակական հարաբերության և դրան համապատասխանող իրավական հարաբերության ինքնուրույն գոյությունը²³:

Համաձայն երկրորդ մոտեցման՝ իրավահարաբերությունը իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություն է: Այդ տեսակետը բխում է իրավական ձևի և նյութական բովանդակության միասնությամբ բնորոշվող ամբողջական հարաբերության գոյությունն ընդունելու փաստից: Հասարակական հարաբերությունների վրա իրավունքի նորմերի ազդեցության հետևանքով ծագում է միասնական իրավական հարաբերություն: Այդ դիրքորոշման կողմնակիցների թվին են դասվում Օ. Ս. Իոֆֆեն, Ռ. Օ. Խալֆինան, Վ. Ն. Խրոպանյուկը և այլ գիտնականներ²⁴:

²³ Ст'ю Братусь С. Н. Предмет и система советского гражданского права. М., 1963, էջ 88-103, Назаров Б. Л. Социалистическое право в системе социальных связей. М., 1976, էջ 41, Толстой Ю. К. К категории правоотношения. Л., 1959, էջ 31:

²⁴ Ст'ю Халфина Р. О. Общее учение о правоотношении. М., 1974, Иоффе О. С. Спорные вопросы учения о правоотношении. Очерки по гражданскому праву, Л., 1957, Хропанюк В. Н. Теория государства и права. М., 1993, Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Т. 2, М., 1998:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորպորացիան՝ որպես իրավաբանական անձ, իրավակարգի իմպերատիվ նորմերի արհեստական ծնունդ է, կորպորատիվ կազմակերպությունների հետ հասարակական հարաբերությունները կարող են գոյություն ունենալ միայն իրավական ձևով: Օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների՝ կորպորացիայից դուրս գալու մասին որոշում ընդունելու և համապատասխան դիմում տալու դեպքում ընկերության և մասնակիցների միջև ծագում է բաժնեմասի իրական արժեքի՝ դրամի կամ բնեղենի ձևով վճարման հարաբերություն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 104 հոդվածում ամրագրված իրավունքի նորմը ներգործում է համապատասխան հասարակական հարաբերության վրա, որի արդյունքում ծագում է միասնական իրավական հարաբերություն: Հասարակական հարաբերության իրավաբանական ձևը և փաստացի բովանդակությունը նպատակային սոցիալական երևույթներ են²⁵:

Ամփոփելով վերոգրյալը՝ իրավահարաբերությունները կարելի է բնորոշել որպես իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերություններ, որոնց մասնակիցները վերածվում են պետության կողմից երաշխավորված և պահպանվող սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ կրողների: Այսինքն՝ իրավահարաբերությունները հասարակական հարաբերությունների տարատեսակ են, որոնք հասարակության համար իրենց կարևորության պատճառով կարգավորվում են իրավունքի նորմերով:

Սուբյեկտիվ իրավունքն իրավագոր անձի հնարավոր վարքագծի միջոցն է, իրավագոր անձի՝ օբյեկտիվ իրավունքով ճանաչվող իշխանության ոլորտը²⁶: Կորպորատիվ իրավահարաբերություններում սուբյեկտիվ իրավունքը բնութագրելիս անհրա-

²⁵ Ст'ю Хропанюк В. Н., նշված աշխ., էջ 223:

²⁶ Ст'ю Братусь С. Н. Юридические лица в советском гражданском праве. Ученые труды ВЮОН Министерства юстиции СССР. М., 1947, Вып. XII, էջեր 10-33:

Ժեշտ է ընդգծել այն իրավական միջոցների կարևորությունը, որոնք իրավագոր անձին հնարավորություն են տալիս իր իրավունքներն իրականացնել այլ անձանցից համապատասխան վարքագծի դրսևորում պահանջելու միջոցով: Օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելու սուբյեկտիվ իրավունքը չի կարող իրագործվել առանց պարտավոր անձանց, մասնավորապես, ընկերության կառավարման մարմինների համապատասխան գործողությունների և մասնակցին՝ համապատասխան գործողություններ կատարելուն պարտադրելու հնարավորության ընձեռնան:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կորպորատիվ իրավահարաբերությունների համար մեծ նշանակություն ունի իրավահարաբերության մասնակցի շահը, ինչը բավարարվում է սուբյեկտիվ իրավունքի իրացմամբ: Հետևաբար, շահը չի կարելի բացառել սուբյեկտիվ իրավունքի բովանդակությունից, քանզի ճանաչելով իրավագոր անձի սուբյեկտիվ իրավունքը, պետությունը ելնում է ոչ միայն իրավագոր անձի գործողությունների բնույթից, որոնց հնարավորությունը նա ապահովում է, այլև իր կողմից պաշտպանվող շահի բնույթից:

Իրավական պաշտպանություն կարող է ստանալ իրավագոր անձի միայն այնպիսի շահը, որը կարող է համընկնել պետության կողմից ճանաչվող և պաշտպանվող շահերին կամ չի հակասում դրանց²⁷: Իրավագոր անձի շահերի՝ պետության կողմից պաշտպանվող շահերին չհամապատասխանելը կարող է հանգեցնել անձին պատկանող իրավունքի դատական պաշտպանության մերժմանը (ՀՀ քաղ. օր., հոդվ. 12): Օրինակ՝ եթե բաժնետիրական ընկերության բաժնետերը կամ բաժնետերերը, օգտվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 92 հոդվածով բաժնետիրոջը վերապահված իրավունքից, առանց լուրջ հիմնավորման պարբերաբար (օրինակ՝ մեկ ամս-

²⁷ Стену Иоффе О. С. Избранные труды: В 4 т. Т. I. СПб., 2003, էջ 84:

վա ընթացքում երկու անգամ) պահանջեն ընկերությունում իրականացնել աուդիտ, ապա նման պահանջը կարող է դիտվել որպես իրավունքի չարաշահում: Հարկ է ընդգծել, որ վեճը դատարանում քննելիս օրինական շահի բացակայության պարզումը չի նշանակում հայցով դիմած անձի կողմից իրավունքի չարաշահման ինքնաբերաբար ճանաչում: Համապատասխան գործողությունները կարող են ճանաչվել իրավունքի չարաշահում միայն գործող օրենսդրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

Սուբյեկտիվ պարտականությունն անձի այն պարտադիր վարքագիծն է, որը սահմանված է օրենքով կամ պայմանագրով²⁸: «Իրավական պարտականությունն այն կրողի այնպիսի վարքագծի ապահովման միջոցն է, որի կարիքն ունի իրավագործ անձը, և որը պետությունը ճանաչում է պարտադիր»²⁹:

Կորպորատիվ իրավահարաբերությունների բովանդակությունն ամբողջացնում է իրավահարաբերության մասնակիցների իրավունքներն և պարտականությունները՝ ներառյալ կորպորացիան՝ որպես իրավաբանական անձ, կորպորացիայի մասնակիցները (բաժնետերերի, անդամների) և կորպորացիայի կառավարման մարմինների գործառույթներն իրականացնող անձինք: Կորպորատիվ իրավահարաբերությունների բովանդակությունը կազմող մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը կարելի է բնորոշել որպես ինքնուրույն բնույթ կրող գույքային (օրինակ՝ դիվիդենտ ստանալու և լուծարային քվոտայի իրավունքը) և ոչ գույքային (օրինակ՝ ընկերության կառավարմանը մասնակցելու, տեղեկատվություն ստանալու իրավունքը) իրավունքների ամբողջություն:

Կորպորատիվ իրավահարաբերությունները կարող են բնութագրվել ինչպես նեղ, այնպես էլ լայն առումով: Նեղ առումով

²⁸ Տե՛ս Բարսեղյան Ս. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, դասագիրք, առաջին մաս, Եր., 2009, էջ 61:

²⁹ Иоффе О. С. Правоотношение по советскому гражданскому праву, Л., 1949, էջ 57:

այն ներառում է կորպորացիայի ներսում առաջացող հարաբերությունները (կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմը), օրինակ՝ մասնակիցների՝ ընկերության կառավարմանը մասնակցելուն և ընկերության գործունեությունը վերահսկելուն ուղղված հասարակական հարաբերությունները, իսկ լայն առումով կորպորատիվ իրավահարաբերություններն ընկալվում են կորպորացիայի՝ որպես գործարարական գործունեության սուբյեկտի գործունեությանը վերաբերող հասարակական հարաբերությունները (կորպորատիվ իրավահարաբերությունների արտաքին կողմ), օրինական՝ կորպորացիաների ստեղծման և գործունեության դադարեցման գործընթացի պետական կարգավորումը:

Կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտային կազմի ուսումնասիրությունը թույլ է տալիս կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցներին բաժանել երկու խմբի.

- կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմին առնչվող սուբյեկտներ,
- կորպորատիվ իրավահարաբերությունների արտաքին կողմին առնչվող սուբյեկտներ:

Կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմին առնչվող սուբյեկտներ են կորպորացիայի մասնակցները (անդամները, բաժնետերերը և այլն), կառավարման մարմինները, ինչպես նաև կորպորացիայի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները³⁰:

³⁰ Հարկ ենք համարում նշել, որ կորպորացիայի կառավարման և դրա գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները դասական առումով քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտ չեն հանդիսանում, քանի որ դրանք օժտված չեն իրավասուբյեկտությամբ: Արտաքին հարաբերություններում այդ սուբյեկտները կարող են հանդես գալ կորպորացիայի անունից, եթե, իհարկե, օրենքով կամ ներքին կանոնակարգող փաստաթղթերով այդ մարմիններին նման իրավասություն տրված է: Սակայն կորպորացիայի ներսում ծագող կորպորատիվ իրավահարաբերությունների տեսանկյունից դրանք մեր կողմից դիտվում են որպես որոշակի լիազորություններով օժտված կորպորատիվ կառավարման սուբյեկտներ:

Կորպորատիվ իրավահարաբերությունների արտաքին կողմի հետ առնչվող սուբյեկտների շարքն են դասվում կորպորացիայի գործունեությունը կարգավորող պետական մարմինները, կոնտրազենտները և այլն:

Քաղաքացիական իրավահարաբերությունների համակարգում կորպորատիվ իրավահարաբերությունների տեղը ճշտելու համար անհրաժեշտ է պարզել կորպորատիվ իրավահարաբերությունների բնույթը:

Կորպորատիվ իրավահարաբերությունների բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել այդ իրավահարաբերությունների սուբյեկտային կազմը, դրանց կապը, իրավահարաբերությունների օբյեկտը և այն նպատակը, հանուն որի իրագործման իրականացվում է սուբյեկտիվ իրավունքը:

«Իրավահարաբերության օբյեկտ» հասկացության վերաբերյալ տեսական գրականության մեջ միասնական կարծիք գոյություն չունի: Օրինակ՝ Մ.Ս. Ագարկովի կարծիքով՝ իրավահարաբերության բովանդակությունը պարտավոր անձանց վարքն է, իսկ օբյեկտը՝ իրը կամ իրը, որին ուղղված է պարտավոր անձի վարքը³¹: Փաստորեն, նման տեսակետը ենթադրում է «անօբյեկտ» իրավահարաբերությունների գոյություն:

Իրավահարաբերությանն առնչվող արտաքին աշխարհի բոլոր երևույթները օբյեկտի հասկացության մեջ ներառելու նպատակով որոշ հեղինակներ առաջարկում են իրավունքի օբյեկտները բաժանել երկու կատեգորիաների³²: Համաձայն նշված դիրքորոշման՝ իրավունքի օբյեկտ է համարվում այն ամենը, ինչի կապակցությամբ իրավունքի սուբյեկտները մտնում են իրավահարաբերության մեջ, ինչպես նաև այն, ինչը կազմում է իրավահարաբերության մասնակիցների փոխադարձ իրավունքների ու պարտականությունների բովանդակությունը: Հետևաբար,

³¹ Стен Агарков М. М. Обязательство по советскому праву. Ученые труды ВИЮН НКДО СССР. Вып. 3, 1940, էջ 22:

³² Стен Голунский С., Строгович М., Теория государства и права, М., 1940, էջ 277:

ստացվում է, որ իրավունքի օբյեկտը և դրա բովանդակությունը նույնն են, քանզի, գործողությունների հետ մեկտեղ, օբյեկտների թվին են դասվում նաև իրերը: Այդ դեպքում ստացվում է, որ իրերը նույնպես կարող են կազմել իրավունքի բովանդակությունը, ինչին, անշուշտ, որևէ կերպ չի կարելի համաձայնել:

Ելնելով վերոշարադրյալից՝ «մնում է կամ հրաժարվել իրավունքի բովանդակությունն օբյեկտի հետ նույնացնելուց, կամ իրերը հանել իրավունքի օբյեկտների թվից՝ ընդունելով օբյեկտի նշանակությունը սոսկ որպես գործողությունների կատարում, կամ գործողությունների կատարումից ձեռնպահ մնալ»³³: Այս տեսանկյունից հետաքրքրական է նաև պրոֆ. Յա. Ս. Մագազինների կարծիքը, ըստ որի՝ յուրաքանչյուր իրավահարաբերության էությունն այն է, որ դրա շրջանակներում «մեկ անձն ուրիշի գործողության նկատմամբ ունի իրավունք», հետևաբար՝ «իրավունքի օբյեկտ է ուրիշի յուրաքանչյուր գործողությունը ... իրավունքի օբյեկտ է այն, ինչը պարտավորության օբյեկտ է»³⁴:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ ենք համարում նշել, որ եթե քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ կարելի է դիտել գործողությունները, անձնական ոչ նյութական բարիքները և այլ արժեքները, ապա կորպորատիվ իրավահարաբերությունների օբյեկտ կարելի է համարել նյութական բարիքներ ստեղծելուն կամ կանոնադրային նպատակներն իրականացնելուն ուղղված կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտների գործողությունները, այլ ոչ նյութական բարիքները կամ կանոնադրային նպատակները:

Որոշ հեղինակներ կորպորատիվ իրավահարաբերությունների բնույթը պարզելու համար մատնանշում են դրանց իրային իրավական բնույթը³⁵, հեղինակների մեկ այլ խումբ՝ պարտավո-

³³ Иоффе О. С. Избранные труды: В 4 т. Т. I. СПб., 2003, էջ 117:

³⁴ Ст'ю Магазинер Я. М. Советское хозяйственное право. Л., 1928, էջ 174:

³⁵ Ст'ю Корпоративное право, под ред. И. С. Шиткина, М., 2007, էջ 26, Тарасов И. Т. Учение об акционерных компаниях. М., 2000, էջ 483:

րական բնույթը³⁶, երրորդ խումբն ընդգծում է կորպորատիվ իրավահարաբերությունների հատուկ բնույթը հիմնավորող հայեցակարգը, ըստ որի՝ դրանք ոչ իրային են և ոչ էլ պարտավորական, իսկ չորրորդ խումբը կորպորատիվ հարաբերությունները դասում է ոչ գույքային և նույնիսկ անձնական ոչ գույքային հարաբերությունների շարքը³⁷:

Իրային իրավահարաբերություններն ամրագրում են սուբյեկտների գույքային դրության ստատիկան: Դրանցով երաշխավորվում է իրի վրա իրավագոր սուբյեկտի անմիջականորեն ներգործելու հնարավորությունը, ինչպես նաև երրորդ անձանց ոտնձգություններից այդ իրավունքը պաշտպանելու հնարավորությունը: Բացի դրանից, իրային իրավունքներն ունեն բացարձակ բնույթ, ինչը ենթադրում է, որ իրավահարաբերության մեկ սուբյեկտի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը, ինչպես նաև այդ անձանց վրա դրվում է պասիվ գործառույթ՝ ձեռնպահ մնալ այնպիսի գործողությունների կատարումից, որոնք խոչընդոտում են իրավագոր անձի իրավաբանորեն պաշտպանվող շահերի բավարարմանը:

Մինչդեռ կորպորատիվ սուբյեկտիվ իրավունքների իրականացումն իրավագոր անձի սեփական նախաձեռնությամբ անհնարին է: Այդպիսիք հնարավոր են միայն պարտավոր անձանց անհրաժեշտ գործողություններով: «Մեկ անձի իրավունքի կախվածությունը մեկ այլ անձի ակտիվ գործողություններից վկայում է այն մասին, որ այդ իրավունքը զուրկ է բացարձակ բնույթից»³⁸:

Հետևաբար, կարելի է պնդել, որ կորպորատիվ հարաբերություններն իրային իրավահարաբերություններ չեն, քանի որ

³⁶ St'u Долинская В. В. Акционерное право: Учебник, М., 1997, էջ 12, Ломидзе О. Переход обязательственных прав участников юридического лица // Российская юстиция, 1999, N 10, էջ 17:

³⁷ St'u Рахмилович В. А. Гражданское право России, курс лекций, Ч. 1, М., 1996, Эрделевский А. М. О защите личных неимущественных прав акционеров//Хозяйство и право, 1997:

³⁸ Иоффе О. С. Избранные труды: В 4 т. Т. I. СПб., 2003, էջ 151:

որանք բացարձակ բնույթ չունեն:

Պարտավորական իրավահարաբերությունները միջնորդավորում են գույքի կամ գույքային բնույթի այլ տիպի բարիքների փոխանցումը մեկ անձից մյուսին³⁹: Դրանցում իրավագոր անձն ունի սոսկ պահանջի իրավունք: Իսկ կորպորատիվ իրավահարաբերություններում, ի տարբերություն պարտավորական հարաբերությունների, պարտատերն ու պարտապանը որպես իրավահարաբերության սուբյեկտներ հանդես չեն գալիս: Կորպորատիվ իրավահարաբերություններում որպես օբյեկտ հանդես են գալիս ոչ թե կազմակերպության առանձին գործողությունը կամ գործողությունների համակցությունը, այլ կազմակերպության գործունեությունը և այդ գործունեության արդյունքները⁴⁰: Օրինակ՝ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ապահովել բաժնետերերի ընդհանուր ժողովին բաժնետիրոջ մասնակցության իրավունքի իրականացման հնարավորությունը: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ ընկերության՝ որպես պարտավոր անձի պահանջվող գործողությունների կատարումը բաժնետիրոջ վերջնական նպատակը չէ, քանի որ որոշակի հանգամանքների առկայության դեպքում բաժնետերն ինքը կարող է իրականացնել այդ գործողությունները («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 74): Այդ եղանակով բաժնետերն ընդամենը մասնակցում է ընկերության կամքի ձևավորման գործընթացին:

Սակայն պետք է նշել, որ կորպորացիայի շրջանակներում ծագող մի շարք հարաբերություններ ունեն զուտ պարտավորական բնույթ: Օրինակ՝ հաշվեգրված շահաբաժինը կամ ընկերության լուծարումից հետո մնացած գույքից բաժին պահանջելու իրավունքը:

³⁹ Տե՛ս Ս. Կ. Բարսեղյան, նշված աշխ., էջ 406:

⁴⁰ Տե՛ս Козлова Н. В. Понятие и сущность юридического лица. М., 2003, էջ 244:

Կորպորատիվ հարաբերություններին բնութագրական հատկանիշ է նաև այն, որ միմյանցից անկախ և ինքնուրույն սուբյեկտները, մտնելով կորպորատիվ բնույթի իրավահարաբերությունների մեջ, հնարավորություն ունեն անմիջականորեն ազդելու մյուս կողմի կամքի ձևավորման վրա: Ավելին, կորպորացիայի մասնակիցները, ձևավորելով դրա կամքը, իրենք են դրան ենթարկվում, ընդ որում՝ հետևելով կորպորացիայի կառավարման այլ մարմինների կողմից կորպորացիայի ձևավորված կամքի պատշաճ իրագործմանը: Փաստորեն, իրենց կորպորատիվ իրավունքների իրացման միջոցով կորպորացիայի անդամները մասնակցում են կորպորացիայի և դրա գույքի կառավարմանը:

Այսպիսով, կորպորատիվ իրավահարաբերությունները տարբերվում են պարտավորական հարաբերություններից ինչպես ըստ օբյեկտի, այնպես էլ ըստ բովանդակության:

Կորպորատիվ իրավահարաբերություններն ունեն հարաբերական բնույթ, քանի որ իրավագոր անձին (անձանց) հակադրվում է խիստ որոշակի պարտավոր անձ (անձինք): Յետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորպորացիայի անդամների և կորպորացիայի մարմինների կազմի մեջ մտնող անձանց շրջանակը խիստ որոշակի է, այսինքն՝ իրավագոր և պարտավոր անձանց շրջանակը որոշակի է, ուստի կորպորատիվ իրավահարաբերությունները հարաբերական են:

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ եթե հարաբերական իրավահարաբերությունների հաստատման և իրականացման համար մեծ մասամբ վճռորոշ նշանակություն ունի պայմանագիրը, ապա կորպորատիվ իրավահարաբերությունների համար նման նշանակություն ունեն այնպիսի իրավաբանական փաստերը, ինչպիսիք են կորպորացիայի անդամների ընդհանուր ժողովի կամ կառավարման այլ մարմինների որոշումները: Ավելին, իրավահարաբերության կողմը՝ կորպորացիան, ի հայտ է գալիս իրավունքի այլ սուբյեկտների՝ հիմնադիրների կամահայտնության արդյունքում:

Գույքային բնույթի իրավահարաբերությունների օբյեկտը նյութական բարիքն է և արտացոլում է կամ գույքի պատկանելությունը որոշակի անձի, կամ գույքի փոխանցումը: Կորպորացիայի գույքը սեփականության իրավունքով պատկանում է կորպորացիային՝ որպես կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակցի: Կորպորացիայի անդամներն ընդամենը իրավունք ունեն կազմակերպելու իրավաբանական անձի գործունեությունը, այսինքն՝ մասնակցելու կառավարմանը, ընդունելու և իրագործելու կորպորատիվ որոշումներ և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորպորատիվ հարաբերությունների օբյեկտ է կորպորատիվ տիպի իրավաբանական անձի գործունեության կազմակերպումը, նշված հարաբերությունները կարելի է բնութագրել նաև որպես կազմակերպակառավարչական հարաբերություններ: Փաստորեն, կորպորացիայի անդամներին հետաքրքրում են ոչ թե կորպորացիայի գույքը, այլ այդ գույքի կառավարումը և կանոնադրային նպատակների իրագործումը:

Հարկ է նշել, որ կազմակերպական հարաբերություններ հասկացությունը խորհրդային իրավագիտության մեջ ուսուծմասիրվել է քաղաքացիական, վարչական և սահմանադրական իրավունքների շրջանակներում⁴¹: Ըստ ընդհանուր կանոնի՝ կազմակերպական հարաբերություններ ասելով հասկացվում էին երկակի բնույթի հարաբերություններ, որոնք ծագում էին կառավարման վերադաս և ստորադաս մարմինների միջև, ինչպես նաև՝ նրանց և օպերատիվ տնտեսական կազմակերպությունների ու ձեռնարկությունների միջև, որոնք անմիջականորեն իրականացնում էին տնտեսական գործունեություն արտադրության և բաշխման ոլորտում: Ընդ որում, գործում էր այն կանխավարկածը, որ կազմակերպական հարաբերությունները քաղաքա-

⁴¹ St'u Братусь С. Н. Предмет и система советского гражданского права. М. 1963, Красавчиков О. А. Категории науки гражданского права, Т. 1, М., 2005, և այլոց աշխատանքները:

ցիաիրավական կարգավորման առարկա չեն:

Օ. Ա. Կրասավչիկովը կազմակերպական հարաբերությունները բնութագրում էր որպես համակարգման կամ ենթակայության հիմունքների վրա կառուցված սոցիալական կապեր, որոնք ուղղված էին այլ հասարակական հարաբերությունների, դրանց մասնակիցների գործողությունների կարգավորմանը կամ էլ սոցիալական կազմավորումների ձևավորմանը, և այդ կազմակերպական հարաբերությունները բաժանում էր քաղաքացիաիրավականի և վարչաիրավականի: Նա համակարծիք էր Ս. Ն. Բրատուսին, որը գտնում էր, որ պետական կառավարման մարմինների և պետական ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև առաջացող հարաբերությունները պետք է առանձնացնել բուն գույքային հարաբերություններից, քանզի նշված կազմակերպական հարաբերությունները «կարգավորվում են վարչական իրավունքի նորմերով, իսկ գույքային հարաբերությունները՝ քաղաքացիական իրավունքով»⁴²:

Վերը նշված տեսակետին կարելի էր համաձայնել նախկին խորհրդային հասարակարգի պայմաններում, սակայն ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում քաղաքացիական իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակն զգալիորեն ընդլայնվել է, ինչի վառ օրինակն են կորպորատիվ իրավահարաբերությունները՝ վերը նշված իրենց բնորոշ առանձնահատկություններով:

Կորպորատիվ իրավահարաբերությունների բնույթի և էության վրա էական ազդեցություն ունեն մաս կորպորատիվ իրավունքի սկզբունքները: Կորպորատիվ իրավունքի սկզբունքներ ասելով նկատի ունենք այն ուղեցույց, ելակետային և կողմնորոշիչ դրույթները, որոնք ընկած են կորպորատիվ իրավահարաբերությունների բովանդակության և կարգավորման մեթոդների հիմքում: Կորպորատիվ իրավունքի սկզբունքները հանդիսա-

⁴² Красавчиков О. А. Категории науки гражданского права, Т. 1, М., 2005, էջ 53:

նուն են միջճյուղային սկզբունքներ, որոնք արտացոլում են կորպորատիվ հարաբերությունների առանձնահատկությունները: Սկզբունքները նախ կանխորոշում են կորպորատիվ իրավահարաբերությունների բովանդակությունը, այնուհետև դրանց բովանդակությանը համահունչ կանխորոշում են կարգավորման մեթոդը: Այդ իսկ պատճառով կորպորատիվ իրավունքի սկզբունքները երբեմն կարգավորման մեթոդի հետ նույնական են:

Մեր ընկալմամբ՝ Հայաստանի Հանրապետության կորպորատիվ իրավունքի սկզբունքների մաս են կազմում տարբեր պետությունների, միջազգային կազմակերպությունների կողմից մշակված սկզբունքները, որոնց շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում 2004 թվականին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կողմից վերամշակված և հաստատված կորպորատիվ կառավարման սկզբունքները: Չնայած այդ սկզբունքները մասնակից պետությունների համար չունեն պարտադիր նշանակություն, բայց և այնպես, արտահայտում են կորպորատիվ կառավարման բնագավառում մասնակից երկրներում առկա դրական փորձը և ընդհանուր դրույթներ են պարունակում օրենսդրության կատարելագործման և ընդհանրապես արդյունավետ կորպորատիվ կառավարում իրականացնելու մասին, ինչպես նաև նպատակ են հետապնդում վերացնել մասնակից պետությունների ազգային օրենսդրություններում գոյություն ունեցող տարբերությունները և դրանք համապատասխանեցնել ՏՀԶԿ կողմից մշակված սկզբունքներին⁴³:

Կորպորատիվ իրավունքի նորմերին բնութագրական է ինչպես դիսպոզիտիվ, այնպես էլ իմպերատիվ բնույթը: Իմպերատիվ նորմերն իրենցից ներկայացնում են կորպորատիվ իրավա-

⁴³ Անհրաժեշտ է նշել, որ ՏՀԶԿ-ն հիմնադրվել է 1960թ. Ֆրանսիայում և դրա մասնակիցներն են Ավստրիան, Անգլիան, ԱՄՆ, Ֆրանսիան, Գերմանիան, Դանիան և բազմաթիվ այլ երկրներ:

հարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության նվազագույն երաշխիքները, իսկ դիսպոզիտիվ նորմերը⁴⁴ կորպորատիվ իրավունքի սկզբունքների իրացման առավել լայն հնարավորություններ են ընձեռում (օրինակ՝ ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերում կարող են սահմանվել կորպորատիվ իրավունքի սկզբունքների իրացման լրացուցիչ կառուցակարգեր):

Կորպորատիվ իրավահարաբերություններին բնութագրական օրինաչափությունները հնարավորություն են ընձեռում Հայաստանի Հանրապետությունում ևս տարանջատել կորպորատիվ իրավահարաբերությունների հետևյալ սկզբունքները.

- առանձին մասնակիցների շահերի նկատմամբ կորպորացիայի շահերի նախապատվության,

- ժողովրդավարության,

- կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներին համապատասխան ընկերության կառավարմանը մասնակցելու,

- ընկերության գործունեության ընթացքում ստացված եկամուտների և լուծարումից հետո մնացած գույքի արդարացի բաշխման և

- կառավարման մարմինների անդամների անկախության սկզբունքները:

Առանձին մասնակիցների շահերի նկատմամբ կորպորացիայի շահերի նախապատվության սկզբունքը նպատակ ունի պահպանել կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների շահերը: Սակայն կորպորատիվ իրավահարաբերությունների կարգավորման մեթոդի առանձնահատկությունը հանգեցնում է նրան, որ կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների սահմանումը կախվածության

⁴⁴ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Мкртумян А. Ю. Судебный прецедент в гражданском праве России и Армении, Ер., 2011, էջեր 176 - 188:

մեջ է դրվում կորպորատիվ շահերի պահպանությունից: Օրենքով որոշակի իրավունքների տրամադրումը, ինչպես նաև որոշակի պարտականությունների սահմանումը պետք է հիմնված լինեն որոշակի կորպորատիվ իրավունքների պահպանման կամ սահմանափակման վրա: Պահպանվող կորպորատիվ շահերը պետք է գերիշխող լինեն կորպորատիվ իրավահարաբերությունների առանձին մասնակիցների շահերի նկատմամբ: Այսինքն, նախապատվությունը տրվում է ոչ թե կորպորատիվ իրավահարաբերությունների առանձին մասնակիցների շահերին, այլ ամբողջությամբ վերցրած կորպորացիայի ընդհանրական շահերին:

Կորպորացիայի հետաքրքրությունների շարքին են դասվում բիզնեսի զարգացումը, եկամուտ ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, եկամուտ ստանալուն ուղղված հեռանկարային ծրագրերի իրականացումը և այլն: Դրանով են պայմանավորված նաև մասնակիցների ընդհանուր շահերը: Օրինակ, բաժնետերերի ընդհանուր ժողովի ժամանակ շահութաբաժիններ չվճարելու և գոյացած շահույթի հաշվին կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին որոշման ընդունումն արտահայտում է փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի նկատմամբ կորպորացիայի շահերի նախապատվության սկզբունքի դրսևորումներից մեկը:

Կորպորացիան իր գործունեությունն իրականացնելիս պարտավոր է հաշվի առնել հասարակական շահերը, մասնավորապես, բացահայտի իր գործունեության բնույթը, շրջակա միջավայրի վրա տվյալ գործունեության ազդեցության աստիճանը, օրենքով նախատեսված դեպքերում իրավասու մարմիններին տեղեկություններ տրամադրել նշանակալից մասնակիցների, պարտատերերի և պարտապանների մասին, որոշակի դեպքերում իրականացնել իր գործունեության վայրի բնակչության սոցիալական խնդիրը լուծելուն ուղղված որոշ ծրագրեր: Նշվածում արտացոլվում է նաև կորպորացիայի սոցիալական պատասխանատվության սկզբունքի դրսևորումը: Կորպորացիայի

սոցիալական ծրագրերի իրականացումը պետք է պայմանավորված լինի դրա տնտեսական առաքելությամբ, այլ ոչ թե փոխհատուցի այն վնասները, որոնք պատճառվում են հասարակությանը կորպորացիայի գործունեության արդյունքում: Կորպորացիայի սոցիալական պատասխանատվության սկզբունքը ենթադրում է, որ կորպորացիան պետք է ձգտի, որ իր արտադրանքը կամ իրականացրած գործունեությունը վնասաբեր չլինի հաճախորդների կամ սպառողների համար: Օրինակ, ծխախոտ և ոգելից խմիչքներ արտադրող կորպորացիաները չեն դասվում սոցիալական պատասխանատվությամբ օժտված կորպորացիաների շարքին: Հաշվի առնելով այդ հանգամանքը, օրինակ, Եվրոպական միության տարածքում արգելվել է ծխախոտ արտադրող ընկերությունների գործունեությունը:

Հասարակության իրավունքների պաշտպանության միջոցների շարքին է դասվում նաև օրենսդրության պահանջների պահպանմամբ գործունեություն ծավալելու պահանջը: Կորպորացիայի կառավարիչները պարտավոր են կորպորացիայի մասնակիցների համար ապահովել նրանց իրավունքների իրականացման համար անհրաժեշտ հնարավորություններ՝ տրամադրել կորպորացիայի գործունեության մասին համապատասխան տեղեկատվություն, մասնակիցների ընդհանուր ժողովների մասին ծանուցել մասնակցին, տրամադրել ժողովում որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ օբյեկտիվ տեղեկատվություն և այլն:

Կորպորատիվ իրավահարաբերություններում էական դերակատարություն ունի ժողովրդավարության սկզբունքը: Այս սկզբունքն արտահայտվում է նրանում, որ կորպորացիայի կառավարման ընթացքում որոշումները կայացվում են ձայների մեծամասնությամբ, և դրանք պարտադիր են կատարման կորպորացիայի կառավարման մարմինների և մասնակիցների կամ բաժնետերերի համար: Սակայն որոշումներին դեմ քվեարկած կամ դրանց կայացմանը չմասնակցած մասնակիցը, օրինակ՝ բաժնետերերը, իրավունք ունեն վիճարկել կանոնադրական կա-

պիտալում գերակշռող մասնակցություն ունեցող բաժնետերերի կողմից կայացված որոշումը, եթե այդպիսիք կայացվել են օրենքի խախտմամբ: Բացի դրանից, բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման, ընկերության կողմից խոշոր գործարք կնքելու կամ ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշմանը դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած ընկերության քվեարկող բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող անձինք իրավունք ունեն ընկերությունից պահանջել իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում: Ըստ էության, նման եղանակով հնարավորություն է տրվում փոքրամասնություն կազմող բաժնետերերին, համարժեք փոխհատուցում ստանալու պայմանով, հեռանալ կորպորացիայից և ներդրումներ կատարել տնտեսության այլ ոլորտներում:

Ընդհանուր առմամբ, կորպորացիայի մասնակիցներն ունեն հավասար իրավունքներ, օրինակ՝ մասնակցել բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովին, իրենց պատկանող բաժնետոմսերի կամ բաժնեմասին համամասնորեն քվեարկել ժողովներում, ծանոթանալ կորպորացիայի կանոնադրությանը և այլն:

Սակայն որոշակի դեպքերում օրենսդիրը, հաշվի առնելով կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներին համապատասխան ընկերության կառավարմանը մասնակցելու սկզբունքը, կորպորացիայի մասնակիցներին, հաշվի առնելով կորպորացիայում նրանց ունեցած մասնակցության չափը, կորպորացիայի այլ մասնակիցների հանդեպ տրամադրում է լրացուցիչ իրավունքներ, օրինակ՝ ընկերության այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) համատեղ տնօրինում է (են) ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսը, իրավունք ունի (ունեն) խորհրդի ան-

դամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության և տնօրինության անդամների, ինչպես նաև կառավարիչ կազմակերպության կամ կառավարչի դեմ հայցով դիմել դատարան՝ ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 90, կետ 5), ընկերության այն բաժնետերերը (բաժնետերերը), ով (ովքեր) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն երկու տոկոսի սեփականատեր է (են), ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա կամ կանոնադրությամբ սահմանված այլ, ավելի երկար ժամկետի ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել խորհրդի և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամության թեկնածուներ, որոնց թվաքանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված թվաքանակը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 72, կետ 1), ընկերության այն բաժնետերերը, որոնք զրանցված են ընկերության բաժնետերերի ռեսսորում և տիրապետում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին, ծանոթանալու նպատակով կարող են ընկերությունից պահանջել ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 70, կետ 5, մաս 1-ին), ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով կարող է գումարվել արտահերթ ժողով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 74, կետ 1, մաս 1-ին): Ընդ որում, արտահերթ ժողով գումարելու մասին ներկայացված պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում, և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը և այլն:

Նշված սահմանափակումները նպատակ են հետապնդում

բարձրացնել կորպորացիայի գործունեության արդյունավետությունը, կառավարման մարմիններին պաշտպանել առանձին մասնակիցների կողմից իրավունքը չարաշահելու հնարավորություններից:

Ընկերության գործունեության ընթացքում ստացված եկամտի արդարացի բաշխման սկզբունքը ենթադրում է, որ ստացված շահույթը յուրաքանչյուր մասնակցի միջև բաշխվում է կանոնադրական կապիտալում նրա ունեցած մասնակցությանը համաչափ: Օրինակ, շահույթի բաշխմանը մասնակցություն ունենալու իրավունքը բաժնետերն իրականացնում է իրեն պատկանող բաժնետոմսերին համապատասխան շահութաբաժին ստանալու միջոցով: Բացի դրանից, շահույթի բաշխմանը մասնակցություն կարող են ունենալ նաև ընկերության այն կառավարիչները, որոնք շահույթի ձևավորման գործում ունեցել են գործուն մասնակցություն: Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ այդ անձինք կարող են ընկերության շահույթից որոշակի տոկոսային հարաբերակցությամբ պարգևատրվել:

Կորպորացիայի կառավարման մարմինների անդամների անկախությունը ենթադրում է, որ կորպորացիայի մասնակիցները կամ նրանց կողմից ընտրված կամ նշանակված տնօրենների խորհրդի անդամները, ինչպես նաև գործադիր մարմնի անդամները պարտավոր են գործել բացառապես կորպորացիայի շահերից ելնելով, նվազագույնի հասցնեն կորպորացիայում կորպորատիվ բախումների առաջացման հնարավորությունը: Նրանք իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն ելնելով ընկերության շահերից, իրենց իրավունքներն ու պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով: Կառավարիչները որոշումներ կայացնելիս պետք է դրսևորեն անհրաժեշտ շրջահայացություն և հոգածություն, հաշվի առնեն բոլոր ռիսկերը և համոզված լինեն, որ կայացված որոշումը բխում է կորպորացիայի շահերից: Հակառակ պարագայում նրանց գործողությունների արդյունքում կորպո-

րացիային պատճառված վնասների համար վերջիններս կկրեն գույքային պատասխանատվություն:

Նշված սկզբունքը ենթադրում է, որ տնօրենների խորհրդի անդամները չպետք է կախվածության մեջ գտնվեն իրենց ենթակա գործադիր մարմնի անդամներից կամ ընտրած բաժնետերերից (մասնակիցներից):

Նշված սկզբունքի իրականացման ապահովման նպատակով, օրինակ, բաժնետիրական ընկերությունը պարտավոր է վարել խորհրդի անդամների ռեեստր, որտեղ պետք է տեղեկություններ պահպանվեն խորհրդի անդամների հետևյալ տվյալների մասին՝ անվան, ծննդյան տարեթվի, ամսի և ամսաթվի, աշխատանքի, բնակության վայրի ու հեռախոսահամարի, զբաղմունքի, մասնագիտության և կրթության, խորհրդի կազմում ընտրվելու տարեթվի, ամսի և ամսաթվի, և եթե նա ազատվել է անդամությունից, ապա՝ ազատվելու տարեթվի, ամսի և ամսաթվի, քանի անգամ է ընտրվել խորհրդի կազմում, տվյալ խորհրդի անդամին պատկանող ընկերության քվեարկող բաժնետոմսերի քանակի, այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նա զբաղեցնում է ղեկավար պաշտոններ, ինչպես նաև կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով նախատեսված այլ տվյալներ: Ընկերության բոլոր անդամներն ազատորեն կարող են ծանոթանալ այդ տվյալներին («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 83, կետ 3):

Այս սկզբունքի դրսևորումներից է նաև այն, որ կորպորացիայում որոշումներ կայացնող անձինք պարտավոր են բացահայտել այն տեղեկատվությունը, որը կարող է նշանակություն ունենալ այս կամ այն որոշման կայացման գործում շահագրգռվածության առկայության կամ երրորդ անձանց ազդեցության հնարավորության մասին: Կորպորացիայի կողմից կնքվող գործարքներում շահագրգռվածության առկայության հասկացությունը սերտորեն կապված է աֆիլացված (փոխկապակցված) անձինք հասկացության հետ: Օրինակ, բաժնետիրական ընկե-

րության կողմից կնքվող գործարքներում շահագրգիռ անձ է համարվում ընկերության փոխկապակցված անձը, որը՝ հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ, գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 62, կետ 1):

Փոխկապակցված են համարվում ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով⁴⁵ փոխկապակցված ճանաչվող այլ անձինք («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 62, կետ 2):

Օրենքը վերը նշված անձանց համար սահմանում է որոշակի պարտականություններ, որոնց կատարումն անհրաժեշտության դեպքում հնարավորություն կընձեռնի պարզել ընկերության կողմից կնքվող գործարքներում հնարավոր շահագրգռվածության առկայությունը, գործարքը կնքելիս կորպորացիայի շահի անտեսումը: Մասնավորապես, նրանք պարտավոր են ընկերության գործադիր մարմնին կամ կանոնադրությամբ սահմանված այլ մարմնի տրամադրել տեղեկատվություն՝ այն մասին, որ իրենք հանդիսանում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ՝ մինչև գործարքը կնքելը, կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ՝ վերը նշված տեղեկատ-

⁴⁵ ՀՀՊՏ 2007/53 (577), 31.10.07:

վությունն իրենց հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում: Շահագրգռվածության առկայությամբ ընկերության ցանկացած գործարք ներկայացվում է ընկերության տարեկան հաշվետվության մեջ՝ բացահայտելով ամբողջական և համապարփակ տեղեկատվություն գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ և կցելով անկախ գնահատողի եզրակացությունը շուկայական արժեքին գործարքի համապատասխանության վերաբերյալ: Ընկերության գործադիր մարմինը կամ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմին պարտավոր է վարել ընկերության փոխկապակցված անձանց ռեեստր («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 63):

Ինչպես տեսանք, արդի շուկայական տնտեսությանը հատուկ կազմակերպական հարաբերություններն սկզբունքորեն տարբերվում են խորհրդային ժամանակաշրջանի տնտեսության կազմակերպական հարաբերություններից: Ներկայումս քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, ղեկավարվելով հասարակական հարաբերությունների կարգավորման մասնավոր և հանրային մեթոդներով⁴⁶, ելնելով իրենց մասնավոր շահերից, կայացնում են կորպորացիայի ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումներ, կորպորացիայի կառավարման մարմիններն ընդունում և ապահովում են կորպորատիվ որոշումների իրականացումը, որոշում են համապատասխան կորպորացիայի զարգացման ռազմավարությունը, բաշխում են շահույթը կամ ստեղծում են հավելյալ կառուցակարգեր իրենց սոցիալական, մշակութային կամ ոչ առևտրային շահերի իրացման համար, այսինքն՝ կազմակերպում և կառավարում են կորպորացիայի գործունեությունը քաղաքացիաիրավական նորացված սկզբունքներով:

⁴⁶ Հասարակական հարաբերությունների կարգավորման մասնավոր և հանրային մեթոդների էության ու պատմական զարգացման որոշ առանձնահատկությունների մասին առավել մանրամասն տես՝ Ա. Մ. Հայկյանցի վերը նշված աշխատությունը, էջեր 20-53:

Այսպիսով, կարելի է արձանագրել քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակի ընդլայնման փաստը, և կորպորատիվ իրավահարաբերությունները բնութագրել որպես քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն տեսակ, համալիր իրավահարաբերություններ, որոնք հասարակական հարաբերությունների կարգավորման մասնավոր և հանրային մեթոդների հիման վրա կարգավորում են գույքային և դրանց սերտորեն առնչվող ոչ գույքային բնույթի բարիքներին վերաբերող կազմակերպակառավարչական հարաբերություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասում կատարել լրացում և քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունների շարքում «այլ պարտավորություններ,» բառերից հետո ավելացնել «կազմակերպություններում մասնակցության կամ դրանց կառավարման հետ կապված (կորպորատիվ հարաբերությունները),» բառերը, և նշված փոփոխությանը համահունչ համապատասխան փոփոխություններ կատարել կորպորատիվ իրավահարաբերությունները կարգավորող քաղաքացիական օրենսգրքի և այլ օրենքների համապատասխան նորմերում:

§ 1.2. Կորպորատիվ տիպի իրավաբանական անձինք

Քաղաքացիական շրջանառության մեջ քաղաքացիների հավաքական մասնակցության հիմնական ձևն իրավաբանական անձի կառուցակարգն է: Ժամանակակից հասարակության կյանքը՝ թե մասնավոր և թե հանրային ոլորտում, անհնարին է պատկերացնել առանց մարդկանց տարատեսակ միավորումների, որոնք ստեղծվում են դրա մասնակիցների կողմից այս կամ այն նպատակին հասնելու համար:

Քսաներորդ դարի երկրորդ կեսին ձևավորվեցին իրավաբանական անձանց մասին մի քանի տեսություններ, որոնցից առաջինը, այսպես կոչված, «անձնավորման» տեսությունն էր, որի հիմնադիրն էր Հռոմի պապ Ինոկենտիա Չորրորդը: Այդ շրջանում այս տեսությունը համընդհանուր ճանաչում էր գտել Ֆրանսիայում: Դրա հետևորդներից էր նաև ռուս ականավոր ցիվիլիստ Գ. Ֆ. Շերշենևիչը, ով իրավաբանական անձին անվանում էր միստիկ (ֆիկտիվ) անձ⁴⁷: Սակայն իրավաբանների մեկ այլ խումբ առաջ քաշեց հակադիր այլ տեսություններ, համաձայն որոնց՝ որպես իրավունքի սուբյեկտ կարող են հանդես գալ ոչ միայն ֆիզիկական, այլև վերանձնային, սոցիալական օրգանիզմները ևս (սոցիալական օրգանիզմների մասին տեսություն)⁴⁸, իսկ մեկ այլ խումբ գտնում էր, որ իրավաբանական անձը ֆիկցիա չէ, այլ դիտվում է որպես ֆիզիկական անձի նման իրականում գոյություն ունեցող իրավունքի սուբյեկտ⁴⁹ և այլն:

Հետագայում, երբ գիտակցվեցին այնպիսի ֆենոմենի գոյության անհրաժեշտությունը և բնույթը, ինչպիսին է իրավաբանական անձը, տարակարծություններ առաջացան այդ երևույթի էությունն արտահայտող եզրույթաբանության ընտրության հար-

⁴⁷ Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Шершеневич Г. Ф., Учебник русского гражданского права. М., 1985, էջեր 88-94, Brinz A. von Lehrbuch der pandekten. Erlangen, 1879:

⁴⁸ Տես Beseler K. G. von Volksrecht und Juristenrecht, 1843:

⁴⁹ Տես Gierke O. F. von Detsches Privatrecht. Berlin, 1895:

ցում: Գերմանական օրենսդրությունում օգտագործվեց «իրավաբանական անձ», ֆրանսիական օրենսդրությունում՝ «բարոյական անձ», իսկ անգլիական օրենսդրությունում՝ «կորպորացիա» եզրույթը⁵⁰:

Հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձինք զարգացած տնտեսություն և իրավակարգ ունեցող երկրների գույքային շրջանառության ամենակտիվ ու հիմնական մասնակիցներից են, որոնց կողմից իրականացվող գործառույթները պայմանականորեն կարելի է բաժանել չորս խմբի.

- կոլեկտիվ շահերի ու նպատակների ձևավորումը,
- հիմնադիրների (մասնակիցների) կապիտալի միավորումը,
- ձեռնարկատիրական ռիսկի սահմանափակումը,
- կապիտալի կառավարումը⁵¹:

Ըստ էության իրավաբանական անձի ինստիտուտի ի հայտ գալը պայմանավորված է նույն հանգամանքներով, ինչպիսիք որ ընկած են իրավունքի ծագման և զարգացման հիմքում. հասարակության սոցիալական կազմակերպման բարդացում, տնտեսական հարաբերությունների և հանրային գիտակցության զարգացում⁵²:

Համաձայն ՀՀ քաղ. օր-ի 50-րդ հոդվածի՝ «Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխա-

⁵⁰ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ավետիսյան Վ. Դ., Բաժնետիրական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Եր., 2005, էջ 9:

⁵¹ Ств Гражданское право, Учебник, под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого, М., 2005, էջեր 141-142:

⁵² Իրավաբանական անձանց մասին տեսություններին առավել մանրամասն անդրադարձել ենք սույն աշխատության առաջին պարագրաֆում:

նող»:

Ինչպես երևում է օրենսդրությամբ իրավաբանական անձին տրված վերոհիշյալ բնորոշումից՝ կազմակերպությունն իրավաբանական անձ ճանաչվելու համար պետք է օժտված լինի որոշակի հատկանիշներով, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ բոլորը միասին՝ բավարար, որպեսզի կազմակերպությունը հնարավոր լինի ճանաչել քաղաքացիական իրավունքի սուբյեկտ:

Տեսական գրականության⁵³ և գործող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել իրավաբանական անձին բնորոշ հետևյալ հատկանիշները.

- տնտեսական հատկանիշ. այն արտահայտվում է նրանում, որ իրավաբանական անձն ունի իր գործունեության նյութական բազան ապահովող գույք: Այդ գույքն առանձնացված է նրա մասնակիցների կամ հիմնադրի գույքից և տիրապետման, օգտագործման կամ տնօրինման իրավունքով պատկանում է տվյալ կազմակերպությանը: Առանձնացված գույք հասկացությունը մեկնաբանվում է տարածականորեն և դրա ներքո հասկացվում է ինչպես կազմակերպության սեփական գույքը, այնպես էլ կազմակերպության սեփականությունը չհանդիսացող, բայց նրան ամրացված գույքը: Որքան էլ որ առանձնացված գույք ունենալը տարածականորեն մեկնաբանվի որպես իրավաբանական անձի հատկանիշ, հնարավոր են դեպքեր, երբ իրավաբանական անձը՝ ինչպես ստեղծման պահին, այնպես էլ իր գոյության որոշակի ժամանակահատվածում ընդհանրապես գույք չունենա: Օրինակ՝ ոչ առևտրային կազմակերպությունների մեծամասնությունն ստեղծման պահին կարող է որևէ գույք չունենալ: Այդպիսի իրավաբանական անձանց գույքային ա-

⁵³ Տե՛ս Բարսեղյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, Երևան, 2000թ., էջեր 107-111, Гражданское право, Учебник, под редакцией А.П. Сергеева, Ю.К. Толстого, М., 2005, էջ 143, Корпоративное право, под ред. И.С. Шиткина, М., 2007, էջեր 68-70 և այլն:

ռանձնացվածությունը պայմանավորված է միայն նրանց առանձնացված գույք ունենալու ունակությամբ:

Իրավաբանական անձի կողմից որոշակի առանձնացված գույք ունենալը նպատակ է հետապնդում սահմանափակել հիմնադիրների (մասնակիցների) պատասխանատվության ռիսկը, ինչպես նաև ապահովել նրա հնարավոր պարտատերերի նվազագույն պահանջները:

- Գործառնական հատկանիշ. իրավաբանական անձինք բնորոշվում են իրենց կազմակերպական միասնությամբ: Կազմակերպական միասնությունը ենթադրում է, որ տվյալ կազմակերպության անդամները ենթարկվում են միևնույն կազմակերպական կարգ ու կանոնին, ունեն միասնական նպատակներ և կազմակերպության որոշակի կառուցվածք: Իրավաբանական անձի կազմակերպական միասնությունն արտահայտվում է տվյալ կազմակերպության կանոնադրությունում⁵⁴: Կանոնադրությամբ են սահմանվում նաև տվյալ կազմակերպության նպատակն ու խնդիրները, դրա կառուցվածքն ու գույքային դրությունը, կազմակերպության անդամների ու մարմինների իրավունքներն ու պարտականությունները:

- Նյութաիրավական հատկանիշ. այս հատկանիշն արտահայտվում է նրանում, որ իրավաբանական անձը քաղաքացիական շրջանառությունում հանդես է գալիս իր անունից, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային բնույթի իրավունքներ ու կրել պարտականություններ, իր ունեցած գույքով կրել ինքնուրույն գույքային պատասխանատվություն: Իրավաբանական անձի անվանումը հանդիսանում է քաղաքացիական շրջանառությունում նրա անհատականացման միջոցը, որը պետք տեղեկություններ պարունակի նաև նրա կազմակերպաիրավական ձևի մասին:

Նյութաիրավական հատկանիշին բնութագրական պայմաններից է ընկերության ինքնուրույն գույքային պատասխանատվությունը: Իրավաբանական անձը պատասխանատու է իրեն

⁵⁴ Стен Лаптев В. В. Акционерное право, М., 1999, т. 2: 44:

պատկանող ամբողջ գույքով: Հիմնադիրները կամ նրա մասնակիցները, որպես կանոն, պատասխանատու չեն իրավաբանական անձի պարտավորությունների համար, իսկ իրավաբանական անձն էլ պատասխանատու չէ սեփականատիրոջ կամ հիմնադրի պարտավորությունների համար, բացառությամբ օրենքով կամ հիմնադրման փաստաթղթում նախատեսված դեպքերի: Մասնավորապես, եթե բաժնետիրական ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ ընկերության պարտավորությունների համար⁵⁵:

Մի շարք երկրներում, օրինակ՝ Անգլիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրիա, Ֆրանսիա և այլն, իրավաբանական անձինք հանդիսանում են նաև քրեական պատասխանատվության սուբյեկտ⁵⁶,

⁵⁵ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ավետիսյան Վ. Դ. Բաժնետիրական իրավունք, Երևան, 2005, էջեր 11-12:

⁵⁶ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ իրավաբանական անձանց վրա ևս տարածվում է եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքնության իրավունքը (տես՝ PaykarYevHaghtanak Ltd. v. Armenia, Appl. 21638/03, para. 37, Judgment of December 20, 2007 (criminal/fiscal); SträgDatatjänster AB v. Sweden, Appl. 50664/99, Decision of June 21, 2005, (criminal/fiscal), Baroul Partner-A v. Moldova, Appl. 39815/07, Judgment of July 16, 2009, (civil) գործերով կայացված որոշումները): Արդար դատաքնության պահանջների պահպանված լինելը ստուգելիս եվրոպական դատարանը հաշվի չի առնում՝ դիմումատուն ֆիզիկական, թե իրավաբանական անձ է: Օրինակ՝ Ֆորթուօյլը և ԳագՕյն ընդդեմ Ֆինլանդիայի գործով Դատարանը գտել է, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող իրավաբանական անձանց նկատմամբ 6-րդ հոդվածը կիրառվում է նույն կերպ, ինչ ֆիզիկական անձանց նկատմամբ (տես՝ Fortum Oil and Gas Oy v. Finland, Appl. 32559/96, para. 2, Judgment of November 12, 2002, (de facto criminal), Aannemersbedrijf Gebroeders Van Leeuwen BV v. The Netherlands, Appl. 32602/96, paras. 1-2, Decision of January 25, 2000, (civil/criminal) գործերով կայացված որոշումները):

սակայն Հայաստանի Հանրապետությունում գործում է իրավաբանական անձանց մարմինների քրեորեն պատժելի գործողությունների համար իրավաբանական անձի քաղաքացիաիրավական կամ վարչական պատասխանատվության սկզբունքը, պատասխանատվություն, որի չափերը երբեմն էապես գերազանցում են ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության համար նախատեսված տուգանքների չափերը⁵⁷:

- Դատավարական հատկանիշ. այն արտահայտվում է դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող հանդես գալու հնարավորությամբ:

Իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում տրված իրավաբանական անձի հասկացությունն իրերի փաստացի վիճակը չի արտացոլում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված նորմում իրավաբանական անձը, մի շարք այլ հատկանիշների հետ մեկտեղ, բնորոշվում է որպես կազմակերպություն, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք: Այսինքն՝ դրանից կարելի է ենթադրել, որ եթե կազմակերպությունը սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք չունի՝ չի կարող համարվել իրավաբանական անձ: Սակայն հետագա իրավակարգավորմամբ օրենսդիրն ինքն իր տրամաբանությանը հակասում է: Մասնավորապես, վերացնելով նվազագույն կանոնադրական կապիտալի չափերը՝ օրենսդիրն ստեղծել է մի իրավիճակ, երբ կարող է ստեղծվել իրավաբանական անձ, որին ստեղծման պահին սեփականականության իրավունքով որևէ գույք չպատկանի: Իրավիճակն առավել ակն-

⁵⁷ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Аветисян В. Д., Аветисян С. С. Некоторые проблемы административной и гражданской ответственности корпораций за уголовно наказуемые деяния: “Правонарушение и юридическая ответственность”, Материали международной научно-практической конференции, Тольятти, 2012, էջեր 13-19:

հայտ է ոչ առևտրային կազմակերպությունների, մասնավորապես՝ հիմնադրամների պարագայում, որոնց համար ստեղծման պահին սեփականության իրավունքով գույք ունենալու պարտադիր պահանջ օրենսդրությամբ սահմանված չէ: Փաստորեն, սեփականության իրավունքով գույք ունենալու հատկանիշը, գործող իրավակարգավորման պայմաններում, ընդամենը սեփականության իրավունքով գույք ունենալու հնարավորության արձանագրումն է, և այդ հանգամանքը պետք է հստակ արտահայտվի իրավաբանական անձի օրենսդրական հասկացության ձևակերպման մեջ: Եվ, ընդհանրապես, քաղաքացիական օրենսդրության կատարելագործման ընթացքում պետք է հետևել այն սկզբունքին, որ քաղաքացիական օրենսգրքում չամրագրվեն իմպերատիվ նորմեր կամ հասկացություններ, որոնցից բացառությունները կամ դրանց տրամաբանությունից շեղվող այլ նորմերը սահմանվում են օրենսգրքի այլ նորմերում կամ հատուկ օրենքներում, կամ նորմեր, որոնք ունեն տեսական, այլ ոչ թե գործնական նշանակություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք, քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որն ունի սույն օրենսգրքով կամ օրենքով նախատեսված համապատասխան կազմակերպաիրավական ձև և պետական գրանցում:»:

Իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձև ասելով՝ նկատի ունենք որոշակի յուրահատուկ հատկանիշների ամբողջություն, որոնք կապված են իրավաբանական անձի գույքի, կազմակերպական կառուցվածքի, մասնակիցների (հիմնադիրների, անդամների), նրանց և կառավարման մարմինների միջև առաջացող հարաբերությունների, իրավաբանական անձի հետ մասնակիցների (հիմնադիրների, անդամների) փոխհարաբե-

րության, ինչպես նաև իրավաբանական անձի մասնակիցների (հիմնադիրների, անդամների) և կորպորատիվ իրավահարաբերությունների այլ մասնակիցների առջև ունեցած պարտավորությունների հետ:

Իրավաբանական անձանց գործունեության նպատակից ելնելով՝ ՀՀ քաղ. օր-ի 51-րդ հոդվածի 1-ին մասն իրավաբանական անձանց բաժանում է երկու տեսակի՝ առևտրային կազմակերպություններ և ոչ առևտրային կազմակերպություններ: Առևտրային կազմակերպությունների գործունեության հիմնական նպատակը շահույթի ստացումը և մասնակիցների միջև դրա բաշխումն է, իսկ ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը նման նպատակ չի հետապնդում: Ոչ առևտրային կազմակերպություններն առևտրային գործունեությանը կարող են զբաղվել միայն այնքանով, որքանով այն անհրաժեշտ է կանոնադրային խնդիրներն իրականացնելու համար: Նման գործունեության արդյունքում ստացված եկամուտը նրանք իրավունք չունեն բաշխել հիմնադիրների միջև և պարտավոր են ծախսել կանոնադրությամբ նախատեսված նպատակներով:

Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների, ընկերությունների և առևտրային կոոպերատիվների ձևով, իսկ ոչ առևտրային կազմակերպությունները՝ սպառողական կոոպերատիվների, հասարակական և կրոնական կազմակերպությունների (միությունների), սեփականատիրոջ կողմից ֆինանսավորվող հիմնարկների, բարեգործական և այլ հիմնադրամների (ֆոնդերի), ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով:

Իրավաբանական անձանց տարատեսակ կազմակերպարավական ձևերի գոյությունը Հայաստանի Հանրապետությունում թույլ է տալիս իրավաբանական անձանց միմյանցից տար-

բերել նաև գույքի նկատմամբ հիմնադիրների (մասնակիցների) իրավունքի բնույթից ելնելով, որոնք պայմանականորեն բաժանվում են հինգ խմբի. իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրները (մասնակիցները) իրավաբանական անձին համապատասխան գույք հանձնելով, ամբողջովին կորցնում են իրենց իրային իրավունքներն այդ գույքի նկատմամբ (այդպիսիք են ընկերակցությունները և ընկերությունները), իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրները (մասնակիցները) գույքը հանձնելով իրավաբանական անձի տիրապետմանը, օգտագործմանը և տնօրինմանը, շարունակում են մնալ դրա սեփականատեր, իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրները (մասնակիցները), համապատասխան գույքը հանձնելով իրավաբանական անձին ի սեփականություն, կորցնում են իրային իրավունքն այդ գույքի նկատմամբ և ձեռք բերում պարտավորական իրավունքներ⁵⁸, իրավաբանական անձինք, որոնց գույքի մի մասը ձևավորվում է հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով հանձնվող, ինչպես նաև գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից, իսկ մյուս մասը՝ անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հանձնված (ամրացված) գույքից, իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրները (մասնակիցները) իրենց գույքը հանձնում են իրավաբանական անձին ի սեփականություն և իրավաբանական անձի նկատմամբ որևէ իրավունք՝ իրային կամ պարտավորական, ձեռք չեն բերում⁵⁹ :

Գտնում ենք, որ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավաբանական անձանց տեսակները նախատեսող կամ սահմանազատող դրույթները լրանշակման և փոփոխման անհրաժեշտութ-

⁵⁸ Մեր կարծիքով, այս դեպքում ձեռք են բերվում ոչ թե պարտավորական, այլ կորպորատիվ իրավունքներ:

⁵⁹ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Բարսեղյան Տ.Կ. Գործարարական իրավունք, Երևան, 2007, էջեր 90-93:

յուն ունեն: Մասնավորապես, կորպորատիվ իրավահարաբերությունների ինքնուրույն բնույթը, որի գոյությունը փորձեցինք հիմնավորել սույն գլխի առաջին պարագրաֆում, պահանջում է իրավաբանական անձանց առևտրայինի և ոչ առևտրայինի ավանդական դասակարգմանը զուգահեռ սահմանազատել կորպորատիվ և ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց: Այն իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրները (մասնակիցները, անդամները) ունեն դրանց գործունեության կառավարմանը մասնակցելու իրավունք, պետք է դասել կորպորատիվ կազմակերպությունների (կորպորացիաների) շարքը, օրինակ՝ տնտեսական ընկերությունները⁶⁰ և ընկերակցությունները⁶¹, արտադրական ու սպառողական կոոպերատիվները, հասարակական կազմակերպությունները, ասոցիացիաները (միությունները): Իսկ այն իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրներն իրավաբանական անձի գործերի վարմանը մասնակցության կամ անդամության իրավունք ձեռք չեն բերում, պետք է դասել ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց շարքը, օրինակ՝ հիմնադրամներ, կրոնական կազմակերպություններ և այլն:

Հարկ ենք համարում ուշել, որ իրավաբանական անձանց բաժանումը կորպորատիվի և ոչ կորպորատիվի (ունիտարի)

⁶⁰ Գտնում ենք, որ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձևն արհեստածին է, ՀՀ իրավական համակարգում ոչ կենսունակ: Մասնավորապես, 14 տարվա ընթացքում ՀՀ-ում մնան կազմակերպաիրավական ձև ունեցող իրավաբանական անձ չի ստեղծվել, ուստի առաջարկում ենք իրավաբանական անձի այդ կազմակերպաիրավական ձևը քաղաքացիական օրենսգրքով չնախատեսել:

⁶¹ Ընկերակցությունների վերաբերյալ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումը ևս խիստ թերի է ու ոչ ամբողջական, ինչի արդյունքում, օրենսգրքի գործողության 14 տարիների ընթացքում, ՀՀ-ում ընկերակցություններ չեն ստեղծվել: Նշված իրավիճակը բացառելու համար անհրաժեշտ է ընկերակցությունների սուբյեկտային կազմի և հիմնադիր փաստաթղթի հետ կապված համապատասխան փոփոխություններ կատարել, ինչը, մեր կարծիքով, կնպաստի ՀՀ-ում ընկերակցությունների կազմակերպաիրավական ձևի տարածմանը:

համապատասխանում է արևմտյան երկրների մեծամասնության պատմականորեն ձևավորված դոկտրինային, ինչն արտացելվել է նաև գերմանացի ցիվիլիստներ Գեյզեյի, Սավինի, Գիրկեի, Բերանացկու աշխատություններում⁶²: Այս մոտեցումը համապատասխանում է նաև ռուսական, վրացական իրավակարգին: Ռուսական մինչհեղափոխական իրավունքում նույնպես իրավաբանական անձինք դասակարգվում էին կորպորացիաների և հիմնարկների՝ ելնելով դրանց մասնակիցների միջև առկա կապերի բնույթից⁶³:

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության կատարելագործմանը կնպաստի նաև իրավաբանական անձանց՝ հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց դասակարգումը ևս: Օրինակ, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի⁶⁴ 1-ին հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է: Կենտրոնական բանկը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»: Հարց է ծագում՝ Կենտրոնական բանկը հանդիսանալով իրավաբանական անձ՝ ինչ կազմակերպաիրավական ձև ունի: Գործող իրավակարգավորման պայմաններում մենք այդ հարցի պատասխանը տալ չենք կարող: Ուստի գտնում ենք, որ քաղաքացիական օրենսգիրքը մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց պետք է տարանջատի հանրային իրավունքի իրավաբանական ան-

⁶² Ст'ю Суворов Н. С. О юридических лицах по римскому праву. — М., 2000, էջեր 67, 141 և այլն, Козлова Н. В. Понятие и сущность юридического лица: Очерк истории и теории. — М., 2003, էջ 213 և այլն:

⁶³ Ст'ю Тарасов И. Т. Учение об акционерных компаниях. — М., 2000, էջեր 68-69:

⁶⁴ ՀՀ ԱԺՏ 1996/12 30.06.96:

ծանցից: Պետք է ճանաչվի հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ համահավասար քաղաքացիական իրավահարաբերություններում հանդես գալու հնարավորությունը, դրանց ստեղծման, կազմակերպման և գործունեության փաստը հավաստող օրենսդրության շրջանակներում: Նշենք, որ նման իրավակարգավորում առկա է Վրաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում⁶⁵:

Ինչպես արդեն նշեցինք, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետությունում առավել լայն տարածում ունեցող, բարդ կազմակերպարավական ձևերից են հանդիսանում բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, և հետագա շարադրանքում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերաբերող խնդիրները կքննարկվեն բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների օրինակով: Այս կազմակերպարավական ձևերի օրինակով վեր հանված խնդիրները (իրավասուբյեկտություն, հսկող և հսկվող կորպորացիաներ, կորպորացիաների տեղաշարժ, շահերի բախում, կորպորատիվ կառավարում և այլն) և կատարված առաջարկներն անհրաժեշտության դեպքում կարող են ընդհանրացվել և կիրառվել կորպորատիվ տիպի այլ իրավաբանական անձանց պարագայում ևս:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետեր-

⁶⁵ Տե՛ս The Civil Code of Georgia, article 24, <http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/oeur/arch/geo/CIVILCODE.pdf>:

րի պարտավորական իրավունքը⁶⁶ հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի»:

Բաժնետիրական ընկերության կազմակերպահրավական ձևը խոշոր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու առավել բարդ, բայցև արդյունավետ եղանակն է: Իրավաբանական անձի այս կազմակերպահրավական ձևն անցել է պատմական զարգացման յուրօրինակ ուղի, որի արդյունքում ձևավորվել են բաժնետիրական ընկերությունների մասին տեսություններ, որոնցից մի քանիսը ինչ-որ առումով խաչվում են իրավաբանական անձանց մասին տեսությունների հետ⁶⁷:

Բաժնետիրական ընկերության կազմակերպահրավական

⁶⁶ Համեմատելով քաղաքացիական օրենսգրքի 106 հոդվածի 1-ին կետում տրված բաժնետիրական ընկերության սահմանումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 1-ին մասում տրված սահմանման հետ՝ տեսնում ենք, որ օրենքում այն ենթարկվել է որոշակի փոփոխության: Մասնավորապես, քաղաքացիական օրենսգրքում բաժնետիրական ընկերությունը բնորոշվում է հետևյալ կերպ. «Բաժնետիրական ընկերություն է համարվում այն ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի»: Իսկ օրենսգրքի 157-րդ - հոդվածում բաժնետոմսը բնորոշվում է որպես արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը: Ըստ էության, օրենքի հեղինակները գտել են, որ բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը պարտավորական իրավունք է և փորձել են բաժնետոմսի սեփականատիրոջ փոխհարաբերություններն ընկերության հետ ներկայացնել որպես պարտավորական հարաբերություններ, որի հետ մենք համամիտ չենք: Մենք գտնում ենք, որ բաժնետոմսը հավաստում է բաժնետիրոջ ընկերության հանդեպ ունեցած կորպորատիվ իրավունքները և, հետևաբար, օրենքում և օրենսգրքում բաժնետիրական ընկերությունը պետք է բանաձևվի որպես կորպորատիվ տիպի կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի կորպորատիվ իրավունքը հավաստող որոշակի թվով բաժնետոմսերի:

⁶⁷ Հետաքրքրական է ամերիկյան տեսաբանների կողմից մշակված «Պայմանագրի տեսությունը», որը բաժնետիրական ընկերությունը դիտում է որպես պայմանագիր կորպորացիայի մասնակիցների, կորպորացիայի մասնակիցների և կորպորացիայի, կորպորացիայի մասնակիցների կամ կորպորացիայի, մի կողմից, և պետության միջև՝ մյուս կողմից: Տե՛ս Harry G. Henn, John R. Alexander. *Laws of Corporations*, West Publishing Co., 1983. էջեր 952 – 953:

ձևը հնարավորություն է ընձեռում մեծածավալ կապիտալ կենտրոնացնել, որպես կանոն, խոշոր տնտեսական ծրագրեր իրականացնելու համար: Բաժնետիրական ընկերությունների գոյության անհրաժեշտությունն առավել պատկերավոր է նշել Կ. Մարքսը, ըստ որի՝ «Աշխարհը մինչ օրս կմնար առանց երկաթուղու, եթե սպասեր, որ առանձին կապիտալների կուտակումը հասներ այնպիսի չափերի, որ հնարավոր լիներ կառուցել երկաթուղիները: Բաժնետիրական ընկերությունների միջոցով նման կենտրոնացումը կատարվեց մեկ ակնթարթում»⁶⁸:

Բաժնետիրական ընկերության կազմակերպարավական ձևը հնարավորություն է տալիս մանր սեփականատերերին պատկանող կապիտալը կենտրոնացնել և դրա հիման վրա ստեղծել անհրաժեշտ չափի կապիտալ՝ ընկերության առջև դրված նպատակին հասնելու համար: Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասը ձևակերպվում է բաժնետոմսերով, որը կարող է շուկայում ազատ շրջանառության մեջ դրվել: Այս կառուցվածքը հնարավոր է դարձնում ապահովել կապիտալի հոսքը գործարարության մի ոլորտից մյուսը:

Նշված դրականի հետ մեկտեղ, բաժնետիրական ընկերության կազմակերպարավական ձևը բազմաթիվ վտանգներ է պարունակում իր կողմից թողարկված արժեթղթերի սեփականատերերի և դրանց առնչվող անձանց համար⁶⁹, որոնց սույն աշխատության շրջանակներում դեռ կանդրադառնանք:

Բաժնետիրական ընկերությունն օժտված է իրավունքի սուբյեկտին բնորոշ բոլոր հատկանիշներով՝ իրավունակությամբ և գործունակությամբ: Մասնավորապես, ունի բաժնետերերի գույքից առանձնացված գույք, իրավասու է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես

⁶⁸ Տե՛ս Նազարյան Վ. Իրավաբանական անձինք, Երևան, 2000թ., էջ 59:

⁶⁹ Տե՛ս Удинцев В.с. Русское торговое-промышленное право. Киев, СПб., 1907, էջ 274:

հայցվոր կամ պատասխանող:

Քաղաքացիական իրավունքի տեսության մեջ ընդունված է տարանջատել իրավաբանական անձի ընդհանուր (ունիվերսալ) և հատուկ իրավունակության հասկացությունները: Ընդհանուր իրավունակությունը ենթադրում է իրավունքի սուբյեկտի հնարավորությունը օրենքով չարգելված ցանկացած գործունեություն իրականացնելու համար ունենալ իրավունքներ և կրել պարտականություններ: Իսկ հատուկ իրավունակությունը ենթադրում է իրավաբանական անձի մոտ միայն այնպիսի իրավունքների ու պարտականությունների առկայություն, որոնք անհրաժեշտ են կանոնադրությամբ ամրագրված նպատակների հասնելու համար⁷⁰:

Մինչև ՀՀ նոր քաղաքացիական օրենսգրքի ընդունումը Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձինք օժտված էին հատուկ իրավունակությամբ, ինչը, մեր կարծիքով, արգելք էր շուկայական հարաբերությունների բնականոն զարգացման համար: Սակայն ՀՀ նոր քաղաքացիական օրենսգիրքը առևտրային կազմակերպության համար ամրագրեց օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակ իրականացնելու հնարավորություն, որի արդյունքում այդ խոչընդոտը որոշակիորեն հաղթահարվեց: Սահմանվեց, որ առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ (Քաղ. օր-ի հոդվ. 52): Սակայն օրենսգիրքը միաժամանակ նախատեսեց, որ գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրավաբանական անձը կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա: Անհրաժեշտ է նաև նշել, որ բաժնետիրական ընկերության իրավունակությունը կարող է սահմանափակ-

⁷⁰ Ст'я Гражданское право, Учебник /под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого/, М., 2005, էջեր 151-152:

վել միայն օրենքով նախատեսված դեպքում և օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև ընկերության կանոնադրությամբ:

Այսինքն, բաժնետիրական ընկերությունը կարող է ունենալ օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակ իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ: Ընկերությունը գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրավունք ունի զբաղվելու միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) առկայության դեպքում: Բաժնետիրական ընկերության իրավունակությունն ու գործունակությունը միասնական են և ծագում են ընկերության պետական գրանցման պահից: Քաղաքացիական օրենսգրքում և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում⁷¹ ամրագրված է բաժնետիրական ընկերությունների ընդհանուր իրավունակության կանխավարկածը: Դրա հետ մեկտեղ, լիցենզավորումը նշանակում է, որ համապատասխան լիցենզիա չունեցող առևտրային կազմակերպությունը չի կարող զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեությամբ: Իսկ որոշակի դեպքերում համապատասխան լիցենզիայի առկայությունը սահմանափակում է իրավաբանական անձի՝ լիցենզավորման ենթակա գործունեությունից բացի այլ գործունեություն իրականացնելու հնարավորությունը: Օրինակ՝ վիճակախաղի կազմակերպիչը, վիճակախաղի կազմակերպման գործունեությունից բացի, կարող է զբաղվել միայն վիճակախաղերի տոմսերի իրացման, պատրաստման և (կամ) ներմուծման գործունեությամբ («Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք⁷², հոդվ. 5, կետ 1, «ը» ենթակետ), Կենտրոնական դեպոզիտարիային արգելվում է իրականացնել կենտրոնացված պահառուի, կենտրոնացված ռեեստրավարի և արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորի գործառույթներից բացի որեւէ այլ գործունեություն, եթե այլ բան սահ-

⁷¹ ՀՀ ՊՏ 2001/34 (166), 06.11.01:

⁷² ՀՀ ՊՏ 2004/2 (301), 14.01.04:

մանված չէ Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք⁷³, հոդվ. 175) և այլն:

Այս հանգամանքը վկայում է կազմակերպության իրավունակության որոշակի սահմանափակման մասին: Ընդհանուր իրավունակության կանխավարկածի օրենսդրական ամրագրումը բաժնետիրական ընկերության հիմնադիրներին չի զրկում իրենց կողմից ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրության մեջ գործունեության այն տեսակների ցանկը սահմանելու իրավունքից, որով պետք է զբաղվի հիմնադրվող առևտրային կազմակերպությունը: Այսինքն՝ առևտրային իրավաբանական անձանց հիմնադիրները կարող են գնալ իրավունակության ինքնասահմանափակման:

Նման իրավիճակներում կարևոր է դառնում քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների շահերի պաշտպանության խնդիրը: Ելնելով այդ շահերի պաշտպանությունից, ՀՀ քաղ. օր-ի 314-րդ հոդվածը սահմանում է, որ իրավունակությունն ինքնասահմանափակած առևտրային կազմակերպության կողմից երրորդ անձանց հետ կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, եթե ապացուցված է, որ գործարքի մյուս կողմը գիտեր կամ ակնհայտորեն պետք է գիտենար նման սահմանափակման մասին:

Ընկերությունը կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք, ֆիրմային անվանում պարունակող դրոշմներ, ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով և պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար, վերջիններս էլ պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի ար-

⁷³ ՀՀՊՏ 2007/53 (577), 31.10.07:

Ժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Սակայն, եթե ընկերության անվճարունակությունը (սնանկությունը) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունը (անգործությունը), որոնք ունեն ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում ընկերության պարտավորությունների համար այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն:

Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները՝ ընկերությանը որոշակի գործողություններ կատարելուն կամ չկատարելուն պարտադրելու նպատակով, նախօրոք գիտենալով, որ այդ պատճառով ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորությունների համար, իսկ ընկերությունն էլ իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

Բաժնետիրական ընկերությունն իրավաբանական անձի միակ կազմակերպարավական ձևն է, որն ունի երկու տեսակ՝ բաց և փակ բաժնետիրական ընկերություններ: Ընկերության ձևի մասին նշումները պետք է արտահայտվեն նրա կանոնադրության կամ ֆիրմային անվանման մեջ:

Ընկերությունը համարվում է բաց, եթե նրա բաժնետերերն իրավունք ունեն օտարելու իրենց պատկանող բաժնետոմսերը՝ առանց մյուս բաժնետերերի համաձայնության: Այդ ընկերու-

յուններն իրավունք ունեն անցկացնելու իրենց թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն և դրանց ազատ վաճառք, կարող են իրականացնել նաև իրենց թողարկած բաժնետոմսերի փակ բաժանորդագրություն: Բաց բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի թվաքանակը չի սահմանափակվում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 8, կետեր 1 և 2):

Ընկերությունը համարվում է փակ, եթե ընկերության բաժնետոմսերը բաշխվում են նրա բաժնետերերի (այդ թվում՝ հիմնադիրների) կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Փակ բաժնետիրական ընկերությունն իրավունք չունի անցկացնելու իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկելու ձեռք բերել դրանք («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 8, կետ 3):

Փակ բաժնետիրական ընկերությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 բաժնետեր: Եթե բաժնետերերի թիվը 49-ից ավելի է դարձել, ապա ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի⁷⁴ կամ համապատասխանաբար կրճատի իր բաժնետերերի թվաքանակը: Հակառակ դեպքում այն ենթակա է դատական կարգով լուծարման:

Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերն ունի այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իրավունքից, ապա ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք

⁷⁴ Կարծում ենք, որ վերակազմավորում բառը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում և քաղաքացիական օրենսգրքում սխալ է օգտագործված, քանի որ փակ և բաց բաժնետիրական ընկերությունները միևնույն կազմակերպատիրավական ձև ունեցող իրավաբանական անձի՝ բաժնետիրական ընկերության, տեսակներն են, իսկ տեսակի փոփոխությունը չի կարող դիտվել որպես կազմակերպատիրավական ձևի փոփոխություն:

բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանցից հրաժարվելու մասին որոշումը կայացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի իրականացման կարգը և ժամկետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ: Սակայն նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կարող բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից 30 օրից պակաս և 60 օրից ավելի լինել⁷⁵:

Ի տարբերություն փակ բաժնետիրական ընկերության բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերն ազատ են իրենց բաժնետոմսերն օտարելու ինչպես մյուս բաժնետերերին, այնպես էլ երրորդ անձանց: Դրա հետևանքով բաց բաժնետիրական ընկերության մասնակիցների կազմը, որը համեմատաբար մեծաթիվ է, հեշտությամբ կարող է փոխվել: Այստեղից էլ ծագում է մնան բաժնետիրական ընկերության գործերը հրապարակային վարելու անհրաժեշտությունը: Ելնելով դրանից, ՀՀ քաղ. օր-ի 107-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ բաց բաժնետիրական ընկերությունը պարտավոր է ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը: Նման հրապարակումները չեն կարող վնաս պատճառել ընկերությանը, քանի որ դրանք առևտրային գաղտնիք չեն պարունակում: Բացի դրանից, բաց բաժնետիրա-

⁷⁵Բաժնետիրոջ կողմից նախապատվության իրավունքի իրականացման կարգի առանձնահատկություններին կանոնադրառմանը սույն աշխատության երկրորդ գլխում:

կան ընկերության մասնակից կարող է լինել ցանկացած անձ:

Ի տարբերություն բաց բաժնետիրական ընկերության, որը կարող է ունենալ անգամ հազարավոր բաժնետերեր, փակ բաժնետիրական ընկերության մասնակիցների թիվը սահմանափակ է՝ 49 անձ:

Փակ բաժնետիրական ընկերության համար գործերը հրապարակային վարելու պարտականություն սահմանված չէ: Այս առումով, փակ բաժնետիրական ընկերությունը նման է սահմանափակ և լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություններին: Միաժամանակ, հարկ է հատուկ ընդգծել, որ թե փակ բաժնետիրական ընկերությունները և թե բաց բաժնետիրական ընկերություններն իրավաբանական անձի նույն կազմակերպարարական ձևի՝ բաժնետիրական ընկերության տարատեսակներն են և չեն համարվում առևտրային կազմակերպությունների ինքնուրույն կազմակերպարարական ձևեր:

Կարծում ենք, որ օրենսդրի կողմից բաժնետիրական ընկերությունների երկու տեսակների նախատեսումը գործնականում էական նշանակություն չունի և կրում է արհեստական բնույթ⁷⁶: Բաժնետիրական ընկերությունների տեսակների չնախատեսման դեպքում, համապատասխան իրավակարգավորման առկայության պայմաններում, ցանկացած բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ կարելի է նախատեսել բոլոր այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են փակ բաժնետիրական ընկերությանը, և ստանալ այն արդյունքը, որին ձգտում է

⁷⁶ Հարկ ենք համարում նշել, որ բաժնետիրական ընկերության՝ երկու տեսակների տարանջատումը գոյություն ունի միայն հետխորհրդային մի քանի պետություններում, զարգացած տնտեսություն ունեցող և կորպորատիվ իրավահարաբերությունների ձևավորված ավանդույթներ ունեցող պետություններին հայտնի է բաժնետիրական ընկերությունը որպես իրավաբանական անձի ինքնուրույն կազմակերպարարական ձև: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպարարական ձևի առկայության պայմաններում, որի առանձնահատկությունների մասին կխոսենք ստորև. կարծում ենք, որ կարելի է հրաժարվել բաժնետիրական ընկերությունների տեսակներից:

հասնել օրենսդիրը՝ սահմանելով բաժնետիրական ընկերության տեսակները:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է նշել, որ բաժնետիրական ընկերության կազմակերպարավական ձևն ունի հետևյալ առավելությունները.

- նպաստում է խոշոր ներդրումների ներգրավմանը: Բաժնետիրական ընկերությունները, ի տարբերություն այլ առևտրային կազմակերպությունների, ունեն ավելի ցածր գնով ներդրումների ներգրավման հնարավորություն: Մասնավորապես, բաժնետիրական ընկերության ղեկավարությունը, բանկերին և այլ վարկային կազմակերպությունների դիմելու փոխարեն, հնարավորություն է ստանում կապիտալ ներգրավել՝ թողարկելով բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր: Ընկերության կազմակերպարավական ձևը հիմնականում գերադասելի է մեծ թվով մասնակիցներ ունեցող և խոշոր ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համար:

- Վնասների ռիսկի ապակենտրոնացումը: Բաժնետիրական ընկերության գործունեության ռիսկը կապիտալի շուկաների միջոցով բաշխվում է բազմաթիվ բաժնետերերի միջև, որոնք կրում են միայն ընկերությունում իրենց ներդրած գումարների կորստի ռիսկը:

- Բաժնետերերի պատասխանատվության սահմանափակումը: Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ֆինանսական ռիսկը սահմանափակված է նրանց պատկանող բաժնետոմսերի արժեքի գումարով: Բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում բաժնետիրական ընկերության իրավական կամ ֆինանսական պարտավորությունների համար: Այս հանգամանքը բաժնետիրական ընկերությունը դարձնում է համատեղ գործունեություն իրականացնելու նախընտրելի ձև, քանի որ ներդրումների այլ ձևերը կապված են մեծ ռիսկի հետ:

- Ընկերության պրոֆեսիոնալ ղեկավարումը: Բաժնետիրական ընկերության կազմակերպական կառուցվածքը բաժնե-

տերերին լայն հնարավորություն է ընձեռում վարձելու բարձրորակ մասնագետների և իրականացնելու ընկերության արդյունավետ ղեկավարումը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքի⁷⁷ հոդվ. 3, մաս 1):

Կանոնադրական կապիտալը բաժնեմասերի բաժանելն ընկերության գույքը չի վերածվում դրա մասնակիցների ընդհանուր սեփականության, այլ միայն հնարավորություն է տալիս պարզել յուրաքանչյուր մասնակցի ընկերությունում ունեցած ներդրման չափը: Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար, իսկ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Ընկերության մասնակիցը, որն ընկերության կանոնադրական կապիտալում իր ավանդն ամբողջությամբ չի ներդրել, համապարտ պատասխանատվություն է կրում ընկերության պարտավորությունների համար՝ իր ավանդի չվճարված մասի արժեքի սահմաններում:

Ներկայումս սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում են իրավավաբանական աժի ամենատարածված կազմակերպիչական ձևերից մեկը: Դրան մեծապես նպաստել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բնորոշ հետևյալ հատկանիշները.

⁷⁷ ՀՀՊՏ 2001/38 (170), 07.12.01:

- արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման անհրաժեշտության բացակայությունը,

- կանոնադրական կապիտալը մասնակիցների հաշվին արագ համալրելու հնարավորությունը,

- գործունեության վերաբերյալ տեղեկատվության բացահայտման պարտականության բացակայությամբ պայմանավորված բիզնեսի գաղտնի վարման հնարավորությունը,

- կորպորատիվ զավթումներից ընկերությունը պաշտպանելու և կառավարման նկատմամբ մասնակցի ազդեցությունը պահպանելու արդյունավետ մեխանիզմների առկայությունը,

- իր գործողություններով կամ անգործությամբ ընկերության բնականոն գործունեությունը դժվարեցնող կամ անհնարին դարձնող մասնակցին ընկերությունից հեռացնելու հնարավորությունը,

- ընկերությունից՝ անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից, ցանկացած ժամանակ դուրս գալու մասնակցի իրավունքը,

- կառավարման համեմատաբար պարզ համակարգի առկայությունը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և բաժնետիրական ընկերությունների միջև հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է բաժնետոմսերից, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ բաժնեմասերից: Այդ իսկ պատճառով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կարող է թողարկել արժեթղթեր, բացառությամբ բաժնետոմսերի:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքը տարրորոշում է բաժնեմասի անվանական արժեք և բաժնեմասի արժեք հասկացությունները: Բաժնեմասի անվանական արժեքի չափով որոշվում է մասնակցի ունեցած բաժնեմասի չափը, իսկ բաժնեմասի արժեքն ունի կարևոր

նշանակություն մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելիս, մասնակցի ընկերությունից դուրս գալիս կամ հեռացվելիս բաժնեմասի արժեքը որոշելու համար: Ի տարբերություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, որը սահմանում է բաժնետոմսի շուկայական արժեքի հասկացությունը, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքը չի կարգավորում բաժնեմասի շուկայական արժեքի սահմանման հետ կապված հարաբերությունները, այլ միայն սահմանում է բաժնեմասի արժեքի որոշման կարգը, որը հաճախ որևէ կապ չունի շուկայական արժեքի հետ (օրինակ, ընկերությունից դուրս գալու դեպքում բաժնեմասի արժեքը որոշվում է ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքի հոդվ. 23, մաս 1), իսկ հաշվապահական հաշվետվությունները միշտ չէ, որ արտացոլում են ընկերության ակտիվների շուկայական արժեքը):

Ուստի փոքրամասնություն կազմող մասնակիցների շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով՝ առաջարկում ենք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի 2-րդ նախադասությունը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերությունը պարտավոր է ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ վեց ամսվա ընթացքում, մասնակցին վճարել բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) շուկայական արժեքը: Բաժնեմասի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Ընկերության զուտ ակտիվների արժեքը, ինչպես նաև այն գինը, որն Ընկերության բոլոր բաժնեմասերի համար

համաձայն է վճարել Ընկերության գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք Ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր:

Սույն կետով որոշվող բաժնեմասի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է Ընկերության զուտ ակտիվների արժեքը հիմք ընդունելով:»:

Բաժնեմասի անվանական արժեքը կատարում է մի քանի գործառույթ.

- դրամական արտահայտությամբ արտացոլում է ընկերության կանոնադրական կապիտալի չափը,
- ապահովում է կատարված ներդրմանը համապատասխան ընկերության մասնակիցների կառավարմանը մասնակցելու իրավունքի իրականացումը,
- ապահովում է ընկերության շահույթից բաժին ստանալու իրավունքի իրականացումը:

Որոշակի առանձնահատկություններ ունի ընկերության մասնակցի բաժնեմասը մասնակցից այլ անձանց փոխանցելու գործընթացը: Այն իրականացվում է որոշակի ընթացակարգերի պահպանմամբ: Այսպես, ընկերության մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձանց օտարել թույլատրվում է, եթե այլ բան նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ:

Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) զնելու նախապատվության իրավունքից⁷⁸ (բացառությամբ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների եւ ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի):

⁷⁸ Մասնակցի կողմից նախապատվության իրավունքի իրականացման կարգի առանձնահատկություններին կանդիդատներին սույն աշխատության երկրորդ գլխում:

Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել ընկերության մասնակցի բաժնեմասի (դրա մասի) ձեռքբերման` ընկերության նախապատվության իրավունքն այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը: Բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:

Վերը նշված գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնեմասի վաճառքի դեպքում ընկերության ցանկացած մասնակից կամ ընկերությունը, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված է ընկերության նախապատվության իրավունքը, իրավունք ունի վեց ամսվա ընթացքում դատական կարգով պահանջելու անվավեր ճանաչել այդ գործարքը, սկսած այն պահից, երբ նրանք իմացել են կամ պարտավոր էին իմանալ խախտման մասին:

Ընկերության հիմնադիր կամ մասնակից կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները: Ընկերության հիմնադիր կամ մասնակից լինելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով: Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա` որպես այդպիսին գրանցվելու պահից:

Ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի կամ նրա մասնակիցների թիվը չպակասի 49-ից, ապա ընկերությունը ենթակա է լուծարման:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կազմակերպարավական ձևին բնորոշ հաջորդ բնութագրիչը պայմանավորված է դրա մասնակիցների իրավական կարգավի-

ճակի առանձնահատկություններով: Դա արտահայտվում է մասնակիցներին լրացուցիչ իրավունքներ ու պարտականություններ տրամադրելու, ընկերությունից դուրս գալու իրավունքի և մասնակցին ընկերությունից հեռացնելու հնարավորությամբ⁷⁹:

Եթե ընկերության կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներդրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա ընկերությունը գույքի օգտագործման իրավունքը պահպանում է մինչև օգտագործման իրավունքի ժամկետի ավարտը, եթե ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց անհատականացումն իրականացվում է անվանման և գտնվելու վայրի որոշման միջոցով: Կորպորացիայի գտնվելու վայր է համարվում նրա պետական գրանցման փաստաթղթերում նշված մշտական գործող գործադիր մարմնի գտնվելու վայրը: Գտնվելու վայրի ճիշտ որոշումն ունի կարևոր գործնական նշանակություն նրանց նկատմամբ տեղական ինքնակառավարման մարմինների ակտերի կիրառման, հայցերի ներկայացման, պարտավորությունների կատարման և բազմաթիվ այլ հարցերի որոշման համար: Այն էական նշանակություն ունի նաև իրավաբանական անձանց տեղաշարժին վերաբերող հարցերի ուսումնասիրության կամ որոշման համար: Իրավաբանական անձանց տեղաշարժը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին անձանոթ ինստիտուտ է, որը, սակայն, լայն կիրառություն ունի Եվրոպական միությունում (այսուհետ՝ Միություն), որի ուսումնասիրությունը, մեր կարծիքով, ունիվերսալիզմի ու ազգային առանձնահատկությունների հաշտեցման խնդրի համատեքստում, ներազգային ու միջազգային հոլովություն, առնչվում է

⁷⁹ Ընկերությունից դուրս գալու և մասնակցին ընկերությունից հեռացնելու իրավունքի իրականացման առանձնահատկություններին առավել մանրամասն կանոնադրամանք սույն աշխատության երկրորդ գլխում:

հասարակության կայուն և ներդաշնակ զարգացման խնդրին⁸⁰:

Հայաստանի Հանրապետությունում արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը հայտարարված եվրոպական ինտեգրման ուղղության առկայության պայմաններում⁸¹ անհրաժեշտ է հետևել Միությունում ընթացող կորպորատիվ օրենսդրության ներդաշնակեցման գործընթացներին, ինչպես նաև ուսումնասիրել այդ բնագավառում ձևավորված եվրոպական դատարանի պրակտիկան, ինչը մեզ հնարավորություն կընձեռի Հայաստանի Հանրապետությունում ընթացող օրենսդրական բարեփոխումներն իրականացնել Միությունում ձևավորված չափորոշիչներին համահունչ: Բացի դրանից, կարծում ենք, որ վերը նշված խնդրի լուսաբանումը գործնականում օգտակար է նաև Միության անդամ պետություններում հիմնադրված իրավաբանական անձանց առնչվող պետական մարմինների, գործարարների և Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց համար:

1957 թվականի մարտի 25-ին կնքված՝ եվրոպական միության մասին Հռոմի պայմանագրի⁸² (այսուհետ՝ Պայմանագիր) նպատակն է նպաստել համագործակցության անդամ պետությունների տնտեսական ինտեգրմանը, ինչպես նաև աշխատանքների, ծառայությունների և ապրանքների միասնական շուկայի ստեղծմանը: Այսինքն, աշխատանքները, ծառայությունները և ապրանքները Միության տարածքում պետք է շրջանառվեն այնպես, ինչպես որ դրանք կշրջանառվեն մեկ պետության տարածքում: Այդ նպատակով էլ պայմանագրում ի սկզբանե ամրագրվեցին չորս հիմնական ազատություններ.

- ապրանքների ազատ շրջանառությունը,
- անձանց ազատ տեղաշարժը (հիմնադրման ազատությունը),

⁸⁰ Տե՛ս Հարությունյան Գ. Գ. Դատական իշխանություն. Համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից, Երևան, 2002 թ., էջեր 11-13:

⁸¹ Տե՛ս www.Prezident.am, www.ArmeniaForeignMinistry.am:

⁸² Տե՛ս ԵՄ Տեղեկագիր, N C 340, էջ 173:

- ծառայությունների մատուցման ազատությունը,
- կապիտալի տեղաշարժի ազատությունը:

Անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը ենթադրում է շահույթ ստանալու նպատակով ինքնուրույն տնտեսական գործունեություն իրականացնելու համար այլ պետության տարածքում հիմնավորվելու, ինչպես նաև այդ նպատակով Միության անդամ ցանկացած պետությունում ընկերություն հիմնադրելու իրավունքը: Ավելին, Միության անդամ որևէ պետությունում ստեղծված ընկերությունն օժտված է իր գտնվելու վայրը մեկ պետության տարածքից մեկ այլ պետության տարածք տեղափոխելու իրավունքով (Պայմանագրի հոդվածներ 43 և 48):

Մի պետության տարածքից գտնվելու վայրը մեկ այլ պետության տարածք տեղափոխելու հնարավորությունն անխզելիորեն կապված է միասնական շուկայի ստեղծման գաղափարի հետ: Ընկերությունն իր տնտեսական գործունեությունը Միության տարածքում ծավալելու համար պետք է հնարավորություն ունենա ընտրել առավել բարենպաստ տնտեսական, իրավական, սոցիալական և այլ պայմաններ ունեցող երկրներ, իսկ այդ պայմանների փոփոխման դեպքում կարողանա փոփոխել իր գտնվելու երկիրը:

Միության անդամ պետությունների ազգային օրենսդրությունները գործնականում խոչընդոտում են ընկերությունների ազատ տեղաշարժի իրավունքի իրականացմանը և լիարժեք կերպով երաշխավորում են միայն Պայմանագրի 43-րդ հոդվածում ամրագրված մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների ստեղծման իրավունքը: Ներկայումս Միության տարածքում շարունակվում են իրավաբանական անձանց ազատ տեղաշարժի իրավունքի իրականացման ապահովման գործընթացները: Մասնավորապես, դրան է ուղղված 20.04.1997թ. 14-րդ հրահանգի նախագիծը⁸³, որը նվիրված է կիրառվող օրենսդրության փո-

⁸³ Տե՛ս «Տնտեսական իրավունքի ամսագիր», Ցետշրիֆտ, Գերմանիա 1997թ., էջ172:

փոխմամբ ընկերության կանոնադրական գտնվելու վայրի փոփոխմանը: Գտնվելու վայրի փոփոխման իրավունքի ճանաչման գործընթացն է նկատվում նաև Եվրոպական դատարանի պրակտիկայում:

Պայմանագրի 43-րդ և 48-րդ հոդվածներում ամրագրված տեղաշարժի ազատությունը գործնականում հնարավոր է իրականացնել երկու ձևով՝ գտնվելու վայրի ձևական և փաստացի փոփոխման միջոցով⁸⁴:

Գտնվելու վայրի ձևական փոփոխման դեպքում ընկերությունն իր կանոնադրական գտնվելու վայրը հիմնադրման վայրից տեղափոխում է Միության անդամ որևէ պետություն: Այսպիսի տեղաշարժը ենթադրում է, որ ընկերությունն իր հիմնադրման վայրի պետությունում հանվում է ընկերությունների գրանցամատյանից և ներառվում ընդունող պետության գրանցամատյանում: Ընդ որում, ինքնաբերաբար փոխվում է ընկերության նկատմամբ կիրառվող իրավունքը. այդպիսի իրավունք է դառնում ընդունող պետության իրավունքը, և ընկերության հիմնադիր փաստաթղթերը համապատասխանեցվում են այդ պետության իրավունքին:

Ընկերության ձևական տեղաշարժի հետ կապված հարցերը մինչ օրս չեն դարձել Եվրոպական դատարանի քննարկման առարկա, թեև ազգային դատարանների կողմից փորձեր կատարվել են Եվրոպական դատարան ուղարկել համապատասխան հարցումներ: Օրինակ, գեյդելբերգյան տեղամասային դատարանը, որը գրանցում էր առևտրային ընկերություններ, բախվել էր հետևյալ խնդրի հետ. Գերմանիայում հիմնադրված ընկերությունը որոշել էր կանոնադրական գտնվելու վայրը փոխադրել Իսպանիա՝ մնալով գերմանական իրավունքի ընկերություն: Եվրոպական դատարանը հարցման քննությունը մերժել էր այն հիմնավորմամբ, որ հարցումը տրվել էր ընկերությունների

⁸⁴ St u Дубовицкая Е. Европейское корпоративное право: Свобода перемещения компаний в Европейском сообществе, М., 2004, էջ 16:

գրանցմանն առնչվող գործունեության կապակցությամբ, երբ ազգային դատարանը հանդես էր եկել որպես «վարչական մարմին»: Քանի որ նման գործունեությունը չի հանդիսանում արդարադատության իրականացում, ուստի Եվրոպական դատարանը գտել էր, որ այդ գործը դատարանին ընդդատյա չէ: Որպեսզի դատարանը նման հարցում կատարելու համար դիտվեր իրավասու, պահանջվում էր, որ գրանցման մերժում ստացած ընկերությունն այդ մերժումը գանգատարկել դատարանում, որից հետո միայն դատարանը կարող էր դիմել Եվրոպական դատարան⁸⁵:

Ընկերության գտնվելու վայրի ձևական փոփոխությունն ուղեկցվում է մի շարք խնդիրներով, որոնք առնչվում են ընկերության պարտատերերի, տեղաշարժի հարցում չչահագրգռված մասնակիցների, աշխատակիցների, ինչպես նաև նման տեղաշարժի դեպքում հարկատու կորցնող պետության հարկաբյուջետային շահերին:

Նշված խնդիրները հազիվ թե կարող են արդյունավետորեն լուծվել յուրաքանչյուր պետության կողմից առանձին-առանձին: Կարծում ենք, որ Պայմանագրի դրույթները տվյալ դեպքում պետք է որոշակիացվեն Միության սեկունդար իրավունքի ակտերում: Այդ նպատակով էլ Եվրոպական Հանձնաժողովի կողմից մշակվել է վերը նշված «Կիրառվող իրավունքը փոխարինող ընկերությունների գտնվելու վայրի փոփոխության մասին» հրահանգի նախագիծը:

Ընկերության ձևական տեղաշարժից անհրաժեշտ է տարբերել փաստացի տեղաշարժը: Փաստացի տեղաշարժի դեպքում կանոնադրական գտնվելու վայրը մնում է անփոփոխ, և ընկերությունն այլ երկիր է տեղափոխում միայն իր կառավարման կենտրոնը կամ փաստացի գտնվելու վայրը: Ընկերության փաստացի գտնվելու վայրը ժամանակակից իրավաբանական մարմինն այն վայրն է, որտեղ ընկերության ղեկավարության հիմնարար որո-

⁸⁵ Տե՛ս www.curia.europa.eu:

շումները վերածվում են ընթացիկ վարչական ակտերի⁸⁶: Որպես կանոն, դա ընկերության ընթացիկ գործերի համար պատասխանատու կառավարման մարմնի անդամների գործունեության վայրն է: Հաշվի է առնվում այն հանգամանքը, որ կապի ժամանակակից միջոցների զարգացման պայմաններում ընկերության ղեկավարությունը հնարավորություն ունի ընդունել որոշումներ՝ ֆիզիկապես ներկա չգտնվելով որևէ կոնկրետ վայրում: Այսինքն, ընկերության կառավարման կենտրոնը գտնվում է այնտեղ, որտեղ ընդունվող որոշումները վերածվում են ընթացիկ վարչական ակտերի:

Գրականության մեջ ընկերության կառավարման կենտրոնի (փաստացի գտնվելու վայրի) փոխադրումը կոչվում է փաստացի փոխադրում կամ փաստացի տեղափոխություն⁸⁷: Փաստացի գտնվելու վայրի փոփոխության դեպքում գրանցամատյանից դուրսգրում կամ նոր պետության գրանցամատյանում վերագրանցում տեղի չի ունենում: Լավագույն դեպքում ընկերությունը կարող է իր կառավարման կենտրոնն ընդունող պետությունում գրանցել որպես մասնաճյուղ:

Փաստացի տեղաշարժի դեպքում խնդիրն այն է, որ մասնակից պետությունների իրավունքը հաճախ պարունակում է այդպիսի տեղաշարժը սահմանափակող նորմեր, օրինակ՝ փաստացի գտնվելու վայրը արտասահման տեղափոխելու համար անհրաժեշտ է ստանալ հիմնադրման վայրի պետության իրավասու հարկային մարմինների համաձայնությունը⁸⁸: Սակայն առավել տարածված են կոլիզիոն-իրավական սահմանափակումները՝ կապված այն հանգամանքի հետ, որ մի շարք մասնակից պետություններ ընկերության փաստացի տեղաշարժի դեպքում նախատեսում են կիրառվող իրավունքի փոփոխություն:

⁸⁶ Տե՛ս Pennington R. *Company Law*. London, 1995, էջ 135:

⁸⁷ Տե՛ս Schwarz G. C. *Europaisches Gesellschaftsrecht*. Baden-Baden, 2000, էջ 500:

⁸⁸ Տե՛ս Davies P. *Legal Capital in Private Companies in Great Britain*, London, 1998, էջ 350:

Որոշ պետությունների միջազգային մասնավոր իրավունքում ընկերության նկատմամբ կիրառվող իրավունքը պայմանավորվում է այն երկրի իրավունքով, որտեղ գտնվում է ընկերության փաստացի գտնվելու վայրը՝ նրա կառավարման կենտրոնը: Այդ դրույթը ստացել է «նստակեցության տեսություն» անվանումը: Այս տեսությունից հետևում է, որ ընկերության փաստացի տեղաշարժը հանգեցնում է նրա նկատմամբ կիրառվող իրավունքի փոխարինման: Այսինքն, ընկերության անհատական օրենքն (*lex societatis*) է դառնում ոչ թե այն պետության իրավունքը, որտեղ որ այն հիմնադրվել էր, այլ ընդունող պետության իրավունքը՝ տեղի է ունենում ստատուտի փոփոխություն: Անհատական ստատուտի կատեգորիան չափազանց կարևոր է իրավաբանական անձի համար, քանի որ հենց դրանով են պայմանավորված այդ անձին իրավունքի սուբյեկտ ճանաչելու, իրավաբանական անձի մարմինների կառուցվածքի, մասնակիցների պատասխանատվության և իրավաբանական անձի կենսագործունեության համար էական նշանակություն ունեցող հարցերը⁸⁹: Փաստորեն, ստատուտի փոխարինումը հանգեցնում է նրան, որ ընկերության իրավունակության հարցը պետք է կրկին լուծվի, այժմ արդեն՝ ղեկավարվելով ընդունող պետության իրավունքով:

Ի տարբերություն նստակեցության տեսության, միավորման (ինկորպորացիայի) տեսությունն ընկերության անհատական ստատուտը պայմանավորում է այն պետության իրավունքով, որտեղ ընկերությունը հիմնադրվել է: Ընկերության՝ այլ երկիր փաստացի տեղաշարժը չի հանգեցնում այդ ընկերության իրավասուբյեկտության փոփոխմանը, այլ շարունակում է պահպանվել գրանցման պետության իրավունքը:

Երկու կոլիզիոն-իրավական տեսություններն էլ ներկայացված են Համագործակցության սահմաններում: Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Հունաստա-

⁸⁹ См. у Ануфриева Л. Н. Международное частное право, М. 2000, т. 231:

նը, Պորտուգալիան, Իսպանիան և Իտալիան հետևում են նստակեցության տեսությանը, իսկ Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում, Դանիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում, Նիդեռլանդներում ներկայացված է միավորման տեսությունը⁹⁰:

Միավորման տեսության հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ մի պետությունում ստեղծված ընկերությունը պետք է ճանաչվի մյուս պետությունների կողմից՝ նույնիսկ այն դեպքում, եթե դրա փաստացի գտնվելու վայրը միավորման պետության սահմաններից դուրս է: Փաստացի գտնվելու վայրը փոփոխելիս ընկերությունը չպետք է մտահոգվի իրավունակության կորստի ռիսկով: Սա ընկերությունների համար ապահովում է բավական շարժունակություն, ինչն էլ ի սկզբանե հանդիսացել է միավորման տեսության նպատակը:

Նշված դրականի հետ մեկտեղ, միավորման տեսությունն ունի որոշ թերություններ, մասնավորապես, հնարավոր են դեպքեր, երբ ընկերության հիմնադրումը կատարվի շրջանցելով այն պետության օրենսդրությունը, որտեղ այն հետագայում պետք է իրականացնի իր գործունեությունը, կամ միավորման իրավունքն ընտրելիս ընտրությունը կկատարվի հոգուտ այն իրավունքի, որն առավել վատ է պաշտպանում ընկերության պարտատերերի, մանր բաժնետերերի, աշխատողների և այլ անձանց շահերը:

Վերը նշված տեսությունների հետ կապված՝ փորձենք քննարկել իրավաբանական անձանց տեղաշարժի հետևյալ դեպքերը.

- ընկերությունն իր փաստացի գտնվելու վայրը տեղափոխում է նստակեցության տեսությանը հետևող պետություն,
- նստակեցության տեսությանը հետևող պետությունում ստեղծված ընկերությունն իր փաստացի գտնվելու վայրը տեղափոխում է նստակեցության կամ միավորման տեսությանը

⁹⁰ Տե՛ս Богуславский М. М. Международное частное право, М. 1998, էջ 125:

հետևող պետություն:

Իրավաբանական անձի փաստացի գտնվելու վայրը նստակեցության տեսությանը հետևող պետություն տեղափոխելն առաջ է բերում կարգավիճակի փոփոխություն՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ տեսության է հետևում հիմնադրման վայրի պետությունը: Ընկերության անհատական ստատուտն է դառնում ընդունող պետության կորպորատիվ իրավունքը, որի հիման վրա էլ լուծվում է ընկերությանն իրավունքի սուբյեկտ ճանաչելու հարցը: Սա ենթադրում է ընկերության գրանցման հետ կապված ներպետական պահանջների պահպանում: Իրավասուբյեկտության կորուստը հանդիսանում է նստակեցության տեսության նյութաիրավական հետևանքը: Դրանից հարկ է տարբերել այն հետևանքները, որոնք ընդունող պետության նյութական իրավունքը կապում են իրավասուբյեկտության կորստի հետ: Այսպես, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Իսպանիան, Պորտուգալիան և Ֆրանսիան թույլ են տալիս օտարերկրյա ընկերության հետագա գոյությունը, եթե

- գրանցման պետությունը չի պահանջում ընկերության լուծարում,

- օտարերկրյա ընկերության հիմնադիր փաստաթղթերը համապատասխանում են ընդունող պետության իրավունքին:

Այլ պետություններում, օրինակ՝ Գերմանիա, Հունաստան, ցանկացած դեպքում պահանջվում է նոր իրավաբանական անձի ստեղծում:

Ընկերության կողմից իր փաստացի գտնվելու վայրը նստակեցության տեսությանը հետևող պետությունից այլ պետություն տեղափոխելը նույնպես առաջացնում է կարգավիճակի փոփոխում: Ընկերության հիմնադրման վայրի պետության համար որպես ընկերության անհատական օրենք դիտվում է ընդունող պետության իրավունքը: Իսկ ընդունող պետության և ընկերության միջև առաջացած հարաբերությունները կարգավորվում են կախված այն հանգամանքից, թե ընդունող պետությունը որ տե-

սությանն է հետևում: Եթե այն հետևում է նստակեցության տեսությանը, ապա այն նույնպես տեղի ունեցածը զնահատում է որպես ստատուտի փոփոխություն և ընկերության նկատմամբ կիրառում է իր նյութական իրավունքը, որի արդյունքում ընկերության իրավունակությունը կարող է չճանաչվել: Իսկ եթե ընդունող պետությունը հետևում է միավորման տեսությանը, ապա ընկերության իրավունակությունը որոշելու համար հղում է կատարվում ստեղծման պետության իրավունքին: Տեղի է ունենում, այսպես կոչված, հետադարձ հղում (renvoi): Թո՞ւյլ է տալիս, արդյոք, renvoi-ն պահպանել ընկերության իրավունակությունը և խուսափել դրա լուծարումից: Հարցի պատասխանը կախված է այն հանգամանքից, թե ստեղծման վայրի պետության նյութական իրավունքն ինչպիսի հետևանքներ է կապում ընկերության այլ պետություն հեռանալու հետ: Եթե այն, ինչպես, օրինակ, Ֆրանսիայի, Յունաստանի, Իտալիայի, Լյուքսեմբուրգի և Բելգիայի կորպորատիվ իրավունքն է, թույլատրում է ընկերության արտասահման հեռանալն առանց լուծարման, ապա պատասխանը դրական կլինի: Իսկ եթե ստեղծման երկրի օրենսդրությունը ընկերության արտասահման փաստացի տեղաշարժը դիտում է որպես դրա լուծարման հիմք (օրինակ՝ Գերմանիա և Իսպանիա), ապա renvoi-ն ընկերության իրավունակության պահպանմանը չի հանգեցնում:

Ըստ էության նստակեցության տեսությունն ունի պաշտպանական գործառույթ: Այն ուղղված է նստակեցության տեսությանը հետևող պետություն օտարերկրյա ընկերությունների մուտք գործելու դեպքում ընկերության պարտատերերին, մասնակիցներին և աշխատակիցներին պաշտպանել հնարավոր վտանգներից: Բանը նրանում է, որ նստակեցության տեսությանը հետևող պետությունը վերը նշված շահերը պաշտպանում է ընկերության հիմնադրման փուլում (օրինակ, նվազագույն կապիտալի առկայության պահանջի սահմանում), իսկ այլ պետությունների իրավունքը կարող է այդպիսի կառուցակարգեր չնա-

խատեսել, ուստի երկրի ներսում օտարերկրյա ընկերությունների գործունեությունը կարող է հանգեցնել ընկերության պարտատերերի, մասնակիցների, աշխատակիցների և քաղաքացիական շրջանառության այլ մասնակիցների շահերի ոտնահարման: Նման վտանգներից խուսափելու համար էլ նստակեցության տեսությանը հետևող պետություններն օտարերկրյա ընկերություններին որպես իրավունքի սուբյեկտ չեն ճանաչում:

Միությունում նստակեցության տեսության, ինչպես նաև դրա հետ կապված կորպորատիվ և հարկային իրավունքի նորմերի առկայությունը հանգեցնում է նրան, որ ընկերությունների տեղաշարժի հնարավորությունն առավելագույնս բարդանում է և կորցնում գործնական գրավչությունը: Կարծում ենք, որ նստակեցության տեսությանը հետևող պետությունները չճանաչելով օտարերկրյա ընկերության հիմնադրման ժամանակ ձեռք բերած իրավունակությունը և ընկերությանը զրկելով իրավունակության պահպանմամբ իր փաստացի գտնվելու վայրն այլ պետություն տեղափոխելու հնարավորությունից, անհարկի սահմանափակում են Պայմանագրի 43-րդ և 48-րդ հոդվածներում ամրագրված տեղաշարժի ազատությունը:

Եվրոպական դատարանի կողմից բազմիցս քննության է առնվել նստակեցության տեսության, ինչպես նաև ընկերությունների փաստացի տեղաշարժի ազգային սահմանափակումների՝ Պայմանագրին համապատասխանության հարցը: Առավել հատկանշական են 1987 թ. «Daily Mail», 1997թ. «Centros» Ltd և 2000թ. «Uberseering B. V.» գործերը⁹¹:

«Daily Mail» գործով բրիտանական ներդրումային ընկերությունը մտադրվել էր իր կառավարման կենտրոնը Մեծ Բրիտանիայից տեղափոխել Նիդեռլանդներ: Այդ որոշումը պայմանավորված էր հարկային նկատառումներով, մասնավորապես, կառավարման կենտրոնը տեղափոխելով Նիդեռլանդներ՝ ընկերությունը ցանկանում էր դուրս գալ բրիտանական հարկային օ-

⁹¹ Տե՛ս www.curia.europa.eu:

րենսդրության դաշտից: Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարարությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդյունքում պետական գանձարանը հարկային մուտքերի մի մասից կզրկվի, ընկերությանը տեղաշարժվելու համաձայնություն տալը մերժեց: Մերժումը բողոքարկվեց Եվրոպական դատարան և այն Պայմանագրին հակասող չճանաչվեց:

Հարկ է նշել, որ «Daily Mail»-ի գործով ազգային սահմանափակումը բխում էր ոչ թե միջազգային մասնավոր իրավունքից, այլ Մեծ Բրիտանիայի հարկային իրավունքից: Նշված գործով Դատարանն անդրադարձավ մասնակից պետությունների կողմից ընկերության ստեղծմանը և դրա գտնվելու վայրի փոփոխմանը ներկայացվող պահանջներին և արձանագրեց, որ որոշ պետություններ պահանջում են, որպեսզի իրենց տարածքում գտնվի ոչ միայն ընկերության կանոնադրական, այլև փաստացի գտնվելու վայրը, որի արդյունքում փաստացի տեղաշարժն առանց լուծարման հնարավոր չէ, իսկ մյուսներն էլ թույլատրում են փաստացի գտնվելու վայրի տեղափոխում, բայց կարող են, ինչպես Մեծ Բրիտանիան, սահմանափակել այդ իրավունքը: Արդյունքում՝ դատարանը հանգել է այն հետևության, որ ինչպես կանոնադրական, այնպես էլ փաստացի գտնվելու վայրի փոփոխման հետ կապված հարցերը տեղաշարժի ազատության մասին Պայմանագրի դրույթներին համապատասխան լուծվել չեն կարող:

Այսպիսով, «Daily Mail»-ի գործով Եվրոպական դատարանն ըստ էության չընդունեց 43-րդ և 48-րդ հոդվածների անմիջական գործողությունը և, դրանով իսկ, երաշխավորեց տեղաշարժի ազատության ազգային սահմանափակումների հետագա գոյությունը:

Սկզբունքորեն այլ կերպ, քան «Daily Mail»-ի գործն էր, Եվրոպական դատարանի կողմից լուծվեց «Centros» Ltd-ի գործը:

Դանիական քաղաքացիները Մեծ Բրիտանիայում գրանցել էին «Centros» Ltd ընկերությունը և Դանիայում մասնաճյուղ

գրանցելու համար դիմել Դանիայի առևտրի նախարարությանը: Մասնաճյուղի գրանցումը մերժվել էր այն պատճառաբանությամբ, որ «Centros» Ltd-ն Մեծ Բրիտանիայում ոչ մի տնտեսական գործունեություն չի իրականացրել, այսինքն՝ «Centros» Ltd-ն մտադրված է Դանիայում բացել ոչ թե մասնաճյուղ, այլ կենտրոնակայան, որպեսզի այնտեղ իրականացնի իր հիմնական գործունեությունը: Իսկ ընկերությունը հիմնադրվել էր Մեծ Բրիտանիայում այն պատճառով, որ բրիտանական օրենսդրությամբ տվյալ կազմակերպաիրավական ձևի համար նվազագույն կանոնադրական կապիտալի առկայություն չէր պահանջվում: Այդ ճանապարհով ընկերության հիմնադիրները մտադրվել էին շրջանցել ընկերություն ստեղծելիս նվազագույն կանոնադրական կապիտալի վճարման մասին դանիական օրենսդրության պահանջը: Եվրոպական դատարանը մասնաճյուղի գրանցումը մերժելը ճանաչեց տեղաշարժի ազատության սահմանափակում և դիտեց որպես Պայմանագրի 43-րդ և 48-րդ հոդվածների խախտում:

Պայմանագիրը հիմք է տալիս առանձնացնել ընկերությունների ազատ տեղաշարժի առաջնային և երկրորդային ձևերը, որոնց միջև սահմանազատումը հստակ տրված չէ: «Centros» Ltd-ի դեպքում վեճն առերևույթ վերաբերում էր մասնաճյուղի բացմանը, իսկ իրականում ընկերությունը ցանկանում էր փոփոխել իր փաստացի գտնվելու վայրը: Փաստորեն նման պայմաններում փաստացի տեղաշարժի արգելքը դյուրին է շրջանցել մասնաճյուղերի ստեղծման միջոցով, ինչն ընկերությունների ազատ տեղաշարժի առաջնային և երկրորդային ձևերի միջև սահմանազատման անցկացումը գործնականում անհիմաստ է դարձնում:

«Centros» Ltd-ի գործով Դատարանը գտավ, որ Պայմանագրի 43-րդ և 48-րդ հոդվածներն ունեն անմիջական գործողություն և առավել ազատական նորմեր ունեցող մասնակից պետությունում հիմնադրված ընկերության կողմից այլ մասնա-

կից պետությունում այդ ընկերության մասնաճյուղի բացման իրավունքն անմիջականորեն բխում է Պայմանագրում ամրագրված տեղաշարժի ազատությունից: Ընդ որում, Յամայքում կորպորատիվ իրավունքի լիովին ներդաշնակեցված չլինելը որևէ նշանակություն չունի: Այն փաստը, որ ընկերությունը գրանցման վայրում որևէ գործունեություն չի իրականացնում և իր ամբողջ գործունեությունն իրականացնում է մասնաճյուղի գտնվելու վայրի պետությունում՝ իրավունքի չարաշահում չի հանդիսանում և տվյալ պետությանն իրավունք չի տալիս չկիրառել տեղաշարժի ազատության մասին Պայմանագրի նորմերը: Դատարանը չբացառեց նաև մասնակից պետությունների՝ Պայմանագրում ամրագրված իրավունքները չարաշահող անձանց կողմից ազգային օրենսդրության շրջանցումը կանխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու իրավունքը:

Ըստ էության «Centros» Ltd-ի գործով Դատարանը ճանաչեց Պայմանագրի 43-րդ և 48-րդ հոդվածների անմիջական գործողությունը, արդյունքում՝ նստակեցության տեսությունը զրկվեց իր անձեռնմխելիությունից և, լինելով տեղաշարժի ազատության սահմանափակում, այժմ կարող էր արդարացվել միայն հասարակական շահերով⁹²: Փաստորեն նստակեցության տեսությունը կորցրեց ընկերության պարտատերերի, մասնակիցների և աշխատակիցների շահերի պաշտպանության իր արդյունավետությունը, քանի որ այդ տեսությունն այլևս չի կարող օտարերկրյա ընկերություններին արգելել մասնաճյուղերի միջոցով գործունեություն ծավալել այլ պետությունում: Իսկ օտարերկրյա ընկերության մասնաճյուղի գործունեությունը գտնվելու վայրի պետության շահերին կարող է պատճառել ոչ պակաս վնաս, քան ընկերության գործունեությունը:

Այդուհանդերձ, կարելի է պնդել, որ «Centros» Ltd-ի վճիռը նստակեցության տեսության ճակատագիրը չկանխորոշեց, քան-

⁹² Այդ մասին առավել մանրամասն տես՝ «Kraus»-ի և «Gebhard»-ի գործերով կայացված վճիռները www.curia.europa.eu:

զի նշված գործում երկու պետություններն էլ հետևում էին միավորման տեսությամբ:

Այս տեսանկյունից որոշակի պարզություն մտցրեց 2002թ. նոյեմբերի 5-ին «Überseering B. V.» գործով ընդունված վճիռը:

Նիդեռլանդական «Überseering B. V.» ընկերությունը գերմանական ընկերության հետ կնքել էր Դյուսելդորֆ քաղաքում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող երկու շենքերի վերանորոգման պայմանագիր: Պայմանագիրը կնքելուց հետո «Überseering B. V.» ընկերությունում մասնակցության ամբողջ բաժնեմասը ձեռք էր բերվել Գերմանիայի երկու քաղաքացիների կողմից: Որոշ ժամանակ անց, վերանորոգման աշխատանքները պատշաճորեն չէին կատարվել, և «Überseering B. V.» ընկերությունը պարտապանի դեմ հայց էր ներկայացրել գերմանական դատարան: Սակայն հայցի քննությունը դատարանի կողմից մերժվել էր այն պատճառաբանությամբ, որ «Überseering B. V.» ընկերության բաժնեմասը Գերմանիայի քաղաքացիների կողմից ձեռք բերելը հանգեցրել է ընկերության փաստացի գտնվելու վայրի տեղափոխման: Դատարանը, ղեկավարվելով նստակեցության տեսությամբ, գտել էր, որ «Überseering B. V.» ընկերությունը Գերմանիայում չի վերագրանցվել, ուստի օժտված չէ իրավասուբյեկտությամբ և դատարանում չի կարող հանդես գալ որպես հայցվոր:

Նշված խնդրի հետ կապված Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գերագույն դատարանը դիմել է Եվրոպական դատարան հետևյալ հարցադրումներով.

- հակասո՞ւմ է, արդյոք, հիմնադրման ազատության իրավունքին մասնակից պետություններից որևէ մեկում հիմնադրված ընկերության իրավունակության սահմանումն այն պետության իրավունքով, որտեղ ընկերությունը տեղափոխել է իր փաստացի գտնվելու վայրը, մասնավորապես, այն դեպքում, երբ այդ պետության իրավունքից բխում է, որ ընկերությունը դատարանում չի կարող հանդես գալ որպես հայցվոր.

- Պայմանագրի 43-րդ և 48-րդ հոդվածներից ենթադրվում է, արդյոք, որ ընկերության իրավունակությունը պետք է սահմանվի դրա հիմնադրման վայրի պետության իրավունքով:

Կատարված հարցադրումներին Եվրոպական դատարանը տվել է հետևյալ պատասխանները.

- մասնակից պետություններից որևիցե մեկի իրավունքով հիմնադրված ընկերության իրավունակության չճանաչումն ընդունող պետության կողմից անհամատեղելի է տեղաշարժի ազատության հետ,

- տեղաշարժվող ընկերության իրավունակությունը պետք է որոշվի դրա հիմնադրման վայրի պետության իրավունքով⁹³:

Դատարանի վճռով «Uberseering B. V.» ընկերությունը Գերմանիայում դիտվեց որպես նիդեռլանդական իրավունքի ընկերություն: Սա նշանակում էր, որ գերմանական դատական պրակտիկան անհամատեղելի էր Պայմանագրի հետ, և Գերմանիայում իր կենտրոնն ունեցող օտարերկրյա ընկերությունը պարտավոր չէր վերագրանցվել որպես գերմանական իրավունքի ընկերություն:

Կարծում ենք, որ օտարերկրյա ընկերության նկատմամբ գերմանական իրավունքի նման վերաբերմունքը հանգեցնում է իրավունքի սուբյեկտի յուրօրինակ «երկատման»: Այսինքն, կանոնադրական գտնվելու վայրի պետությունն ընկերությանը ճանաչում է որպես իրավունքի սուբյեկտ (եթե, իհարկե, այն չի հանդիսանում նստակեցության տեսությանը հետևող պետություն), միաժամանակ Գերմանիան, որտեղ տեղափոխվել է ընկերության կառավարման կենտրոնը, կարող է այն ճանաչել որպես գերմանական ընկերություն, որը միաժամանակ հանդիսանում է օտարերկրյա ընկերության «իրավահաջորդը»: Արդյունքում՝ իրավունքի մեկ սուբյեկտի փոխարեն առաջանում են միևնույն ի-

⁹³ Հարցումը շարադրված է «Եվրոպական տնտեսական իրավունք» ամսագրում, Ցետշրիֆտ, Գերմանիա, 2000թ., էջ 412:

րավունքների համալիրին հավակնող երկու սուբյեկտներ, դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ:

«Uberseering B. V.» ընկերության գործով օտարերկրյա ընկերության իրավունակության չճանաչումը Եվրոպական դատարանը գնահատել է որպես Պայմանագրի 43-րդ և 48-րդ հոդվածներով սահմանված հիմնադրման ազատության սահմանափակում:

Դատարանը մատնանշեց, որ հիմնադրման ազատության իրականացումը կախված չէ որևէ համաձայնագրի կնքումից կամ ներդաշնակող հրահանգների հրատարակումից, այլ հիմնադրման ազատության իրավունքին վերաբերող դրույթները գործում են անմիջականորեն: Տվյալ եզրակացությունը հանդիսանում է նահանջ «Daily Mail»-ի վճռից, որում ամրագրվել էր ուղղակի հակառակը:

Սակայն «Uberseering B. V.» ընկերության վճռում Եվրոպական դատարանը լիովին չիրաժարվեց «Daily Mail»-ի վճռով մշակված սկզբունքից: Դատարանը հստակ սահմանագիծ անցկացրեց այնպիսի դեպքերի միջև, ինչպիսիք էին «Uberseering B. V.» ընկերության և «Daily Mail»-ի գործերը: Եվրոպական դատարանի կարծիքով, մասնակից պետությունը կարող է այդ պետությունում ստեղծված ընկերությունների համար սահմանել տեղաշարժի սահմանափակումներ: Որպես հիմնավորում՝ Եվրոպական դատարանը կրկնեց «Daily Mail»-ի վճռում մատնանշված փաստարկները.

- կոնկրետ ազգային իրավակարգից դուրս ընկերություններն իրական չեն.
- հիմնադրման ազատության վերաբերյալ Պայմանագրի դրույթները չեն շոշափում առկա ազգային տարբերությունները.
- ընկերության իրավասուբյեկտության պահպանման հարցը՝ կանոնադրական կամ փաստացի գտնվելու վայրն այլ մասնակից պետություն տեղափոխելու դեպքում լուծվում է հիմնադրման վայրի պետության իրավունքով:

Այսպիսով, «Uberseering B. V.»-ի վճիռը հանդիսանում է յուրօրինակ փոխզիջում եվրոպական դատարանի նախկին վճիռների միջև՝ արտասահմանից տեղաշարժի դեպքերում գործում է «Centros» Ltd-ի գործով տրված բանաձևը, որը ենթադրում է հիմնադրման ազատության սահմանափակումների արգելք, իսկ արտասահման տեղաշարժի դեպքերում՝ «Daily Mail»-ի գործով տրված բանաձևը, համաձայն որի՝ հիմնադրման վայրի պետության կողմից սահմանված հիմնադրման ազատության սահմանափակումները հանդիսանում են թույլատրելի: Եթե ընկերության հիմնադրման վայրի պետությունը թույլատրում է փաստացի գտնվելու վայրի արտասահման տեղափոխում, ապա ընդունող պետությունը պարտավոր է ճանաչել այդպիսի ընկերության իրավասուբյեկտությունը՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ տեսության է հետևում տվյալ երկիրը: Իսկ եթե հիմնադրման վայրի պետությունը հետևում է նստակեցության տեսությանը, ապա ընդունող պետությունը չպետք է ճանաչի ընկերության իրավասուբյեկտությունը, անկախ այն հանգամանքից, թե որ տեսությանն է հետևում, քանի որ ընկերությունն իր փաստացի գտնվելու վայրն արտասահման տեղափոխելիս կորցնում է հիմնադրվելիս իր կողմից ձեռք բերված իրավասուբյեկտությունը: Հետևաբար, մասնակից պետությունը կարող է իր հայեցողությամբ լուծել տվյալ երկրում հիմնադրված ընկերությունների՝ հիմնադրման ազատությունից օգտվելու սահմանների հարցը:

Կարծում ենք, որ Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության դեպքում Միության անդամ պետությունների տարածքում, ինչու չէ՝ նաև ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում նման իրավակարգավորումների նախատեսումը կարող է նպաստել անձանց և կապիտալի ազատ տեղաշարժին:

§ 1.3. Հսկող և հսկվող կորպորացիաները և դրանց էությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 75-րդ և 76-րդ հոդվածներն ընկերություններին և ընկերակցություններին հնարավորություն են ընձեռում քաղաքացիական շրջանառությունում հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ այլ ընկերություններում մասնակցության ձևով: Ընկերությունները, որոնցում այլ ընկերությունները և ընկերակցություններն ունեն որոշակի մասնակցություն, անվանվում են դուստր⁹⁴ կամ կախյալ տնտեսական ընկերություններ: Դուստր կամ կախյալ ընկերությունները քաղաքացիական շրջանառության մեջ հանդես են գալիս ոչ միայն որպես քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտներ, այլև տնտեսապես փոխկապված իրավաբանական անձանց միջև առաջացող ենթակայության վրա հիմնված փոխհարաբերությունների սուբյեկտներ⁹⁵: Հարկ ենք համարում նշել, որ դուստր կամ կախյալ ընկերություններն իրավաբանական անձի ինքնուրույն կազմակերպարավական ձևեր չեն հանդիսա-

⁹⁴ Գործող իրավակարգավորման պայմաններում «դուստր ընկերություն» հասկացությունը նույնական է գրականության մեջ օգտագործվող «հոլդինգային ընկերություն» հասկացության հետ: Կորպորատիվ իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը հոլդինգային ընկերության հասկացությունը չի բանաձևում, այլ դրանց գոյության մասին մենք տեղեկանում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածից, որում, որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություն՝ դուստր և կախյալ ընկերությունների ստեղծման և դրանցում մասնակցության իրավունքի հետ մեկտեղ, նշված է հոլդինգային ընկերությունների հիմնադրման և հոլդինգային ընկերություններում մասնակցության մասին որոշում կայացնելու ժողովի իրավասությունը: Կարծում ենք, նման անորոշ նորմի գոյությունը հանդիսանում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի թերություններից մեկը, որը, կորպորատիվ իրավահարաբերություններին որոշակիություն հաղորդելու նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է շուտափույթ վերացնել:

⁹⁵ Տե՛ս Звезда Т. М. Правовое положение дочернего и зависимого хозяйственных обществ // Правовое положение субъектов предпринимательской деятельности, Екатеринбург, 2002, էջ 87:

նում⁹⁶, այլ այս հասկացությունների ներդրումը նպատակ է հետապնդում պաշտպանել ինքնավար կամք արտահայտելու հնարավորությունից զրկված ընկերության, դրա պարտատերերի և մասնակիցների շահերը: Ըստ էության, օրենսդիրը դուստր և կախյալ ընկերություններին չի դիտարկում որպես քաղաքացիական իրավահարաբերությունների լիարժեք ինքնուրույն սուբյեկտ⁹⁷:

Ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) ընկերություն կամ ընկերակցություն նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ իրենց միջև կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով հնարավորություն ունի կանխորոշել այդ ընկերության որոշումները:

Դուստր առևտրային ընկերությունը կախվածության մեջ կարող է գտնվել ինչպես այլ տնտեսական ընկերություններից, այնպես էլ ընկերակցություններից⁹⁸: Գործող իրավակարգավորման պայմաններում որպես դուստր տնտեսական ընկերություններ կարող են հանդես գալ բաժնետիրական, սահմանափակ և լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունները: Իսկ դուստր ընկերության հանդեպ որպես հիմնական կարող են հանդես գալ ինչպես բոլոր տեսակի տնտեսական ընկերությունները, այնպես էլ ընկերակցությունները:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը, հետևելով օրենսգրքին, բաժնետիրական ընկերություններին իրավունք է տալիս ունենալ իրավաբանական անձի կարգավիճակով դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ, միաժամանակ՝ հանդիսանալ դուստր կամ կախյալ ընկերություն:

⁹⁶ См. Гражданское право, Учебник /под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого/, М., 2005, էջեր 151-189:

⁹⁷ См. Гушин В.В., Порошкина Ю.О., Сердюк Е. Б, Корпоративное право, М. 2006, էջ179:

⁹⁸ См. Комментарий к федеральному закону об акционерных обществах. Изд-во "Юринформцентр", М., 2002, էջ 51:

Եթե համենատենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 75-րդ հոդվածը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը, ապա կնկատենք, որ օրենքը, ի տարբերություն օրենսգրքի վերը նշված նորմի, հնարավորություն է տալիս ընկերությունը դուստր համարել նաև այն դեպքում, երբ հիմնական ընկերությունը կամ ընկերակցությունը, բացի նրանից, որ դուստր ընկերության որոշումները կարող է կանխորոշել կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրով, հնարավորություն ունի դուստր ընկերության որոշումների կայացման վրա ազդել նաև օրենքով չարգելված այլ ձևերով:

Այսպիսով, որպեսզի ընկերությունը հիմնական ընկերության կամ ընկերակցության հանդեպ ճանաչվի դուստր, հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) պետք է կարողանա կանխորոշել դուստր ընկերության որոշումները.

- կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով,
- իրենց միջև կնքված պայմանագրին համապատասխան,
- օրենքով չարգելված այլ ձևով:

Կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության ուժով դուստր ընկերության որոշումները կանխորոշելու վերաբերյալ օրենքի դրույթը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Թե ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և թե «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հստակ չեն սահմանում կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի այն քանակը, որը կարող է դիտվել որպես գերակշռող և ազդել ընկերության կողմից կայացվող որոշումների վրա⁹⁹:

⁹⁹ Օրինակ՝ 1996 ապրիլի 30-ին ընդունված «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ նախկին օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետում փորձ էր կատարվել թվային առումով ամրագրել գերակշռող մասնակցության չափը և որպես այդպիսին դիտվում էր հիմնական ընկերության կողմից դուստր ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին տնօրինելը, որից հետագայում հրաժարվելը, մեր կարծիքով, արդարացված է:

Գործնականում ընկերությունն իր կանոնադրական կապիտալում մեկ այլ ընկերության (ընկերակցության) ունեցած միևնույն մասնակցության պայմաններում տվյալ ընկերության (ընկերակցության) հանդեպ մի դեպքում կարող է դիտվել որպես դուստր, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ: Օրինակ, եթե դուստր ընկերությունը բաժնետիրական ընկերություն է, ապա կախված այն հանգամանքից, թե ինչպիսի հարց է քննարկվում, տվյալ ընկերության կողմից տեղաբաշխված և մեկ այլ ընկերությանը (ընկերակցությանը) պատկանող բաժնետոմսերի քանակը մի դեպքում կարող է կանխորոշել կոնկրետ որոշման կայացում, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ: Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով բաժնետերերն ընկերության համար էական նշանակություն ունեցող գրեթե բոլոր որոշումները կայացնում են քվեարկությանը ներկա տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով (քվորումն ապահովված է համարվում, եթե քվեարկությանը ներկա է տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին): Այս պայմաններում, որպեսզի կայացված որոշումը համարվի կանխորոշված հիմնական ընկերության (ընկերակցության) կողմից՝ անհրաժեշտ է, որ նա ունենա կամ ընկերության քվեարկող բաժնետոմսերի 75 տոկոսը, կամ եթե ժողովին ներկա է բաժնետերերի 51 տոկոսը, ապա՝ ներկա գտնվողների ձայների 37.5 տոկոսը: Իսկ որոշ խոշոր բաժնետիրական ընկերություններում, որոնցում առկա են մեծ թվով բաժնետերեր, ընկերությունը հսկողության տակ պահելու համար բավական է տվյալ ընկերության բաժնետոմսերի 5-10 տոկոսին տիրապետելը¹⁰⁰:

Ընկերությունների միջև հիմնական և դուստր հարաբերությունների առաջացման երկրորդ պայմանն այն է, որ հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) կարող է ներազդել դուստր

¹⁰⁰ Ст. 6 Гражданское право. Т.1. 2-е издание. Изд-во “БЕК”, М., 1998, т.2 240:

ընկերության որոշումների կայացման վրա՝ իրենց միջև կնքված պայմանագրի հիման վրա: Ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չեն հստակեցնում այն հարցը, թե տնտեսական ընկերությունները և ընկերակցություններն այլ ընկերությունների հետ ինչպիսի պայմանագրեր պետք է կնքեն, որոնք նրանց միջև կարող են հիմնական և դուստր ընկերությունների փոխհարաբերություններ առաջացնել¹⁰¹: Քաղաքացիական օրենսգիրքը քաղաքացիական պայմանագրերի սպառիչ ցանկը չի տալիս, ուստի ենթադրվում է, որ կարող է կնքվել օրենքին չհակասող ցանկացած պայմանագիր, որի հիման վրա կողմերից մեկը կկարողանա կանխորոշել մյուսի կողմից կայացվող որոշումները:

Ընկերությունների միջև հիմնական և դուստր հարաբերությունների առաջացման երրորդ պայմանն օրենքով չարգելված այլ ձևով դուստր ընկերության որոշումների կայացման վրա ներազդելու հնարավորությունն է: Այլ ձևով հիմնական ընկերությունը դուստր ընկերության կողմից կայացվող որոշումների վրա կարող է ներազդել, օրինակ, փոխառություն տրամադրելու, դուստր ընկերության գույքը գրավ վերցնելու, իր ներկայացուցիչներին դուստր ընկերության կառավարման մարմիններում ընդգրկելու և այլ եղանակներով:

Թվարկված պայմաններից պարզ է դառնում, որ ցանկացած ընկերություն մեկ այլ ընկերության կամ ընկերակցության հանդեպ կարող է դիտվել որպես դուստր, եթե կհաստատվի վերը թվարկված պայմաններից որևէ մեկի առկայությունը:

Դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերության (ընկերակցության) պարտավորությունների համար, իսկ վերջինս, եթե դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, ապա նրա հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համա-

¹⁰¹ Որպես այդպիսին կարելի է նշել, օրինակ, ֆրանչայզինգի պայմանագիրը:

ծայն կնքված գործարքների կատարման համար:

Հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքն ամրագրված է իրենց միջև կնքված պայմանագրում կամ առաջանում է օրենքով չարգելված այլ ձևով:

Քաղաքացիական օրենսգրքում ցուցումների հետ մեկտեղ, որպես անրաժեշտ պայման «պարտադիր» արտահայտությունն օգտագործելն արդարացված չէ և անհարկի սահմանափակում է հիմնական ընկերությանը պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Կարծում ենք, որ եթե դուստր ընկերությունը (վերահսկող անձը) տալիս է ցուցումներ, և այդ փաստն ապացուցված է, ապա տրամաբանական է, որ դուստր ընկերությունը (վերահսկվող իրավաբանական անձը) պետք է դրանք կատարի: «Պարտադիր» բառն օրենսգրքից և այլ օրենքներից պետք է հանել, ինչը կազատի ցուցումների պարտադիր լինելու փաստն ապացուցելու պարտականությունից և գործնականում նշված ինստիտուտը կդարձնի կիրառելի:

Բացի դրանից, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետն ըստ էության հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ կետին: Մասնավորապես, քաղաքացիական օրենսգիրքը ցուցումներ տալու իրավունքը պայմանավորում է բացառապես դուստր ընկերության հետ կնքված պայմանագրով, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերը նշված նորմն օրենսգրքով նախատեսված պայմանին ավելացրել է նաև «օրենքով չարգելված այլ ձևով» ցուցումներ տալու հնարավորությունը: Այստեղից հարց է ծագում՝ եթե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը որպես դուստր է հանդես գալիս ընկերակցության հանդեպ, ապա այս իրավիճակում կիրառելի պետք է լինի քաղաքացիական օրենսգիրքը, իսկ եթե որպես հիմնական հանդես է գալիս բաժնետիրական ընկերությունը, ա-

պա պետք է կիրառվի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի անբարենպաստ նորմը: Կարծում ենք, որ քաղաքացիական օրենսգրքի և բաժնետիրական օրենսդրության միջև նման հակասությունները օրենսդրության միասնական կիրառման հարցում լուրջ խոչընդոտներ են ստեղծում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ու «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նորմերի ներդաշնակեցումը մեծապես կնպաստի կորպորատիվ իրավահարաբերությունների արդյունավետ կիրառմանը:

Վնասները համարվում են պատճառված հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության (ընկերակցության) պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:

Հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն¹⁰² է կրում նրա պարտքերի համար: Դուստր ընկերության սնանկությունը համարվում է առաջացած հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով, եթե այն վրա է հասել դուստր ընկերության կողմից վերջինիս պարտադիր ցուցումները¹⁰³ կատարելու հետևանքով:

Վերը նշված դեպքերում հիմնական ընկերությունը ենթակա է պատասխանատվության, եթե նա գիտեր կամ կարող էր գիտե՞նալ համապատասխան հետևանքների առաջացման մասին («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 7, կետ 7):

¹⁰² Գտնում ենք, որ սնանկության դեպքում ևս հիմնական ընկերությունը պետք է կրի համապարտ, այլ ոչ թե լրացուցիչ պատասխանատվություն:

¹⁰³ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Шиткина И. С. О проблеме «обязательных указаний» основного общества дочернему. — В сб. статей: Правовое регулирование предпринимательской деятельности в условиях рыночной экономики / Отв. ред. Е. П. Губин, Е. Б. Латус., М.: Юрист, 2008.

Այս նորմը ևս հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ կետին և անհարկի սահմանափակում է հիմնական ընկերության պատասխանատվությունը մեղքի ձևերից դիտավորության առկայությամբ, այնինչ քաղաքացիական օրենսգրքն ամրագրում է ուղղակիորեն այլ կանոն, մասնավորապես, սահմանում է, որ վնասները հիմնական ընկերության կամ ընկերակցության մեղքով պատճառված են համարվում, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության կամ ընկերակցության պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով: Այսինքն՝ այստեղ որևէ նշանակություն չունի ցուցումներ տվող անձի՝ հետևանքների մասին գիտենալը կամ գիտենալ կարողանալը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը նախատեսելով դուստր ընկերության կողմից կայացվող որոշումների վրա հիմնական ընկերության (ընկերակցության) ներազդելու բոլոր հնարավորությունները, հիմնական ընկերության պատասխանատվությունն անհարկի սահմանափակել է հիմնական ընկերության կողմից դուստր ընկերությանը տրվող պարտադիր ցուցումներով, մոռացության մատնելով այն հանգամանքը, որ օրենքում խոսքը վերաբերում է ոչ թե պարտադիր ցուցումներ տալու իրավասությանը, այլ դուստր ընկերության որոշումները կանխորոշելուն: Հետևաբար, հիմնական ընկերության պատասխանատվությունը պետք է պայմանավորված լինի ոչ թե դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության պարտադիր ցուցումների կատարումով, այլ հիմնական ընկերության կողմից դուստր ընկերության կայացվելիք որոշումների կանխորոշումով:

Իսկ ինչ վերաբերում է դուստր ընկերության բաժնետերերի (մասնակիցների) իրավունքների պաշտպանությանը, ապա հարկ է նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը բավարարվում է միայն դուստր ընկերության բաժնետերերին (մասնակիցներին) հիմնական ընկերությունից (ընկե-

րակցությունից) վերջինիս մեղքով դուստր ընկերությանը պատճառված վնասները հատուցելու պահանջ ներկայացնելու իրավունքի տրամադրումով: Սակայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետը գրեթե անհնարին է դարձնում նշված իրավունքի իրագործումը, քանի որ հիմնական ընկերության պատասխանատվությունը պայմանավորվում է այն հանգամանքով, որ կատարման համար պարտադիր ցուցումներ տալիս հիմնական ընկերությունը պետք է գիտենար կամ կարող էր գիտենալ համապատասխան հետևանքների առաջացման մասին: Այլ երկրների օրենսդրությամբ, օրինակ՝ դուստր ընկերությանը և դուստր ընկերության բաժնետերերին (մասնակիցներին) տրվում են իրենց իրավունքների պաշտպանության այլ հնարավորություններ, օրինակ՝ դուստր ընկերության բաժնետոմսերը հիմնական ընկերության բաժնետոմսերով փոխարկելու իրավունք¹⁰⁴:

Ընկերությունը մեկ այլ (հիմնական) ընկերության կամ ընկերակցության նկատմամբ համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերությունը կամ ընկերակցությունն ունի այդ ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 7, կետ 2, մաս 2)¹⁰⁵:

Ընկերությունների (ընկերակցությունների) մասնակցությունը մեկ այլ ընկերության կապիտալում կարող է լինել այնպիսին, որ բացառվի տվյալ ընկերության (ընկերակցության) ազդեցու-

¹⁰⁴ Ст. 5 Германское право. Часть 2. Торговое уложение и другие законы. М., 1994, էջ 276:

¹⁰⁵ Մեզ համար անհասկանալի և անընդունելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում կախյալ ընկերության ինստիտուտի նախատեսումը, ինստիտուտ, որը որևէ գործնական կիրառություն և նշանակություն չունի, բացառությամբ օրենքով սահմանված կարգով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը ձեռք բերելու մասին տեղեկություններ հրապարակելու ձևական պահանջի: Իսկ օրենքով ներկայումս նման կարգ սահմանված չէ:

յունը մյուսի գործերի վարման նկատմամբ: Նման մասնակցության դեպքում հիմնական ընկերությունը կախյալ ընկերության պարտավորությունների համար որևէ պատասխանատվություն չի կրում, քանի որ կախյալ ընկերությունը հիմնական ընկերության հսկողության ներքո չի գտնվում և քաղաքացիական իրավահարաբերություններում հանդես գալիս դրսևորում է իր ինքնուրույն կամքը:

Եթե ընկերությունը համարվում է դուստր կամ կախյալ մեկ այլ ընկերության նկատմամբ, որն իր հերթին դուստր կամ կախյալ է երրորդ տնտեսական ընկերության կամ ընկերակցության նկատմամբ, ապա առաջին ընկերությունը դուստր կամ կախյալ է ճանաչվում նաև երրորդի նկատմամբ: Այս սկզբունքով են կարգավորվում տնտեսական ընկերության (ընկերակցության) և դուստր կամ կախյալ ընկերության միջև հետագայում ծագող հարաբերությունները:

Տնտեսական ընկերությունը կամ ընկերակցությունը, որը ձեռք է բերել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը, պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել այդ մասին:

Օտարերկրյա պետություններում դուստր և կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը կատարվում է այդ երկրների օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Նշված իրավահարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության թրությունները, ըստ էության, քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցներին զրկում են հիմնական ընկերությանը կամ ընկերակցությանը պատասխանատվության ենթարկելու հնա-

րավորությունից¹⁰⁶, չեն նպաստում հիմնական ընկերությունների կողմից դուստր ընկերությունների գործերի վարման նկատմամբ հոգատար վերաբերմունք դրսևորելու կարևոր սկզբունքի արդյունավետ իրականացմանը:

Մեր կարծիքով, հիմնական ընկերությունը կամ ընկերակցությունը դուստր ընկերության պարտավորությունների համար պետք է պատասխանատվություն կրի ոչ միայն տրված պարտադիր կատարման ենթակա ցուցումները կատարելու արդյունքում առաջացած վնասների հատուցման հարցում, այլև իր կողմից թույլ տրված անգործության արդյունքում դուստր ընկերության կրած վնասների հատուցման համար:

Բացի դրանից, գործող օրենսդրությունը չի կարգավորում դուստր ընկերության կողմից հիմնական ընկերությունում մասնակցություն ձեռք բերելու կարևորագույն հարաբերությունները: Օրինակ, պատկերացնենք մի իրավիճակ, և այդպիսիք գործնականում քիչ չեն, երբ «X» բաց բաժնետիրական ընկերությանը պատկանում են «Y» բաց բաժնետիրական ընկերության կողմից թողարկված քվեարկող բաժնետոմսերի 51 տոկոսը: Հետագայում «Y» բաց բաժնետիրական ընկերության կողմից ձեռք են բերվում «X» բաց բաժնետիրական ընկերության կողմից թողարկված քվեարկող բաժնետոմսերի 51 տոկոսը: Նման իրավիճակում խնդիր է առաջանում պարզել, թե այս երկու ընկերություններից որն է հանդիսանում դուստր և որը՝ հիմնական, ինչպես պետք է իրականացվի քվեարկությունը բաժնետերերի ընդհանուր ժողովներում, ինչպես պետք է իրականացվի շահույթի բաշխումը և այլն: Նման իրավիճակում ընկերությունները կարող են հայտնվել գործադիր մարմնի կամ խորհրդի մեկընդմիջտ հսկողության տակ և բաժնետերերի ընդհանուր ժողովի գործառույթները փաստացի դադարեն: Կամ նման գործողութ-

¹⁰⁶ Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետության դատարաններում դուստր և հիմնական ընկերություններին վերաբերող գործեր մինչ օրս չեն քննվել:

յունները կարող են կատարվել հիմնական ընկերության տնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, օրինակ՝ հիմնական ընկերությունը որևէ ծրագիր իրականացնելու նպատակով կարող է թողարկել որոշակի քանակությամբ բաժնետոմսեր և դուստր ընկերությանը ստիպել ձեռք բերել այդ բաժնետոմսերը: Իրավիճակն առավել անթույլատրելի կլինի, եթե նման մասնակցությունը յուրաքանչյուրի կապիտալում կազմի 100 տոկոս: Ըստ էության, նման գործողությունների արդյունքում փաստացի տեղի է ունենում ընկերությունների միաձուլում, որի արդյունքում ուտնահարվում են փոքրամասնություն կազմող բաժնետերերի և ընկերությունների պարտատերերի շահերը:

Այս խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք՝ դուստր կամ կախյալ (հսկվող) ընկերություններին օրենքով արգելել մասնակցություն ձեռք բերել հիմնական ընկերակցության կամ ընկերության կապիտալում, իսկ այդպիսի մասնակցության դեպքում, մինչև բաժնեմասի կամ բաժնետոմսերի օտարումը, չմասնակցել դրա կառավարմանը¹⁰⁷:

Ակնհայտ է, որ գործող իրավակարգավորման պայմաններում, երբ գործարարական գործունեությունը հաճախ իրականացվում է հոլդինգների կազմում, որտեղ հիմնական ընկերությունները կանխորոշում են դուստր ընկերությունների կամքը, դուստր ընկերությունների, դուստր ընկերության փոքրամասնություն կազմող բաժնետերերի և նրանց պարտատերերի իրավունքների պատշաճ պաշտպանությունը չի երաշխավորվում:

Բացի դրանից, գործող օրենսդրության անկատարության

¹⁰⁷ Հարկ ենք համարում նշել, որ նման իրավիճակներում հիմնական ընկերության բաժնետոմսերը կամ բաժնեմասերը ձեռք բերելու արգելք կամ սահմանափակումներ առկա են բազմաթիվ երկրներում, օրինակ՝ Շվեյցարիայի Պարտավորական օրենքի 659b հոդվածը դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության թողարկած բաժնետոմսերի ձեռքբերման նկատմամբ կիրառում է նույն այն կանոնները, որոնք կիրառելի են ընկերության կողմից սեփական բաժնետոմսերի ձեռքբերման դեպքում, տես՝ Ageev A.B. Акционерное законодательство Швейцарии, М., 2005, էջ 52:

արդյունքում ընկերությունների կողմից կայացվող որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող կամ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունք ունեցող բազմաթիվ անձինք քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթակա չեն, օրինակ՝ ընկերությունների կողմից կայացվող որոշումները կարող են կանխորոշվել ոչ միայն ընկերությունների և ընկերակցությունների կողմից, այլև իրավաբանական անձանց այլ կազմակերպաիրավական ձևերի¹⁰⁸ և անձանց խմբերի կամ համատեղ հանդես եկող անձանց կողմից: Նման պայմաններում հարց է առաջանում, թե ինչու դուստր ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսի սեփականատեր ոչ առևտրային կազմակերպությունը կամ մեկ այլ իրավաբանական անձի շղարշի ներքո հանդես եկող անձանց խումբը պետք է ազատվի իր ցուցումների հիման վրա կնքված գործարքի արդյունքում ընկերության պատճառված վնասները հատուցելու պարտականությունից:

Փաստորեն, քաղաքացիական օրենսդրությունը դուստր և հիմնական ընկերության կառուցակարգից բացի, տնտեսական կախվածության այլ դեպքերում¹⁰⁹ հիմնական իրավաբանական անձանց և/կամ անձանց խմբերին պատասխանատվության ենթարկելու հնարավորություն չի նախատեսում, իսկ հիմնական տնտեսական ընկերությանը կամ ընկերակցությանը պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը հասցված է նվազագույնի:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է հրաժարվել դուստր և կախյալ ընկերությունների ինստիտուտից և քաղաքացիական օ-

¹⁰⁸ Օրինակ՝ Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասով ոչ առևտրային կազմակերպություններին իրավունք է տրվում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց անդամ:

¹⁰⁹ Բացառությամբ սնանկության գործընթացի կիրառման հնարավորություն ունեցող իրավաբանական անձանց հետ կապված իրավիճակների:

րենսդրությունն ներմուծել «հսկող» և «հսկվող» անձինք¹¹⁰ հասկացությունները:

Մասնավորապես, անձը համարվում է մեկ այլ իրավաբանական անձին հսկող, եթե ուղղակիորեն կամ անուղղակիորեն (երրորդ անձանց միջոցով), ինքնուրույն կամ իր հետ փոխկապակցված (աֆֆիլացված) անձանց հետ մեկտեղ հնարավորություն ունի կանխորոշել այդ իրավաբանական անձի գործողությունները (որոշումները): Եթե այլ բան ապացուցված չէ, իրավաբանական անձը պետք է համարվի մեկ այլ իրավաբանական անձի նկատմամբ հսկողություն իրականացնող:

- նրա կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի ունեցած գերակշիռ մասնակցության ուժով,

- պայմանագրին համապատասխան,

- իրավաբանական անձին պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու իրավունքի ուժով,

- միանձնյա գործադիր մարմնին (կառավարող կազմակերպությանը կամ կառավարչին) և/կամ կառավարման կոլեգիալ մարմնի անդամների կեսից ավելին ընտրելու (նշանակելու) հնարավորության ուժով:

Դժվար չէ նկատել, որ վերը նշված վերահսկողությունը սահմանելու հիմքերը համընկնում են դուստր կամ կախյալ ըն-

¹¹⁰ Հարկ ենք համարում նշել, որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 43-րդ կետում օգտագործվում են «հսկող» և «հսկվող» իրավաբանական անձինք եզրույթները, մասնավորապես, նշված նորմում սահմանվում է. «35) հսկելը կամ հսկողությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու, նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա էապես ազդելու կամ տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները կանխորոշելու հնարավորություն ունենալն է՝ նրա կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության ուժով, նրա հետ կնքված պայմանագրին համապատասխան, գործարար համբավով, հեղինակությամբ կամ այլ կերպ: Նման հնարավորություն ունենալու փաստը կարող է հիմնավորվել Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխան. ... 43) խումբ է համարվում հսկող իրավաբանական անձը՝ իր կողմից հսկվող իրավաբանական անձանց հետ միասին»:»:

կերության՝ գործող օրենսդրությամբ նախատեսված հիմքերի հետ: Ավելին, կանոնադրական կապիտալում անուղղակի մասնակցության ինստիտուտի, կառավարման մարմինների կեսից ավելին ընտրելու կամ նշանակելու հնարավորության ամրագրմամբ կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում ընկերությունների կառավարման գործում էական դերակատարություն ունեցող բոլոր անձանց բերել պատասխանատվության դաշտ: Օտարերկրյա տեսաբանների մոտ այս եղանակով պատասխանատվության ենթարկումը կոչվում է «կորպորատիվ դիմակի կամ քողի հեռացում» (“lifting the veils”, “piercing the veils of incorporation”)¹¹¹, որի արդյունքում պարտատերերը հնարավորություն են ստանում բաժնետերերին ենթարկել պատասխանատվության¹¹²:

Ինչպես արդեն նշեցինք, իրավաբանական անձի նկատմամբ հսկողությունը կարող է իրականացվել ինչպես մեկ անձի, այնպես էլ երկու կամ ավելի անձանց կողմից՝ ուղղակի ձևով, կամ անուղղակի՝ այլ անձանց միջոցով: Վերահսկվողի դերում ևս կարող է հանդես գալ ինչպես մեկ իրավաբանական անձը, այնպես էլ երկու կամ ավելի իրավաբանական անձինք: Այն դեպքում, երբ որպես հսկող հանդես են գալիս երկու կամ ավելի իրավաբանական անձինք, ապա նման իրավիճակում գործ ունենք «համատեղ հսկողության» հետ: Իսկ երբ որպես հսկվող հանդես են գալիս երկու կամ ավելի իրավաբանական անձինք, ապա նման իրավիճակում մենք գործ ունենք «համատեղ հսկվողների» հետ:

Կարծում ենք, որ վերը նշված հասկացություններն ընդունելի համարվելու և օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու պարագայում «հսկող» և «հսկվող»

¹¹¹ See Andrew Hicks, S. H. Goo. Cases and Materials on Company Law. 6th edition. Oxford New York. 2008, էջեր 106-108:

¹¹² See United States Company Law and Regulations Handbook, Volum 1 Corlorate Laws and Regulation Basics, International Business Publications, USA, Washington, 2009, էջ 55:

անձ հասկացություններն առավել արդյունավետ ձևով կփոխարինեն գործող օրենսդրությամբ նախատեսված «հիմնական», «դուստր» և «կախյալ» ընկերություններ հասկացություններին: Նման մոտեցման անհերքելի առավելությունը կայանում է նրանում, որ այդպիսով հնարավոր կլինի վերահսկող ճանաչել ոչ միայն տնտեսական ընկերություններին կամ ընկերակցություններին, այլև կազմակերպաիրավական այլ ձևեր ունեցող իրավաբանական անձանց, ինչպես նաև ֆիզիկական անձանց:

Քաղաքացիական օրենսգրքում հսկող անձի հասկացության ներդրման դեպքում նրանց պատասխանատվության հիմքերը և սկզբունքները ևս հստակեցման կարիք կունենան: Պարտատերերի և փոքրամասնություն կազմող բաժնետերերի կամ մասնակիցների շահերից կբխի, որպեսզի վերահսկվող իրավաբանական անձի պարտավորությունների համար սահմանվի վերահսկող անձի համապարտ պատասխանատվությունը¹¹³, եթե դրանք ծագել են հսկվող անձի գործողությունների կամ անգործության հետևանքով՝ հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

- այդ գործողությունները կատարվել կամ անգործությունը թույլ է տրվել վերահսկող անձի ցուցումները կատարելու հետևանքով,

- գործողությունների կատարումն (անգործությունը) ուղղված է վերահսկող անձի պատասխանատվության սահմանափակմանը, որը նա կկրեր, եթե այդպիսիք կատարեր անձամբ: Միաժամանակ, այդ գործողություններով (անգործությամբ) պետք է վնաս պատճառվի հսկվողին կամ այլ անձի,

- վերահսկող անձը պարտավոր էր կանխել վերահսկվողի կողմից որոշակի գործողություններ կատարելու (անգործության) արդյունքում երրորդ անձանց վնաս պատճառելը, սակայն չի կատարել:

¹¹³ Հսկող անձանց հետ մեկտեղ համապարտ պատասխանատվություն պետք է սահմանել նաև այն անձանց համար, որոնց միջոցով կամ որոնց հետ համատեղ այդ անձն իրականացրել է հսկողություն:

Ամփոփելով վերոգրյալը, գտնուն ենք, որ առաջարկվող ինստիտուտի ներդրունը կնվազեցնի կորպորատիվ իրավահարաբերություններուն հսկող անձանց կողմից իրավունքի չարաշահման հնարավորությունը, հսկվող իրավաբանական անձին, դրա բաժնետերերին և պարտատերերին հնարավորություն կտա հսկվողի քողի նեքո գործող իրական պատասխանատուներին ենթարկել քաղաքացիաիրավական պատասխանատվության:

§ 1.4. Կորպորացիայի հիմնադրման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է կորպորացիայի ստեղծման երկու եղանակ՝ նոր ընկերության հիմնադրում կամ գոյություն ունեցող կորպորացիայի վերակազմակերպում¹¹⁴: Նոր ընկերություն հիմնադրելու և իրավաբանական անձի վերակազմակերպման միջոցով ստեղծվող ընկերությունների միջև հիմնական տարբերությունն իրավահաջորդության առկայությունն է: Հիմնադրելու միջոցով ընկերության ստեղծման դեպքում ընկերությունը մինչև իր ստեղծումն առաջացած պարտավորությունների համար պատասխանատվություն չի կրում, բացառությամբ այն դեպքի, երբ ընկերության ստեղծման առնչությամբ հիմնադիրների գործունեությունը հավանության է արժանանում հիմնադիրների ժողովում: Ընկերության հիմնադիրներն այս դեպքում միայն ձևավորում են ընկերության կանոնադրական կապիտալը, և ընկերությանը որևէ պարտքի փոխանցումը հնարավոր է միայն ընկերության ստեղծումից հետո: Իրավաբանական անձի վերակազմակերպման միջոցով ընկերություն ստեղծելու դեպքում իրավանախորդի իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդին են անցնում ունիվերսալ իրավահաջորդության միջոցով, որը, կախված վերակազմակերպման ձևից, ձևակերպվում է հատուկ փաստաթղթում՝ փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում¹¹⁵:

¹¹⁴ Վերակազմակերպման միջոցով ընկերության հիմնադրման հարցերի մասին առավել մանրամասն տե՛ս Ավետիսյան Վ. Դ. Բաժնետիրական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Եր., 2005, էջեր 45-69, Ավետիսյան Վ. Դ., Բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման իրավական կարգավորման որոշ հիմնահարցեր Հայաստանի Հանրապետությունում, «Օրինակաբանություն», Եր., 2011, N 68, էջեր 17-25: Սույն պարագրաֆի շրջանակներում կքննարկենք հիմնադրման եղանակով ընկերությունների ստեղծման կապակցությամբ առաջացող հիմնահարցերը:

¹¹⁵ Տե՛ս Жданов Д. В. Организация акционерных обществ в Российской Федерации. М., 2002, էջ 37:

Գրականության մեջ այս կապակցությամբ արտահայտվել է նաև այն տեսակետը, որ ունիվերսալ իրավահաջորդությունն առկա է վերակազմակերպման բոլոր ձևերի պարագայում, բացառությամբ առանձնացման ձևով վերակազմակերպման, որին բնորոշ է սինգուլյար իրավահաջորդությունը¹¹⁶:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 53-րդ հոդվածից հետևում է, որ մեկից ավելի հիմնադիրների դեպքում հիմնադիրները մինչև իրավաբանական անձի գրանցումը կնքում են պայմանագիր, որով որոշվում են իրավաբանական անձի հիմնադրման համար համատեղ գործունեության կարգը, իրավաբանական անձին իրենց գույքը հանձնելու և դրա կառավարմանն իրենց մասնակցության կարգը:

Կորպորացիայի, մասնավորապես բաժնետիրական ընկերության ստեղծումը՝ հիմնադրման միջոցով, իրականացվում է ընկերության հիմնադիր ժողովում կայացված որոշման հիման վրա: Իսկ եթե ընկերությունն ստեղծվում է մեկ անձի կողմից, ապա ընկերության հիմնադրման մասին որոշումը գրավոր կայացնում է այդ անձը՝ միանձնյա: Ընկերությունը կարող է կազմված լինել մեկ անձից նաև այն դեպքում, երբ բաժնետերերից մեկը ձեռք է բերում ընկերության բոլոր բաժնետոմսերը: Այդ մասին տեղեկությունները համապատասխան կարգով պետք է մտցվեն ընկերության կանոնադրության մեջ և գրանցվեն: Բացի դրանից, նման տեղեկությունները պետք է հրապարակվեն:

Այն դեպքում, երբ ընկերությունը հիմնադրվում է երկու և ավելի անձանց կողմից, հիմնադիրները կնքում են ընկերության ստեղծման մասին գրավոր պայմանագիր, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները և պայմանները.

- տեղեկություններ հիմնադիրների մասին՝
- ֆիզիկական անձանց համար՝ անունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, հեռախոսահամարը և կապի

¹¹⁶ Ст'ю Мартышкин С. В. Понятие и признаки реорганизации юридического лица: Дисс. ... канд. юрид. наук. Волгоград, 2000, § 3.2:

այլ միջոցները,

- իրավաբանական անձանց համար՝ լրիվ ֆիրմային անվանումը, պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը (փոստային հասցեն), ղեկավարի կամ ներկայացուցչի անունը, հեռախոսահամարը և կապի մյուս միջոցները.

- ընկերության ստեղծման կապակցությամբ հիմնադիրների համատեղ գործունեության կարգը.

- ընկերության կանոնադրական կապիտալի չափը.

- հիմնադիրների միջև տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեսակները և դասերը, դրանց վճարման չափը և կարգը.

- յուրաքանչյուր հիմնադրի կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը.

- ընկերության ստեղծման հետ կապված հիմնադիրների իրավունքները և պարտականությունները.

- մինչև ընկերության հիմնադիր ժողովի անցկացումը հիմնադիրներին ներկայացնելու համար լիազորված ֆիզիկական անձի անունը.

- ընկերությունը չկայացած համարվելու կամ նրա հիմնադիր ժողովի կողմից հիմնադիրների գործունեությանը հավանություն չտալու դեպքում՝ ընկերության ստեղծման գործընթացում հիմնադիրների գործունեության հետևանքով ծագած պարտավորությունների նկատմամբ պատասխանատվության բաշխումն ըստ հիմնադիրների.

- ընկերությունը չկայացած համարվելու կամ նրա հիմնադիր ժողովի կողմից հիմնադիրների գործունեությանը հավանություն չտալու դեպքում՝ հիմնադիրներին բաժնետոմսերի դիմաց իրենց կատարած վճարների վերադարձման կարգը:

Ընկերության հիմնադիրներ կարող են հանդիսանալ նրա հիմնադրման մասին որոշում ընդունած ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, բացառությամբ այն անձանց, որոնց մասնակցությունն ընկերությունում օրենքով արգելված կամ

սահմանափակված է:

Ընկերության հիմնադիրները համապարտ պատասխանատվություն են կրում մինչև ընկերության պետական գրանցումը ծագած պարտավորությունների համար:

Ընկերությունը պատասխանատվություն է կրում իր ստեղծման հետ կապված հիմնադիրների պարտավորությունների համար միայն այն դեպքում, եթե նրա ստեղծման վերաբերյալ հիմնադիրների գործունեությունը հավանության է արժանանում հիմնադիր ժողովում:

Ընկերություն հիմնադրել ցանկացող ֆիզիկական անձինք պետք է օժտված լինեն լիարժեք գործունակությամբ: Այսինքն, որպեսզի քաղաքացին իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերի և իրականացնի, ինչպես նաև իր համար պարտականություններ ստեղծի՝ տասնութ տարին պետք է լրացած լինի (ՀՀ քաղ. օր-ի հոդվ. 24): Այն դեպքում, երբ օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև տասնութ տարեկան դառնալը, քաղաքացին լրիվ ծավալով գործունակություն ձեռք է բերվում ամուսնանալու պահից: Ընդ որում, ամուսնության հետևանքով ձեռք բերված գործունակությունը ամբողջ ծավալով պահպանվում է նաև այն դեպքում, երբ մինչև տասնութ տարին լրանալն անձն ամուսնալուծվում է:

Վերոհիշյալ բացառությունից զատ, օրենսդիրը նախատեսել է ևս մեկ բացառություն, այն է՝ անչափահասի էմանսիպացիան, սահմանելով, որ տասնվեց տարին լրացած անչափահասը կարող է լիովին գործունակ ճանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով, կամ եթե ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ անչափահասը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ:

Բացի նրանից, որ ֆիզիկական անձանց առումով օրենքը նախատեսում է տարիքային սահմանափակում, հիմնադիրները՝ կախված այն հանգամանքից, թե նրանք բաժնետիրական ընկերության որ տեսակն են նախընտրում հիմնադրել, պետք է հաշ-

վի առնեն ևս մեկ հանգամանք, այն է՝ փակ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնետերերի թվաքանակը չի կարող լինել 49-ից ավելին, իսկ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի թվաքանակն անսահմանափակ է:

Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին պատկանող բաժնետոմսերով ընկերության հիմնադրումն իրականացվում է կառավարության կամ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ ավագանու համաձայնությամբ: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն հանդես գալու որպես ընկերության բաժնետերեր:

Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով կարող են լինել ընկերության բաժնետեր:

Օտարերկրյա քաղաքացիները և իրավաբանական անձինք կարող են հիմնադրել ընկերություն և անդամակցել նրան ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար իրավունքներով: Օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասնակցությամբ ընկերությունների ստեղծման և գործունեության առանձնահատկությունները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

Ընկերություն ստեղծելու մասին հիմնադիրների միջև կնքված պայմանագիրն իր բնույթով համատեղ գործունեության պայմանագիր է¹¹⁷, որի նպատակն է բաժնետիրական ընկերություն հիմնադրելու համար որոշակի գործողությունների կատարումը: Գործող օրենսդրությունը հիմնադիր պայմանագիրը չի դասում կորպորացիայի հիմնադիր փաստաթղթերի թվին: Այն հիմնադիր փաստաթուղթ է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում ցանկացած կազմակերպարավական ձևով ստեղծվող իրավաբանական անձի համար հիմնադիր միակ

¹¹⁷ Տե՛ս «Комментарий к федеральному закону об акционерных обществах», изд-во «Юринформцентр», М., 2002, էջ 65:

փաստաթուղթը կանոնադրությունն է¹¹⁸:

Տեսության մեջ արտահայտված է այն տեսակետը, որ հիմնադիր պայմանագիրը կորպորատիվ գործարք է¹¹⁹: Որպես միակողմ կամ բազմակողմ կորպորատիվ գործարք կարող են որակվել իրավաբանական անձի մեկ կամ մի քանի հիմնադիրների (մասնակիցների), ինչպես նաև դրա միանձնյա կամ կոլեգիալ մարմնի գործառույթներն իրականացնող մեկ կամ մի քանի անձանց գործողությունները, որոնք իրականացվել են օրենքին և իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերին համապատասխան և ուղղված են կորպորատիվ հարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը և դադարեցմանը¹²⁰:

Կորպորատիվ գործարքը նախ և առաջ հիմնադրի կողմից կատարված գործարք է, որն ուղղված է իրավունքի նոր սուբյեկտի՝ իրավաբանական անձի ստեղծմանը: Հիմնադրի կողմից կատարվող միակողմ կորպորատիվ գործարքի օրինակ է մեկ անձի կողմից բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին հիմնադրի որոշումը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 10, կետ 1), իսկ երկկողմ կամ բազմակողմ կորպորատիվ գործարք է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կամ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին հիմնադիր ընդհանուր ժողովի որոշումը («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 12, կետ 1):

Ի տարբերություն քաղաքացիաիրավական դասական գործարքների, որոնք, որպես կանոն, պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք են, կորպորատիվ գործարքն

¹¹⁸ Տե՛ս Բարսեղյան Ս. Կ. Գործարարական իրավունք, Եր., 2009, էջ 83:

¹¹⁹ Տե՛ս Козлова Н. В. Правосубъектность юридического лица по российскому гражданскому праву: Автореф. дисс. ... док. юрид. наук. М., 2004, էջեր 28-29:

¹²⁰ Տե՛ս Козлова Н. В. Правосубъектность юридического лица. М., 2005, էջ 115:

ուղղված է կորպորատիվ իրավահարաբերությունների առաջացմանը, որոնք, որպես կանոն, կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտների միջև ծագում են իրավաբանական անձի պետական գրանցման պահից: Ինչպես արդարացիորեն նշում է Վ. Յու. Վոլֆը, մինչև իրավաբանական անձի պետական գրանցման պահը դրա հիմնադիրներն ունեն միայն «անդամակցության որոշ իրավական հույս», այսինքն՝ կորպորատիվ իրավահարաբերություններ հաստատելու հույս¹²¹: Պետական գրանցման պահից սկսած՝ կորպորատիվ գործարքն իրավական հետևանքներ է ունենում ոչ միայն գործարքը կատարած անձանց, այլև կորպորատիվ իրավահարաբերությունների այլ սուբյեկտների համար, ովքեր չեն մասնակցել կորպորատիվ գործարքի կնքմանը կամ դեմ են եղել դրան:

Բազմակողմ կորպորատիվ գործարքը միշտ չէ, որ կարելի է դիտել որպես պայմանագիր, քանի որ այն ունի կնքման կարգին և ձևին ներկայացվող այլ պահանջներ (օրինակ՝ տես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 67, 68, 79, 82 և այլն):

Ն. Վ. Կոզլովայի կարծիքով, հիմնադիր պայմանագիրն իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթ է, որից բացի՝ գոյություն ունեն իրավաբանական անձ ստեղծելուն ուղղված այլ՝ հիմնադիր փաստաթղթերի թվին չդասվող համաձայնագրեր: Ըստ նրա՝ հիմնադիր պայմանագրի և համատեղ գործունեության մասին պայմանագրի միջև գոյություն ունի սկզբունքային տարբերություն. համատեղ գործունեության մասին պայմանագիրը կորպորատիվ գործարք չէ և, որպես կանոն, կարգավորում է միայն հիմնադիրների միջև առաջացող պարտավորական հարաբերություններն իրավաբանական անձ ստեղծելու գործընթացում, երբեմն՝ դրա գոյության ողջ ընթացքում: Հիմնադիր պայմանագիրը կորպորատիվ գործարքների տարատեսակ է և

¹²¹ Տես Вольф В. Ю. Основы учения о товариществах и акционерных обществах. М., 1927, էջ 102:

կարգավորում է ինչպես այն կնքելուց հետո հիմնադիրների միջև գոյություն ունեցող պարտավորական հարաբերությունները, այնպես էլ իրավաբանական անձի, դրա հիմնադիրների և դրա մարմինների գործառույթներն իրականացնող սուբյեկտների միջև իրավաբանական անձի պետական գրանցումից հետո ծագող կորպորատիվ հարաբերությունները¹²²:

Նշված տեսակետը մեր կողմից ընդունելի չէ: Հիմնադիր պայմանագիրը չի կարելի դիտել որպես կորպորատիվ գործարք, իսկ գործող իրավակարգավորման պայմաններում՝ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթ: Հիմնադիր պայմանագիրը՝ որպես գործարք, իսկապես օժտված է որոշակի առանձնահատկություններով, սակայն դրանով այն չի զրկվում դասական քաղաքացիաիրավական գործարքի հատկանիշներից: Մեր կարծիքով, երկու կամ ավելի հիմնադիրների պարագայում կորպորատիվ գործարքների կնքման հնարավորությունն ի հայտ է գալիս միայն հիմնադիր պայմանագիրը կնքելուց հետո:

Հիմնադիր պայմանագիրը չի դասվում ընկերության հիմնադիր փաստաթղթերի թվին: Այդ իսկ պատճառով տվյալ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին հայցադիմումները քննելիս դատարանները պետք է առաջնորդվեն ՀՀ քաղ. օր.-ի՝ գործարքների անվավերությանը նվիրված բաժնի համապատասխան նորմերով (ՀՀ քաղ. օր.-ի հոդվածներ 303-317): ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը հնարավորություն չտվեց բացահայտել ՀՀ դատարաններում քննված նման գործեր, սակայն նման գործերով ձևավորված դատական պրակտիկա գոյություն ունի Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ նշված խնդրի կապակցությամբ գործում է նույն իրավակարգավորումը, ինչ Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորա-

¹²² Стен Козлова Н. В. Правосубъектность юридического лица по российскому гражданскому праву: Автореф. дисс. ... док. юрид. наук. М., 2004, էջեր 31-32:

պես, Ռուսաստանի Դաշնության Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումի 2003 թվականի նոյեմբերի 18-ի թիվ N 19՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» դաշնային օրենքի կիրառման որոշ հարցերի մասին» որոշման 6-րդ կետում ուղղակիորեն նշված է, որ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճեր քննելիս դատարանները պետք է առաջնորդվեն ՌԴ քաղ. օր.-ի՝ գործարքների անվավերության մասին համապատասխան նորմերով¹²³:

Հիմնադիր պայմանագիրը կարգավորում է իրավաբանական անձ ստեղծելուն ուղղված հիմնադիրների պարտավորաիրավական բնույթի հարաբերություններ: Հիմնադիր պայմանագրի դրույթներն առաջին հերթին պարտադիր են կորպորացիայի հիմնադիրների, իսկ հիմնադիր ժողովի կողմից հիմնադիրների գործողություններին հավանություն տալու դեպքում՝ կորպորացիայի բոլոր անդամների և հենց կորպորացիայի համար: Ընդ որում, հիմնադիրները համապատասխան պարտականություններ ստանձնում են հիմնադիր պայմանագիրն ստորագրելու միջոցով, իսկ կորպորացիայի անդամները, որոնք անդամ են դարձել ավելի ուշ, համապատասխան գործողություն կատարելու՝ բաժնետոմսեր կամ բաժնեմասեր ձեռք բերելու միջոցով: Կորպորացիայի համար հիմնադիր պայմանագրի որոշ դրույթներ պարտադիր են դառնում որպես իրավաբանական անձ պետական գրանցում ստանալուց հետո: Օրինակ՝ բաժնետիրական ընկերությունը պետական գրանցումից հետո պարտավոր է թողարկել կանոնադրությամբ սահմանված տեսակի, դասի և քանակի բաժնետոմսեր և դրանք հիմնադիր պայմանագրին համապատասխան բաշխել հիմնադիրների միջև:

Հիմնադիր պայմանագրի շրջանակներում հիմնադիրները միմյանց հետ կապված են ֆիդուցիար հարաբերություններով: Համապատասխանաբար, թեև օրենսդրությամբ սահմանված է

¹²³ Ст. 5 «Вестник ВАС РФ», 2004, N 1, т. 24:

հիմնադիր պայմանագրով և գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, չափով, կազմով և ժամկետներում կանոնադրական կապիտալ ներդրում կատարելու պարտավորություն (տե՛ս, օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 13, 30, 33), այնուամենայնիվ, ո՛չ ընկերությունը, ո՛չ մյուս մասնակիցները չեն կարող մասնակցին կամ հիմնադրին ստիպել կատարելու համապատասխան ներդրումները, այլ կարող են բավարարվել միայն հիմնադիր պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառմամբ («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9): Ընդ որում, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների (հիմնադիրների) կողմից վճարումներ կատարելու պարտականության խախտումը կարող է նրան կորպորացիայից հեռացնելու հիմք հանդիսանալ (տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 22):

Կարծում ենք, որ գործող օրենսդրությունը կանոնադրական կապիտալի նվազագույն չափ չսահմանելու պայմաններում, հիմնադիրներին կանոնադրական կապիտալի, բաժնետոմսերի արժեքի տարածամկետ վճարման հնարավորություն տալով՝ անորոշություն է մտցնում կորպորատիվ իրավահարաբերություններում և իրավահարաբերության մասնակիցներին որոշակի իրավիճակներում հնարավորություն է տալիս կատարելու իրավունքի չարաշահում¹²⁴: Գտնում ենք, որ ինչպես հիմնադրման փուլում, այնպես էլ հետագայում կանոնադրությամբ պետք է արձանագրվի փաստացի վճարված կանոնադրական կապիտալի չափը, և կորպորացիայի մասնակցին պետք է հնարավորություն տրվի մասնակցելու ընկերության գործերի վարմանը՝ կանոնադրական կապիտալում ունեցած փաստացի ներդրմանը համապատասխան, և ոչ թե ոչնչով չապահովված կատարվելիք պարտավորությամբ:

¹²⁴ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս՝ Ավետիսյան Վ. Դ. Բաժնետիրական իրավունք. ուսումնական ձեռնարկ, Եր., 2005, էջեր 69-77:

Կորպորացիայի հիմնադիր փաստաթուղթը դրա կանոնադրությունն է: Ընկերության կանոնադրությունը լոկոլ բնույթի իրավական ակտ է, որը կարգավորում է համապատասխան ընկերության կազմակերպման և գործունեության կարևորագույն հարցերը:

Մինչհեղափոխական ռուսական ցիվիլիստներ Կ. Ն. Աննենկովը¹²⁵, Դ. Ի. Մեյերը¹²⁶ իրավաբանական անձի (բաժնետիրական ընկերության) կանոնադրությունը հաճախ դիտում էին օրենսդիր գործունեության ակտ: Ավելին, Ռուսական կայսրության Բարձրագույն սենատի պրակտիկայով սահմանվել էր դրույթ այն մասին, որ բաժնետիրական ընկերության հիմնադիրների կամքին համապատասխան մշակված, հաստատված և գործողության մեջ դրված կանոնադրությունը պետք է ծառայի որպես ընկերությանն անդամակցող բաժնետերերի պարտականությունների, իրավունքների և պատասխանատվության որոշման միակ հիմք¹²⁷:

Դա պայմանավորված էր նրանով, որ չնայած Ռուսական կայսրությունում ընկերությունների գործունեությունը կարգավորվում էր օրենքով, բայց փաստացի դրանց իրավական կարգավիճակը սահմանվում էր վարչական կարգադրություններով, որոնք ընդունվում էին յուրաքանչյուր ընկերության համար առանձին (կանոնադրության հաստատման գործընթաց, որը պայմանավորված էր ընկերություն ստեղծելու թույլտրական կարգով): Այդ կարգադրությունները, ինչպես նշում էր պրոֆ. Լ. Ի. Պետրաժիցկին, ձևավորում էին «վարչական բաժնետիրական իրավունք, որը գոյություն ունի անկախ գործող ընդհանուր կանոնից և հակառակ դրան»¹²⁸: Ի. Տ. Տարասովը նշում էր, որ

¹²⁵ Стѣн Анненков К. Система русского гражданского права. Т. 1. Введение и общая часть. СПб., 1899, էջ 53:

¹²⁶ Стѣн Мейер Д. И. Русское гражданское право. Ч. 2, М., 1997, էջ 315:

¹²⁷ Стѣн Гуссаковский П. Н. Вопросы акционерного права. Петроград, 1915, էջ 49:

¹²⁸ Петражицкий Л. И. Акционерная компания: Акционерные злоупотребления и роль акционерных компаний в народном хозяйстве. СПб., 1898, с. 3:

«Ռուսաստանում բաժնետիրական գործի զարգացումը վերջին շրջանում իրականացվում էր կարճես գործող օրենսդրությունից դուրս կամ նույնիսկ հակառակ դրան, քանի որ վերջին տասնամյակի ընթացքում բաժնետիրական ընկերությունների թուլատրված և հաստատված կանոնադրությունների մեջ դժվար է գտնել այնպիսի կանոնադրություն, որն ամբողջությամբ կազմված չլինի բացառիկ որոշումների համակարգային հավաքածուից ...»¹²⁹, իսկ Պ. Ա. Պիսեմսկին նշում էր, որ «ռուսական ընկերությունները գոյություն ունեն 10 հատորից դուրս¹³⁰» ... և այդ պատճառով «պրակտիկան հակված է առանձին կանոնադրությունները դիտելու որպես հատուկ օրենքներ»¹³¹:

XX դարի 20-ական թվականների խորհրդային օրենսդրությունը նույնպես եական նշանակություն էր տալիս կանոնադրությանը: Այդ կապակցությամբ Վ. Յու. Վոլֆը նշում էր. «Հաստատված լինելով Կառավարության կողմից՝ կանոնադրությունը կազմում է Կառավարության համապատասխան որոշման անբաժանելի մասը, այդ պատճառով էլ կառավարման գերագույն ակտ է»¹³²:

Ներկայումս, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավաբանական անձի կանոնադրությունը չի հաստատվում Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների կողմից, հիմնադիր փաստաթղթերը չի կարելի դիտել որպես նորմատիվ ակտեր: Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը¹³³ ուղղակի սահմանում է, որ իրավաբանական անձինք նորմատիվ իրավական ակտեր չեն կարող ընդունել («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 6, մաս 2): Իրավաբանական ան-

¹²⁹ Тарасов И. Т. Учение об акционерных компаниях. М., 2000, с. 179:

¹³⁰ Ընկերությունների վերաբերյալ դրույթները շարադրված են Ռուսական կայսրության օրենքների ժողովածուի 10-րդ հատորի 1-ին մասում:

¹³¹ Писемский П. А. Акционерные компании с точки зрения гражданского права. М., 1875, с.107:

¹³² Вольф В. Ю., նշվ. աշխ., էջ 113:

¹³³ ՀՀՊՏ 2002/15 (190) 21.05.02:

ծինք իրավական ակտերով կան իրենց կանոնադրություններով սահմանված լիազորությունների շրջանակում կարող են ընդունել միայն անհատական կանոններին իրավական ակտեր («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 23, մաս 1):

Ինչ վերաբերում է կանոնադրության՝ որպես լոկալ նորմատիվ ակտի ընկալմանը, ապա հարկ ենք համարում մշել, որ տեղական նորմատիվ ակտի՝ որպես իրավունքի աղբյուրի ինստիտուտը գոյություն ունի միայն աշխատանքային և վարչական իրավունքում:

Ն. Վ. Կոզլովան գտնում է, որ կանոնադրությունն իր իրավական բնույթով կորպորատիվ գործարքի տարատեսակ է, և գործարքի վերաբերյալ օրենսդրության ընդհանուր, այդ թվում՝ դրանք անվավեր ճանաչելու մասին նորմերը, կարող են կիրառվել կանոնադրության՝ որպես կորպորատիվ գործարքի նկատմամբ այն դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով և չի բխում կորպորատիվ հարաբերությունների էությունից¹³⁴:

Մինչեղափոխական Ռուսաստանում բազմաթիվ իրավագետներ, այդ թվում՝ Վ. Ա. Մակլակովը, Գ. Ֆ. Շերշենևիչը, Պ. Պ. Ցիտովիչը մատնանշում էին իրավաբանական անձի կանոնադրության պայմանագրային բնույթը¹³⁵:

Բաժնետիրական ընկերության իրավական բնույթի պայմանագրային տեսությունը, որը բաժնետիրական ընկերության ծագումը բացատրում է պայմանագրի գաղափարով, ֆրանսիական իրավական հայեցակարգում գերակայել է 19-րդ դարի ամբողջ ընթացքում: Բաժնետիրական ընկերությունը որպես պայմանագիր ճանաչելու գաղափարից բխում է, որ դրա կանոնադրությունն ընդունվում, փոփոխվում և լրացվում է միայն դրա մասնա-

¹³⁴ St'u Kozlova H. B. Правосубъектность юридического лица. М., 2005, էջ 273:

¹³⁵ St'u Maklakov B. A. Власть большинства в акционерных компаниях // Вестник гражданского права. 1914, N 2, էջեր 138-139, Шершеневич Г. Ф. О юридической силе уставов акционерных обществ // Журнал гражданского и уголовного права. 1889, Кн. 3, էջ 127, Цитович П. П. Курс русского гражданского права. СПб., 1878, էջ 38:

կիցների միաձայն որոշմամբ¹³⁶:

Կարծում ենք, որ այս տեսակետը ներկայիս իրավակարգավորման պայմաններում իր դարձն ապրել է և քննադատության չի դիմանում, քանի որ, օրինակ, բաժնետիրական ընկերության հիմնադիրը կարող է հիմնադիր ժողովին չմասնակցել (ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում են տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների, ինչպես նաև բաժնետերերի 3/4-ը), սակայն ժողովի մասնակիցների միաձայն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթները նրա համար դառնան պարտադիր («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 12): Իրավիճակն առավել ակնհայտ է դառնում ընկերության պետական գրանցումից հետո կանոնադրության մեջ փոփոխություններ, լրացումներ կատարելու կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու հետ կապված հարաբերություններում:

Կորպորացիայի կանոնադրությունը կորպորատիվ գործարք է, որին բնորոշ են կնքման ձևին, կարգին, բովանդակությանը և գործողությանը վերաբերող առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են կորպորատիվ իրավահարաբերությունների ինքնատիպ բնույթով¹³⁷:

Լինելով կորպորատիվ գործարք՝ կորպորատիվ օրենսդրությունը սահմանում է այն էական պայմանները, որոնց մասին տեղեկությունը պետք է առկա լինի կանոնադրությունում: Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը թվարկում է այն տեղեկությունների ցանկը, որոնք պետք է սահմանվեն կանոնադրությամբ: Կանոնադրությամբ մասնավորապես սահմանվում են.

- ընկերության ֆիրմային անվանումը՝ լրիվ և համառոտ,

¹³⁶ Տե՛ս Кулагин М. И. Государственно - монополистический капитализм и юридическое лицо. М., 1987, էջեր 53-54:

¹³⁷ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Վ.Դ. Ավետիսյան Կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն» 2011, N 134.3, էջեր 27-38:

- ընկերության գտնվելու վայրը,
 - կանոնադրական կապիտալի չափը,
 - ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի տեսակները (սովորական և արտոնյալ), քանակը, անվանական արժեքը, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի դասերը,
 - ընկերության կողմից տեղաբաշխման ենթակա (հայտարարված) բաժնետոմսերի տեսակները (սովորական և արտոնյալ), քանակը, անվանական արժեքը, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի դասերը,
 - յուրաքանչյուր տեսակի և դասի բաժնետոմսերով հավաստվող իրավունքները,
 - յուրաքանչյուր տեսակի և դասի բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները,
 - ընկերության կառավարման մարմինների կազմավորման կարգը, կազմն ու իրավասությունները, նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը, ներառյալ այն հարցերով, որոնցով որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ,
 - ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը,
 - ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դրույթներ¹³⁸
- («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 14, կետ 2):

Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ

¹³⁸ Օրենքով կանոնադրության մեջ ընդգրկման ենթակա տեղեկությունների ցանկն անհարկի ընդլայնված է: Մասնավորապես, պահանջվում է կանոնադրության մեջ ընդգրկել այնպիսի տեղեկություններ կամ կարգավորել այնպիսի հարաբերություններ, որոնք օրենքի այս կամ այն նորմով արդեն կարգավորված են: Օրինակ՝ պահանջվում է կանոնադրությամբ սահմանել յուրաքանչյուր տեսակի և դասի բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, այնինչ դա առկա է օրենքի 37 և 38-րդ հոդվածներում, հետևաբար՝ օրենքի նորմի կրկնությունը կանոնադրության մեջ ավելորդություն է: Ուստի գտնում ենք, որ կանոնադրությունը պետք է կարգավորի միայն այն հարաբերությունները, որոնք Օրենքի իմպերատիվ նորմով կարգավորված չեն:

օրենքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասը սահմանում է, որ ընկերության աշխատակիցներին կանոնադրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել աշխատակցի բաժնետոմսեր, 43-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասը սահմանում է, որ ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրությամբ սահմանված չափով, բայց կանոնադրական կապիտալի 15 տոկոսից ոչ պակաս, 66-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասը սահմանում է, որ տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում և այլն:

Կորպորացիայի ստեղծման պահը պարզելու հարցում էական նշանակություն ունի կորպորացիայի կանոնադրական կապիտալի ձևավորմանը վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը:

Կանոնադրական կապիտալը կատարում է չորս կարևորագույն գործառույթ.

- ձևավորում է այն նվազագույն նյութական բազան («նախնական» կապիտալ), որն անհրաժեշտ է ընկերության ստեղծման և հետագա գործունեության համար,

- հանդիսանում է պարտատերերի շահերը երաշխավորող՝ ընկերության գույքի նվազագույն չափը,

- շահաբաժինների բաշխման ժամանակ հնարավորություն է տալիս որոշելու յուրաքանչյուր բաժնետիրոջ շահաբաժնի չափը,

- կանոնադրական կապիտալի չափն ընկերության տնտեսական գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներից է:

Չնայած այն հանգամանքին, որ գործող օրենսդրությունն ընկերությունների համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափ չի սահմանում, բացառությամբ առանձին դեպքերի, երբ, ընկերության գործունեության ոլորտով պայմանավորված, օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել կա-

նոնադրական կապիտալի նվազագույն չափեր¹³⁹, օրենսդիրը մանրակրկիտ կարգավորում է կանոնադրական կապիտալի ձևավորմանը վերաբերող հարցերը¹⁴⁰:

¹³⁹ Օրինակ՝ Ներդրումային ֆոնդերի կառավարիչների կանոնադրական կապիտալի նվազագույն չափը կազմում է մեկ միլիոն դրամ (ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/02. հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշմամբ):

¹⁴⁰ Կանոնադրական կապիտալից բացի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է բաժնետիրական ընկերությունում այլ գույքային հիմնադրամների ստեղծման հնարավորություն ևս: Մասնավորապես, բաժնետիրական ընկերությունում պարտադիր կերպով պետք է ստեղծվի պահուստային հիմնադրամ, որի մեծությունը պետք է համապատասխանի կանոնադրությամբ սահմանված չափին, սակայն այն չի կարող կանոնադրական կապիտալի 15 տոկոսից պակաս լինել: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա ընկերությունը պարտավոր է այդ պահուստային հիմնադրամը համալրել՝ օգտվելով օրենքով նախատեսված երկու աղբյուրներից՝ ընկերության շահույթից կամ ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Այն դեպքում, երբ պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա պահուստային հիմնադրամին ընկերության շահույթից հատկացումները կատարվում են շահույթի առնվազն 5 տոկոսի չափով:

Պահուստային հիմնադրամը կարող է օգտագործվել երեք նպատակով. ընկերության կորուստները ծածկելու, պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 43, կետ 1, մաս 2):

Պահուստային հիմնադրամը վերը նշված երեք նպատակներով կարող է օգտագործվել միայն այն դեպքում, եթե ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամում առկա միջոցներն այլ նպատակներով օգտագործվել չեն կարող:

Հատկանշական է այն փաստը, որ օրենսդրությամբ պահուստային ֆոնդի պարտադիր ստեղծման պարտականություն նախատեսված է միայն բաժնետիրական ընկերությունների համար: Այլ կազմակերպությունները, օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, կարող է, սակայն պարտավոր չէ ստեղծել պահուստային հիմնադրամ: Սրանով կարծես թե ընդգծվում է այն հանգամանքը, որ բաժնետիրական ընկերությունները հանդիսանում են իրավաբանական անձանց այն կարևոր կազմակերպարարական ձևը, որոնց հաջող և արդյունավետ գործունեությամբ է պայմանավորված տնտեսության ընդհանուր վիճակը:

Բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ կարող են նախատեսվել այնպիսի հիմնադրամներ, ինչպիսիք են աշխատակիցների բաժնետիրացման, շահաբաժինների վճարման և այլ հիմնադրամներ:

Կարծում ենք, որ բաժնետիրական ընկերությունների պարագայում կանոնադրական կապիտալի նվազագույն չափ չսահմանելը տվյալ տեսակի կորպորացիայի իրավակարգավորման ոլորտում հետընթաց քայլ է: Նման իրավակարգավորման պայմաններում կանոնադրական կապիտալը կորցնում է իր կարևորագույն գործառնություններից մեկը՝ ընկերության ստեղծման և հետագա գործունեության համար նվազագույն նյութական բազա («նախնական» կապիտալ) հանդիսանալը: Հետաքրքրական է այս հարցում Եվրոպական միության անդամ երկրների ներպետական օրենսդրությունում և Եվրոմիությունում առկա իրավակարգավորումը: Մինչ 1976 թվականը Եվրամիության անդամ պետություններում կանոնադրական կապիտալի նվազագույն չափի սահմանման հարցում միասնական մոտեցումը բացակայում էր: Մասնավորապես, անդամ պետությունների մի մասը, օրինակ՝ Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն, սահմանում էին կանոնադրական կապիտալի նվազագույն չափեր, իսկ մյուսները՝ Ղուանդիա, Լյուքսեմբուրգ, Բելգիա և այլն, մնան չափեր չէին սահմանում¹⁴¹: Սակայն Եվրոպական միության խորհրդի կողմից 13.12.1976 թվականին ընդունված «Կապիտալի մասին» անվանումը ստացած թիվ 77/91/ԵՄ ուղեցույցով (դիրեկտիվայով) կանոնադրական կապիտալի նվազագույն շեմի պահանջ սահմանվեց այն բաժնետիրական ընկերությունների համար, որոնց կողմից թողարկված բաժնետոմսերը գտնվում էին ազատ շրջանառության մեջ: Ուղեցույցի 6-րդ հոդվածի համաձայն բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը 25000 եվրոյից ցածր չպետք է լինի: Իսկ եվրոպական ընկերության համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը կազմում է 120000 եվրո¹⁴²:

¹⁴¹ Տե՛ս Дубовицкая Е. Европейское корпоративное право: Свобода перемещения компаний в Европейском сообществе, М., 2004, էջ 116:

¹⁴² Տե՛ս Регламент Совета Европейского Союза № 2157/2001 от 8 октября 2001 г. “О статуте Европейской компании (ЕК)”, <http://law.edu.ru/norm/norm.asp?normID=1294929>:

Հիմնադիրների կողմից կանոնադրական կապիտալի ոչ ամբողջական վճարումը կորպորացիայի համար կարող է առաջացնել բազմաթիվ անբարենպաստ հետևանքներ՝ պարտատերերին պարտավորության կատարման լրացուցիչ երաշխիքների տրամադրում, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, վնասների հատուցում, նույնիսկ ընկերության հնարավոր լուծարում:

Հետաքրքրական է մինչհեղափոխական ռուսական օրենսդրությամբ կանոնադրական կապիտալի վճարման հետ կապված իրավակարգավորումը, որով էական նշանակություն էր տրվում կանոնադրական կապիտալի համալրմանը վերաբերող հարցերին: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ լիազորմարմնի կողմից կանոնադրության հաստատումն անմիջականորեն չէր հանգեցնում կորպորացիայի ստեղծմանը և, համապատասխանաբար՝ կորպորատիվ հարաբերությունների հաստատմանը: Կանոնադրությունը հաստատելուց հետո հիմնադիրները հայտարարում էին բաժնետոմսերի բաժանորդագրման մասին: Բաժանորդագրման պայմանագիրը կնքվում էր բաժանորդի և հիմնադրի միջև՝ կազմակերպության հրապարակած նախագծի հիման վրա: Բաժնետոմսերին բաժանորդագրվելով և դրանով իսկ ստանձնելով դրանց վճարման պարտավորություն՝ բաժանորդը մտադրություն ուներ հիմնել բաժնետիրական ընկերություն և դրանով ձեռք բերել անդամային (բաժնետիրական) իրավունք: Բաժանորդի այդ նպատակն անմիջականորեն դրանից բխող իրավական հետևանք չէ, այլ առաջանում է այն դեպքում, երբ բաժանորդագրման ակտին միանում են ևս երկու իրավաբանական ակտեր՝ հիմնադիրների կողմից բաժանորդագրման ընդունումը և ընկերությունը կայացած ճանաչելու վերաբերյալ հիմնադիր ժողովի որոշումը¹⁴³:

Բաժանորդագրման վերաբերյալ համաձայնագրի բնույթի առնչությամբ Գիրկենն նշել է, որ «բաժանորդագրվելը՝ ուղղված

¹⁴³ Стен Вольф В. Ю., նշված աշխ., էջ 102:

լինելով իրավունքի նոր սուբյեկտի ստեղծմանը, գտնվում է պարտավորական իրավունքի ոլորտից դուրս և վերաբերում է իրավունքի հատուկ ոլորտի՝ Personenrecht: Բաժանորդագրությունը հենց Statusact է՝ գործարք, որով ստեղծվում են ոչ թե պարտավորություններ, այլ անձինք»¹⁴⁴:

Իրավաբանական անձն ստեղծված է համարվում դրա պետական գրանցման պահից (ՀՀ քաղ. օր.-ի հոդված 56, կետ 3): Ընդ որում, գործող օրենսդրությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում ընկերության հիմնադիրներին հնարավորություն է ընձեռում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի որոշակի մասը վճարել պետական գրանցումից հետո մեկ տարվա ընթացքում («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 30), իսկ բաժնետիրական ընկերությունների պարագայում որպես պարտադիր պայման սահմանում է այն, որ մինչև ընկերության պետական գրանցումը նրա բաժնետոմսերը պետք է լրիվ վճարված լինեն («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 30, կետ 2):

Կորպորատիվ օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս բաժնետիրական ընկերության ստեղծման գործընթացը բաժանել երկու փուլի. առաջին՝ ընկերության հիմնադրում և երկրորդ՝ արդեն իսկ հիմնադրված ընկերության պետական գրանցում: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների պարագայում այս դասակարգումը չի գործում, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետն ուղղակի սահմանում է, որ ընկերությունն ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Իսկ ընկերության գործունեության ոլորտի առանձնահատկություններից կախված, մասնավորապես՝ բանկեր, ապահովագրական ընկերություններ և այլն, ընկերությունն ստեղծված է հա-

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 105:

մարվում լիազոր մարմնում գրանցվելու պահից (տե՛ս, օրինակ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք¹⁴⁵, հոդված 27, կետ 5): «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, 30-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում են¹⁴⁶, որ ընկերության հիմնադրման (հիմնադրելիս) ժամանակ նրա բոլոր բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեն հիմնադիրների միջև: Նույնաբովանդակ իրավակարգավորում է պարունակում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 111-րդ հոդվածի 3-րդ կետը, մի բացառությամբ, որ «տեղաբաշխել» եզրույթի փոխարեն օգտագործում է «բաշխել» եզրույթը: Իրավամբ ծագում են հետևյալ հարցերը.

- ո՞ր պահից է ընկերությունը համարվում հիմնադրված,
- ի՞նչ է հասկացվում տեղաբաշխված ու բաշխված բաժնետոմսեր ասելով:

Գործող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ ընկերությունը հիմնադրված է համարվում հիմնադիր ժողովի կողմից ընկերության հիմնադրման մասին որոշումը կայացնելու պահից («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 12): Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ առանց իրավաբանական անձի պետական գրանցման օրենքը ճանաչում է բաժնետիրական ընկերության գոյության փաստը, այնինչ իրավաբանական անձի պետական գրանցումը նոր ստեղծվող իրավաբանական անձի իրավունակությամբ¹⁴⁷

¹⁴⁵ ՀՀ ԱԺՏ 1996/12 30.06.96:

¹⁴⁶ Հարկ ենք համարում նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում առկա են դեպքեր, երբ միևնույն իրավահարաբերությունը կարգավորող նորմն անհարկի կրկնվում է. այդպիսի օրինակ են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը և 30-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետը:

¹⁴⁷ Կարծում ենք, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքի վերը նշված նորմը թերի է և պետք է «իրավունակության» բառից հետո ավելացնել «և գործունակության» բառերը, քանի որ իրավաբանական անձի պետական գրանցման պահից ծագում է ոչ միայն իրավաբանական անձի իրավունակությունը, այլև գործունակությունը:

ճանաչումն է պետության կողմից («Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքի¹⁴⁸ հոդված 3, մաս 1, կետ 11): Օրենքը չի հստակեցնում այն խնդիրը, թե ընկերության հիմնադրման ժամանակ ինչպես է հնարավոր դեռևս չստեղծված ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխել հիմնադիրների միջև: Իսկ «տեղաբաշխում» եզրույթը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի իմաստով նշանակում է բաժնետերերին վաճառված, փաստացի նրանց հանձնված բաժնետոմսեր: Բանն այն է, որ խոսքն ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխմանը կարող է վերաբերել միայն ընկերության ստեղծումից հետո, քանի որ միայն այդ դեպքում ընկերությունը կարող է թողարկել փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային ձևի արժեթղթեր: Մեր կարծիքով, Բաղաքացիական օրենսգրքում օգտագործված «բաշխում» եզրույթի փոխարեն «տեղաբաշխում» եզրույթի օգտագործումը գործնականում անհնարին է դարձնում օրենքի նշված նորմի պահանջների կատարումը:

Որոշ հեղինակներ նման իրավիճակից դուրս գալու համար առաջարկում են օրենքով նախատեսել գերմանական իրավունքում կիրառվող «նախնական ընկերություն» ստեղծելու հնարավորությունը, ըստ որի՝ հիմնադիրների կողմից ընկերության ստեղծման մասին պայմանագրի ստորագրման պահից, որը կոչվում է ընկերության հիմնում, մինչև դրա գրանցումը գոյություն ունի նախնական ընկերություն, որն իրավաբանական անձ է, սակայն օժտված է իրավունքի սուբյեկտներին բնորոշ որոշ իրավագործություններով¹⁴⁹: Համանման ընթացակարգ է նախատեսված կազմակերպությունների մասին ֆինանսական օրեն-

¹⁴⁸ ՀՀՊՏ 2001/14 (146), 18.05.01:

¹⁴⁹ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Козлова Н. В., Селяков Н. Ю. Неугасимая лампада //Вст. статья к книге: Суворов Н. С. Об юридических лицах по римскому праву. М., 2000г., т2 13:

քով¹⁵⁰: Իսկ, օրինակ՝ Անգլիայում դեռ 1844 թ. օրենքով նախատեսված է կազմակերպության կրկնակի գրանցման գործընթաց՝ նախնական, որը պետք է իրականացվի մինչև կազմակերպության վերջնական առաջացումը, հետևաբար՝ մինչև կառավարական կոնցեսի ստացումը, և վերջնական: Քանի դեռ վերջնական հաստատում չի եղել (գրանցում), արգելվում է կազմակերպության բաժնետոմսերի հետ կապված որևէ գործարքի կատարումը¹⁵¹: Նմանատիպ իրավակարգավորումը Միացիալ Թագավորությունում պահպանվել է նաև 2006 թվականի «Կոնպանիաների մասին» օրենքում:

Հայաստանի Հանրապետությունում կորպորացիաների ստեղծման փորձի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դեռևս չստեղծված իրավունքի սուբյեկտին որևէ գույք հանձնելը կամ գույքային իրավունքով օժտելը խնդրահարույց է, իսկ եթե խոսքն անշարժ գույքի կամ արժեթղթերի մասին է, ապա սկզբունքորեն անհնարին է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գործարքից բխող իրավունքները ենթակա են գրանցման, իսկ գրանցումը դառնում է անհնարին, քանի որ գոյություն չունի այն սուբյեկտը, որի իրավունքները ենթակա լինեն գրանցման: Հետևաբար՝ ստացվում է, որ կանոնադրական կապիտալն անշարժ գույքով համալրելու կամ նոր ստեղծվող բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի արժեքը գույքով վճարելու օրենսդրական պահանջները գործնականում անհնարին է իրականացնել:

Կարծում ենք, որ մեր օրենսդրությամբ կորպորացիայի, մասնավորապես բաժնետիրական ընկերության ստեղծման պահին կանոնադրական կապիտալը վճարելու պահանջի վերացումը մեծապես կօգնի լուծել վերը նշված խնդիրները:

Ուստի առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերություն-

¹⁵⁰ St'u Kozlova H. B. Правовое положение акционерных обществ и обществ с ограниченной ответственностью в Финляндии // Законодательство. 2001г. N 10. 68-73 էջեր:

¹⁵¹ St'u Каминка А. И. Акционерные компании. Т. 1. СПб., 1902г. էջ 225:

ների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետում «տեղաբաշխվել» բառի փոխարեն օգտագործել «բաշխվել» բառը, իսկ 30-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետը համարել ուժը կորցրած, քանի որ անհարկի կրկնում է վերը նշված նորմի բովանդակությունը: Ըստ այսմ՝ առաջարկում ենք փոփոխություններ կատարել նաև այլ հոդվածներում, օրինակ 12-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետում և այլն:

Առաջարկում ենք նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ կետը փոփոխել և վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Ընկերության պետական գրանցումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում հիմնադիրները պարտավոր են, հիմնադիր պայմանագրին համապատասխան, վճարել իրենց հանձնման ենթակա բաժնետոմսերի արժեքը»:

Նման իրավանորմի առկայության պայմաններում ըստ էության ընկերությունը հնարավորություն կստանա կանոնադրական կապիտալը համալրելու պարտականություն ունեցող բաժնետերերից պահանջել կատարելու հիմնադիր պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև փոխհատուցելու այդ պարտականությունը չկատարելու արդյունքում ընկերությանը պատճառված վնասները:

Նշված գործիքակազմն արդյունավետ կիրառելու համար անհրաժեշտ է նոր ստեղծված ընկերությանն արգելել մինչև կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը կանոնադրական կապիտալի համալրման գործընթացը ապահովող գործարքներից բացի այլ գործարքներ կնքելը:

Նույն օրենքի 51-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնելուց հետո՝ 35 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը պարտավոր է հիմնադիրներին հանձնել հիմնադիր պայմանագրով նրանց հասանելիք բաժնետոմսերը»:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը նվիրված է «Չկայացած ընկերության» իրավակարգավորմանը: Մասնավորապես, ընկերությունը համարվում է չկայացած՝

- եթե բաժնետոմսերի տեղաբաշխումը և բաժնետոմսերի դիմաց բաժնետերերի կողմից վճարումները կատարվելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում չի գումարվում հիմնադիր ժողով:

- եթե ընկերություն հիմնադրելու մասին որոշումն ընդունելու պահից վեց ամսվա ընթացքում ընկերությունը սահմանված կարգով չի գրանցվում:

- ընկերության պետական գրանցումը մերժելու դեպքում, եթե մերժումը երեք ամսվա ընթացքում չի բողոքարկվում դատարան կամ բողոքը մերժվում է, և այդ որոշումը մտնում է օրինական ուժի մեջ:

Ընկերությունը չկայացած համարվելու դեպքում ընկերության հիմնադիրներին բաժնետոմսերի դիմաց կատարված վճարները վերադարձվում են ընկերության ստեղծման հետ կապված պարտավորությունների նկատմամբ պատասխանատվությունը հիմնադիրների միջև, ընկերության ստեղծման մասին պայմանագրի համաձայն, բաշխելուց հետո:

Կարծում ենք, որ «չկայացած ընկերություն» եզրույթն օրենսդրի կողմից մեղմ ասած հաջող չի ընտրված: Այս նորմով, օրենսդիրն ընդամենը ցանկացել է կարգավորել ընկերությունը ստեղծելու ձեռնարկն անհաջողության մատնվելու դեպքում հիմնադիր պայմանագրի՝ օրենքի ուժով դադարելը և դադարման հետևանքները:

Գտնում ենք, որ վերը նշված առաջարկների տրամաբանության շրջանակներում անհրաժեշտ է փոփոխել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի վերտառությունը և բովանդակությունը, և այն շարադրել հետևյալ վերտառությամբ և խմբագրությամբ:

«Հոդված 13 Ընկերության ստեղծման մասին պայմանագրի
դադարման հիմքերը և հետևանքները

1. Ընկերության ստեղծման մասին պայմանագիրը համարվում է դադարած.

ա/ եթե պայմանագիրն ստորագրելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում կամ պայմանագրում նշված այլ ժամկետում չի գումարվում հիմնադիր ժողով.

բ/ եթե ընկերություն հիմնադրելու մասին որոշումն ընդունելու պահից վեց ամսվա ընթացքում ընկերությունը սահմանված կարգով չի գրանցվում.

գ/ ընկերության պետական գրանցումը մերժելու դեպքում, եթե մերժումը երեք ամսվա ընթացքում չի բողոքարկվում դատարան կամ բողոքը մերժվում է, և այդ որոշումը մտնում է օրինական ուժի մեջ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հիմքերով պայմանագիրը դադարելու դեպքում ընկերության ստեղծման հետ կապված ծախսերը հիմնադիրների միջև բաշխվում են ընկերության ստեղծման մասին պայմանագրին համապատասխան:»:

§ 1.5. Կորպորացիայի դադարման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները

Առաջին հայացքից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով իրավաբանական անձի վերակազմակերպման և լուծարման հետ կապված հարաբերություններն առավել մանրակրկիտ կարգավորված ոլորտներից են: Այդպիսիք առավել մանրակրկիտ կերպով են կարգավորված գործունեության առանձին ոլորտներում ընդգրկված իրավաբանական անձանց պարագայում, օրինակ՝ բանկեր, ապահովագրական ընկերություններ, վարկային կազմակերպություններ¹⁵² և այլն: Սակայն նշված ինստիտուտների իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների օրենսդրության և խնդրին վերաբերող գիտական աշխատությունների վերլուծությունը մեզ թույլ տվեց վեր հանել Հայաստանի Հանրապետությունում այս ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներ և ներկայացնել դրանց լուծման ուղիները: Առկա հիմնախնդիրներն իրենց բացասական ազդեցությունն են գործում ոչ միայն վերակազմակերպման և լուծարման գործընթացում գոյություն ունեցող իրավահարաբերությունների ներքին և արտաքին կողմի¹⁵³ վրա, այլև, ընդհանրապես, խաթարում են քաղաքացիական իրավահարաբերությունների կայունությունը:

¹⁵² Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ գլուխները, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք 8-րդ բաժինը, 23-րդ գլուխը և այլն: Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում, հաշվի առնելով վերակազմակերպման հետ կապված հարաբերությունների բարդ և ինքնուրույն բնույթը, առավել արդյունավետ կլինեն դրանք կարգավորել առանձին նորմատիվ իրավական ակտով: Օրինակ՝ օտարերկրյա բազմաթիվ պետություններում նշված իրավահարաբերությունների իրավակարգավորումը հաճախ իրականացվում է առանձին նորմատիվ իրավական ակտով. այդ մասին առավել մանրամասն տես՝ Бакулина Е. В. Совершенствование правового регулирования реорганизации хозяйственных обществ: дисс. ... канд. юрид. наук. М., 2004., էջ 95:

¹⁵³ Տե՛ս Коровайко А. В. Реорганизация хозяйственных обществ. Теория, законодательство, практика: Учебное пособие. М., 2001, էջ 15:

1.5.1. Կորպորացիայի վերակազմակերպումը

Կորպորացիայի վերակազմակերպումը հանդիսանում է ինքնատիպ իրավական երևույթ, որին բնութագրական են իրավաբանական անձի գործունեության դադարման և ստեղծման գործընթացները: Ինչպես ՀՀ գործող քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքները չեն բանաձևում վերակազմակերպման հասկացությունը¹⁵⁴, այլ միայն սահմանում են վերակազմակերպման ձևերը՝ միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում և վերակազմավորում¹⁵⁵:

Տեսական գրականության մեջ տրվել են վերակազմակերպման բազմաթիվ բանաձևումներ, մասնավորապես, հեղինակների մի մասը գտնում է, որ վերակազմակերպումը իրենից ներկայացնում է գործարք, մյուսները գտնում են, որ վերակազմակերպումն իրավաբանական փաստերի համախումբ է, որոնց մի մասը հանդիսանում են գործարքներ և այլն¹⁵⁶: Մենք գտնում ենք, որ վերակազմակերպումը կարելի է բնութագրել որպես գոյութ-

¹⁵⁴ Մենք համամիտ ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «վերակազմակերպում» բառը ճիշտ չի օգտագործված: Ըստ էության վերակազմակերպումը վերակառուցման տեսակներից մեկն է: Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Բարսեղյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Երևան, 2009, էջ 126:

¹⁵⁵ Սույն ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրվում են ՀՀ-ում իրավաբանական անձանց առավել տարածված կազմակերպաիրավական ձևերի, սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպմանն առնչվող հարցերը՝ բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպումը կարգավորող օրենսդրության շրջանակներում, քանի որ իրավաբանական անձանց այլ կազմակերպաիրավական ձևերին վերաբերող օրենսդրությունը նշված իրավահարաբերությունները կարգավորում է խիստ մակերեսորեն:

¹⁵⁶ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Наумов О. А. О защите прав кредиторов при реорганизации должников // Арбитражная практика. 2001. N 3, Габов А., Федорчук Д. Реорганизация акционерных обществ // Журнал для акционеров. 2003. N 3, էջեր 33,34, Корпоративное право: Учебник /Под ред. И. С. Шиткина. М. 2007, էջեր 177-179 և այլն:

յուն ունեցող իրավաբանական անձի նյութական հենքի վրա իրավունքի նոր սուբյեկտի կամ սուբյեկտների ստեղծում՝ գոյություն ունեցող իրավունքի սուբյեկտի գոյության դադարմամբ կամ նյութական հենքի ընդլայնմամբ կամ նվազմամբ:

Իրավաբանական անձի վերակազմակերպման ցանկացած ձևի դեպքում տեղի է ունենում իրավունքների և պարտականությունների փոխանցում իրավահաջորդներին: Հիմնականում դրանով է պայմանավորված վերակազմակերպման միջոցով, օրինակ՝ բաժնետիրական ընկերության ստեղծման և գործունեության դադարման տարբերությունն իրավաբանական անձի հիմնադրումից կամ լուծարումից: Իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում իրավանախորդի իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդին են անցնում ամբողջությամբ կամ մասնակիորեն, այսինքն՝ տեղի է ունենում ունիվերսալ (ընդհանուր) իրավահաջորդություն¹⁵⁷, որը, կախված վերակազմակերպման ձևից, ձևակերպվում է հատուկ փաստաթղթում՝ փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում¹⁵⁸:

Վերակազմակերպումը կարող է իրականացվել ինչպես կամավոր, այնպես էլ հարկադիր կարգով՝ դատարանի վճռի հիման վրա: Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց վերակազմակերպման առավել տարածված հիմքը կամավոր վերակազմակերպումն է, իսկ դատական կարգով վերակազմակերպման օրինակ սույն ուսումնասիրությունը կատարելու ժամանակահատվածում մեզ գտնել չհաջողվեց:

Չափանիշներից մեկը, որից ելնելով կարելի է ուսումնասիրել բաժնետիրական ընկերության վերակազմակերպման ձևերը, այն է, թե ինչ նպատակով է իրականացվում վերակազմա-

¹⁵⁷ Տե՛ս Гражданское право. Ч.1. Под ред. проф. Ю. К. Толстого, А.П. Сергеева. Издание третье. Изд-во “Проспект”, М., 1999, էջ 135:

¹⁵⁸ Տե՛ս Жданов Д. В. Реорганизация акционерных обществ в Российской Федерации. М., изд-во “Лекс-Книга”, 2002, էջ 37:

կերպումը: Այսպես, միացման կամ միաձուլման միջոցով հնարավոր է ավելացնել ընկերության գույքային բազան, առանձնացման և բաժանման միջոցով հնարավոր է հասնել հակադիր նպատակին՝ նվազեցնել ընկերության գույքային միջոցները, իսկ վերակազմավորման դեպքում բաժնետիրական ընկերության գույքի ավելացում կամ պակասեցում տեղի չի ունենում¹⁵⁹:

Ընկերությունների միաձուլում է համարվում նոր ընկերության ստեղծումը՝ նրան երկու և ավելի միաձուլվող ընկերությունների իրավունքների ու պարտականությունների փոխանցմամբ և միաձուլվող ընկերությունների դադարմամբ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 19, կետ 1):

Ընկերությունների միացում է համարվում մեկ կամ մի քանի ընկերությունների դադարումը՝ նրանց իրավունքների և պարտականությունների այլ ընկերության փոխանցմամբ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 20, կետ 1):

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով տրված միաձուլման և միացման բնորոշումները, կարելի է ասել, որ վերակազմակերպման այս ձևերին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- դադարում են գոյություն ունենալ մեկ կամ մի քանի ընկերություններ,
- դադարող ընկերությունների բոլոր իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են իրավահաջորդ ընկերությանը,
- իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են կամ նոր ստեղծվող ընկերությանը, կամ էլ արդեն իսկ գոյութե-

¹⁵⁹ Այս դասակարգումից ելնելով՝ նախևառաջ ուսումնասիրենք միացումը և միաձուլումը, այնուհետև՝ բաժանումը և առանձնացումը, որից հետո կքննարկենք վերակազմավորումը:

յուն ունեցող ընկերությանը,

- վերակազմակերպման սուբյեկտ կարող են հանդիսանալ բացառապես Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կամ ստեղծվող ընկերությունները¹⁶⁰:

Ներկայումս Եվրոպական միությունում տարածուն է ստացել այսպես կոչված «անդրսահմանային» միաձուլումը (միացումը)¹⁶¹, և այս տեսանկյունից ՀՀ օրենսդրությամբ նմանատիպ վերակազմակերպումների իրականացման հնարավորության ընձեռումը, կարծում ենք, կարող է դրական առումով նպաստել կապիտալի տեղաշարժին և Հայաստանի Հանրապետությունում ներդրումների իրականացմանը:

Վերակազմակերպման այս ձևերն ընդհանուր առմամբ շատ նման են, սակայն ունեն մեկ հիմնական տարբերություն, այն է՝ միաձուլման արդյունքում ստեղծվում է նոր ընկերություն, և նոր ընկերության ստեղծումը միաձուլվող ընկերությունների հիմնական նպատակներից մեկն է, իսկ միացման դեպքում նոր ընկերություն չի ստեղծվում, այլ միացման համար որպես հիմք է հանդես գալիս արդեն իսկ գոյություն ունեցող ընկերությունը:

Ընկերությունների միաձուլման կամ միացման մասին որոշում ընդունելու դրդապատճառները հիմնականում ունեն տնտեսական բնույթ: Այդ եղանակով հնարավոր է դառնում ընդարձակել ընկերության գործունեության շրջանակները, համապատասխան շուկայում ամրապնդել դիրքերը, գրավել նոր շուկաներ, նվազեցնել ծախսերը, բարձրացնել ղեկավարման որակը և այլն: Միաձուլումը (միացումը) հնարավորություն է տալիս գործարարական գործունեության շրջանակներն ընդարձակել ոչ թե զրոյական վիճակից, այլ արդեն իսկ գործող ձեռնարկութ-

¹⁶⁰ Տե՛ս «Քաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 1, կետ 2:

¹⁶¹ Տե՛ս Frank Dornseifer (Ed.), Corporate Business Forms in Europe, München, 2005, էջ 5:

յան հիման վրա: Միաձուլումը (միացումը) մրցակիցների դեմ պայքարելու արդյունավետ միջոցներից մեկն է: Սակայն կապիտալի կենտրոնացումը կարող է առաջացնել որոշակի բացասական հետևանքներ: Օրինակ՝ միաձուլման (միացման) արդյունքում կարող է ի հայտ գալ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում, որը համապատասխան չափանիշների առակայության դեպքում ենթակա է հայտարարագրման, և լիազոր պետական մարմնի թույլտվությունից հետո միայն նման վերակազմակերպումը կարող է հասցվել իր տրամաբանական ավարտին¹⁶²:

Տարբերվում են միաձուլման և միացման հետևյալ տեսակները.

✓ հորիզոնական միաձուլում (միացում). իրականացվում է շուկայի միևնույն ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ընկերությունների միջև և նպատակ է հետապնդում մեծացնել շուկայում ընկերության ունեցած բաժնեմասը, վերացնել մրցակիցներին, խոշորացնել ընկերությունը (օրինակ՝ բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունը կարող է վերակազմակերպվել բանկի՝ մեկ այլ բանկի հետ միացման և բանկի վերակազմավորման միջոցով).

✓ ուղղահայաց միաձուլում (միացում). իրականացվում է միևնույն տեխնոլոգիական շղթայում գտնվող ընկերությունների միջև: Այն կարող է լինել վերընթաց՝ միաձուլում (միացում) մատակարարի հետ, և վայրընթաց՝ միաձուլում (միացում) սպառողի հետ: Նման միաձուլումների (միացումների) նպատակն է հունք արտադրող և վերջնական արտադրանք տվող ընկերությունների միաձուլման (միացման) միջոցով ծախսերի կրճատումը.

✓ կոնգլոմերատ (խառնակույտ) միաձուլում (միացում). ի-

¹⁶² Այդ մասին առավել մանրամասն տես՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածները:

րականացվում է այնպիսի ընկերությունների միջև, որոնք գործունեություն են իրականացնում ձեռնարկատիրության տարբեր ոլորտներում: Կոնգլոմերատ միաձուլման (միացման) նպատակն է բազմազանել ընկերության կողմից իրականացվող գործառնությունները և նվազեցնել որոշակի իրավիճակների հետ կապված ռիսկերի աստիճանը¹⁶³:

Բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպումը տեղի է ունենում բացառապես բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման հիման վրա: Սակայն միաձուլման կամ միացման ձևով վերակազմակերպումը, օրենքով նախատեսված դեպքերում, կարող է իրականացվել միայն լիազորված պետական մարմնի թույլտվությամբ: Օրինակ՝ բանկ հանդիսացող ընկերությունը կարող է վերակազմակերպվել բանկի՝ մեկ այլ բանկի միացման կամ վերակազմավորման միջոցով, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ («Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 67, 68):

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 20-րդ հոդվածների 2-րդ կետերից հետևում է, որ միաձուլման և միացման ձևով վերակազմակերպվող ընկերությունները նախևառաջ պետք է կնքեն համապատասխանաբար միաձուլման կամ միացման մասին պայմանագիր, որոնք, մեր կարծիքով, հանդիսանում են կորպորատիվ իրավահարաբերություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող պայմանագրի ինքնուրույն տեսակներ:

Միաձուլման կամ միացման պայմանագիրը կնքվում է միաձուլմանը կամ միացմանը մասնակցող ընկերությունների միջև, ստորագրվում է ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից և ենթակա է ընդհանուր ժողովի հաստատմանը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը

¹⁶³ Ст. 5 Жданов Д. В. Реорганизация акционерных обществ в Российской Федерации. М., изд-во "Лекс-Книга", 2002, էջեր 44-45:

սահմանում է միաձուլման (միացման) պայմանագրի էական պայմանները.

- մասնակից կողմերի ֆիրմային անվանման, գտնվելու վայրի, պետական գրանցման տվյալների,
- միաձուլման կամ միացման ժամկետների, կարգի ու պայմանների,
- միաձուլվող կամ միացող ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգի (բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով),
- միաձուլվող կամ միացող ընկերությունների բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ ստանալու կարգի և պայմանների,
- համատեղ ժողովում քվեարկության կարգի,
- միաձուլմանը կամ միացմանը մասնակցող ընկերությունների համատեղ ժողովի գումարման ժամանակաթվի, հրավիրման և անցկացման կարգի,
- ինչպես նաև կողմերի հայեցողությամբ այլ տեղեկությունների մասին («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 24, կետ 2, մաս 2):

Միաձուլման (միացման) մասին պայմանագիրը կնքելուց հետո միաձուլվող (միացող) յուրաքանչյուր ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից պետք է միաձուլման (միացման) ձևով վերակազմակերպման մասին որոշում կայացվի: Վերակազմակերպման մասին որոշումը կայացնելու հետ միաժամանակ, միաձուլվող (միացող) ընկերությունների բաժնետերերի ժողովների կողմից պետք է հաստատվեն միաձուլման (միացման) պայմանագիրը, փոխանցման ակտը, միաձուլման (միացման) կարգն ու պայմանները, նոր ստեղծվող ընկերությունում միաձուլվող յուրաքանչյուր ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի՝ նոր ստեղծվող ընկերության բաժնետոմսերի և (կամ) այլ արժեթղթերի փոխարկման կարգը, միացման դեպ-

քում՝ միացող յուրաքանչյուր ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի՝ այն ընկերության բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի փոխարկման կարգը¹⁶⁴, որին միանում են:

Այնուհետև, միաձուլման պայմանագրում նշված մարմնի կողմից և ժամկետներում հրավիրվում է միաձուլմանը մասնակցող ընկերությունների բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողով, որը միաժամանակ համարվում է նաև միաձուլման արդյունքում ստեղծված ընկերության հիմնադիր ժողով, որն էլ օրենքով հիմնադիր ժողովին վերապահված իրավասությունների շրջանակներում որոշումներ է կայացնում հիմնադիր ժողովին վերապահված հարցերի վերաբերյալ: Իսկ միացման հետևանքով ընդլայնված ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշումներ է ընդունում միացման հետևանքով ընդլայնված ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու, փոխանցման ակտը

¹⁶⁴ Գործող օրենսդրությունն, ի տարբերություն օտարերկրյա բազմաթիվ պետությունների, իրավաբանական անձի «խառը» վերակազմակերպման հնարավորություն չի նախատեսում, ինչը վերակազմակերպման որոշ գործընթացների իրականացումն անհարկի բարդացնում է: Օրինակ, բաժնետիրական ընկերության բաժնետերերն ինչու չպետք է կարողանան որոշում կայացնել առանձնացման ձևով վերակազմակերպման մասին և միաժամանակ նոր ստեղծվող ընկերության կազմակերպարավական ձևն ընտրեն ոչ թե բաժնետիրական ընկերությունը, այլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով պետք է ամրագրվի «խառը» վերակազմակերպման հնարավորությունը, այսինքն՝ թույլատրվի իրավաբանական անձի վերակազմակերպումը վերակազմակերպման մի քանի ձևերի միաժամանակյա կիրառմամբ, ինչպես նաև տարբեր կազմակերպարավական ձևեր ունեցող երկու կամ ավելի իրավաբանական անձանց մասնակցությամբ վերակազմակերպումը: Երկու կամ ավելի կազմակերպարավական ձևեր ունեցող իրավաբանական անձանց մասնակցությամբ վերակազմակերպումները պետք է թույլատրել միայն այն դեպքում, երբ օրենքով նախատեսված է իրավաբանական անձի տվյալ կազմակերպարավական ձևի վերակազմավորում մյուսով: Օրինակ՝ բաժնետիրական ընկերությունը կարող է վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ առևտրային կոոպերատիվի, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ բաժնետիրական ընկերության և առևտրային կոոպերատիվի:

հաստատելու և այլ հարցերի մասին:

Ընկերությունների միաձուլման կամ միացման դեպքում դրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծվող ընկերությանը կամ միացման հետևանքով ընդլայնված ընկերությանը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Միաձուլման արդյունքում նոր ստեղծված իրավաբանական անձի գրանցումն իրականացնելու նպատակով միաձուլման պայմանագիրը, փոխանցման ակտը և օրենքով նախատեսված մյուս փաստաթղթերը ներկայացվում են իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին, և վերջինիս կողմից գրանցումը կատարելուց հետո միայն նոր ստեղծվող ընկերությունը համարվում է ստեղծված:

Միացմամբ պայմանավորված պետական գրանցումն իրականացնելու նպատակով իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին ներկայացվում են միացման պայմանագիրը, փոխանցման ակտը, Հանձնաժողովի տրամադրած տեղեկանքն առ այն, որ տվյալ միացումը կամ միաձուլումը չի հակասում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին¹⁶⁵, վերակազմակերպմանը մասնակցող բոլոր իրավաբանական անձինք ներկայացնում են նաև իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի գրավոր հավաստումն այն մասին, որ իրավաբանական անձը վերակազմակերպման մասին օրենքով սահմանված կարգով տեղեկացրել է իրեն հայտնի բոլոր պարտատերերին, որոնցից առարկություններ չեն ստացվել, կամ իրավաբանական անձի բոլոր պարտատերերի պահանջները բավարարվել են¹⁶⁶, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ փաս-

¹⁶⁵ ՀՀՊՏ 2000/30 (128) 15.12.00:

¹⁶⁶ Տե՛ս «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածը, որով սահմանվում է վերակազմակերպման բոլոր ձևերի գրանցման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը:

տաթղթեր: Միացման ձևով վերակազմակերպվելիս ընկերությունը վերակազմակերպված է համարվում միացող ընկերության գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ պետական գրանցում կատարելու պահից:

Ընկերության առանձնացում է համարվում նոր ընկերության (ընկերությունների) ստեղծումը՝ նրան (նրանց) վերակազմակերպվող ընկերության իրավունքների և պարտականությունների մի մասի փոխանցմամբ՝ առանց վերակազմակերպվող ընկերության դադարման («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 22, կետ 1-ին):

Ընկերության բաժանում է համարվում ընկերության դադարումը՝ նրա բոլոր իրավունքների և պարտականությունների՝ նոր ստեղծվող ընկերություններին փոխանցմամբ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 21, կետ 1):

Վերակազմակերպման այս ձևերի հետ կապված հետաքրքրական է արտասահմանյան երկրների փորձը: Օրինակ՝ ԱՄՆ-ի կորպորատիվ իրավունքին բաժանման և առանձնացման ձևերով վերակազմակերպումը հայտնի չէ¹⁶⁷, իսկ ֆրանսիական օրենսդրությամբ ընկերության բաժանման դեպքում նրան պատկանող իրավունքներն ու պարտականությունները կարող են փոխանցվել ինչպես նոր ստեղծվող, այնպես էլ արդեն իսկ գոյություն ունեցող ընկերություններին¹⁶⁸: Ըստ էության, ֆրանսիական օրենսդրությունը վերակազմակերպման երկու ձևերը՝ բաժանումը և առանձնացումը նույնացնում է: Կարծում ենք, որ այն արդյունքը, որին ձգտում են հասնել բաժանման ձևով վերակազմակերպման դեպքում, հնարավոր է ստանալ նաև առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում:

Օրենքով տրված առանձնացման և բաժանման բնորոշում-

¹⁶⁷ Տե՛ս Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. А. С. Тарасова, М., 1999, էջեր 219, 222:

¹⁶⁸ Տե՛ս Жамен К., Лакур Л. Торговое право. М.; Международные отношения, 1993, էջեր 133-134:

ների ուսումնասիրությունը թույլ է տալիս թվարկել առանձնացմանը և բաժանմանը բնորոշ հատկանիշները: Մասնավորապես, առանձնացմանը, որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևի, բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- ստեղծվում են մեկ կամ ավելի նոր ընկերություններ,
- նոր ընկերությանը (ընկերություններին) փոխանցվում է վերակազմակերպվող ընկերության իրավունքների և պարտականությունների մի մասը,
- վերակազմակերպվող ընկերությունը շարունակում է պահպանել իր գոյությունը:

Բաժանմանը, իր հերթին, բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- ստեղծվում են մի քանի ընկերություններ,
- նոր ընկերություններին են փոխանցվում վերակազմակերպվող ընկերության բոլոր իրավունքներն ու պարտականությունները,
- վերակազմակերպման արդյունքում վերակազմակերպվող ընկերությունը դադարում է գոյություն ունենալուց:

Առանձնացմանը և բաժանմանը բնորոշ հատկանիշների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել այն տարբերակիչ հատկանիշները, որոնց շնորհիվ բաժանումը և առանձնացումը, որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևեր, տարբերվում են միմյանցից: Այսպես.

- առանձնացման դեպքում կարող են ստեղծվել մեկ կամ ավելի իրավաբանական անձինք, իսկ բաժանման դեպքում ստեղծվում են երկու կամ ավելի իրավաբանական անձինք,
- առանձնացման դեպքում նոր ստեղծվող ընկերությանը (ընկերություններին) փոխանցվում է վերակազմակերպվող ընկերության իրավունքների և պարտականությունների մի մասը, իսկ բաժանման դեպքում նոր ընկերություններին են փոխանցվում վերակազմակերպվող ընկերության բոլոր իրավունքներն ու պարտականությունները,

- վերակազմակերպման սուբյեկտ կարող են հանդիսանալ բացառապես Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կամ ստեղծվող ընկերությունները:

Երկու դեպքում էլ իրավունքների և պարտականությունների փոխանցումն իրականացվում է բաժանիչ հաշվեկշիռն համապատասխան: Բաժանման դեպքում վերակազմակերպվող ընկերությունը դադարում է գոյություն ունենալուց, իսկ առանձնացման դեպքում վերակազմակերպվող ընկերությունը շարունակում է պահպանել իր գոյությունը:

Ինչպես բաժանման, այնպես էլ առանձնացման ձևով վերակազմակերպման գործընթացները շատ նման են: Նախ, վերակազմակերպվող ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) կողմից պետք է գումարվի ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով, որը պետք է որոշում կայացնի բաժանման կամ առանձնացման ձևով վերակազմակերպման մասին¹⁶⁹, հաստատի բաժանման կամ առանձնացման ձևով վերակազմակերպման կարգն ու պայմանները, բաժանիչ հաշվեկշիռը, բաժանվող ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի՝ նոր ստեղծվող ընկերությունների բաժնետոմսերի և (կամ) այլ արժեթղթերի փոխարկման կարգը, իսկ առանձնացման դեպքում՝ վերակազմակերպվող ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի՝ նոր ստեղծվող ընկերությունների բաժնետոմսերի և (կամ) այլ արժեթղթերի փոխարկման կարգը:

Բաժանման կամ առանձնացման արդյունքում ստեղծվող ընկերությունների կանոնադրությունները հաստատվում են նոր ստեղծվող ընկերությունների հիմնադիր ժողովներում: Իսկ բաժանվող ընկերության իրավունքները և պարտականությունները նոր ստեղծվող ընկերություններին են փոխանցվում բաժանիչ

¹⁶⁹ Օրենքով նախատեսված դեպքերում ընկերության բաժանման կամ նրա կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնացման ձևով ընկերության վերակազմակերպումն իրականացվում է դատարանի վճռով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 18, կետ 2, մաս 1):

հաշվեկշռի հիման վրա: Առանձնացման դեպքում ևս վերակազմակերպվող ընկերության իրավունքները և պարտականությունները նոր ստեղծվող ընկերությանն են փոխանցվում բաժանիչ հաշվեկշռին համապատասխան:

Վերակազմակերպմամբ պայմանավորված՝ պետական գրանցումների կատարման համար իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին են ներկայացվում բաժանիչ հաշվեկշիռը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Բաժանվող ընկերության գործունեության դադարման պետական գրանցումը կատարվում է բաժանման արդյունքում ստեղծված ընկերությունների պետական գրանցումից հետո:

Ընկերության վերակազմավորում է համարվում նրա կազմակերպաիրավական ձևի փոփոխությունը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 23, կետ 1): Իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձև ասելով նկատի ունենք որոշակի յուրահատուկ հատկանիշների ամբողջություն, որոնք կապված են իրավաբանական անձի գույքի, կազմակերպական կառուցվածքի, մասնակիցների, մասնակիցների և կառավարման մարմինների իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև կորպորատիվ իրավահարաբերությունների այլ մասնակիցների առջև իրավաբանական անձի ունեցած պարտավորությունների հետ:

Բաժնետիրական ընկերությունը կարող է վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ առևտրային կոոպերատիվի:

Վերակազմավորման մասին որոշումը ևս ընդունվում է վերակազմավորման ձևով վերակազմակերպվող ընկերության ժողովում: Ժողովի կողմից պետք է հաստատվեն վերակազմավորման կարգը և պայմանները, վերակազմավորվող ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի՝ նոր ստեղծվող իրավաբանական անձի բաժնեմասերի, փայերի և (կամ) այլ արժեթղթերի

փոխարկման կարգը, ինչպես նաև փոխանցման ակտը: Վերակազմավորման արդյունքում ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրությունը հաստատվում է նոր ստեղծվող իրավաբանական անձի հիմնադիր ժողովում, իսկ վերակազմավորվող ընկերության իրավունքները և պարտականությունները նոր ստեղծված իրավաբանական անձին են փոխանցվում փոխանցման ակտին համապատասխան: Նոր ստեղծվող իրավաբանական անձին փոխանցվող իրավունքներ և պարտականություններ ասելով պետք է հասկանալ միայն առևտրային կազմակերպություն հանդիսացող վերակազմավորվող ընկերությանը պատկանող գույքային և որոշ ոչ գույքային այն իրավունքները, որոնք կապված չեն բաժնետիրական ընկերությանը, որպես իրավաբանական անձի առանձին կազմակերպատիրական ձևի, բնորոշ իրավունքների հետ¹⁷⁰:

Նոր ստեղծվող իրավաբանական անձի պետական գրանցումն իրականացվում է փոխանցման ակտի և օրենքով սահմանված մյուս անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման հիման վրա :

Վերակազմակերպման գործընթացի իրականացման համար կարևոր նշանակություն ունեն փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը:

Փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը պետք է դրույթներ պարունակեն վերակազմակերպված ընկերության (ընկերությունների) գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին, ներառյալ՝ վիճարկվող պարտավորությունները:

Կարծում ենք, որ գործող իրավակարգավորման պայմաններում փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը լիարժեք կերպով չեն ծառայում այն նպատակին, որի ապահովման հա-

¹⁷⁰ Ст'я Комментарий к Федеральному закону об акционерных обществах. Издание третье, изд-во "Юринформцентр", М., 2002, էջեր 134-135:

մար ստեղծվել են այս հասկացությունները: Մասնավորապես, փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը կարող է արտացոլել դրանք հաստատելու օրվա դրությամբ գոյություն ունեցող գույքի կամ պարտավորությունների իրավահաջորդության մասին տեղեկությունները: Նշված իրավակարգավորումը թույլ չի տալիս պարզել այդ փաստաթղթերը հաստատելուց հետո գույքի կամ պարտավորությունների փոփոխության փաստը բացահայտելու հնարավորությունը: Ինչպես գիտենք, վերակազմակերպման մասին որոշումը կայացնելուց և փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը հաստատելուց հետո կարող են անցնել ամիսներ, որոնց ընթացքում ընկերությունը կարող է ստանձնել նոր պարտավորություններ, վճարել աշխատավարձեր և այլն, որի արդյունքում իրավահաջորդին հասանելիք գույքի կազմն ու պարտավորությունները կարող են ինչպես ավելանալ, այնպես էլ պակասել: Ուստի առաջարկում ենք, քաղաքացիական օրենսգրքում և այլ հարակից օրենքներում սահմանել, որ փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը պետք է սահմանեն դրանք հաստատելու ամսաթվից հետո դրանցում նշված գույքի և պարտավորությունների իրավահաջորդության որոշման կարգը՝ կապված վերակազմակերպվող իրավաբանական անձի տեսակի, մասնակիցների կազմի, գույքի արժեքի փոփոխման և վերակազմակերպվող իրավաբանական անձի առաջացման (փոփոխման, դադարման) հետ: Նշված առաջարկի հիմնական նպատակը կայանում է նրանում, որ նոր ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնելու պահին փոխանցվող իրավունքները, պարտավորությունները կամ գույքն իրականում գոյություն ունենան:

Բաժանիչ հաշվեկշիռը պետք է ապահովի վերակազմակերպվող ընկերության կանոնադրական կապիտալում նոր ստեղծվող ընկերությունների բաժնետերերի բաժնենասերին համապատասխանող գույքի և պարտավորությունների համամասնորեն բաշխումը վերակազմակերպման հետևանքով

ստեղծված ընկերությունների միջև:

Եթե բաժանիչ հաշվեկշիռը հնարավորություն չի տալիս որոշել վերակազմակերպված ընկերության իրավահաջորդին, ապա վերակազմակերպման հետևանքով ստեղծված իրավաբանական անձինք վերակազմակերպված ընկերության պարտավորությունների համար նրա պարտատերերի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Սակայն օրենսդիրը հստակ չի կանոնակարգում այն հարցը, թե ինչպիսի իրավական հետևանքներ են առաջանում այն դեպքում, երբ փոխանցման ակտը վերակազմակերպված ընկերության (ընկերությունների) պարտատերերին վերաբերող պարտավորությունների իրավահաջորդության մասին ամբողջական տեղեկություններ չի պարունակում: Կարծում ենք, որ նման դեպքերում այդ պարտավորությունները չեն դադարում, իսկ իրավահաջորդ ընկերությունները պետք է կրեն համապարտ պատասխանատվություն: Նման դրույթի օրենսդրական ամրապնդումը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ իրականացնել վերակազմակերպվող ընկերությունների այն պարտատերերի շահերի պաշտպանությունը, որոնք վերակազմակերպման մասին չեն ծանուցվել կամ որոնց անունները փոխանցման ակտում չեն ներառվել:

Կանոնադրությունների հետ մեկտեղ փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը չներկայացնելը, ինչպես նաև դրանցում վերակազմակերպված ընկերության (ընկերությունների) գույքի և պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթների բացակայությունը կամ գույքի և պարտավորությունների անհամասնորեն բաշխումը հիմք է վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումների մերժման համար:

Իրավաբանական անձի վերակազմակերպման արդյունքում կարող են ոտնահարվել ինչպես ընկերության պարտատերերի, այնպես էլ փոքրամասնություն կազմող բաժնետերերի և ընկե-

րության կողմից թողարկված արժեթղթերի շրջանառությանն առնչվող այլ անձանց շահերը: Այդ իսկ պատճառով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նշված անձանց իրավունքները պաշտպանելու որոշակի երաշխիքներ: Մասնավորապես, վերակազմակերպման մասին որոշում ընդունելուց հետո՝ 30 օրվա ընթացքում ընկերությունը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին: Ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու տարվա, ամսի, ամսաթվի, վերակազմակերպման ձևի և մասնակիցների, ինչպես նաև ընկերության պարտավորությունների իրավահաջորդության մասին:

Այս դեպքում վերակազմակերպվող ընկերության պարտատերերն իրավունք են ստանում ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում: Նշված պահանջները պարտատերերը, միաձուլման, միացման կամ վերակազմավորման ձևով վերակազմակերպման մասին ծանուցումն ստանալու դեպքում, պետք է գրավոր ներկայացնեն վերակազմակերպման մասին ծանուցումն ստանալու պահից 30 օրվա ընթացքում, իսկ բաժանման կամ առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում՝ ծանուցումն ստանալու պահից 60 օրվա ընթացքում:

Վերակազմակերպման միջոցով ստեղծվող կամ միացման հետևանքով ընդլայնվող ընկերության բաժնետոմսերը (բաժնեմասերը) պետք է փոխարկման եղանակով համամասնորեն տեղաբաշխվեն վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու պահին այդ որոշումն ընդունած իրավաբանական անձի բոլոր մասնակիցների միջև՝ բաժնետոմսերի շուկայական արժեքով: Ընդ որում, փոխարկման հարաբերակցությունը պետք է նույնը լինի տվյալ տեսակի (դասի) յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժ-

նենասի) համար: Եթե վերակազմակերպվող ընկերություններից որևէ մեկի միևնույն տեսակի (դասի) արժեթղթերի սեփականատերերի թվաքանակը 50 կամ ավելի է, ապա պարտադիր է վերակազմակերպվող յուրաքանչյուր ընկերության արժեթղթերի շուկայական արժեքի սահմանումն անկախ գնահատողի կողմից:

Ընկերության վերակազմակերպմանը դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի պահանջելու բաժնետոմսերի շուկայական արժեքի սահմանում և իրեն պատկանող բոլոր բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզմում: Բաժնետերը չի կարող պահանջել շուկայական գնի սահմանում, եթե նրան ուղարկված ծանուցման մեջ նշում է կատարված օրենքով սահմանված կարգով գինը որոշված լինելու մասին: Հետզմումն իրականացնում է վերակազմակերպված ընկերության իրավահաջորդը:

Կարծում ենք, որ պարտատերերի և բաժնետերերի շահերի պաշտպանությունն ապահովող վերը նշված մեխանիզմները լիարժեք կերպով չեն ապահովում նշված սուբյեկտների իրավունքների պաշտպանությունը, արդարացի չեն հավասարակշռում վերակազմակերպվող իրավաբանական անձի և նրա պարտատերերի շահերը, ինչպես նաև չեն պաշտպանում վերակազմակերպվող իրավաբանական անձի կողմից թողարկված արժեթղթերի շրջանառությանն առընչվող անձանց շահերը:

Բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման գործընթացի ուսումնասիրությունը թույլ տվեց վեր հանել վերակազմակերպման բոլոր ձևերին բնորոշ որոշ հիմնախնդիրներ, որոնք ի հայտ են գալիս կամ կարող են ի հայտ գալ բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման արդյունքում:

Վերակազմակերպման ընթացքում ի հայտ եկող հիմնախնդիրները հիմնականում կապված են վերակազմակերպվող ընկերության և ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի

ռեեստրավար փոխհարաբերությունների հետ: Բանն այն է, որ ընկերություններն ինչպես վերակազմակերպման գործընթացն սկսելուց առաջ, այնպես էլ դրանից հետո ընկերությունում կատարվող կամ կատարված վերակազմակերպման գործընթացների մասին բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրավարին ընկերության վերակազմակերպման մասին տեղեկությունները, որպես կանոն, տրամադրվում են միայն վերակազմակերպման գործընթացի ավարտից հետո որոշակի ժամանակահատված անց: Նման պայմաններում բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարման ընթացքում ի հայտ են գալիս գործնականում անլուծելի խնդիրներ, որոնք ուղղակիորեն անդրադառնում են վերակազմակերպման գործընթացում գտնվող կամ վերակազմակերպված ընկերության բաժնետոմսերը ձեռք բերող անձանց, ինչպես նաև քաղաքացիական շրջանառության այլ մասնակիցների իրավունքների պաշտպանության վրա:

Գոյություն ունեցող հիմնախնդիրները քննարկենք առանձնացման ձևով վերակազմակերպված «Լույս» բաց բաժնետիրական ընկերության օրինակով¹⁷¹:

2004թ. մարտի 20-ին կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում «Լույս» բաց բաժնետիրական ընկերությունը որոշում է կայացնում ընկերության կազմից նոր իրավաբանական անձի առանձնացման ձևով ընկերության վերակազմակերպման մասին: Ժողովում հաստատվում են առանձնացման կարգը և պայմանները, բաժանիչ հաշվեկշիռը, կանոնադրական կապիտալը, վերակազմակերպվող ընկերության բաժնետոմսերի՝ առանձնացվող ընկերության բաժնետոմսերով փոխարկման կարգը, ինչպես նաև կանոնադրության համապատասխան փոփոխությունը: Նույն օրը տեղի է ունենում «Արաքս» բաց բաժնետիրական ընկերության հիմնադիր ժողովը, որի ժամանակ որոշում է կայացվում «Արաքս» բաց բաժնետիրական ընկերության ստեղծման մասին: Փոխարկման կարգի համա-

¹⁷¹ Օրինակում նշված ընկերությունների անվանումները փոփոխված են:

ծայն՝ «Լույս» բաց բաժնետիրական ընկերության մեկ հասարակ բաժնետոմսի դիմաց տրվում են համապատասխանաբար «Լույս» բաց բաժնետիրական ընկերության և «Արաքս» բաց բաժնետիրական ընկերության մեկական հասարակ բաժնետոմսեր: Արդյունքում՝ «Լույս» բաց բաժնետիրական ընկերության 8250 դրամ անվանական արժեքով բաժնետոմսերը փոխարկվում են 850 դրամ անվանական արժեքով «Լույս» բաց բաժնետիրական ընկերության և 7400 դրամ անվանական արժեքով «Արաքս» բաց բաժնետիրական ընկերության հասարակ բաժնետոմսերի: Վերակազմակերպվող ընկերության բոլոր բաժնետերերն իրենց մասնակցության չափը պահպանում են ինչպես «Լույս», այնպես էլ «Արաքս» բաց բաժնետիրական ընկերություններում:

2004թ. օգոստոսի 13-ին «Արաքս» բաց բաժնետիրական ընկերությունը գրանցվում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող համապատասխան մարմնի կողմից:

«Լույս» բաց բաժնետիրական ընկերությունը կատարված վերակազմակերպման մասին ռեեստրավարին հայտնում է 02.02.2005թ.:

Պարզվում է, որ վերակազմակերպման գործընթացն սկսելուց հետո մինչև այդ մասին ռեեստրավարին հայտնելը «Լույս» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերը՝ փոխարկվող, իսկ «Արաքս» բաց բաժնետիրական ընկերության պետական գրանցումից հետո արդեն իսկ փոխարկված բաժնետոմսերով կատարել են բազմաթիվ գործարքներ: Մասնավորապես, բաժնետերերն իրենց պատկանող բաժնետոմսերն ամբողջությամբ կան դրանց մի մասն օտարել կան գրավադրել են ինչպես ընկերության վերակազմակերպման գործընթացի մեջ գտնվելու ժամանակաընթացքում, այնպես էլ վերակազմակերպման ավարտից հետո մինչև ռեեստրավարին հայտնելն ընկած ժամանակահատվածում:

Նման պայմաններում այն անձինք, ովքեր ձեռք են բերել կամ որպես գրավի առարկա ընդունել են «Լույս» բաց բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը, ընկերության վերակազմակերպման գործընթացի մեջ գտնվելու ժամանակաընթացքում որևէ տեղեկություն չեն ունեցել այն մասին, որ իրենց կողմից ձեռք բերվող կամ որպես գրավի առարկա ընդունվող 8250 դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերը կարող են փոխարկվել 850 դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերի, իսկ այն անձինք, ովքեր բաժնետոմսերը ձեռք են բերել կամ որպես գրավի առարկա ընդունել վերակազմակերպման ավարտից հետո մինչև ռեստորավարին հայտնելն ընկած ժամանակահատվածում՝ որևէ տեղեկություն չեն ունեցել այն մասին, որ իրենց կողմից ձեռք բերվող կամ որպես գրավի առարկա ընդունվող 8250 դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերն իրականում ունեն 850 դրամ անվանական արժեք: Բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման հնարավորության կամ փոփոխված լինելու մասին տեղեկություններ կարող է չունենան նաև բաժնետոմսերն օտարած կամ գրավադրած այն բաժնետերերը, ովքեր բաժնետերերի 20.04.2004թ. կայացած ժողովի կողմից ընդունված վերակազմակերպման մասին որոշման վերաբերյալ տեղեկություններ չունեն:

Նշված իրավիճակում ռեստորավարը հայտնվում է լուրջ խնդրի առջև՝ ինչպիսի գրառումներ կատարել ռեստորում. ռեստորում գրառումներ կատարել՝ հաշվի առնելով փոխարկման արդյունքները, որի հետևանքով կոտնահարվեն անվանական արժեթղթերի շրջանառությանն առնչվող բազմաթիվ անձանց իրավունքները, թե որոնել խնդրի լուծման այլ ուղիներ:

Նշված օրինակը հիմնավորում է վերակազմակերպման գործընթացն առավել թափանցիկ իրականացնելու, շահագրգիռ անձանց դրա մասին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու անհրաժեշտությունը:

Նշված խնդիրները լուծելու նպատակով առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 66-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 66. Վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերի իրավունքների երաշխիքները

1. Իրավաբանական անձի վերակազմակերպման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը պարտավոր են վերակազմակերպման մասին որոշումը կայացնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ձևով տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին: Վերակազմակերպմանը երկու կամ ավելի իրավաբանական անձանց մասնակցության դեպքում նման ծանուցումը պետք է ուղարկվի վերակազմակերպման մասին վերջինը որոշում կայացրած կամ վերակազմակերպման մասին որոշմամբ նախատեսված իրավաբանական անձի կողմից: Նշված ծանուցման հիման վրա իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմինը իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում տվյալ իրավաբանական անձի (անձանց) վերակազմակերպման գործընթացում գտնվելու մասին՝ նշելով վերակազմակերպման ձևը:

2. Իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում վերակազմակերպման գործընթացում գտնվելու մասին գրառում կատարելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում վերակազմակերպվող իրավաբանական անձը վերակազմակերպման մասին գրավոր տեղեկացնում է իրավաբանական անձի պարտատերերին, ինչպես նաև իրավաբանական անձի պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում նրա վերակազմակերպման և վերակազմակերպմանը մասնակցող, դրա արդյունքում

ստեղծվող (գործունեությունը շարունակող) յուրաքանչյուր իրավաբանական անձի, վերակազմակերպման ձևի, պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման կարգի ու պայմանների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ տեղեկությունների մասին: Վերակազմակերպմանը երկու և ավելի իրավաբանական անձանց մասնակցության դեպքում վերակազմակերպման մասին ծանուցումը բոլոր իրավաբանական անձանց անունից հրապարակում է վերակազմակերպման մասին վերջինը որոշում կայացրած կամ վերակազմակերպման մասին որոշմամբ նախատեսված իրավաբանական անձը:

3. Իրավաբանական անձի պարտատերերն իրավունք են ստանում ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում: Նշված պահանջները պարտատերերը պետք է գրավոր ներկայացնեն վերակազմակերպման մասին ծանուցումը հրապարակելուց հետո՝ 40 օրվա ընթացքում: Նշված ժամկետում ներկայացված պահանջները պետք է բավարարվեն մինչև վերակազմակերպման գործընթացի ավարտը:

4. Նման իրավունք չի վերապահվում այն պարտատիրոջը, որին տրամադրվել է բավարար համարվող պարտավորության կատարման ապահովում, կամ պարտավորության կատարումն ապահովված է գրավով:

5. Պարտատիրոջն առաջարկված պարտավորության կատարման ապահովումը համարվում է բավարար.

ա) եթե պարտատերը համաձայնել է ընդունել նման ապահովումը,

բ) պարտատիրոջը տրվել է անհետկանչելի բանկային երաշխիք, որի վճարունակությունը հիմնավոր կասկածներ չի առաջացնում և որի գործողության ժամկետը կատարման ենթակա պարտավորության ժամկետից առնվազն չորս ամսից ավելի է:»:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով.

«6. Ընկերության վերակազմակերպման մասին որոշումն ընդունելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել ռեեստրավարին:

Գրավոր ծանուցումն ստանալուց անմիջապես հետո ռեեստրավարը պարտավոր է վերակազմակերպման մասին տեղեկությունները ներառել ռեեստրում և վերակազմակերպվող Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերով որևէ գործարք կատարելու ցանկություն ունեցող ցանկացած շահագրգիռ անձի հայտնել այդ մասին:»:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ կետով.

«9. Բաժնետիրական ընկերության վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումն իրականացնելուց հետո գրանցումն իրականացրած մարմինը պարտավոր է առնվազն երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկություններ տրամադրել վերակազմակերպված իրավաբանական անձի ռեեստրավարին:»:

Վերակազմակերպման ընթացքում ի հայտ եկող հաջորդ հիմնախնդիրը կապված է վերակազմակերպման մասին որոշումը կամ վերակազմակերպման մասին պետական գրանցումները անվավեր ճանաչելու հետ:

Պատկերացնենք մի իրավիճակ, երբ «X» բաժնետիրական ընկերությունը բաժանման ձևով վերակազմակերպվել է և արդյունքում ստեղծվել են «Y» և «Z» բաժնետիրական ընկերությունները: «Y» ընկերությունը վերակազմակերպումից երեք ա-

միս անց նորից բաժանման ձևով վերակազմակերպվել է, որի արդյունքում ստեղծվել են «V» և «F» ընկերությունները: «Z» ընկերությունն էլ վերակազմակերպումից ութ ամիս անց լուծարվել է: Բացի դրանից, «V» և «F» ընկերությունների բաժնետերերի կազմը փոփոխվել է, դրանց կողմից թողարկվել և տեղաբաշխվել են պարտատոմսեր, կնքվել են տարատեսակ գործարքներ: «X» բաժնետիրական ընկերության վերակազմակերպումից հետո երկու տարի անց հայտնվում է արտագնա աշխատանքի մեկնած և ընկերությունում տեղի ունեցած գործընթացներից անտեղյակ բաժնետեր Ա-ն և պարզում, որ եթե ինքը մասնակցեր այդ ժողովին և դեմ քվեարկեր օրենքի խախտմամբ կայացված վերակազմակերպման մասին որոշմանը, ապա կկանխեր իրադարձությունների վերը նկարագրված ընթացքը: Կամ պատկերացնենք մի իրավիճակ, երբ բաժնետերը որոշումը կայացնելիս կողմ է քվեարկել բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ: Դիմելով դատարան՝ Ա-ն պահանջում է անվավեր ճանաչել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը:

Հարց է առաջանում՝ պահանջը բավարարելու դեպքում ինչպիսիս կլինեն անվավերության հետևանքները: Եթե դատարանն ընդհանուր ժողովի որոշումը և դրա հիման վրա հաստատված կարգերը և այլ փաստաթղթերը դիտի գործարք, ապա կկիրառի գործարքի անվավերության ընդհանուր կանոնները, իսկ եթե ճանաչի որպես իրավական ակտ, ապա անհասկանալի է, թե ինչպիսի վերաբերմունք կդրսևորի: Բացի դրանից, նման իրավիճակում անհայտ է վերակազմակերպման արդյունքում առաջացած նոր կազմակերպությունների պարտավորությունների հետագա ճակատագիրը, ինչպես նաև դրանց կողմից թողարկված արժեթղթերի շրջանառությանն առնչվող անձանց շահերի պաշտպանության հարցի լուծումը:

Միանգամից ցանկանում ենք նշել, որ այս ոլորտում կորպորատիվ օրենսդրության անկատար լինելը թույլ չի տալիս վերը նշված իրավիճակներում հարցին տալ արդարացի լուծում, և

դատարանները յուրաքանչյուր դեպքում դրսևորելով կամայական վերաբերմունք՝ որոշում են նշված ակտերի անվավերության հետևանքները¹⁷²: Եվ դրա հիմնական պատճառն այն է, որ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորված չէ կորպորատիվ հարաբերությունների առանձնահատկությամբ պայմանավորված կորպորատիվ գործարքի հիմնահարցը:

Հարկ ենք համարում նշել, որ վերը նշված ակտերը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իմաստով կարելի է բնութագրել որպես ներքին իրավական ակտեր¹⁷³, սակայն դա չի բացառում, որ ներքին իրավական ակտը միաժամանակ դիտվի որպես գործարք՝ դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ:

Կարծում ենք, որ նման իրավական անորոշության հիմնական պատճառը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածում տրված գործարքի թերի, ժամանակակից քաղաքացիական իրավահարաբերությունների էությունը չարտահայտող

¹⁷² Տե՛ս թիվ ԵԵՂ/1246/02/09 և 3-129/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները և այդ գործի նախապատմությունը: Օրինակ, թիվ 3-129/ՎԴ քաղաքացիական գործով 2000 թվականին կատարված իրավաբանական անձի վերակազմակերպման մասին գրանցումը 2009 թվականին ճանաչվել է անվավեր, որի արդյունքում 9 տարի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպիչի կողմից ձևավորված քաղաքացիական իրավահարաբերություններում հանդես եկած ընկերությունը պետք է վերափոխվի լիակատար ընկերակցության:

¹⁷³ Մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է, որ ներքին ակտ է ... իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ ներքին իրավական ակտ ընդունող մարմին)՝ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրենց իրավասության շրջանակում ընդունած այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար եւ սահմանում է վարքագծի կանոններ, որոնք տարածվում են միայն անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) այն անձանց վրա, ովքեր՝ գտնվում են դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, վարչական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ, կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, կամ դա ընդունող իրավաբանական անձանց հիմնադիրներ (մասնակիցներ, անդամներ, փայտտերեր և այլն) են:

սահմանումն ու իրավակարգավորումն է: Մասնավորապես, նշված նորմը գործարքները բնորոշում է որպես քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը կամ դրանց դադարմանը: Ակնհայտ է, որ գործարքներ կարող են կնքվել ոչ միայն քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից, այլև քաղաքացիական իրավահարաբերությունների վերը նշված բոլոր, այդ թվում՝ կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների կողմից և:

Հարկ ենք համարում նշել, որ գործարքի հասկացությունը բանաձևելու փորձ կատարվել է մայրցամաքային իրավական համակարգի մի քանի պետություններում, հիմնականում հետխորհրդային, գերմանական իրավական համակարգի հետևորդների մոտ, իսկ ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում այդ եզրույթը չի օգտագործվում: Օրինակ՝ Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածը գործարքը բնորոշում է որպես միակողմ, երկկողմ կամ բազմակողմ կամահայտնություն, որն ուղղված է իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարմանը¹⁷⁴: Նշված սահմանումից երևում է, որ վրաց օրենսդիրը ձեռնպահ է մնացել գործարքի սուբյեկտային կազմի թվարկումից, որից էլ կարելի է ենթադրել, որ քաղաքացիական իրավահարաբերությունների բոլոր մասնակիցները կարող են հանդիսանալ գործարք կատարողներ:

Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործարքը քաղաքացիական իրավահարաբերության մասնակցի (մասնակիցների) այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավահարաբերություններ ա-

¹⁷⁴ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Чантурия Л. Л. Сделка и волеизъявление в гражданском праве, // Журнал «Юрист», март, N 3, 2006:

ռաջացնելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»: 290-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 4-րդ կետով.

«4. Կազմակերպություններում մասնակցության կամ դրանց կառավարման կապակցությամբ կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակցի (մասնակիցների) կողմից կատարվող գործողությունը հանդիսանում է գործարք, որոնց նկատմամբ սույն բաժնի կանոնները կիրառվում են միայն այն դեպքում, երբ դրանց կնքման կարգին, ձևին, բովանդակությանը և վավերությանն օրենքով, այլ իրավական ակտերով, կանոնադրությամբ կամ ներքին կանոնակարգող փաստաթղթերով այլ բան սահմանված չէ:»: Անհրաժեշտ է նաև առանձին որոշումների անվավերության հետևանքների հետ կապված հարաբերությունները կարգավորել ինչպես քաղաքացիական օրենսգրքի՝ իրավաբանական անձանց մասին ընդհանուր դրույթներով, այնպես էլ իրավաբանական անձի այս կամ այն կազմակերպարավական ձևի առանձնահատկությունները կարգավորող հատուկ օրենքներով¹⁷⁵:

Վերակազմակերպման մասին որոշումն անվավեր ճանաչելու հետևանքով քաղաքացիական իրավահարաբերություններում ի հայտ եկող անորոշությունը վերացնելու նպատակով առաջարկում ենք սահմանել վերակազմակերպման մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի հատուկ եռամսյա ժամկետ, միաժամանակ, քաղաքացիական օրենսգրքով վերակազմակերպված ընկերությանն արգելել մինչև նշված ժամկետի ավարտը կրկին վերակազմակերպվել կամ լուծարվել: Սահմանել նշված ժամկետի ընթացքում վերակազմակերպման մասին որոշումն անվավեր ճանաչելու դեպքում կիրառվող անվավերության հետևանքները: Մասնավորապես, թույլ տալ մինչև վերա-

¹⁷⁵ Այս տեսանկյունից կորպորացիայի ժողովի որոշումների անվավերության և վիճարկման կարգի առանձնահատկություններին կանդիդատառնանք սույն աշխատության 3-րդ գլխում:

կազմակերպման մասին որոշում կայացնելը գոյություն ունեցած վիճակի վերականգնում և նախատեսել վերակազմակերպման արդյունքում ստեղծված նոր ընկերությունների բարեխիղճ պարտատերերի¹⁷⁶ շահերի պաշտպանության կառուցակարգեր: Նշված ժամկետն անցնելուց հետո, ընդհանուր հայցային վաղեմության ժամկետի ընթացքում, վերակազմակերպման մասին որոշումն անվավեր ճանաչելու հնարավորությունը բացառել և նման գործողությունների արդյունքում շահագրգիռ անձանց պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով՝ անօրինական վերակազմակերպում իրականացրած անձանց համար սահմանել համապարտ պատասխանատվություն:

Կարծում ենք, որ վերը նշված իրավական ակտերում առաջարկվող լրացումները և փոփոխությունները կատարելը կնպաստի վերակազմակերպման իրավահարաբերությունների ներքին և արտաքին կողմին առնչվող սուբյեկտների շահերի հավասարակշռմանն ու արդյունավետ պաշտպանությանը:

¹⁷⁶ Բարեխիղճ պետք է համարել նոր ստեղծված ընկերություններին առնչվող այն պարտատերերին, որոնք վերակազմակերպման արդյունքում ստեղծված նոր իրավաբանական անձանց հետ մտնելով պարտավորական հարաբերությունների մեջ՝ չգիտեին կամ պարտավոր չէին իմանալ վերակազմակերպման մասին որոշումն անվավեր ճանաչելու հիմքերի առկայության մասին:

1.5.2. Կորպորացիայի լուծարումը

Ավանդաբար իրավաբանական անձի լուծարմանը մասնագիտական գրականության մեջ հատկացվել է հատուկ վերաբերմունք, իսկ նրա գոյության դադարումը համեմատվել է ֆիզիկական անձի մահվան հետ¹⁷⁷: Ներկայումս իրավաբանական անձի լուծարումը կարելի է բնութագրել որպես մի գործընթաց, որի վերջնարդյունքում, իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման մասին համապատասխան գրառում կատարելուց հետո, իրավունքի սուբյեկտը կորցնում է պետության կողմից ճանաչված իրավունակությունը, իսկ նրա գոյությունը՝ դադարում:

Իրավաբանական անձի լուծարման օրենսդրական բանաձևումն առկա է ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, այնպես էլ հարակից մի քանի օրենքներում, օրինակ՝ իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը¹⁷⁸ դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձի անցնելու (ՀՀ քաղ. օր-ի հոդվ. 67, կետ 1), լուծարումն ընկերության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 27, կետ 1), ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 51, կետ 1), իսկ գործունեության առանձին ոլորտներում՝ բանկային, ապահովագրական, ներդրումային և այլն, ընդգրկված իրավա-

¹⁷⁷ Стів Мейер Д. И. Русское гражданское право (2 ч.), Издание 2-е, испр., М., 2000, էջ 153:

¹⁷⁸ Կարծում ենք, որ քաղաքացիական օրենսգրքում «գործունեություն» բառը սխալ է օգտագործված, քանի որ լուծարմամբ դադարում է իրավաբանական անձի գոյությունը, այլ ոչ թե գործունեությունը:

բանական անձանց լուծարման գործընթացը կարգավորող օրենքներում պարզապես օգտագործվում է «լուծարում» եզրույթը՝ առանց դրա հասկացության բանաձևման: Մեր կողմից անընդունելի է օրենսդրի այն մոտեցումը, երբ քաղաքացիական օրենսգրքում ինպերատիվ ձևով տրված որևէ հասկացություն այլ օրենքներում փոփոխվում կամ կրկնվում է: Գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված հասկացություններն այլ օրենքներում չպետք է աղճատվեն կամ փոփոխվեն: Այլ օրենքներում այդ ինստիտուտներին անդրադառնալիս պետք է բավարարվել ընդամենն ինստիտուտի անվանումը նշելով: Այդպիսի իրավիճակի վառ օրինակն առկա է իրավաբանական անձի լուծարման հասկացության պարագայում:

Լուծարման հասկացության վերը նշված օրենսդրական ձևակերպումների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 435-րդ հոդվածով ամրագրված իրավաբանական անձի լուծարմամբ պարտավորությունների դադարման հիմքի¹⁷⁹ առկայության պայմաններում կարելի էր համաձայնել տեսության մեջ արտահայտված այն տեսակետին, որ իրավաբանական անձի լուծարման դեպքում բացակայում է ոչ միայն ունիվերսալ, այլև սինգուլյար իրավահաջորդությունը¹⁸⁰, սակայն, այլ իրավական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձի պարտականությունների մասով իրավահաջորդություն հնարավոր է: Օրի-

¹⁷⁹ Հարկ ենք համարում նշել, որ քաղաքացիական օրենսգրքի նշված նորմը թերի է, մասնավորապես, այն չի պատասխանում այն հարցին, թե նման իրավակարգավորման պայմաններում ինչպես պետք է լուծվի իրավաբանական անձի լուծարումից հետո անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավահաջորդության հարցը կամ իրավաբանական անձի լուծարումից հետո նրան պատկանած ակտիվներ հայտնաբերելու դեպքում ով պետք է տնօրինի դրանք և այլն: Կարծում ենք, որ նշված նորմում պետք է ամրագրել օրենքով նախատեսված դեպքերում այդ կանոնից բացառություններ սահմանելու հնարավորությունը:

¹⁸⁰ Տե՛ս Слоневская А. Ю. Ликвидация коммерческих организаций. Автореф. дисс. ... канд. юрид. наук. СПб., 2004, էջ 9:

նակ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի¹⁸¹ 16-րդ հոդվածի 7-րդ մասը հնարավոր է համարում, որ իրավաբանական անձի լուծարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային մարմնի ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշմամբ դրվեն այդ իրավաբանական անձի որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություն ունեցող սեփականատերերի և (կամ) ղեկավար մարմնի անդամների վրա՝ լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմնից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով, եթե նշված պարտավորությունները ծագել են այդ անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով:

Կարծում ենք, որ գործող օրենսդրությամբ լուծարված իրավաբանական անձի իրավունքների մասով իրավահաջորդության հնարավորության բացառումը ևս կարելի է դիտել որպես թերություն, քանի որ նման իրավակարգավորման պայմաններում իրավաբանական անձի լուծարումից հետո բավարարում չստացած կամ մասնակի ստացած պարտատերերը կամ գույք չստացած մասնակիցները զրկվում են իրենց պահանջները ներկայացնելու հնարավորությունից այն դեպքում, երբ իրավաբանական անձի լուծարումից հետո հայտնաբերվում է տվյալ իրավաբանական անձին պատկանած գույք¹⁸²: Օրինակ՝ ընկերության պահեստապետը հափշտակել է ընկերությանը պատկանող 1000000 դրամ արժողությամբ որևէ գույք, և հափշտակության փաստը բացահայտվել է իրավաբանական անձի լուծարումից վեց ամիս կամ մեկ տարի անց: Գործող իրավակարգավորման պայմաններում այդ գույքը կդիտվի որպես տիրազուրկ գույք, քանի որ մենք չունենք իրավաբանական անձի որևէ իրավահաջորդ, կամ օրենքով սահմանված շահագրգիռ որևէ անձ, ով

¹⁸¹ ՀՀՊՏ 1997/11, 20.05.97:

¹⁸² Այդ մասին առավել մանրամասն տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվական հոկտեմբերի 14-ի թիվ ԵԱԲԴ/1494/02/10 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

կկարողանա պահանջ ներկայացնել այդ գույքի նկատմամբ, ինչը մեր կարծիքով, արդարացի չէ: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

«5. Լուծարված և իրավաբանական անձանց պետական գրանցամատյանից հանված իրավաբանական անձին պատկանող գույքի հայտնաբերման դեպքում շահագրգիռ անձը կամ լիազոր պետական մարմինն իրավունք ունի լուծարման գործընթացը վերսկսելու և հայտնաբերված գույքը շահագրգիռ անձանց միջև բաշխելու պահանջով դիմել դատարան:

Շահագրգիռ անձը նման պահանջ ներկայացնելու իրավունք ձեռք է բերում նաև այն դեպքում, երբ գույքի բաշխումն իրականացվել է օրենսգրքով սահմանված հերթերի խախտմամբ:

Նման դեպքերում դատարանը նշանակում է լուծարային կառավարիչ:

Լուծարման գործընթացի վերսկսումը թույլատրվում է իրավաբանական անձանց պետական գրանցամատյանից իրավաբանական անձին հանելու մասին գրառումը կատարելու ամսաթվից հետո՝ երեք տարվա ընթացքում, պայմանով, որ առկա գույքի արժեքը բավարար է լուծարման գործընթացը վերսկսելու համար, և հայտնաբերված գույքը հնարավոր է բաժանել շահագրգիռ անձանց միջև:»:

Կարծում ենք, որ նման նորմի ներմուծումը հնարավորություն կտա իրավաբանական անձի գույքի հաշվին բավարարել շահագրգիռ անձանց պահանջները, իսկ լուծարման շղարշը որպես իրավունքի չարաշահման հնարավորություն օգտագործելու ցանկություն ունեցող անձանց կզրկի այդ մեխանիզմից օգտվելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նաև փոփոխել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին կետը և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրավաբանական անձի լուծարմամբ նրա գոյությունը

դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու, բացառությամբ սույն օրենսգրքով և օրենքով նախատեսված դեպքերի:»:

Ինչպես նաև, անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել այն օրենքներում, որոնցում փորձ է կատարվել տալ այս կամ այն կազմակերպահրավական ձև ունեցող իրավաբանական անձի լուծարման հասկացությունը, դրանցում օգտագործել բացառապես «լուծարում» եզրույթը՝ առանց դրա էությունը պարզաբանող հասկացություններ ներառելու:

Իրավաբանական անձը կարող է լուծարվել կամ կամավոր կերպով, կամ էլ հարկադրաբար¹⁸³՝ դատական կարգով:

Իրավաբանական անձը դատարանի որոշմամբ՝ հարկադրաբար, կարող է լուծարվել.

- դատարանի կողմից ընկերության գրանցումն անվավեր ճանաչվելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ¹⁸⁴,

- առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով ար-

¹⁸³ Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Гусева Т. А., Зубов В. И., Ларина Н. В. Ликвидация юридических лиц. М. Изд-во «ФБК-ПРЕС», 2003:

¹⁸⁴ Կարծում ենք, որ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված իրավաբանական անձի դատական կարգով լուծարման այս հիմքն արդարացի չէ և դրա պրակտիկ կիրառությունը կարող է տարատեսակ չարաշահումների տեղիք տալ: Պատկերացնենք մի իրավիճակ, երբ իրավաբանական անձի ստեղծումից հետո՝ երեք տարի անց հայտնաբերվել են իրավաբանական անձի ստեղծման գործընթացում թույլ տրված օրենքի աննշան խախտումներ և մրցակից ընկերությունը նրան շուկայից դուրս մղելու նպատակ հետապնդելով՝ կազմակերպում է տվյալ սուբյեկտի դատական կարգով լուծարման գործընթացը: Գտնում ենք, որ օրենսդրի նման մոտեցումը կարող է խաթարել քաղաքացիական իրավահարաբերությունների կայունությունը, ուստի առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) դատարանի կողմից ընկերության գրանցումն անվավեր ճանաչվելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի կոպիտ խախտումների հետ, և եթե այդ խախտումները հնարավոր չէ վերացնել.»:

գելված գործունեությունն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների,

- դատարանի կողմից իրավաբանական անձին սնանկ ճանաչելու¹⁸⁵,

- ինչպես նաև օրենքով սահմանված այլ հիմքերով¹⁸⁶ (ՀՀ քաղ. օր., հոդվ. 67):

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով իրավաբանական անձանց լուծարման դեպքում լուծարումն իրականացվում է վճռում նշված մարմնի, իսկ նման նշման բացակայության դեպքում՝ իրավաբանական անձի մասնակիցների կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված իրավաբանական անձի մարմնի կողմից («Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդվ. 50, մաս 3):

Կամավոր կերպով ընկերությունը կարող է լուծարվել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով այն ստեղծվել էր, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար այն ստեղծվել էր:

Քաղաքացիական օրենսգիրքը հստակ չի պատասխանում այն հարցին, թե լուծարման մասին որոշումը կայացնելու պահից ինչ ճակատագրի են արժանանում լուծարվող իրավաբանական անձի ստանձնած պարտավորությունները: Ասվածը հիմնավորվում է դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ: Մասնավորապես, լուծարման իրավահարաբերություններին առնչվող սուբյեկտների համար երբեմն պարզ չէ՝ արդյոք ընկե-

¹⁸⁵ Սույն ուսումնասիրության շրջանակներում իրավաբանական անձին սնանկ ճանաչելուն վերաբերող խնդիրները չեն ուսումնասիրվում, քանի որ դրանք իրենց բնույթով կորպորատիվ իրավահարաբերություններ չեն հանդիսանում:

¹⁸⁶ Այդ հիմքերից մի քանիսին մենք կանդրադառնանք սույն աշխատության հաջորդ գլխում:

րության լուծարման գործընթացում գտնվելն առաջացնում է օրենքի հիման վրա առաջացած բոլոր պարտավորությունները կատարելու՝ ընկերության պարտականություն, այդ թվում՝ հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջացող պարտավորությունները¹⁸⁷: Նշված գործերով ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ եթե ընկերության լուծարման կամ գործունեության դադարեցման մասին պետական գրանցամատյանում որևէ գրառում չի կատարվել, ընկերությունը թեև գտնվում է լուծարային գործընթացում, սակայն իրավաբանորեն համարվում է գոյություն ունեցող: Դրանից բխում է, որ ընկերությունը պարտավոր է կատարել օրենքի հիման վրա առաջացած բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջացող պարտավորությունները:

Բացի դրանից, կարծում ենք, որ քաղաքացիական օրենսգրքում լուծարման մասին որոշման կայացումը պետք է ամրագրվի որպես լուծարվող իրավաբանական անձի՝ իր պարտատերերի հանդեպ ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ կատարման հիմք և հստակ սահմանվեն նման իրավիճակներում պարտատերերի կողմից ներկայացման ենթակա պահանջների սահմանները՝ այնպես, ինչպես որ դրանք սահմանված են վերակազմակերպման դեպքում:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց կանավոր կերպով լուծարումն իրենից ներկայացնում է բավականին բարդ և ժամանակատար գործընթաց, որը, հիմքում ունենալով բաժնետիրական ընկերության կազմակերպչիրավական ձևին բնորոշ առանձնահատկությունները, պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի:

Փուլ առաջին. լուծարվող ընկերության տնօրենների

¹⁸⁷ Տե՛ս ՀՀ վճարեկ դատարանի թիվ ՎԴ1/0063/05/08, ՎԴ1/0091/05/10, ՎԴ/2317/05/10, ՎԴ/0790/05/10, ՎԴ/0237/05/10, ՎԴ/2469/05/09 գործերի նախապատմությունը և դրանցով վճարեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը:

խորհրդի (դիտորդ խորհրդի) կողմից բաժնետերերի ընդհանուր ժողովի լուծմանն են ներկայացվում ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողով նշանակելու հարցերը:

Փուլ երկրորդ. գումարվում է բաժնետերերի ընդհանուր ժողով, որը, ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե կանոնադրությամբ ձայների ավելի մեծ թվաքանակ սահմանված չէ, որոշում է կայացնում ընկերության լուծարման, ինչպես նաև լուծարային հանձնաժողով ստեղծելու մասին: Լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը պարտավոր են այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին, որն իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում տվյալ իրավաբանական անձի՝ լուծարման գործընթացում գտնվելու մասին: Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցներին իրենց պարտականությունների կատարման հարցում որոշակիություն հաղորդելու նկատառումներից ելնելով՝ առաջարկում ենք խելամիտ ժամկետ. մասնավորապես, քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին կետում «անհապաղ» բառը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Քաղաքացիական օրենսգիրքը, ինչպես նաև այլ հարակից օրենքները չեն պատասխանում այն հարցին, թե ընկերության պարտատերերը և այլ շահագրգիռ անձինք ինչպես պետք է վարվեն այն դեպքում, երբ լուծարման մասին որոշումը կայացրած իրավաբանական անձի մարմինները չեն կատարում իրավաբանական անձի լուծարման գործընթացն ապահովելու համար պահանջվող գործողությունները: Կարծում ենք, որ նման իրավիճակներում, շահագրգիռ անձանց դիմումով, լուծարումը

պետք է իրականացվի դատարանի որոշմամբ, և շահագրգիռ անձանց այդ իրավունքը պետք է հստակ ամրագրել քաղաքացիական օրենսգրքում:

Լուծարային հանձնաժողովի նշանակման պահից ընկերության գործերի կառավարման լիազորություններն անցնում են լուծարային հանձնաժողովին: Լուծարվող ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարային հանձնաժողովը:

Քաղաքացիական օրենսգիրքը հստակ չի կարգավորում այն հարցը, թե լուծարային հանձնաժողովի ստեղծումից հետո ինչ ճակատագրի են արժանանում գործադիր մարմինը, խորհուրդը կամ վերստուգիչ հանձնաժողովը: Մենք գտնում ենք, որ հստակ պետք է սահմանվի այն փաստը, որ լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո գործադիր մարմնի և խորհրդի լիազորությունները դադարում են, իսկ վերստուգիչ հանձնաժողովին պետք է տրվեն լուծարման գործընթացի նկատմամբ ակտիվ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ լիազորություններ:

Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահի դրությամբ ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվելու լուծարային հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին: Լուծարային հանձնաժողովի անդամները, ժողովի որոշմամբ սահմանված կարգով, կարող են վարձատրվել:

Չնայած այն հանգամանքին, որ լուծարման մասին որոշումը կայացնելուց հետո կորպորացիան շարունակում է հանդիսանալ որպես իրավունքի սուբյեկտ, ընդհանուր ժողովը շարունակում է պահպանել իր գոյությունը որպես կառավարման բարձրագույն մարմին, բայց նայնպես, լուծարման ողջ ժամանակահատվածում ընդհանուր ժողովի իրավասությունների շրջանակն էականորեն սահմանափակվում է:

Տեսական գրականության մեջ միանշանակ չէ լուծարային հանձնաժողովի իրավական կարգավիճակի վերաբերյալ մոտեցումը: Որոշ հեղինակներ գտնում են, որ լուծարային հանձնաժողովը պետք է դասվի իրավաբանական անձի կառավարման մարմինների շարքը: Այդ կապակցությամբ Գ.Ս. Շապկինան նշում է, որ լուծարային հանձնաժողովը հանդիսանում է կառավարման առանձնահատուկ դիրք զբաղեցնող մարմին, ինչը պայմանավորված է նրանով, որ այն գործում է բացառապես կորպորացիայի լուծարման ժամանակ և բացակայում է բնականոն գործող կազմակերպություններում¹⁸⁸:

Դ.Վ. Լոնակինի կարծիքով՝ լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձի մարմին չի կարող համարվել, քանի որ նրա նպատակը կառավարչական կամ վերահսկողական գործառույթների իրականացման միջոցով կորպորացիայի բնականոն գործունեությունն ապահովելը չէ, այլ լուծարման գործընթացի կազմակերպումը և անցկացումը: Ավելին, լուծարման հանձնաժողովի կազմավորումը չի հանգեցնում կորպորացիայի բոլոր մարմինների գործունեության դադարեցմանը¹⁸⁹:

Մենք համամիտ ենք տեսության մեջ արտահայտված այն կարծիքին, որ լուծարային հանձնաժողովը կորպորացիայի լուծարման փուլում հանդիսանում է կորպորացիայի կառավարման մարմին՝ դրան բնորոշ բոլոր հատկանիշներով: Ավելին, լուծարային հանձնաժողովին լուծարման գործընթացում ընդգրկելու պարագայում լուծարային հանձնաժողովի գործունեությունը կդառնա առավել թափանցիկ և վերահսկելի: Ի տարբերություն լուծարային կառավարչի, լուծարման հանձնաժողովը միշտ հանդես է գալիս լուծարվող իրավաբանական անձի անունից և

¹⁸⁸ Տե՛ս Шапкина Г. С. Новое в российском акционерном законодательстве. М., 2002, էջ 71:

¹⁸⁹ Տե՛ս Ломакин Д. В. Очерки теории акционерного права и практики применения акционерного законодательства. М., 2005, էջեր 108-110:

ներկայացնում է իրավաբանական անձի շահերը¹⁹⁰:

Ժողովը հաստատում է նաև ամփոփիչ հաշվեկշիռը, որոշումներ է ընդունում՝ լուծարման կարգի և ժամկետների, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգի մասին:

Կարծում ենք, որ լուծարումից հետո մնացած գույքը մասնակիցների միջև բաշխելու կարգը հաստատելու իրավունքը ժողովին վերապահելը հանդիսանում է զործող օրենսդրության լրջագույն բացերից մեկը: Արդյունքում՝ խոշոր բաժնետերերը կան մասնակիցները, հաստատելով այդ կարգը, իրացվելի ակտիվները վերցնում են իրենց, իսկ փոքրամասնություն կազմող բաժնետերերին կան մասնակիցներին հատկացնում գույք, որը շուկայում երբեմն հնարավոր չի լինում իրացնել:

Խոշոր բաժնետերերին, նման եղանակով, իրենց իրավունքը չարաշահելու հնարավորությունից զրկելու և կորպորացիայի լուծարումից հետո մնացած գույքը մասնակիցների միջև արդարացի բաշխելու հնարավորություն ստեղծելու նպատակից ելնելով՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածը համալրել հետևյալ խմբագրությամբ նոր 6.1-րդ կետով.

«6.1. Եթե իրավաբանական անձի մասնակիցներից որևէ մեկը դեմ է գույքը հիմնադիրներից (մասնակիցներից) մեկին հանձնելուն, ապա նշված գույքը լուծարային հանձնաժողովի կողմից ենթակա է հրապարակային սակարկությունների միջոցով վաճառքի»:

Փուլ երրորդ. լուծարային հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) հայտարարություն է զետեղում՝

¹⁹⁰ Տե՛ս Зурабян А. А. Корпоративные правоотношения как вид гражданских правоотношений, дисс. ... канд. юрид. наук. М., 2007, էջեր 124-125:

- ընկերության լուծարման մասին,
- պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետների մասին:

Պահանջների ներկայացման ժամկետը պետք է լինի լուծարման մասին հայտարարությունը հրապարակելու պահից առնվազն 2 ամիս: Հայտարարության հրապարակման պահը համարվում է ընկերության լուծարման գործընթացի սկիզբը: Գույքային պարտավորությունների մեծ ծավալի, կասկածելի կամ վիճելի պարտավորությունների առկայության դեպքում լուծարային հանձնաժողովն իրավունք ունի սահմանել պահանջների ներկայացման ավելի երկար ժամկետներ¹⁹¹: Հարկ ենք համարում նշել, որ պահանջների ներկայացման առավելագույն ժամկետներ քաղաքացիական օրենսգրքով սահմանված չեն:

Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարային հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարային հանձնաժողովի դիմումի հիման վրա:

Ընկերության բաժնետերերը, այլ արժեթղթերի տերերը և պարտատերերն իրավունք ունեն ծանոթանալու ընկերության լուծարմանն առնչվող բոլոր փաստաթղթերին:

Փոլ չորրորդ. լուծարային հանձնաժողովն իրականացնում է ընկերության գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և ընկերության լուծարման մասին տեղեկացման, ինչպես նաև դեբիտորական պարտքերի ստացման համար:

Լուծարման ընթացքում ընկերությունն իրավունք ունի կնքելու նոր գործարքներ և ստանձնելու նոր պարտականություններ՝ միայն ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում: Լուծարվող ընկերության գույքի

¹⁹¹ Стів Тихомирова М.Ю. Юридические лица, М., 2003, т2 29:

օտարմանը կամ պարտքերի մարմանն ուղղված բոլոր գործողությունները կարող են իրականացվել միայն լուծարային հանձնաժողովի համաձայնությամբ:

Կարելի ասել, որ լուծարման մասին որոշման ընդունման պահից կորպորացիայի «գործնական կյանքը»¹⁹² դադարում է, նրա իրավունակությունը ենթարկվում է զգալի սահմանափակման: Մասնավորապես, կորպորատիվ իրավահարաբերությունների իրականացումն արդեն ուղղվում է ոչ թե շահույթ ստանալուն կամ կանոնադրական նպատակներին հասնելուն, այլ լուծարման ընթացակարգի իրականացմանը:

Փուլ հիմներորդ. պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետի ավարտից հետո լուծարային հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող ընկերության գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

Փուլ վեցերորդ. գումարվում է բաժնետերերի ընդհանուր ժողով, որը հաստատում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռը:

Փուլ յոթերորդ. եթե լուծարվող ընկերության դրամական միջոցները բավարար չեն լինում պարտատերերի պահանջների բավարարման համար, ապա լուծարային հանձնաժողովը հրապարակային սակարկությունների միջոցով իրականացնում է ընկերության գույքի վաճառք:

Փուլ ութերորդ. լուծարային հանձնաժողովը վճարումներ է կատարում լուծարվող ընկերության պարտատերերին: Լուծարային հանձնաժողովն իրավունք չունի սկսել ընկերության պարտատերերի պահանջների բավարարման գործընթացը, եթե ընկերության գույքի արժեքը կամ դրամական միջոցների քանակը բոլոր պարտատերերի պահանջները բավարարելու համար անբավարար են և առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրեն-

¹⁹² Ст'ю Писемский П. А. Акционерные компании с точки зрения гражданского право, М., 1876, էջ 209:

քի¹⁹³ 3-րդ հոդվածով նախատեսված պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերը և անվճարունակության հատկանիշները: Պարտապան իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը (լուծարողը) պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան, եթե լուծարման ժամանակ պարզվում է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար: Պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը պետք է դատարան ներկայացվի ոչ ուշ, քան համապատասխան հիմքերի հայտնաբերումից հետո՝ երկամսյա ժամկետում («Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 5, կետեր 2,3):

Հարկ ենք համարում նշել, որ օրենքի նշված նորմի կիրառությունը գործնականում լուրջ խնդիրների է առնչվում այն դեպքում, երբ բավարար միջոցներ չունեցող լուծարվող իրավաբանական անձի պարտավորությունների չափը 1000000 դրամից պակաս է լինում:

Այս առումով հատկանշական է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից քննված թիվ ԱՐԴ/0026/04/11 քաղաքացիական գործը: Գործի քննության շրջանակներում պարզվել է, որ լուծարման մասին որոշում կայացրած «Բաղրամյանի նավթամթերք» փակ բաժնետիրական ընկերության լուծարային հանձնաժողովն ընկերությունը սնանկ ճանաչելու դիմումով դիմել է դատարան, քանի որ ընկերության կողմից չկատարված հարկային պարտավորությունների չափը կազմել է 421000 ՀՀ դրամ և հաշվապահական հաշվեկշռի համաձայն՝ ընկերությունն ակտիվներ չի ունեցել: Առաջին ատյանի դատարանը «Բաղրամյանի նավթամթերք» փակ բաժնետիրական ընկերության լուծարային հանձնաժողովի դիմումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված՝ պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերը

¹⁹³ ՀՀՊՏ 2007/7 (531), 31.01.07:

և անվճարունակության հատկանիշները¹⁹⁴ բացակայում են: Ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Որպես վճիռը բեկանելու հիմք վերաքննիչ դատարանը դիտել է այն փաստարկը, որ առաջին ատյանի դատարանը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սնանկության հիմքը չի դիտարկել որպես ինքնուրույն դեպք և արդյունքում նշված նորմի կիրառումը պայմանավորել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սնանկության հատկանիշների առկայությամբ՝ թույլ տալով նյութական իրավունքի խախտում, որն էական ազդեցություն է ունեցել գործի ելքի վրա: Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործով անհրաժեշտ է իրականացնել նոր քննություն՝ պարզելու համար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սնանկության հատկանիշների առկայությունը¹⁹⁵:

Կարծում ենք, որ վերաքննիչ դատարանի կողմից վերը նշված գործով բերված փաստարկները բավարար չափով հիմ-

¹⁹⁴ Պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, եւ վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն)...

2) սեփական նախաձեռնությամբ՝ (կամավոր սնանկության դիմում) եթե պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն), տես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 3, կետ 2):

¹⁹⁵ Գործի նախապատմության և վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների մասին առավել մանրամասն տես՝ թիվ ԱՐԴ/0026/04/11 քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի 29.09.2011 թվականի որոշումը:

նավոր չեն, քանի որ վերաքննիչ դատարանը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով պարտապանի դատարան դիմելու պարտականությունը սահմանող նորմը դիտարկել է որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հիմքերից զատ որպես սնանկության ինքնուրույն հիմք:

Նշված գործով վճռաբեկ բողոքի բացակայության պայմաններում դժվար է միանշանակ պնդել նման գործերով Հայաստանի Հանրապետությունում ձևավորված միասնական դատական պրակտիկայի մասին, սակայն գտնում ենք, որ դատարանների կողմից տարբեր մոտեցումների դրսևորումը հիմնականում պայմանավորված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի անկատարությամբ: Մասնավորապես, առաջարկում ենք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում որպես սնանկության ինքնուրույն հիմք և անվճարունակության հատկանիշ մատնանշել այն դեպքը, երբ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար:

Պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը վերը նշված դեպքերում և ժամկետում չներկայացնելու դեպքում դիմում ներկայացնելու պարտականություն ունեցող հանձնաժողովի անդամները պարտատերերի առջև լրացուցիչ պատասխանատվություն են կրում պարտապանի այն պարտավորությունների համար, որոնք առաջացել են վերը նշված ժամկետը լրանալուց հետո («Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 7, կետ 1):

Լուծարային հանձնաժողովը լուծարվող ընկերության պարտատերերին վճարումներ է կատարում ՀՀ քաղ. օր-ի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ հաշվեկշռին համապատասխան: Դատարանի վճռի հիման վրա ընկերությունից բռնագանձման ենթակա գումարները ևս վճարվում են ՀՀ քաղ. օր-ի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ:

իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետելյալ հերթականությամբ.

առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի՝ գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները¹⁹⁶.

երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով¹⁹⁷.

երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

չորրորդ հերթին մարվում է բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.

հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.

վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

¹⁹⁶ Մենք կհստակ ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ կյանքին և առողջությանը պատճառված վնասների և աշխատավարձի վճարները գրավով ապահովված պարտավորությունների նկատմամբ ստորադասելը սխալ է, ուստի օրենսգրքով սահմանված հերթերը վերանայման կարիք ունեն: Այդ մասին առավել մանրամասն տես՝ Բարսեղյան Տ.Կ. Գործարարական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009, էջ 87:

¹⁹⁷ Կարծում ենք, որ լուծարման գործընթացն առավել կանխատեսելի կլինի, նշված նորմի կիրառությունը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք չի տա, եթե օրենսդիրը հստակ սահմաներ կապիտալացման չափորոշիչները: Առաջարկում ենք, որպես այդպիսին, օգտագործել «Սնանկացման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված չափորոշիչները:

Կարծում ենք, որ, վերը նշված, իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման հերթերով սահմանված պարտատերերի թվից պետք է բացառություն կազմեն իրավաբանական անձի մասնակիցները և նրանց հետ փոխկապակցված անձինք, իսկ վերջիններիս նկատմամբ լուծարվող իրավաբանական անձի պարտավորությունները պետք է բավարարվեն վերջին՝ յոթերորդ հերթում: Նման նորմի ներմուծումը կբարձրացնի լուծարվող իրավաբանական անձի մասնակիցների պատասխանատվությունն իրավաբանական անձի բնականոն գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու մասով, ինչպես նաև մասնակիցներին կզրկի ընկերության այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով պահանջների բավարարում ստանալու հնարավորությունից:

Լուծարման հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջների բավարարումը մերժելու կամ դրանց քննարկումից խուսափելու դեպքում մինչև իրավաբանական անձի լուծարման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի հայց հարուցել ընդդեմ լուծարման հանձնաժողովի:

Լուծարման հանձնաժողովի կողմից պահանջներ ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո պարտատիրոջ ներկայացրած պահանջները բավարարվում են լուծարված իրավաբանական անձի գույքից, որը մնացել է պարտատերերի՝ ժամանակին ներկայացված պահանջները բավարարելուց հետո:

Լուծարման հանձնաժողովի կողմից մերժված պարտատերերի պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են մարված:

Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին ընկերությունը պարտատերերի նկատմամբ որևէ պարտավորություն չի ունենում, ընկերության գույքը

բաշխվում է բաժնետերերի միջև¹⁹⁸:

Բաժնետերերի միջև գույքը բաշխվում է հետևյալ հաջորդականությամբ.

- առաջին հերթին կատարվում են վճարումներն այն բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված կարգով,

- երկրորդ հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահաբաժինները,

- երրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները,

- չորրորդ հերթին կատարվում է լուծարվող ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) և բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջև¹⁹⁹:

Գույքի բաշխումը յուրաքանչյուր հերթով կատարվում է նախորդ հերթի լրիվ բաշխումն ավարտելուց հետո:

Կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսերի առանձին դասերի լուծարային արժեքի վճարումներն իրականացվում են կանոնադրությամբ սահմանված հերթականությամբ: Յուրաքանչյուր հերթի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները կատարվում են նախորդ հերթի լուծարային արժեքի լրիվ վճարումից հետո:

Եթե ընկերության գույքը լիովին չի բավարարում արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահաբաժինները բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույ-

¹⁹⁸ Կարծում ենք, որ պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, իրավաբանական անձի կամավոր լուծարման դեպքում, հիմնադիրները (մասնակիցները) կարող են լուծարման գործընթացի շրջադարձ կատարել, այսինքն՝ իրաժարվել իրավաբանական անձը լուծարելու նտադրությունից և ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարման գործընթացը դադարեցնել:

¹⁹⁹ Նշված հերթերի հետ կապված հիմնախնդիրներին կանդիդատառնանք սույն աշխատության երկրորդ գլխում:

քը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համամասնորեն: Իսկ եթե ընկերության գույքը լիովին չի բավարարում արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաժնետերերի միջև բաշխվում է՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համասնորեն:

Լուծարվող ընկերության պարտավորությունների վերաբերյալ պարտատիրոջ հայցով դատարանում որևէ հայց քննվելու դեպքում արգելվում է ընկերության գույքը բաժանել բաժնետերերի միջև՝ մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Փուլ իններորդ. պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը և այն ներկայացնում բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը:

Փուլ տասներորդ. ընկերության լուծարման գործընթացն ավարտելու և նրա գոյությունը դադարած լինելու մասին կատարվում է համապատասխան պետական գրանցում: Պետական գրանցում կատարելու համար իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմինն են ներկայացվում դիմում, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին, լուծարման հաշվեկշիռը, տեղեկանքներ հարկային և սոցիալական ապահովության մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին, կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ և պետական գրանցման վկայականը:

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով իրավաբանական անձանց լուծարման դեպքում լուծարումն իրականացրած անձն ընկերության լուծարման գործընթացի ավարտման և նրա գոյությունը դադարած լինելու մասին համապատասխան պետական գրանցում կատարելու համար իրավաբանական ան-

ձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին է ներկայացնում դիմում, դատարանի վճիռը, տեղեկանքներ հարկային և սոցիալական ապահովության մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին, կնիքը (առկայության դեպքում) հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ և պետական գրանցման վկայականը:

Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Կորպորատիվ արժեթղթերը և կորպորացիայի
մասնակցի իրավունքները

§ 2.1. Կորպորատիվ արժեթղթերի ընդհանուր
բնութագիրը

Կորպորատիվ իրավահարաբերությունների բնականոն իրականացման գործում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կորպորատիվ արժեթղթերը: Դրանք միաժամակ հանդիսանում են շուկայական տնտեսության անբաժանելի ուղեկիցները²⁰⁰: Գործող օրենսդրությամբ և տեսական գրականության մեջ կորպորատիվ արժեթղթերի հասկացությունը չի տրվում, իսկ նշված խնդրին անդրադարձած հեղինակները բավարարվում են միայն դրանց կոնկրետ տեսակների մատնանշմամբ: Օրինակ, Տ.Վ. Կաշանինան գտնում է, որ կորպորատիվ արժեթղթերի թողարկող կարող են լինել բաժնետիրական ընկերությունները՝ բաժնետոմսեր և պարտատոմսեր թողարկելու դեպքում, պետությունը՝ պետական պարտատոմսեր թողարկելիս²⁰¹, Ի.Ս. Շիտկինան կորպորատիվ արժեթղթեր վերտառության ներքո, պարզապես, անդրադառնում է բաժնետոմսին և պարտատոմսին²⁰², նմանատիպ մոտեցում է դրսևորում Օ.Ա. Մակարովան²⁰³:

Հաշվի առնելով կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները, մենք գտնում ենք, որ կորպորատիվ արժեթղթերը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-

²⁰⁰ St'u Решетина Е. Н. Корпоративные эмиссионные ценные бумаги и их купля-продажа при первичном размещении: проблемы правового регулирования: дисс. ... канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2003, էջ 4:

²⁰¹ St'u Кашанина Т. В. Корпоративное право. (Право хозяйственных товариществ и обществ). Учебник для вузов. Издательская группа НОРМА– ИНФРА-М. Москва. 1999, էջ 552:

²⁰² St'u Корпоративное право, под ред. И.С. Шиткина, М., 2007, էջ 239:

²⁰³ St'u Макарова О. А. Корпоративное право. Учебник. "Волтерс Клувер", М., 2005, էջ 53:

րդ հողվածի 6-րդ կետում նշված այն արժեթղթերն են²⁰⁴, որոնք դրա տիրապետողին տրամադրում են որոշակի կորպորատիվ իրավունքներ: Այլ կերպ ասած՝ կորպորատիվ արժեթուղթը կարելի է բնութագրել որպես կորպորացիայի հանդեպ արժեթղթի սեփականատիրոջ կորպորատիվ իրավունքները հավաստող կամ նման արժեթուղթ ձեռք բերելու իրավունք վերապահող փաստաթուղթ, իսկ կորպորացիայի մասնակցի կորպորատիվ իրավունքները՝ իրավագորությունների համակցություն, որոնք օրենքով, այլ իրավական ակտերով, կորպորացիայի կանոնադրությամբ և ներքին կանոնակարգող փաստաթղթերով պատկանում են կորպորատիվ իրավահարաբերության մասնակցին՝ որպես կորպորատիվ սուբյեկտիվ իրավունքի կրողի: Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ որպես կորպորատիվ արժեթղթեր հանդես են գալիս բաժնետոմսը և որոշակի վերապահումով՝ փոխարկելի պարտատոմսը²⁰⁵:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բաժնետոմսը բնորոշվում է որպես արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ)՝ բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության

²⁰⁴ Բաժնային արժեթղթեր են համարվում՝ ա) բաժնետոմսը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթուղթը, բ) «Արժեթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված արժեթղթերի վրա հիմնված դեպոզիտար ստացականը, գ) ցանկացած այլ արժեթուղթ, որն իրավունք է տալիս ձեռք բերել վերը նշված կետի «ա» ենթակետով սահմանված արժեթղթերը փոխարկման, փոխանակման կամ այլ իրավունքների իրականացման եղանակով և թողարկվել է արժեթղթերի թողարկողի կամ նրանց խմբի անդամ թողարկողի կողմից:

Բաժնային արժեթղթերը միայն անվանական են («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդվ. 3, կետ 6):

²⁰⁵ Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր, որոնք տալիս են ընկերության պարտատոմսերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք: Ընդ որում, ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխելու փոխարկվող պարտատոմսեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի այն քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերն ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը (ՀՀ քաղ. օր., հոդվ. 157): Իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետում հատուկ շեշտադրվում է այն հանգամանքը, որ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը հավաստում են ընկերության նկատմամբ բաժնետիրոջ ունեցած պարտավորական իրավունքները, ինչը բաժնետոմսով հավաստվող իրավունքների իրական շրջանակը չի արտահայտում: Ուստի առաջարկում ենք, ՀՀ քաղ. օր-ի 157-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բաժնետոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա սեփականատիրոջ բաժնետիրական ընկերության հանդեպ ունեցած կորպորատիվ իրավունքները:»: Բաժնետերը, ի տարբերություն պարտատոմսի սեփականատիրոջ, հանդես չի գալիս որպես ընկերության պարտատեր և իրավունք չունի ընկերությունից պահանջել վերադարձնել բաժնետոմսի գինը²⁰⁶:

Բաժնետիրական ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) կամ ոչ փաստաթղթային ձևով անվանական բաժնետոմսեր: Բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է: Ընդ որում, ընկերության թողարկած միևնույն տեսակի արժեթղթերը պետք է ունենան թողարկման միևնույն ձևը: Ներկայումս ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ամբողջ աշխարհում²⁰⁷, նկատվում է փաստաթղթային արժեթղթերի ապանյութականացման գործընթաց:

Բաժնետիրական ընկերությունը կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի ար-

²⁰⁶ Տե՛ս Ионцев Г. Акционерные общества. Изд-во «Ось-89», М., 2002, էջ 52:

²⁰⁷ Տե՛ս Барулин В. А. Бездокументарные ценные бумаги в гражданском праве России: дисс. ... канд. юрид. наук: Москва, 2001, էջ 3:

տոնյալ բաժնետոմսեր²⁰⁸: Ընկերության կողմից թողարկված բո-

²⁰⁸ Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել աշխատակցի բաժնետոմսեր, որոնք կարող են լինել հասարակ (սովորական) կամ արտոնյալ: Աշխատակցի բաժնետոմսերը տեղաբաշխվում են ընկերության աշխատակիցների միջև՝ այդ նպատակի համար աշխատակիցների բաժնետիրացման հատուկ հիմնադրամի միջոցների հաշվին՝ ընկերության կողմից իր բաժնետերերից հետ գնած բաժնետոմսերից:

Աշխատակիցների բաժնետիրացման հիմնադրամի նպատակն այն է, որ ընկերությունն իր բաժնետոմսերը տեղաբաշխելով՝ աշխատակիցների միջև, վերջիններիս մոտ լրացուցիչ հետաքրքրություն է առաջացնում ընկերության տնտեսական գործունեության արդյունքի նկատմամբ:

Սովորաբար ընկերության բաժնետեր չհանդիսացող աշխատակիցների աշխատանքը հիմնականում խրախուսվում է պարգևատրումների միջոցով, որը պայմանավորված է նրանցից յուրաքանչյուրի կատարած անհատական աշխատանքի արդյունքով: Մինչդեռ բաժնետոմսերի ձեռքբերման դեպքում աշխատակիցները շահագրգռված են լինում բարձրացնել կոլեկտիվ աշխատանքի որակը, ինչը, անկասկած, իր դրական ազդեցությունն է ունենում ընկերության տնտեսական գործունեության վրա, որից էլ անմիջականորեն կախված է բաժնետեր-աշխատակիցների կողմից ակնկալվող շահաբաժինների մեծությունը:

Աշխատակցի բաժնետոմսն ընկերության աշխատակցին արտոնյալ պայմաններով վաճառված անվանական բաժնետոմս է: Աշխատակիցների բաժնետոմսերը տեղաբաշխվում են աշխատակիցների միջև՝ վերջիններիս համաձայնությամբ, և աշխատակցի բաժնետոմսերի դիմաց վճարվող գումարը կարող է անվանական արժեքից ցածր լինել, բայց 25 տոկոսից ոչ պակաս:

Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի ընկերության հասարակ (սովորական) և համապատասխան դասի արտոնյալ արժեթղթի անվանական արժեքից: Աշխատակցի բաժնետոմսի սեփականատերերն օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք օրենքով և կանոնադրությամբ սահմանված են դրանց համապատասխանող հասարակ (սովորական) կամ տարբեր դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար, բացի այն դեպքից, երբ աշխատակցի բաժնետոմսերի շրջանառությունը սահմանափակված է կանոնադրությամբ սահմանված ժամկետով, որը չի կարող գերազանցել դրանց տեղաբաշխման օրվանից սկսած երեք տարին: Բացի դրանից, աշխատակցի բաժնետոմսերի մասը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

Աշխատակցի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման դեպքում, բացի կենսաթոշակի անցնելու դեպքերից, ընկերությունն ունի աշխատակցի բաժնետոմսերի շուկայական գնով, սակայն անվանական արժեքից ոչ պակաս, հետզման նախապատվության իրավունք:

Աշխատակցի բաժնետոմսերի մահացած տիրոջ ժառանգորդները, եթե ընկերության կանոնադրությամբ սահմանափակված է որպես ժառանգություն ստացած բաժնետոմսերի շրջանառությունը, իրավունք ունեն ընկե-

լոր հասարակ (սովորական) բաժնետոմսերը պետք է ունենան միանման անվանական արժեք, հավաստվող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ: Ընկերության թողարկած հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը, որպեսզի քվեարկության ժամանակ ապահովվի այն բաժնետերերի առավելությունը, որոնք նախկինում ձեռք են բերել առավել մեծ քանակությամբ բաժնետոմսեր, այսինքն՝ ընկերության կանոնադրական կապիտալում ներդրել են ավելի մեծ գումար²⁰⁹:

Իսկ այն դեպքում, երբ ընկերությունը թողարկում է մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր, ապա դրանց ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը: Ընդ որում, յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմս պետք է ունենա միանման անվանական արժեք, հավաստվող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ:

Բաժնետիրական ընկերությունը կարող է թողարկել տարատեսակ արտոնյալ բաժնետոմսեր՝ ուղղակի արտոնյալ բաժնետոմսեր, փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր, ռեստրիկտիվ (սահմանափակ) արտոնյալ բաժնետոմսեր, փոփոխական տոկոսադրույք ունեցող արտոնյալ բաժնետոմսեր, արտոնյալ բաժնետոմսեր, որոնցով վճարումները կատարվում են արտարժույթով և այլն²¹⁰:

րությունից պահանջել դրանց հետգումունը շուկայական գնով, որի արժեքն անվանական արժեքից պակաս չի կարող լինել, կամ պահանջել դրանք փոխարկել ընկերության այլ բաժնետոմսերի, եթե այդպիսիք հայտարարված են ընկերության կողմից:

Աշխատակիցների բաժնետոմսերի տեղաբաշխման, դրանց դիմաց վճարման և աշխատակիցների արտոնությունների սահմանման կարգի մասին որոշումը կայացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:

²⁰⁹ Сեն Комментарий к Федеральному закону об акционерных обществах. Изд. «Юринформцентр». М., 2002, էջ 163:

²¹⁰ Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Кашанина Т.В., նշված աշխատությունը, էջեր 425-426, Жукова Е. Ф. Рынок ценных бумаг, Волтерс Клувер, 2010 էջեր 263-265:

Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր: Նման բաժնետոմսերի կառավարման նկատմամբ կիրառելի են ընդհանուր բաժնային կամ համատեղ սեփականություն հանդիսացող զույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման կանոնները: Նման բաժնետոմսերով իրավունքներն իրականացնում է համասեփականատերերի կողմից լիազորված և ռեեստրում գրանցված անձը:

Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտվելուց հետո ընկերության ռեեստրավարը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի բաժնետերերի ռեեստրի բաժնետերերի անձնական հաշիվներում, ընդ որում՝ ընկերության կողմից փաստաթղթային ձևով բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու դեպքում փաստաթղթային բաժնետոմս ձեռք բերած անձին (բաժնետիրոջը) պետք է տրվի դրա հավաստագիրը: Բաժնետոմսերի հավաստագիրն անվանական արժեթուղթ է, որը հավաստում է ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի նկատմամբ դրանց տիրապետողի (տիրապետողների) սեփականության իրավունքը: Բաժնետիրոջը տրվում են առանձին հավաստագրեր՝ հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսերի առանձին տեսակների արժեքը վճարելուց հետո²¹¹:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն առանձնացնում է տեղաբաշխված, հայտարարված, լրացուցիչ և կոտորակային բաժնետոմսերի հասկացությունները:

Տեղաբաշխված են համարվում այն բաժնետոմսերը, որոնք ձեռք են բերվել բաժնետերերի կողմից բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ: Բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումը բաժնետիր-

²¹¹ Հարկ է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2006թ. դեկտեմբերի 5-ին թիվ 713Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» փաստաթղթային եղանակով տպագրված արժեթղթերի պարտադիր ապանյութականացման պահանջ է նախատեսում:

րական ընկերության կողմից կարող է իրականացվել բաց կամ փակ բաժանորդագրության միջոցով:

Բաց բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի կատարելու բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով: Բաց բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման ձևերը (բաց կամ փակ բաժանորդագրություն) սահմանվում են ժողովի որոշմամբ:

Բաց բաժանորդագրության միջոցով բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելիս տեղաբաշխման գործընթացի իրավական կարգավորումը ծանրաբեռնվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերով: Արժեթղթերի առաջարկը համարվում է հրապարակային, եթե այն ուղղված է որակավորված ներդրող չհանդիսացող 100-ից ավելի անձանց կամ անորոշ թվով անձանց: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ կարգավորվող շուկայում արժեթղթերի վաճառքը կազմակերպելու դեպքում ընկերությունը ձեռք է բերում հաշվետու թողարկողի կարգավիճակ, ինչը ենթադրում է հավելյալ պահանջների պահպանում՝ կապված տեղեկատվության բացահայտման, կորպորատիվ կառավարման որակի բարձրացման և այլնի հետ:

Փակ բաժնետիրական ընկերությունն իրավունք չունի կատարելու բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով կամ այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք անսահմանափակ թվով անձանց:

Հայտարարված են համարվում այն բաժնետոմսերը, որոնք ընկերությունը կարող է տեղաբաշխել: Դրանք չեն ներառում արդեն իսկ տեղաբաշխված բաժնետոմսերը: Ընկերության կողմից հայտարարված բաժնետոմսերի քանակը և անվանական արժեքը պետք է սահմանվեն ընկերության կանոնադրությամբ: Կանոնադրությամբ պետք է սահմանվեն նաև ընկերության կողմից

տեղաբաշխվող յուրաքանչյուր տեսակի բաժնետոմսի սեփականատերերի իրավունքները: Կանոնադրությունում նշված դրույթների բացակայության դեպքում ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխելու տվյալ տեսակի հայտարարված բաժնետոմսեր: Ընկերության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև ընկերության կողմից հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները:

Ցանկանում ենք նշել, որ մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող բաժնետիրական ընկերությունների ճնշող մեծամասնության կանոնադրություններով հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները սահմանված չեն²¹²: Ավելին, հաճախ ընկերությունները թողարկում և տեղաբաշխում են լրացուցիչ բաժնետոմսեր, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, թե կանոնադրությամբ հայտարարված բաժնետոմսեր նախատեսված են, թե ոչ:

Օրենքը հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը վերապահել է բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը, և նշված հարցի շուրջ որոշումը ժողովը կարող է ընդունել միայն դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ սահմանված չէ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 68, կետ 4):

Հարկ է նշել, որ հայտարարված բաժնետոմսերն իրականում գոյություն ունեցող բաժնետոմսեր չեն, այլ դա մի հասկացություն է, որն արտահայտում է հետագայում լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու՝ ընկերության իրավունքը:

Լրացուցիչ են համարվում հայտարարված բաժնետոմսերի ծավալի սահմանում տեղաբաշխվող այն բաժնետոմսերը, որոնց

²¹² Տե՛ս «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարի» ԲԲԸ 2003-2008 թվականների ընթացքում մուտք եղած փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները:

տեղաբաշխման միջոցով տեղի է ունենում կանոնադրական կապիտալի ավելացում: Ընդ որում, լրացուցիչ բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարված լինելու դեպքում, և լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը կատարելուց հետո հայտարարված բաժնետոմսերի ծավալը պետք է համամասնորեն նվազեցվի:

Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսեր արժեքը պետք է վճարվի դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում: Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել գույքը, ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը: Խորհրդի որոշմամբ կարող են սահմանափակումներ դրվել ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարվող գույքի տեսակների վրա: Բաժնետերը կանոնադրական կապիտալում գումար կամ այլ գույք ներդնելով՝ կորցնում է դրա նկատմամբ իր ունեցած սեփականության իրավունքը, իսկ փոխարենն ընկերության կողմից թողարկված բաժնետոմսի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք:

Լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարման ձևը սահմանվում է դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ: Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված է, որ դրանց դիմաց վճարումը պետք է կատարվի միայն դրամական միջոցներով, ապա այդ բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 տոկոսը:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով, եթե արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Իսկ հրապարակային վաճառքի միջոցով տեղա-

բաշխվող արժեթղթերի դիմաց վճարումը կատարվում է միայն դրամական միջոցներով՝ լրիվ արժեքով:

Լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերման ժամանակ վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է խորհրդի որոշմամբ և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից²¹³:

Ընկերության բաժնետոմսերի արժեքը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել, ներառյալ՝ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցմամբ, չի թույլատրվում:

Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չի կատարվել, իսկ վճարված գումարը մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս է, ապա բաժնետոմսերը փոխանցվում են ընկերության տրամադրության տակ, և դրանց արժեքը ժամանակին չվճարած բաժնետերերը զրկվում են բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքից: Այդ մասին կատարվում է համապատասխան նշում ընկերության բաժնետերերի գրանցամատյանում: Դրամական միջոցները և այլ գույքը, որոնք վճարվել են բաժնետոմսերի դիմաց, բաժնետիրոջը չեն վերադարձվում: Իսկ եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չի կատարվել, իսկ վճարված գումարը մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս չէ, ապա կատարվում է բաժնետոմսերի քանակի վերահաշվարկ՝ այնպես, որ բաժնետոմսերի քանակի և ձեռքբերման արժեքի արտադրյալը չգերազանցի դրանց համար արդեն վճարված գումարը: Մնացած բաժնետոմսերը փոխանցվում են ընկերության տրամադրության

²¹³ Խորհրդի կողմից գույքի շուկայական արժեքի որոշման չափանիշների և սահմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումն արտահայտված է թիվ ԳՅԲԴ4/0139/02/08 գործով 2010 թվականի մարտի 12-ի որոշման մեջ, որին մենք կանդիդատացանք սույն աշխատության երրորդ գլխում:

տակ, և բաժնետերերը զրկվում են դրանց նկատմամբ սեփականության իրավունքից: Այդ մասին ևս ընկերության բաժնետերերի գրանցամատյանում կատարվում է համապատասխան նշում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 42, կետ 6)²¹⁴:

Ընկերության կանոնադրությամբ, բաժնետոմսի դիմաց վճարման պարտավորությունների չկատարման համար, կարող են սահմանվել դրամական տույժեր:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, դրանցով շահաբաժիններ չեն հաշվարկվում:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում արժեթղթերի փոխարկումը, ինչն ըստ էության բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկն է: Ընկերությունն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացնել բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերն ընկերության բաժնետոմսերի փոխարկելու միջոցով: Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որն իրականացվում է ընկերության արժեթղթերի` բաժնետոմսերի փոխարկումն ապահովելու համար, կատարվում է միայն այդ փոխարկման միջոցով: Եթե ընկերությունն իրականացնում է արժեթղթերի տեղաբաշխում, որոնք կա-

²¹⁴ Հարկ ենք համարում նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշված նորմի կիրառությունը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Մասնավորապես, նման իրավակարգավորման պայմաններում, հնարավոր է տարաժամկետ վճարման պայմանով թողարկել բաժնետոմսեր և առանց դրանց ամբողջական արժեքը վճարված լինելու պարագայում դրանց սեփականատերերին հնարավորություն տալ մասնակցել կորպորատիվ իրավահարաբերություններին, ինչը, մեր կարծիքով, արդարացի չէ: Նման դեպքերում այդ անձինք ոչնչով չհիմնավորված առավելություն են ստանում այն բաժնետերերի հանդեպ, ովքեր ամբողջությամբ վճարել են նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքը: Մենք գտնում են, որ լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերի նկատմամբ բաժնետոմսը ձեռք բերած անձի սեփականության իրավունքը պետք է առաջանա դրանց արժեքն ամբողջությամբ վճարելու և տեղաբաշխման արդյունքները հաստատելու պահից:

րող են փոխարկվել ընկերության որոշակի տեսակի (տեսակների) բաժնետոմսերի, ապա տվյալ տեսակի (տեսակների) բաժնետոմսերի հայտարարված քանակը չպետք է պակաս լինի այն քանակից, որն անհրաժեշտ է տեղաբաշխված արժեթղթերի փոխարկման համար՝ դրանց շրջանառության ողջ ժամկետում: Փոխարկման կարգը սահմանվում է փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ:

Ընկերությունը բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն իրականացնում է դրանց շուկայական արժեքով, բացառությամբ՝

- բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի՝ ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի, հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող ընկերության բոլոր բաժնետերերի միջև տեղաբաշխման դեպքի, պայմանով, որ վերջիններս իրականացնում են բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրենց իրավունքը²¹⁵: Այդ դեպքում

²¹⁵ Կարծում ենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի այս պահանջը, չնայած նրան, որ նպատակ ունի պաշտպանել փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերը, միաժամանակ ընկերությունում ներդրումներ կատարելու հարցում լուրջ խոչընդոտ է հանդիսանում: Մասնավորապես, կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ, օրինակ, ընկերությունում 0.0001 տոկոս մասնակցություն ունեցող անձի՝ տեղաբաշխմանը չմասնակցելու պարագայում, ընկերությունում խոշոր ներդրում իրականացնելու ծրագիրը ձախողվի զուտ այն պատճառով, որ բաժնետերերը պետք է ներդրումը կատարեն բաժնետոմսերի շուկայական արժեքով, իսկ անվանական արժեքի և շուկայական արժեքի տարբերությունը պետք է ուղղվի ոչ թե կանոնադրական կապիտալի համալրմանը, այլ հանդիսանալով որպես էմիսիոն եկամուտ՝ ուղղվի այլ նպատակների իրականացմանը՝ դրանից բխող հետևանքներով հանդերձ: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք սահմանել խելամիտ շեմ, որի առկայության պայմաններում տեղաբաշխումը կիրականացվի բաժնետոմսերի անվանական արժեքով, ինչը միաժամանակ փոքրամասնություն կազմող բաժնետերերի համար կհանդիսանա խթան մասնակցել կանոնադրական կապիտալի ավելացման գործընթացին և չգտնվել պասիվ դիտորդի դերում: Որպես այդպիսի շեմ մեր կողմից դիտվում է այն դեպքը, երբ բաժնետոմսերի ձեռքբերման իրենց նախապատվության իրավունքը կիրականացնի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող ընկերության բաժնետերերի 3/4-րդը:

արժեթղթերի տեղաբաշխումը կարող է իրականացվել դրանց անվանական արժեքով.

- եթե բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման համար ընկերությունն օգտվում է տեղաբաշխողի (միջնորդի) ծառայություններից: Տեղաբաշխման գինն այս դեպքում կարող է շուկայական արժեքից ցածր լինել միայն տեղաբաշխողին (միջնորդին) վճարվող վարձատրության չափով, որը պետք է սահմանվի որպես տոկոսադրույք՝ տեղաբաշխվող բաժնետոմսի փոխարկվող արժեթղթի տեղաբաշխման գնի նկատմամբ:

Նշված կարգը չի տարածվում ընկերության պարտատոմսերի տեղաբաշխման այն դեպքի վրա, երբ պարտատոմսերի մարման պայմաններով նախատեսված է դրանց անվանական արժեքի մարում կամ փոխարկում ընկերության բաժնետոմսերի:

Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատում է բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և համապատասխան փոփոխություններ է կատարում ընկերության կանոնադրությունում:

Հարկ ենք համարում նշել, որ ժողովի կողմից տեղաբաշխման արդյունքների հաստատման պարտադիր պահանջը գործում է միայն այն դեպքում, երբ տեղաբաշխումն իրականացվել է ժողովի, այլ ոչ թե խորհրդի որոշմամբ:

Ինչպես արդեն նշվեց, բաժնետոմսն անբաժանելի է, սակայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն ընկերությանը հնարավորություն է տալիս բաժնետոմսով կատարել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են համախմբումը (կոնսոլիդացումը) և բաժանումը²¹⁶:

²¹⁶ Տեղաբաշխված բաժնետոմսերի բաժանման արդյունքում ընկերության տեղաբաշխված մեկ բաժնետոմսը փոխարկվում է մույն տեսակի (դասի) երկու կամ ավելի բաժնետոմսերի, որի արդյունքում կանոնադրության մեջ կատարվում են ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնետոմսերի քանակի և անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ: Այս գործողության կատարումը բաժնետերերի իրավունքների էական խախտումներ առաջացնելու հնարավորություն իր մեջ չի պարունակում, այդ իսկ պատճառով սույն ուսումնասիրության շրջանակներում առավել մանրակրկիտ կուսումնասիրվեն բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացող հիմնախնդիրները:

Բաժնետերերի իրավունքների համակողմանի պաշտպանությունը հանդիսանում է տնտեսական հարաբերությունների զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկը, և դրանց պաշտպանության արդյունավետ երաշխիքների²¹⁷ բացակայությունը կկորցնի ընկերություններում ներդրումներ կատարելու գրավչությունը:

Ձեռնարկատիրական գործունեության բաժնետիրական ձևի ընտրության պարագայում բախվում են բազմաթիվ անձանց շահեր, որոնց հավասարակշռմանն ու ապահովմանը պետք է ուղղված լինի տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությունը:

Բաժնետիրական ընկերությունում կարող են բախվել բաժնետերերի առանձին խմբերի, ընկերության պարտատերերի և բաժնետերերի, բաժնետերերի ու կառավարիչների, կառավարիչների և աշխատակիցների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց շահերը, որոնց հավասարակշռմանն ու ապահովմանը պետք է ուղղված լինի նաև այս հարցերին վերաբերող դատական պրակտիկան:

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սեփականաշնորհման գործընթացի արդյունքում առավել ցայտուն ձևով արտահայտվեց սեփականաշնորհված ընկերությունների փոքրամասնություն կազմող բաժնետերերի և խոշոր բաժնետերերի շահերի բախումը, որի արդյունքում խոշոր բաժնետերերը ձեռնամուխ եղան փոքրամասնություն կազմող բաժնետերերից ձերբազատվելու գործընթացին:

Հարկ ենք համարում նշել, որ այդ երևույթի առաջացման հիմնական պատճառը հանդիսացավ այն, որ մասնավորեցման արդյունքում ստեղծված մեծաքանակ բաժնետիրական ընկերությունները հիմնադրվեցին բաժնետիրական ընկերությունների ստեղծման նպատակին ուղղակի հակադիր կերպով, մասնա-

²¹⁷ Բաժնետերերի իրավունքների պաշտպանության երաշխիքների մասին առավել մանրամասն տես՝ Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ, изд-во “Дело”, М., 2004, էջ 134:

վորապես, դրանք ստեղծվեցին ոչ թե կապիտալի կենտրոնացման, այլ՝ դրա բաշխման, ապակենտրոնացման նպատակով:

Փոքրամասնություն կազմող բաժնետերերից ազատվելու համար խոշոր բաժնետերերն օգտագործում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով ընձեռված բոլոր հնարավորությունները, որոնցից մեկն էլ բաժնետոմսերի համախմբումն է:

Գրականության մեջ բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը) տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, «զուգահեռ» ընկերության ստեղծման²¹⁸ և այլ բաժնետերերի հետ ֆիդուցիար (վստահության վրա հիմնված) փոխհարաբերությունների հաստատման²¹⁹ հետ մեկտեղ դասվում է հսկիչ փաթեթների ձևավորման մեխանիզմների թվին:

Հսկիչ փաթեթի ձևավորման ցանկացած մեխանիզմ, այդ թվում՝ նաև բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը), որպես կանոն, իրականացվում է բաժնետիրական ընկերության կառավարման և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Սակայն բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը) պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի ոչ միայն մատնանշված խնդիրների իրագործումը, այլև փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանությունը, չհանդիսանա որպես իրավունքի չարաշահման հնարավորություն ընձեռող օրենքով անրագրված գործիք:

Բաժնետիրական հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ օրենսդիրն ընտրել է խոշոր բաժ-

²¹⁸ Տե՛ս Могилевский С. Д. “Акционерные общества“, изд-во “Дело“, М., 1998, էջ 156:

²¹⁹ Ֆիդուցիար փոխհարաբերություններն արտահայտվում են՝
ա) լիազորագրի հիման վրա մյուս բաժնետերերի անունից բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու և քվեարկելու միջոցով,
բ) բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով (այդ մասին ավելի մանրամասն տես՝ Ионцев М. Г. Акционерные общества, изд-во “Ось-89“, М., 2002, էջ 66):

Նետերերի իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու քաղաքականությունը, որի արդյունքում փոքրամասնություն կազմող բաժնետերերը զրկվում են ընկերությունում կատարված, օրենսդրի տեսանկյունից փոքր, սակայն առանձին բաժնետերերի համար իրենց կյանքի ընթացքում ձևավորած խնայողությունները պաշտպանելու հնարավորությունից: Երբեմն փորձ է կատարվում խոշոր բաժնետերերի շահը նույնացնել ընկերության շահի հետ²²⁰ և դրանով հիմնավորել խոշոր բաժնետերերին այնպիսի իրավունքների տրամադրումը, որպիսիք կարող են հանգեցնել բաժնետոմսերի փոքր փաթեթների տիրապետող բաժնետերերին, նրանց կամքին հակառակ, ընկերությունից դուրս մղելուն:

Հարկ ենք համարում նշել, որ նման մոտեցումը կորպորատիվ հարաբերությունների զարգացման և Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ կատարելու կամ արդեն իսկ կատարված ներդրումների պաշտպանվածության մթնոլորտի ձևավորման տեսանկյունից արդարացված չէ, հատկապես, երբ խոսք է գնում սեփականաշնորհման արդյունքում ստեղծված բաժնետիրական ընկերությունների և դրանց 150000-ից ավելի փոքրամասնություն կազմող բաժնետերերի մասին:

Բաժնետոմսերի համախմբման ինստիտուտի դրական և բացասական կողմերը փորձենք քննարկել 1994թ. սեփականաշնորհված «Գալակտիկա» ԲԲԸ-ի օրինակով²²¹:

Նշված ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են 60 բաժնետերերի միջև: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 450000000 դրամ և բաժանված է 450000 բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 1000 դրամ անվանական արժեքով: Բաժնետիրական ընկերությունն ստեղծվել է սեփականաշնորհման արդյունքում, և այն ղեկավարող կոլեկտիվին հաջողվել է սեփա-

²²⁰ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ավետիսյան Վ.Դ. Կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2011, N 134.3, էջեր 27-38:

²²¹ Օրինակներում նշվող ընկերությունների անվանումները փոփոխված են:

կանաչնորիումից հետո ճիշտ օգտագործել ընկերությանն ըն-
ծեռված հնարավորությունները և իր գործունեության բնագա-
վառում առաջատար դիրքեր գրավել: Բացի դրանից, ընկերու-
թյունը ժամանակ առ ժամանակ, հիմնական միջոցների վերագ-
նահատման արդյունքում, կանոնադրական կապիտալը մեծաց-
րել է, և բաժնետոմսերի ամենափոքր փաթեթը գերազանցում է
300-ը: Ստանալով կայուն շահույթ՝ ընկերությունը բաժնետերե-
րին պարբերաբար վճարում է շահութաբաժիններ, որի արդյուն-
քում բաժնետերերը որևէ ցանկություն չունեն վաճառել, փոխա-
նակել կամ նվիրել իրենց պատկանող բաժնետոմսերը:

Այս պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ձև-
վորել բաժնետոմսերի փոքր փաթեթ, որն ընկերությունը ցան-
կանում է վաճառել ընկերության զարգացման հարցում շա-
հագրգիռ և այդ նպատակին հասնելու համար ներդրումներ կա-
տարելուն պատրաստ «Գնորդին» և տպագրել փաստաթղթային
բաժնետոմսեր:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը
շատ քիչ է և լրացուցիչ տեղաբաշխման համար անհրաժեշտ
քանակությամբ բաժնետոմսեր չկան: Այս դեպքում հարց է ծա-
գում, թե ինչպես հասնել առաջադրված խնդրի լուծմանը: Ընկե-
րության կողմից արդեն իսկ տեղաբաշխված բաժնետոմսերի
ծեռքբերումն իմաստ չունի, քանի որ բաժնետերերից ոչ մեկը
բաժնետոմսերը վաճառելու ցանկություն չի հայտնի, «զուգա-
հեռ» ընկերության ստեղծումը ևս ձեռնտու չէ, քանի որ այն բա-
վականին ժամանակատար գործընթաց է, իսկ ընկերությունը չի
ցանկանում լրացուցիչ բաժնետոմսեր թողարկել, քանի որ
քվեարկությամբ արդեն իսկ ձևավորված համակարգը փոփոխե-
լը ցանկալի չէ:

Թվում է, թե առաջացել է մի անլուծելի իրավիճակ: Մինչդեռ
ծագած խնդրի լուծումը տալիս է «Բաժնետիրական ընկերու-
թյունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածը, որի 1-ին մասը
սահմանում է, որ ընկերությունն իրավունք ունի ժողովի որոշ-
մամբ համախմբելու (կոնսոլիդացնելու) տեղաբաշխված բաժ-

ճեղքները, որի արդյունքում ընկերության երկու և (կամ) ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի: Այդ դեպքում կանոնադրության մեջ կատարվում են ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնետոմսերի քանակի ու անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ:

Համախմբման հետևանքով կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում վերջիններս ենթակա են հետզման ընկերության կողմից՝ դրանց շուկայական արժեքով: Ընդ որում, հետզմումն իրականացնելու համար բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությունն օրենսդրի տեսանկյունից անհրաժեշտ չէ: Այս առումով հետաքրքրական է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի 1982 թվականի հոկտեմբերի 12-ի՝ Բրամելիդը և Մալմսթրոմը ընդդեմ Շվեդիայի գործով որոշման մեջ արտահայտած դիրքորոշումը: Այս գործով դիմողները վիճարկել էին այն փաստը, որ իրենք իրենց բաժնետոմսերից զրկվել էին իրենց կամքին հակառակ, ոչ ի շահ հանրության և առանց արդարացի փոխհատուցման²²²: Հանձնաժողովը շվեդական օրենսդրությամբ նախատեսված փոքրամասնություն կազմող բաժնետերերի պարտականությունն իրենց բաժնետոմսերը խոշոր բաժնետիրոջը հանձնելու մասով չի դիտել որպես 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին նախադասությամբ նախատեսված զույթից անարգել օգտվելու իրավունքի խախտում: Հանձնաժողովը գտել է, որ ամեն դեպքում օրենքը չպետք է ստեղծի այնպիսի անհավասար վիճակ, որ մի անձը կամայականորեն և անարդարացի²²³ կերպով իր զույթից (բաժնետոմսե-

²²² Նման իրավիճակի Հայաստանի Հանրապետությունում մենք հաճախ հանդիպում ենք բաժնետոմսերի կոնսոլիդացիայի արդյունքում բաժնետոմսերը հետզմելիս:

²²³ Ստորև կփորձենք պարզել՝ արդյոք ՀՀ օրենսդրությամբ բաժնետոմսերի կոնսոլիդացման արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերի հետզմման հետ կապված հարաբերությունները կարգավորված են արդարացի և կամայականությունների տեղիք չեն տալիս:

րից) գրկվի հոգուտ մեկ այլ անձի²²⁴:

Ծագած խնդրի լուծման անհրաժեշտ իրավական հիմքն առկա է, սակայն տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը) իրականացնելու համար անհրաժեշտ է նաև, որ ընկերությունն ունենա համապատասխան ազատ ֆինանսական միջոցներ, որպեսզի կարողանա շուկայական արժեքով հետ գնել համախմբման (կոնսոլիդացման) արդյունքում առաջացած 5-7 տոկոս կազմող կոտորակային բաժնետոմսերը:

Այսպիսով, որպեսզի «Գալակտիկա» ԲԲԸ-ն կարողանա հասնել իր առջև դրված խնդիրների իրագործմանը, օրենքի 56-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի համաձայն բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում կայացնի հետևյալ հարցերի շուրջ.

ա) տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացման) մասին, որով 1000 դրամ անվանական արժեքով տեղաբաշխված 150 հին բաժնետոմսերը փոխարկվում են նույն դասի մեկ նոր բաժնետոմսի՝ 150000 դրամ անվանական արժեքով,

բ) կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին՝ կապված բաժնետոմսերի քանակի և անվանական արժեքի փոփոխման հետ,

գ) կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին՝ կապված հայտարարված բաժնետոմսերի քանակի հետ, եթե ընկերության կանոնադրությունում արդեն իսկ նախատեսված է հայտարարված արժեթղթերի որոշակի քանակություն:

Համախմբման մասին որոշումը կայացվում է ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը՝ ձայների երեք քառորդով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

²²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի 1982 թվականի հոկտեմբերի 12-ի Բրամելիդը և Մալմսթրոմն ընդդեմ Շվեդիայի գործով որոշումը (application 8588/79, 8589/79):

Այս պայմաններում հարց է ծագում, թե որտեղից պետք է առաջանա անհրաժեշտ 5-7 տոկոս բաժնետոմսերի փաթեթը, որպեսզի այն հնարավոր լինի վաճառել «ներդրողին» և փաստաթղթային արժեթղթերի թողարկման բավականին թանկարժեք գործընթացը ինչպես կարելի է էժանացնել:

Ընդհանուր առմամբ, փոքր թվով բաժնետերեր կարող են գտնվել, որոնք կունենան բաժնետոմսերի այնպիսի քանակություն, որն առանց մնացորդի կբաժանվի 150-ի: Որպես կանոն, բաժնետերերի մեծ մասի մոտ այդպիսի մնացորդներ կառաջանան, որոնք հանդես կգան կոտորակային բաժնետոմսերի ձևով: Օրինակ, 380 բաժնետոմս ունեցող բաժնետիրոջ մոտ որպես մնացորդ կմնա 80 բաժնետոմս, 420 բաժնետոմս ունեցողի մոտ՝ 120 բաժնետոմս և այլն, որոնք էլ ընկերության կողմից ենթակա են հետգնման՝ դրանց շուկայական արժեքին համապատասխան:

Ընկերության կողմից հետգնված կոտորակային բաժնետոմսերի համախմբման արդյունքում ձևավորվում են մեկից ավելի անբողջական բաժնետոմսեր, որոնք կուտակվում են ընկերությունում և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան հետգնման պահից մեկ տարվա ընթացքում ենթակա են տեղաբաշխման: Հակառակ դեպքում ժողովը պետք է որոշում ընդունի այդ բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

Սեզ, իհարկե, հետաքրքրում է տեղաբաշխման տարբերակը, քանի որ այդ բաժնետոմսերի գնորդը նախապես հայտնի է: Ինչպես ցույց է տալիս պրակտիկայի ուսումնասիրությունը՝ այս մեխանիզմի իրագործումը հնարավորություն է տալիս ձևավորել բաժնետոմսերի փաթեթ, որը կազմում է կանոնադրական կապիտալի 5-7 տոկոսը, ինչը և հնարավոր է վաճառել պոտենցիալ ներդրողին: Իհարկե, կոտորակային բաժնետոմսերի քանակը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ձևավորվում է՝ կախված բաժ-

նետերերին պատկանող բաժնետոմսերի քանակից և համախմբման (կոնսոլիդացման) համար ընտրված բանաձևից:

Բաժնետոմսերի համախմբման կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել որոշ առանձնահատկություններ, որոնց վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել բաժնետոմսերի համախմբումն իրականացնելիս.

Առաջին. անհրաժեշտ է բավականին նրբանկատ ձևով պատրաստվել բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպմանը, հստակ հիմնավորել այն դրդապատճառները, որոնք անհրաժեշտություն են առաջացրել իրականացնել բաժնետոմսերի համախմբում:

Մեր կողմից ուսումնասիրվող տարբերակում համախմբման իրականացումը կորպորացիայի շահերից ելնելով հիմնավորվում է նրանով, որ.

ա) ցածր անվանական արժեք ունեցող 450000 բաժնետոմսերն զգալիորեն դժվարացնում են ռեսստրի վարման աշխատանքները, և այդ պայմաններում ներդրումների ներգրավման նպատակով նոր բաժնետոմսերի տեղաբաշխումն էլ ավելի կբարդացնի ռեսստրի վարման աշխատանքները: Իսկ մեր կողմից բերված օրինակում բաժնետոմսերի անվանական արժեքի բարձրացումը՝ բաժնետոմսերի համախմբման միջոցով, հնարավորություն տվեց 150-ը 1-ի փոխանակման շնորհիվ բաժնետոմսերի քանակը հասցնել 3000-ի՝ առանց կանոնադրական կապիտալի փոփոխման,

բ) համախմբման իրականացումը հնարավորություն կընձեռնի տպագրել որակյալ փաստաթղթային բաժնետոմսեր, քանի որ բաժնետոմսերի տպագրությունն ինքնին բավականին ծախսատար գործընթաց է: Բնականաբար, 450000 որակյալ արժեթղթերի տպագրությունը շատ ավելի թանկ կարժենա, քան 3000-ինը:

Երկրորդ. համախմբված բաժնետոմսի անվանական արժեքը չպետք է ավելի բարձր լինի մեկ բաժնետիրոջը պատկանող

բաժնետոմսերի ամենափոքր փաթեթի ընդհանուր արժեքից:

Բերված օրինակում համախմբված բաժնետոմսի անվանական արժեքը բաժնետոմսերի ամենափոքր փաթեթի ընդհանուր արժեքից երկու անգամ ցածր է: Այս դեպքում բաժնետոմսերի ամենափոքր փաթեթին տիրապետող բաժնետերը երաշխավորված է, որ բաժնետոմսերի համախմբման դեպքում կստանան վազագույնը երկու նոր բաժնետոմս: Հակառակ դեպքում՝ բաժնետոմսերի ամենափոքր փաթեթին տիրապետող բաժնետերն ընդհանրապես կզրկվի բաժնետոմս ունենալու իրավունքից: Այդ իսկ պատճառով համախմբման իրականացման մեխանիզմն արդյունավետ չէ, երբ ընկերությունում առկա են բաժնետոմսերի փոքր փաթեթներ ունեցող բաժնետերեր: Իհարկե, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն ամենևին էլ չի պարտադրում հաշվի առնել փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերը, այլ ընկերությանը հնարավորություն է տալիս դրանք հետ գնել:

Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ մեր հանրապետությունում բաժնետոմսերի համախմբումը մեծ մասամբ իրականացվում է ոչ թե հաշվի առնելով կորպորացիայի շահերը, այլ հաշվի առնելով խոշոր բաժնետերերի շահերը, որոնք, մեր կարծիքով, հաճախ չեն համընկնում կորպորացիայի շահերին: Այդպիսիք իրենցից ներկայացնում են իրավունքի չարաշահում և նպատակ են հետապնդում ազատվել «ոչ ցանկալի» մանր բաժնետերերից և ոչ արդարացի գնով, ընկերության ֆինանսական միջոցներով, տիրանալ նրանց պատկանող բաժնետոմսերին և հասանելիք շահութաբաժիններին, որի իրականացման հնարավորության ընձեռումն օրենսդրության մակարդակով անթույլատրելի է:

Այդ մասին է վկայում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի կողմից բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ տարված քաղաքականությունը և քննված մի շարք գործերով կայացված որոշումները, որոնցով փորձ էր արվել մեր հանրապետությունում կանխել նման արատավոր երևույթների զարգացումը:

Օրինակ. «Կոտայք գարեջրերի գործարան» ԲԲԸ-ն, որի կանոնադրական կապիտալը կազմում էր 202993000 դրամ և բաժանված էր ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստող՝ յուրաքանչյուրը 1000 դրամ անվանական արժեքով 202993 բաժնետոմսերի, որոշում էր կայացրել բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ, և համախմբումը կատարվել էր 1000-ը 1-ի գործակցով, այսինքն՝ 1000 դրամ անվանական արժեքով 1000 բաժնետոմսերը փոխարկվել էին 1000000 դրամ անվանական արժեքով 1 նոր բաժնետոմսով: Որոշումը կայացնելու պահի դրությամբ ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ՝ 71 տոկոսը (144127 հատ) պատկանում էր «Y» ԲԲԸ-ին, 25.9 տոկոսը (52586 հատ)՝ «Z» ՍՊԸ-ին, իսկ մնացած 3 տոկոսը (6280 հատ)՝ թվով 114 մանր բաժնետերերի: Ընդ որում, 114 բաժնետերերից մեկ բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի ամենափոքր փաթեթը կազմում էր երկու բաժնետոմս, իսկ ամենամեծ փաթեթը՝ 850:

Փաստորեն, վերը նշված գործակցով կատարված համախմբման արդյունքում թվով 114 բաժնետերերի մոտ առաջացան կոտորակային բաժնետոմսեր, որի հետևանքով տվյալ բաժնետերերը զրկվեցին մեկ ամբողջական բաժնետոմսի նկատմամբ իրենց ունեցած սեփականության իրավունքից:

Այդ կապակցությամբ ՀՀ արժեթղթերի հանձնաժողովում հրավիրված լսումների ժամանակ ընկերությունը համախմբման կատարումը պատճառաբանել էր նրանով, որ նման եղանակով ընկերությունը փորձել էր դուրս գալ հաշվետու թողարկողի կարգավիճակից, սակայն կոնսոլիդացման համար ընտրված բանաձևից ակնհայտ էր, որ նման որոշման կայացումը որևէ տնտեսական կամ ընկերության շահերին համապատասխանող այլ շարժառիթով պայմանավորված չէր:

Լսումների արդյունքում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը հանգել էր այն եզրակացությանը, որ նման եղանակով կատարված համախմբման արդյունքում ոտնահարվել են ՀՀ Սահմա-

նադրությամբ և այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված՝ սեփականատիրոջ ու բաժնետիրոջ իրավունքները և ընկերությանը պարտադրել էր նման եղանակով բաժնետոմսերի համախմբում իրականացնելուց ձեռնպահ մնալ:

Բնականաբար, կոնկրետ այս օրինակում նման հիմնախնդիր չէր առաջանա, եթե բաժնետոմսերի համախմբումն իրականացվեր 2-ը 1-ի գործակցով և ընկերության կորպորատիվ շահը հաշվի առնելով:

Սակայն ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի լուծարումից հետո նշված խնդրին վերաբերող դատական պրակտիկան ընտրեց խնդրի լուծման հակադիր ճանապարհը: Մասնավորապես, «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» բաց բաժնետիրական ընկերությունում 12.10.2008թ. կատարված կոնսուլիդացման արդյունքում բաժնետոմսերից զրկված բաժնետերերի՝ կոնսուլիդացման մասին ժողովի որոշումը անվավեր ճանաչելու մասին հայցը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2009թ. վճռով մերժվեց²²⁵: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 58-րդ հոդվածների սահմանադրականության հարցին է անդրադարձել նաև Սահմանադրական դատարանը՝ քաղաքացիներ Ռուբեն Ավագյանի, Հրաչիկ Հակոբջանյանի, Հրաչյա Ավետիսյանի, Արայիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56, 57 և 58-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 13.07.2010 թվականին կայացված որոշմամբ, որով դատարանը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օ-

²²⁵ Կարծում ենք, որ հայցապահանջը մերժելու պատճառներից մեկը հանդիսացել է նաև այն, որ հայցվորները խոշոր բաժնետիրոջ կողմից կոնսուլիդացման իրականացման մասին որոշման կայացումը չեն կարողացել հիմնավորել որպես իրավունքի չարաշահում, չեն բացահայտել տվյալ որոշումներում կորպորացիայի շահի բացակայությունը, այլ ընտրել են իրենց արդարացի պահանջը հիմնավորելու՝ վերը նշված, ի սկզբանե ձախողման դատապարտված, տարբերակը:

րենքի 56-րդ հոդվածը ճանաչեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Դիմողները կոնսուլիդացման արդյունքում սեփականության իրավունքից զրկվելը դիտել էին որպես սեփականությունից զրկում՝ առանց սեփականությունից դատական կարգով զրկելու՝ սահմանադրական պահանջի ապահովման: Ակնհայտ է, որ դիմողների նման պահանջը չէր բավարարվի, քանի որ դեռևս 18.04.2006 թվականի ՍԴՈ-630 որոշմամբ սահմանվել էին սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ պարտադիր տարրերը, որպիսիք բաժնետոմսերի կոնսուլիդացման ժամանակ ակնհայտորեն բացակայում են: Մասնավորապես, կոնսուլիդացման դեպքում ապահովվում է սեփականության իրավունքի շարունակականությունը, սեփականության դադարեցումը չի ենթադրում որպես պատասխանատվության միջոցի կիրառում և չունի անհատույց բնույթ²²⁶:

Երրորդ. բաժնետերը պետք է կամավոր կերպով ընտրի իր կոտորակային²²⁷ բաժնետոմսերի տնօրինման եղանակները:

Ցանկանում ենք նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի բանաձևում կոտորակային բաժնետոմսերի հասկացությունը, ինչպես նաև չի կարգավորում այդ բաժնետոմսերի շրջանառության կամ դրանց սեփականատերերին պատկանող իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները, ինչը գործնականում առաջացնում է տարատեսակ մեկնաբանություններ և վեճեր:

Կոտորակային բաժնետոմսը գույքի ընդհանուր սեփականության իրավական ռեժիմի մասնավոր դրսևորումը չէ, այլ ար-

²²⁶ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թ. հուլիսի 13-ի ՍԴՈ-903 որոշումը:

²²⁷ Կոտորակային են համարվում այն ոչ ամբողջական բաժնետոմսերը, որոնք առաջանում են ընկերության կողմից իրականացվող այս կամ այն կորպորատիվ գործողության արդյունքում, օրինակ՝ բաժնետոմսերի համախմբում, բաժանում, կանոնադրական կապիտալի ավելացում (ընկերության գույքի հաշվին), կանոնադրական կապիտալի նվազեցում, վերակազմակերպում և այլն:

ժեթղթի նկատմամբ իրավունքների հատուկ բաժանում (հետևաբար՝ արժեթղթերից բխող իրավունքների համապատասխան բաժանում), որի արդյունքում առաջանում են նոր օբյեկտների նկատմամբ իրավունքների ծագման հիմքեր²²⁸: Կոտորակային բաժնետոմսերի գոյությունը՝ որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն օբյեկտ, բաժնետոմսի անբաժանելիության սկզբունքից հարկադրված հատուկ շեղում է, ուստի առաջին հերթին անհրաժեշտ է սահմանել այնպիսի իրավակարգավորում, որի պայմաններում առավելագույնս կպաշտպանվեն կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերի շահերը, ինչպես նաև չի խաթարվի կորպորատիվ իրավահարաբերությունների բնականոն ընթացքը:

Նման պայմաններում հարց է ծագում, թե ինչպիսի այլընտրանք ունի կոտորակային բաժնետոմսի սեփականատերը, եթե որոշում է ընդունվել բաժնետոմսերի համախմբման մասին: Բաժնետոմսերի սեփականատիրոջն իր կոտորակային բաժնետոմսերի տնօրինման այլընտրանքային հնարավորության տրամադրումը ոչ այնքան իրավական, որքան հոգեբանական հիմնահարց է: Որպեսզի կոտորակային բաժնետոմսի սեփականատերն իրեն խաբված չզգա, անհրաժեշտ է, որ օրենքը կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերին հնարավորություն ընձեռի միավորել իրենց կոտորակային բաժնետոմսերը և որպես համասեփականատերեր տիրապետել դրա արդյունքում առաջացած մեկ կամ մի քանի ամբողջական բաժնետոմսերի:

Օտարերկրյա պետությունների փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պնդել, որ բաժնետերերը դժվարությամբ են համաձայնում դիմել այդ քայլին և ավելի հաճախ համաձայնում են իրենց կոտորակային բաժնետոմսերը վաճառել ընկերությանը²²⁹: Դա պայմանավորված է նրանով, որ բաժ-

²²⁸ Տե՛ս Սերոբյան Դ. Մ. Կորպորատիվ արժեթղթերի շրջանառության մի քանի հիմնահարցեր, «Պետություն և իրավունք», 2005, N1(27), էջ 35:

²²⁹ Տե՛ս Ա.Դ. Մոզիլևսկու նշված աշխատությունը, էջ 157:

Նետիկոջ մոտ անմիջապես ծագում են մի քանի հարցեր. մասնավորապես՝ ով է նոր բաժնետոմսի սեփականատերը կամ ովքեր են դրա համասեփականատերերը, ժողովների ժամանակ այդ բաժնետոմսով ով պետք է քվեարկի, արդյոք կարելի է այն վաճառել և ինչպես, կամ ինչպես բաժանել դրա վաճառքի արդյունքում գոյացած գումարը և այլն: Նման պայմաններում բաժնետերերը հիմնականում գերադասում են վաճառել իրենց բաժնետոմսերը և ստանալ դրանց դիմաց վճարվող գումարը, քան միավորել կոտորակային բաժնետոմսերն ու դառնալ մեկ ամբողջական բաժնետոմսի համասեփականատեր:

Չնայած այն հանգամանքին, որ բաժնետերերը ոչ միշտ են ընտրում բաժնետոմսը վաճառելու այլընտրանքային եղանակները, բայցևայնպես, կարծում ենք, որ նման հնարավորության նախատեսումը փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պաշտպանության տեսակետից կդիտվեր որպես մեկ քայլ առաջ:

Օրենքի այս բացն ինչ-որ չափով փորձել էր լրացնել ներկայումս չգործող Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը, որի 112.1բ-28 կանոնի «142.8» ենթակետը սահմանում է, որ կորպորատիվ գործունեության իրականացման արդյունքում կոտորակային (ոչ ամբողջական) արժեթղթերի (այդ թվում՝ բաժնետոմսերի) առաջացման դեպքում դրանք ենթակա են թողարկողի կողմից դրանց շուկայական գնով հետզման՝ օրենքով սահմանված կարգով: Այս նպատակներից ելնելով՝ կենտրոնական դեպոզիտարիան կորպորատիվ գործողություն իրականացնելիս պարտավոր է՝

1) իրականացնել յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կոտորակային արժեթղթերի առանձին հաշվառում,

2) գրանցված սեփականատերերին (անվանատերերին) 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել նրանց անձնական հաշիվներում կոտորակային արժեթղթերի հաշվառման վերաբերյալ՝ նրանց տրամադրելով այն գրանցված սեփա-

կանատերերի (անվանատերերի) ցուցակը և կապի միջոցները, որոնց հաշիվներում հաշվառված են թողարկողի՝ տվյալ դասի կոտորակային արժեթղթերը, և տեղեկացնելով, որ նրանք, ցանկության դեպքում, կարող են միավորել իրենց պատկանող կոտորակային արժեթղթերը և ամբողջ թվով արժեթղթերի վերածելուց հետո իրացնել այդ արժեթղթերով հավաստված իրավունքները²³⁰:

Չորրորդ. բաժնետոմսերի համախմբումն իրականացնելիս անհրաժեշտ է ընտրել այնպիսի բանաձև, որի պայմաններում կոտորակային արժեթղթերի միացման արդյունքում «պոչեր» չառաջանան, այլ ձևավորվեն ամբողջական բաժնետոմսեր: Չակառակ դեպքում ընկերությունն ստիպված կլինի մարել այդ մնացորդները, ինչը, բնականաբար, կհանգեցնի կանոնադրական կապիտալի փոփոխման: Իսկ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետն ընկերությանը պարտադրում է կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում այդ մասին գրավոր ծանուցել իր պարտատերերին: Պարտատերերն իրավունք ունեն ծանուցումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ընկերությունից պահանջելու պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

Բնականաբար, մնան խնդրից խուսափելու համար անհրաժեշտ է ձեռնպահ մնալ մնացորդների գոյացումից, որպեսզի բաժնետոմսերի համախմբումն արդյունավետորեն և արագ նպաստի ծառայած խնդիրների լուծմանը:

Սահմանադրական դատարանի վերը նշված որոշման մեջ անդրադարձ է կատարվել նաև կոտորակային բաժնետոմսերի

²³⁰ Ըստ էության, պրակտիկայում Կանոնագրքի՝ կոտորակային բաժնետոմսերը միավորելու հնարավորություն ընձեռող նորմը չէր կիրառվում, քանի որ Կանոնագրքի պահանջները տարածվում էին միայն հաշվետու թողարկողների նկատմամբ, ինչպես նաև հակասում էին «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի իմպերատիվ նորմերին:

առաջացման խնդրին: Մասնավորապես, որոշման 7-րդ կետում արդարացիորեն նշվում է, որ ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ընդունված նշված գործընթացի օբյեկտիվ և անխուսափելի արդյունքն է կոտորակային բաժնետոմսերի առաջացումը, որոնց առկայությունը նպատակահարմար չէ ինչպես արժեթղթերի շուկայի կայունության ապահովման նկատառումներից ելնելով, այնպես էլ բաժնետիրական ընկերության արդյունավետ կառավարման տեսանկյունից: Հղում է կատարվում Լեհաստանի, Չեխիայի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրական կարգավորմանը, որոնք, որպես կոտորակային բաժնետոմսերի գոյությունը բացառող միջոց, նախատեսում են կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնումը կամ կանավոր հետգնումը, ինչն ըստ էության պարունակում է փակուղային իրավիճակ ստեղծելու վտանգ²³¹:

Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ արգելվում է այնպիսի գործողությունների կատարումը, որպիսիք կարող են հանգեցնել կոտորակային բաժնետոմսերի առաջացմանը, Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրությամբ որպես կոտորակային բաժնետոմսի սեփականատիրոջը տրվող փոխհատուցման չափ սահմանվում է կոնսոլիդացման արդյունքում առաջացած մեկ բաժնետոմսի արժեքը²³², Շվեյցարիայի բաժնետիրական օրենսդրությամբ բաժնետոմսերի կոնսոլիդացիան թույլատրվում է բոլոր բաժնետերերի համաձայնությամբ, պայմանով, որ կանոնադրական կապիտալի չափը չի փոփոխվի²³³, այսինքն կբացառվեն կոտորակային բաժնետոմսերի առաջացումը և այլն:

Այս առումով հատկանշական է Ռուսաստանի Դաշնության

²³¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թ. հուլիսի 13-ի ՍԴՈ-903 որոշումը:

²³² Տե՛ս Бушев А. Ю. Попондопуло В.Ф. О балансе интересов акционеров при консолидации акций // Арбитражные споры.-С-ПБ., 2004, N 3(27), էջ 128:

²³³ Տե՛ս Ageev А. Б. Акционерное законодательство Швейцарии, подстатейный комментарий, М., 2005, էջ 11:

օրենսդրության զարգացման պատմությունը, որտեղ մինչև 07.08.2001թ. առկա էր վերը նշված հիմնահարցի նույն իրավա-կարգավորումը, որը ներկայումս գործում է Հայաստանի Հանրապետությունում: Ռուսաստանի Դաշնության «Բաժնետիրական ընկերությունների մասին» նոր օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվեց, որ կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերը կոտորակային բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը չեն կորցնում, կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերը շարունակում են համարվել ընկերության բաժնետերեր՝ կոտորակային բաժնետոմսի սեփականատիրոջը բնորոշ իրավունքներով ու պարտականություններով հանդերձ²³⁴: Միաժամանակ կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերին իրավունք վերապահվեց ընկերությունից պահանջել իրենց պատկանող բաժնետոմսերի հետզնում:

Ըստ էության, այս քայլով ռուս օրենսդիրը կանխեց սեփականաշնորհման արդյունքում ձևավորված մի քանի միլիոնի հասնող փոքրամասնություն կազմող բաժնետերերի կոնսոլիդացիայի միջոցով ունեզրկման գործընթացը, որն սկիզբ էր առել Ռուսաստանի Դաշնությունում: Իհարկե, այս մոտեցումը Ռուսաստանի Դաշնության որոշ տեսաբանների կողմից չի դիտվում որպես կորպորատիվ կառավարման արդյունավետությունը բարձրացնող քայլ²³⁵, սակայն կորպորատիվ հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլում գտնվող պետությունում, որտեղ առկա է միջին խավ ձևավորելու, հասարակության մեջ հանդուրժողականության և արդարության մթնոլորտի ձևավորման խնդիր, այդպիսի իրավակարգավորումը հանդիսացավ ստեղծված իրա-

²³⁴ St'u Комментарий к Федеральному закону «Об акционерных обществах». По состоянию на 7 августа 2001г., А. А. Дунаевский, А. Д. Осинский, Е. А. Борисенко. Издательство ДНК. Консалтинговая группа «Квалитет» 2001, էջ 97:

²³⁵ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Бушев А. Ю., Попондопуло В. Ф. О балансе интересов акционеров при консолидации акций // Арбитражные споры.-С-ПБ., 2004, N 3(27), էջեր 105-128:

վիճակի քիչ թե շատ արդարացի լուծումներից մեկը:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ նշված օրինակներից ակնհայտ է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը բաժնետոմսերի համախմբման ինստիտուտի անկատար կարգավորումը, խոշոր բաժնետերերի և ընկերության շահերի միջև հստակ սահմանագծի բացակայությունը, օտարերկրյա իրավունքի՝ առանց ազգային առանձնահատկությունների հաշվառման, փոխառումը, ինչը մեր իրականությունում ստեղծել է մի իրավիճակ, երբ խոշոր բաժնետերերն առանց որևէ հիմնավորման կարող են ընկերության ֆինանսական միջոցների, ինչպես նաև բաժնետերերին հասանելիք չափաբաժինների հաշվին ազատվել փոքրամասնություն կազմող բաժնետերերից, տիրանալ նրանց չափաբաժիններին և անարգել իրագործել կապիտալը մի քանի անհատների ձեռքում կենտրոնացնելու արտավոր երևույթը:

Բաժնետիրական, ընկերության, ընկերության և բաժնետերերի, առանձին բաժնետերերի և բաժնետերերի խմբերի շահերի հավասարակշռման անհրաժեշտությունից ելնելով, որպես վերը նշված հիմնախնդրի լուծում, առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և բաժնետոմսերի համախմբումն իրականացնելու հնարավորությունը պայմանավորել հետևյալ հանգամանքներով.

- բաժնետոմսերի համախմբումը պետք է իրականացվի ելնելով բացառապես ընկերության կորպորատիվ, այլ ոչ թե առանձին բաժնետերերի կամ բաժնետերերի խմբի շահերից,
- համախմբման մասին որոշման կայացումը պայմանավորել ոչ թե ձայների պարզ, այլ որակյալ մեծամասնությամբ,
- թույլ չտալ համախմբման այնպիսի բանաձևի կիրառում, որի արդյունքում ընկերությունն ստիպված կլինի փոփոխել կանոնադրական կապիտալի չափը,

- կոտորակային բաժնետոմսեր ունեցող բաժնետերերին հնարավորություն ընձեռել համախմբման մասին որոշումը կայացնելուց հետո որոշակի ժամկետում միավորել իրենց պատկանող կոտորակային բաժնետոմսերը և այդ եղանակով ձևավորել ամբողջական բաժնետոմսեր,

- կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերի կողմից սահմանված ժամկետում կոտորակային բաժնետոմսերը միավորելու իրավունքի իրականացումից չօգտվելու դեպքում նախատեսել ընկերության կողմից արդարացի գնով այդպիսիք հետ գնելու պարտականություն:

**§ 2.2. Կորպորացիայի մասնակցի կորպորատիվ
իրավունքների հասկացությունը և կորպորացիայի
մասնակցի բացարձակ իրավունքները**

ՀՀ գործող օրենսդրությունը կորպորացիայի մասնակցի (բաժնետիրոջ) կորպորատիվ իրավունքների հասկացությունը չի բանաձևում, իսկ տեսական գրականության մեջ կորպորատիվ իրավունքների բնորոշման հարցում միասնական մոտեցումը բացակայում է: Օրինակ՝ Ն.Ս. Գլուսի կարծիքով, սուբյեկտիվ առումով կորպորատիվ իրավունքներն իրենցից ներկայացնում են կորպորացիայի բաժնետիրոջ կամ մասնակցի մոտ բաժնետոմսի, բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման արդյունքում ծագող իրավունքների ամբողջություն, որոնք ամրագրված են օրենքով և այլ իրավական ակտերով, Վ.Ա. Վասիլևան նշում է, որ սուբյեկտիվ իմաստով կորպորատիվ իրավունքը կապիտալը և ուժերը համախմբած անձի իրավունքն է հանդիսանալ կորպորացիայի (իրավաբանական անձի) մասնակից, Վ.Մ. Կրավչուկը կորպորատիվ իրավունքը բնութագրում է որպես կոնկրետ իրավաբանական անձի մասնակցի իրավական հնարավորությունների ամբողջություն, որոնց ընդգրկումը պայմանավորված է այդ իրավաբանական անձի կազմակերպարավական ձևով²³⁶, Ս.Դ. Մոզիլևսկին գտնում է, որ բաժնետիրոջ իրավունքներ ասելով կարելի է հասկանալ բաժնետիրոջ պետության կողմից պահպանվող հնարավորությունը՝ օրենքով, այլ իրավական ակտերով և բաժնետիրական ընկերության հիմնադիր փաստաթղթերով ամրագրված սահմաններում և կարգով, կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից²³⁷ և այլն:

²³⁶ Տե՛ս www.utsb.kiev.ua/news/98-ponyatie-korporativnyx-prav-problema-teoreticheskogo-i-zakonodatelnogo-opredeleniya.html:

²³⁷ Տե՛ս Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ. М., 2004, էջ 101:

Կան երկրներ, որոնց օրենսդրությամբ փորձ է կատարվել տալ կորպորատիվ իրավունքների բնորոշումը. օրինակ՝ Ուկրաինայի Հանրապետության տնտեսական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին կետը կորպորատիվ իրավունքները բնութագրում է որպես այն անձանց իրավունքները, որոնց բաժնեմասի չափը որոշվում է տնտեսական ընկերության կանոնադրական կապիտալում (գույքում) նրանց ունեցած մասնակցությամբ, որը ներառում է այդ անձի՝ տնտեսական ընկերության կառավարմանը մասնակցելու, տվյալ կազմակերպության շահույթից որոշակի մաս (դիվիդենտներ) և ընկերության լուծարման դեպքում մնացած գույքից, օրենքով սահմանված կարգով, որոշակի մաս ստանալու, ինչպես նաև օրենքով և ներքին կանոնակարգող փաստաթղթերով նախատեսված այլ իրավագործությունները²³⁸: Կորպորատիվ իրավունքներ ունենալն Ուկրաինայի Հանրապետության օրենսդրությամբ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում (Ուկրաինայի Հանրապետության տնտեսական օրենսգիրք հոդվ. 167, կետ 1)²³⁹: «Բաժնետիրական ընկերությունների մասին» Ուկրաինայի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ կորպորատիվ իրավունքներն ընկերության բաժնետոմսերի սեփականատիրոջ՝ բաժնետիրոջ, գույքային և ոչ գույքային իրավունքների համախումբն է, որոնք բխում են բաժնետոմսի նկատմամբ նրա ունեցած սեփականության իրավունքից և ընդգրկում են բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու, շահույթից և ընկերության լուծարման դեպքում դրա ակտիվներից մաս ստանալու, ինչպես նաև կանոնադրային փաստաթղթերով կամ օրենքներով նախատեսված այլ իրավունքներ:

Մեր կարծիքով, կորպորացիայի մասնակցի կորպորատիվ

²³⁸ Տե՛ս <http://www.yurist-online.com/uslugi/yuristam/kodeks/016/165.php>:

²³⁹ Կարծում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ ևս անհրաժեշտ է ամրագրել նույնաբովանդակ իրավանորմ, ինչն էապես կլուծի ձեռնարկատիրական գործունեության մեկնաբանման հետ կապված բազմաթիվ գործնական խնդիրներ:

իրավունքներն այն իրավագորությունների ամբողջությունն են, որոնք օրենքով, այլ իրավական ակտերով և կորպորացիայի կանոնադրությամբ վերապահվում են կորպորացիայի մասնակցին որպես կորպորատիվ սուբյեկտիվ իրավունքի կրողի: Կարծում ենք, որ այս բնորոշումն առավել ամբողջական է և կիրառելի ինչպես բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, այնպես էլ կորպորատիվ տիպի այլ իրավաբանական անձանց պարագայում:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց ստեղծման գործընթացում կորպորատիվ իրավահարաբերություններն առաջանում են ավելի վաղ²⁴⁰, քան կորպորացիայում մասնակցություն ձեռք բերելու իրավունքը: Ուստի կորպորատիվ իրավահարաբերությունների էության վերլուծության համար էական նշանակություն ունի նաև կորպորացիայում մասնակցություն ձեռք բերելու իրավունքի ծագման և դադարման պահի սահմանազատումը:

Անվանական արժեթղթի հիման վրա կորպորացիայում մասնակցություն ձեռք բերելու իրավունքը ծագում է Կենտրոնական դեպոզիտարիայում կամ այլ պահառուի մոտ այն գնորդի (կամ նրա անվանատիրոջ) անունով գրանցելու պահից, քանի որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 196-րդ հոդվածն անվանական արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման պահը կապում է ռեեստրում համապատասխան գրառում կատարելու հետ: Օրենսդիրը նմանատիպ մոտեցում է դրսևորում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում մասնակցություն ձեռք բերելու պարագայում, մասնավորապես, անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պա-

²⁴⁰ Այդ մասին առավել մանրամասն տես սույն աշխատության առաջին գլխում:

հից («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 11, կետ 7):

Արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը թողարկողի, թողարկողի կողմից թողարկված անվանական արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) մասին տեղեկությունների, դրանց օրինական փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև արժեթղթերի թողարկման կամ թողարկողի կորպորատիվ գործողությունների հետ կապված առկա տեղեկությունների բոլոր փոփոխությունների և լրացումների ժամանակագրական կարգով գրանցված տեղեկատվական հենքն է («Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ», բաժին 1-ին):

Ընկերություններին արգելվում է անձամբ վարել իրենց թողարկած բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը, և նրանց ռեեստրի վարումը պետք է հանձնվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրենց հետ փոխկապակցված անձ չհամարվող մասնագիտացված կազմակերպությանը, որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 51, կետ 1): Ռեեստրի վարումը մասնագիտացված կազմակերպություններին հանձնելը նպատակ է հետապնդում ապահովել ֆոնդային շուկաների կայունությունը և դրանց կայուն զարգացումը²⁴¹:

Ռեեստրի վարումը թողարկողի արժեթղթերի և գրանցված սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ընթացիկ և բավարար տեղեկատվության հաշվառման ու պահպանման միջոցով իրականացվող արժեթղթերի հաշվառման գործունեություն է, որի նպատակն է արժեթղթերի նկատմամբ սեփականու-

²⁴¹ Стѹ Трещева Т. Ф. Управление рисками регистратора реестров владельцев именных ценных бумаг: дисс. ... канд. эконом. наук, Тула, 2012, էջ 2:

յան իրավունքի (արժեթղթերով հավաստված իրավունքների իրականացումը), արժեթղթերի ամբողջական ու հավաստի հաշվառումը: Ռեեստրի վարումը ներառում է նաև թողարկողի և գրանցված սեփականատերերի (անվանատերերի) մասին տեղեկությունների օրինական փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև արժեթղթերի թողարկման, փոխանցման, արգելադրման, արգելադրման դադարեցման կամ թողարկողի կորպորատիվ գործողությունների հետ կապված ռեեստրում առկա տեղեկությունների բոլոր փոփոխությունների և լրացումների ժամանակագրական կարգով գրանցումը և դրանց վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

Ըստ էության, կորպորատիվ իրավունքների ծագման հիմք է հանդիսանում կորպորացիայում մասնակցության փաստը²⁴², իսկ անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը բաժնետիրական ընկերության և դրա մասնակիցների միջև առկա իրավական կապը հիմնավորող փաստերից է, որը հավաստում է նրանց միջև կորպորատիվ իրավահարաբերությունների առկայությունը²⁴³:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ կորպորացիայում մասնակցության իրավունքը ծագում է օրենքով սահմանված կարգով այն գրանցելու պահից և դադարում է կրկին օրենքով սահմանված կարգով իրավունքի դադարման մասին համապա-

²⁴² St' u Petnikova O. B. Права участников корпоративных отношений по праву Великобритании. Дисс. ... канд. юрид. наук, М., 2007, էջ 5:

²⁴³ Չարկ է նշել, որ օրենսդրությամբ անվանական արժեթղթերի ապանյութականացման և անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը մասնագիտացված կազմակերպության միջոցով իրականացնելու՝ օրենսդրի պահանջները կորպորատիվ իրավահարաբերությունների գոյության վավերացումը (հաստատումը) պայմանավորում են ընկերության և մասնագիտացված կազմակերպության միջև պարտավորական (պայմանագրային) հարաբերությունների հաստատմամբ: Նախկինում, երբ անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը հնարավոր էր իրականացնել հենց ընկերության կողմից՝ կորպորատիվ իրավահարաբերությունների ծագման համար պարտավորական իրավահարաբերությունների գոյությունը չէր պահանջվում:

տասխան գրանցում կատարելու պահից, բացառությամբ օրենքով նախատեսված մի քանի դեպքերի, որոնց կանդրադառնանք սույն պարագրաֆի շրջանակներում:

Որպես ընկերության մասնակից (բաժնետեր) կարող են հանդես գալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունն ու համայնքները: Սակայն օրենքով նախատեսված դեպքերում ընկերությունում որոշ անձանց մասնակցությունը կարող է արգելվել կամ սահմանափակվել²⁴⁴:

Դառնալով բաժնետոմսի կամ բաժնեմասի սեփականատեր՝ մասնակիցը (բաժնետերը) պայմանագիր չի կնքում ընկերության հետ, այլ դառնում է կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակից, որոնք ունեն բարդ և համալիր բնույթ²⁴⁵: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորպորատիվ հարաբերությունները կրում են ինչպես գույքային, այնպես էլ կազմակերպակառավարչական բնույթ, դրանց շրջանակներում ընկերության պարտավորությունները չեն սահմանափակվում կոնկրետ պայմաններում բաժնետիրոջը (մասնակցին) գումար վճարելով, այլ

²⁴⁴ Օրինակ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարը կամ աշխատակիցը (բացառությամբ դիտորդ խորհրդի անդամի կամ նախագահի) իրավունք չունեն լինելու ներդրումային ծառայություններ մատուցող որեւէ անձի ղեկավար, պաշտոնատար անձ, աշխատակից կամ մասնակից («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 179, կետ 2), Հայաստանի Հանրապետությունում վիճակախաղերի կազմակերպման գործունեություն կարող են իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի և (կամ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ հանդիսացող հիմնադիրներ ունեցող Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունները՝ համապատասխան լիցենզիայի հիման վրա («Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք հոդվ. 4, կետ 1), այսինքն՝ օտարերկրացիները և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք չեն կարող հանդիսանալ ՀՀ-ում վրձակախաղի կազմակերպմամբ զբաղվող կորպորացիայի հիմնադիր մասնակից:

²⁴⁵ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ломакин Д. В. Корпоративные правоотношения как составная часть системы гражданско-правовых отношений: на примере хозяйственных обществ, дисс. ... докт. юрид. наук, М., 2009, էջեր 64-126, Корпоративное право, под ред. И. С. Шиткина, М., 2007, էջ 387, Ավետիսյան Վ.Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2011, N 134.3, էջեր 27-38:

ընդգրկում են նաև այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են բաժնետերերի իրավունքներն ապահովելու համար:

Տնտեսական ընկերությունում կատարված կապիտալ ներդրումները, դրանց պահպանությունը, բազմապատկումը և դրանցից շահույթի ստացումը հանդիսանում են բաժնետիրոջ (մասնակցի) հիմնական շահը, ինչի պաշտպանության համար էլ օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված են բազում իրավունքներ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքն ընկերության մասնակցի իրավունքների դասակարգում չի տալիս, այլ բավարարվում է այդ իրավունքների ոչ սպառիչ ցանկը սահմանելով («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ.12), իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը բավարարվում է բաժնետիրոջ իրավունքները հասարակ և արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքների բաժանելով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 37, 38):

Տեսական գրականության մեջ 19-րդ դարից սկսած փորձեր են կատարվում տալ բաժնետիրոջ կամ մասնակցի կորպորատիվ իրավունքների դասակարգումներ: Այսպես, Ի. Տ. Տարասովը բաժնետիրոջ իրավունքները բաժանում է երկու խմբի՝ հիմնականի և հատուկի: Հիմնական իրավունքների շարքը նա դասում է՝ ընկերության լուծարման դեպքում մնացած գույքից մաս ստանալու, շահույթ ստանալու, ընկերության կառավարմանը մասնակցելու, ընկերության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ընկերության մարմինների որոշումները բողոքարկելու, հայց և առարկություններ ներկայացնելու իրավունքները: Իսկ հատուկ իրավունքների շարքին դասում էր մնացած բոլոր իրավունքները²⁴⁶:

²⁴⁶ Ст'у Тарасов И. Т. Учение об акционерных компаниях: Классика российской цивилистики М., 2000, էջ 411:

Գ. Ֆ. Շերշենևիչը բաժնետերերի իրավունքները բաժանում է երկու խմբի՝ գույքային իրավունքների և ընկերության գործերի վարմանն անմիջականորեն մասնակցելու իրավունքի: Երկրորդ խմբի մեջ նա ներառում էր կառավարման մարմիններում ընտրվելու, ընդհանուր ժողովին մասնակցելու, օրենքների և այլ իրավական ակտերի խախտմամբ ընդունված որոշումների բողոքարկման իրավունքները²⁴⁷: Շարունակելով Գ. Ֆ. Շերշենևիչի կողմից տրված դասակարգման տրամաբանությունը՝ հեղինակների մյուս խումբը բաժնետերերի իրավունքները դասակարգում է գույքայինի և ոչ գույքայինի²⁴⁸:

Ի. Ս. Շիտկինան առաջարկում է ընկերության մասնակցի (բաժնետիրոջ) իրավունքները բաժանել 3 խմբի. իրավունքներ, որոնք կապված են ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու հետ, իրավունքներ, որոնք կապված են ընկերության կառավարման մարմինների գործունեության և ընկերության ֆինանսատնտեսական գործերի նկատմամբ հսկողություն իրականացելու հետ, իրավունքներ, որոնք կապված են ընկերության շահույթի կամ ընկերության լուծարման դեպքում՝ մնացած գույքի բաշխման հետ²⁴⁹:

Մենք գտնում ենք, որ հնարավոր է տալ կորպորատիվ իրավունքների առավել ընդգրկուն դասակարգում: Ուստի առաջարկում ենք կորպորացիայի մասնակիցների իրավունքները բաժանել.

- կորպորացիայի մասնակցի բացարձակ իրավունքների²⁵⁰,

²⁴⁷ Ст'ю Шершеневич Г. Ф. Курс торгового права: Классика российской цивилистики. Т. 1, М., 2003, էջ 436:

²⁴⁸ Ст'ю Метелева Ю. А. Правовое положение акционера в акционерном обществе, дисс. ... канд. юрид. наук, М., 1998, էջեր 53, 132, Ахметьянова З. Основные имущественные права акционеров // Закон. 2002, N 8, էջեր 58-62 և այլն:

²⁴⁹ Ст'ю Корпоративное право, под ред. И.С. Шиткина, М., 2007, էջ 389:

²⁵⁰ Սույն պարագրաֆի շրջանակներում մեր կողմից կքննարկվեն միայն կորպորացիայի մասնակցի բացարձակ իրավունքները:

- կորպորացիայի մասնակցի՝ կորպորացիայի կազմակերպիչական ձևով պայմանավորված իրավունքների,

- կորպորացիայի մասնակցի իրավունքների, որոնց ծագումն ու իրականացումը պայմանավորված են որոշակի հանգամանքների ի հայտ գալով:

Բացարձակ իրավունքների դասակարգման հարցում մեր կողմից որպես չափորոշիչ ընդունվում է ոչ թե առանց կորպորատիվ իրավահարաբերությունների այլ մասնակիցների օրենքով պահանջվող վարքագիծ դրսևորելու պայմաններում իրավունքն անձամբ, իր նախաձեռնությամբ իրականացնելու՝ մասնակցի հնարավորությունը, այլ այն, որ իրավունքը կորպորացիայի մասնակցին (բաժնետիրոջը) պատկանում է այն փաստի ուժով, որ նա կորպորացիայի հանդեպ գտնվում է կորպորատիվ իրավահարաբերությունների մեջ, և այդ իրավունքների առկայությունը պայմանավորված չէ ոչ կորպորացիայի կազմակերպիչական ձևի առանձնահատկություններով, ոչ մասնակցին (բաժնետիրոջը) պատկանող բաժնետոմսի (բաժնեմասի) դասով, քանակությամբ և ոչ էլ այս կամ այն հանգամանքի ի հայտ գալով:

Կորպորացիայի մասնակցի (բաժնետիրոջ) բացարձակ իրավունքների թվին են դասվում հետևյալ իրավունքները.

- կորպորացիայի կառավարմանը մասնակցելը,
- կորպորացիայի գործունեության մասին տեղեկատվություն ստանալը,
- շահույթի բաշխմանը մասնակցություն ունենալը,
- կորպորացիայի լուծարման դեպքում ընկերության գույքից որոշակի բաժին ստանալը:

2.2.1. Կորպորացիայի կառավարմանը մասնակցելու իրավունքը

Մի շարք բաժնետիրական ընկերություններում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու՝ բաժնետիրոջ իրավունքը պայմանավորվում էր բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսի տեսակով և դասով, ինչն անթույլատրելի է և ուղղակիորեն հակասում է բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու՝ բաժնետիրոջ իրավունքին: Որպեսզի առավել հստակ ընդգծենք նման մոտեցման անթույլատրելիությունը՝ անհրաժեշտ է ընդհանուր ժողովին մասնակցելու՝ բաժնետիրոջ իրավունքը սահմանազատել ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքից: Ընդհանուր ժողովում քվեարկելու՝ բաժնետիրոջ իրավունքին դեռ կանդրադառնանք, իսկ մինչ այդ փորձենք առավել մանրամասն քննարկել բաժնետերերի ընդհանուր ժողովին բաժնետիրոջ մասնակցելու իրավունքը:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսի, ամսաթվի դրությամբ ընկերության ռեեստրի տվյալների հիման վրա: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը, և ոչ ուշ, քան մինչև ժողովի գումարումը 60 օր առաջ: Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր առաջ:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց համար սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հենց առանձին անդամների նմանատիպ ցուցակում (ռեեստրում) ներառելն է նրան թույլ տալիս իրացնել կորպորատիվ իրավահարաբերությունների բովանդակությունը կազմող իրավունքները: Միակ բա-

ցառությունն այս կանոնից սահմանված է բաժնետիրական ընկերությունների համար: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝ շահութաբաժիններ ստանալու և բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքներն իրացնել կարող են այն բաժնետերերը, որոնք խորհրդի կողմից ընդգրկված են շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում և ոչ թե ժողովի անցկացման պահին բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակում²⁵¹: Թեև ցուցակները կազմվում են բաժնետերերի ռեստորի հիման վրա, այնուամենայնիվ, դրանք կազմվում են ֆիքսված ամսաթվի դրությամբ, որն ընդհանուր ժողովի անցկացման իրական ժամանակի հետ կարող է չհամընկնել:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնետոմսերի, ըստ դասերի և տեսակների մասին («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 70, կետ 4): Այստեղից հետևում է, որ բաժնետերերի ընդհանուր ժողովին բաժնետիրոջ մասնակցելու իրավունքը բաժնետոմսերի քանակի, տեսակի և դասի հետ որևէ կապ չունի:

Բացի դրանից, օրենքը՝ սահմանելով ընկերության կառավարման մարմինների իրավասությունները, որևէ նորմ չի պարունակում այն մասին, որն այդ մարմիններին իրավասություն կտար սահմանափակել ժողովին մասնակցելու՝ բաժնետիրոջ իրավունքը: Այսպիսով, օրենքը հստակ սահմանում է բաժնետերերի ընդհանուր ժողովին բաժնետիրոջ մասնակցելու իրավունքը՝ այն չպայմանավորելով ոչ բաժնետիրոջ ունեցած բաժնետոմսերի քանակով, ոչ էլ բաժնետոմսերի դասով կամ տեսակով:

²⁵¹ Տե՛ս Ավետիսյան Վ., Սերոբյան Դ. Կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների (բաժնետերերի) իրավունքների ծագման և իրականացման իրավական կարգավորման որոշ հիմնահարցեր, «Դատական իշխանություն», Երևան, 2012, N 5/154, էջ 3:

Բացի դրանից, մասնակցին (բաժնետիրոջը) հնարավորություն է ընձեռվում ընդհանուր ժողովին մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մաս, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՀՀ վճռաբեկ դատարանը 26.01.2007թ. թիվ 3-12 (ՏԴ) քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ արձանագրել է, որ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն ներկա գտնվել ընդհանուր ժողովին, մասնակցել օրակարգի հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս: Ընկերության յուրաքանչյուր մասնակից ընդհանուր ժողովում ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համապատասխան ձայների քանակ: Ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ կանոնադրությամբ կամ ընկերության մարմինների կողմից մասնակիցների այս իրավունքները սահմանափակող դրույթներն անվավեր են, այսինքն՝ այդ իրավունքը բացարձակ է, և որևէ հանգամանք չի կարող այն սահմանափակելու հիմք հանդիսանալ: Իսկ այդ բացարձակ իրավունքի իրականացման հնարավորությունն օրենսդիրը պայմանավորել է ընդհանուր ժողովի աշխատանքներին ընկերության մասնակցի մասնակցությամբ²⁵²:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ բաժնետիրական ընկերությունների պարագայում այս ընդհանուր կանոնից կա մեկ բացառություն՝ մասնավորապես, եթե ընկերության բաժնետոմսերը փոխանցվել են ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվանից, ամսից, ամսաթվից հետո, բայց մինչև ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իր բաժնետոմսերը ձեռք բերած անձանց տրամադրել

²⁵² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007 թ. թիվ 3-12 (ՏԴ) քաղաքացիական գործով որոշումը:

քվեարկելու լիազորագիր կամ ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումների համաձայն: Նշված կարգը գործում է նաև բաժնետոմսերի յուրաքանչյուր հաջորդ փոխանցման ժամանակ:

Փաստորեն նման իրավիճակում սահմանվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 196-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնից բացառություն, չնայած այն հանգամանքին, որ բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է նոր բաժնետիրոջը, սակայն բաժնետոմսով հավաստվող իրավունքներից օգտվելու հնարավորությունը վերապահվում է բաժնետոմսի նախկին սեփականատիրոջը: Այսինքն, ռեեստրում այլ անձ նշված լինելու պայմաններում, ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքը վերապահվում է ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակում նշված սուբյեկտին:

Հասկանալի է, որ այս բացառության նախատեսումը պայմանավորված է բաժնետիրական ընկերության կորպորատիվ շահով, քանի որ ընկերության համար առավել հարմարավետ է կազմակերպել ընդհանուր ժողովների անցկացումը կամ բաժնետերերի այս կամ այն ծանուցման ուղարկումը՝ նախապես իմանալով այն սուբյեկտների շրջանակը, ովքեր կոնկրետ անսաթվի դրությամբ ունեն ժողովին մասնակցելու կամ այլ լիազորությունից օգտվելու իրավունք: Օրինակ՝ ՌԴ-ի իրավակիրառ պրակտիկայում որոշ ընկերություններ, ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկելուց հետո՝ մինչև ժողովի գումարման օրը դադարեցնում էին ռեեստրում բաժնետոմսերով գործառնությունները, ինչը հանդիսանում էր անօրինական, քանի որ ռեեստրի վարումը երբևէ չի կարող դադարեցվել²⁵³: Նման եղանակով, ըստ էության, ընկերությունները ցանկացել են լուծել գոյություն ունեցող այն խնդիրները, որոնք կարող էին ի հայտ գալ

²⁵³ Ст'ю Метелева Ю. А. Правовое положение акционера в акционерном обществе. М., 1999, էջ 124:

այդ ժամանակահատվածում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը բաժնետոմսերի նոր սեփականատիրոջը որևէ ձևով չի ապահովագրում այն իրավիճակից, երբ բաժնետոմսի նախկին սեփականատերը ժողովում նոր սեփականատիրոջ ցուցումներին համապատասխան չի քվեարկում, չի մասնակցում ժողովին կամ ընդհանրապես նրանից գաղտնի է պահում ժողովի գումարման փաստը կամ դրա օրակարգը: Իսկ լիազորագրի տրամադրումը օտարողին չի զրկում լիազորագիրը վերացնելու իրավունքից (ՀՀ քաղ. օր., հոդվ. 324): Նման իրավճակներում քվեարկության կարգի ստուգումը դժվար է և ոչ արդյունավետ, իսկ իրավախախտման փաստի դատական կարգով ճանաչումը չի կարող հանգեցնել ընդհանուր ժողովի որոշման անվավեր ճանաչմանը²⁵⁴:

Նմանատիպ իրավախախտման համար օրենքով նախատեսված չէ պատասխանատվություն, և դրա նկատմամբ կիրառելի են պարտավորությունների չկատարման ընդհանուր դրույթները, եթե, իհարկե, բաժնետոմսերի առավանառքի պայմանագրում վաճառողի համար նման պարտականություն սահմանված է: Անհրաժեշտ է ընդգծել, որ կորպորատիվ իրավահարաբերություններում հաճախ են հանդիպում նման նորմեր, որոնք օժտված չեն որևէ սանկցիայով (ամրագրված չեն ոչ քաղաքացիաիրավական, ոչ քրեաիրավական պատասխանատվությամբ), հետևաբար, կարող են առանց որևէ հետևանքի չիրականացվել այն անձի կողմից, ով արհամարհում է այդ կանոնների պահանջները²⁵⁵:

Օրենքի այս բացը վերացնելու և արժեթղթերով գործառնություններ կատարելիս ռիսկերը նվազագույնի հասցնելու

²⁵⁴ Տե՛ս Долинская В. В. Акционерное право, основные положения и тенденции, М., 2006, էջ 280:

²⁵⁵ Տե՛ս Зурабян А. А. Корпоративные правоотношения как вид гражданских правоотношений, дисс. ... канд. юрид. наук. М., 2007, էջ 56:

նպատակով առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել նոր 3-րդ մասով. «Սույն օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ արդեն իսկ տրված լիազորագիրը վերացնելու դեպքում բաժնետոմսերը ձեռք բերած անձն իրավունք ունի պահանջել անվավեր ճանաչել բաժնետոմսերի փոխանցման համար հիմք հանդիսացած պայմանագիրը և/կամ բաժնետոմսերը փոխանցած անձից պահանջել նման գործողությունների արդյունքում պատճառված վնասների հատուցում:»:

Օրենքը չի կարգավորում նաև օտարողի մահից հետո բաժնետոմս ձեռքբերողի՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքի իրականացման հարցը, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ դեպքում լիազորագրի գործողությունը դադարեցվում է: Նման իրավիճակ կարող է ի հայտ գալ նաև այն դեպքում, երբ դադարել է այն իրավաբանական անձը, որի անունից տրվել է լիազորագիրը: Այսպիսով, ստեղծվում է մի իրավիճակ, երբ և՛ փաստացի, և՛ իրավաբանորեն բաժնետոմսերի սեփականատերը զրկվում է բաժնետիրական ընկերության բաժնետերերի ժողովում քվեարկելու, ընկերության կամքը ձևավորելու իրավունքից, ինչը, մեր կարծիքով, կորպորատիվ իրավահարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող երևույթ է:

Նմանատիպ իրավիճակները կանխելու նպատակով, առաջարկում ենք, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 70-րդ հեղվածում կատարել համապատասխան փոփոխություն և բաժնետիրոջը ժողովին մասնակցելու իրավունք տրամադրել ռեեստրից տրված քաղվածքի հիման վրա:

Այսպիսով, ցանկացած կորպորացիա պատասխանատվություն է կրում կորպորացիայի անդամների իրավունքները հաստատող և նրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն բովանդակող որոշակի փաստաթղթերի վարման համար:

Ընդ որում, որոշ դեպքերում այս կամ այն մասնակցի անդամակցության դադարման վերաբերյալ նշված փաստաթղթում գրառում կատարելը դեռ չի նշանակում, որ կորպորատիվ հարաբերությունները դադարում են: Բաժնետերերի ընդհանուր ժողով անցկացնելիս ժողովին մասնակցելու և շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմելու նպատակով ռեեստրի տեղեկատվությունը կարծես թե կասեցվում է անորոշ ժամկետով (թեև միևնույն ժամանակ ռեեստրում զուգահեռաբար ամրագրվում են բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների բոլոր փոփոխությունները)²⁵⁶:

Նման իրավիճակներում կորպորացիայի նախկին անդամները որոշակի ժամանակահատվածի ընթացքում պահպանում են որոշ կորպորատիվ (ընդհանուր ժողովին մասնակցելը) և պարտավորական (շահութաբաժիններ վճարելու մասին ընդհանուր ժողովի որոշմանը համապատասխան շահութաբաժիններ ստանալու) իրավունքներ, որոնցից, փաստորեն, զրկված են բաժնետերերի ռեեստրում որպես կորպորացիայի անդամ նշված անձինք:

²⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջեր 56-57:

2.2.2. Կորպորացիայի գործունեության մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը

Կորպորացիայի մասնակցի հաջորդ բացարձակ իրավունքը կորպորացիայի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքն է²⁵⁷, որը կորպորատիվ իրավունքների համակարգում հանդիսանում է կարևորագույն իրավունքներից մեկը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 37, կետ 1, ենթակետ «ե», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 12, մաս 1, ենթակետ «բ»), և որը, ցավոք, ելնելով սուբյեկտիվ և օբյեկտիվ հանգամանքներից, բաժնետերերի լիարժեք պահանջարկ չունի²⁵⁸: Կարծում ենք, որ դրա հիմնական պատճառն այն է, որ բաժնետերերը հաճախ ընկերությունից պահանջվող տեղեկատվությունը չեն ստանում, իսկ դատարան դիմելու պարագայում գործերի քննությունը տևում է տարիներ, որի հետևանքով իրավունքի իրականացումը կորցնում է իր արդիականությունը²⁵⁹:

Գրականության մեջ կորպորացիայի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքի բովանդակությունը պայմանավորվում է կորպորացիայի համապատասխան գրքերը, փաստաթղթերը ինքնուրույն ուսումնասիրելու (ծանոթանալու)²⁶⁰, այդ գրքերի և փաստաթղթերի վերաբերյալ

²⁵⁷ Այս իրավունքի իրականացման առանձնահատկությունները քննարկվում են բաժնետիրոջ օրինակով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, քանի որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենսդրությունն այս հարցը մանրակրկիտ կարգավորման չի ենթարկում, այլ բավարարվում է միայն մասնակցին նման իրավունք վերապահելով:

²⁵⁸ Տե՛ս Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ, М., 2004, էջ 105:

²⁵⁹ Տե՛ս Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԷԴ/0248/02/11 քաղաքացիական գործով 2012 թվականի ապրիլի 3-ի վճռը:

²⁶⁰ Տե՛ս Mitchell A. Lowenthal and Ari D. Mackinnon, Shareholder Inspection Right under New York Law, NY, 2013, <http://about.bloomberglaw.com/practitioner-contributions/shareholder-inspection-rights-under-new-york-law/>:

ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր բացատրություններ և տեղեկանքներ պահանջելու իրավագործություններով, որոնք դիտվում են որպես կորպորացիայի մասնակցի կողմից իրականացվող ինքնուրույն գործողություններ²⁶¹: Իհարկե, կորպորացիայի մասնակիցն ինքնուրույն է ծանոթանում հրապարակված տեղեկատվությանը, բայց առանց պարտավոր սուբյեկտի (կորպորացիայի) ակտիվ գործողության նա այդ իրավունքը կարող է իրականացնել միայն ազատ (հրապարակային) տեղեկատվությանը ծանոթանալու միջոցով: Իսկ Ռ. Լոմակինը տարանջատում է նաև այս տեղեկատվության իրավունքի երկու կարևորագույն գործառույթները.

- այն ծառայում է որպես բաժնետիրոջ (մասնակցի) այլ իրավունքների պաշտպանության երաշխիք,

- բաժնետիրոջը (մասնակցին) հնարավորություն է տալիս իր իրավունքներն իրականացնել առավել նպատակային²⁶²:

Հայտնի է, որ «տեղեկատվություն» եզրույթն ունի լայն հիմաստ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի²⁶³ 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվությունն անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, զժագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ): Բացի դրանից, տեղեկատվությունը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի օբյեկտ (ՀՀ քաղ. օր., հոդվ.132), և տեղեկատվություն ստանալու՝ անձի սահմանադրական իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության²⁶⁴ 27-րդ հոդվածում, հա-

²⁶¹ Տե՛ս Тарасов И. Т. Учение об акционерных компаниях. М., 2000, էջեր 131-132:

²⁶² Տե՛ս Ломакин Д. Право акционеров на информацию // Хозяйство и право, 1997, N 11, էջ 162:

²⁶³ ՀՀ ՊՏ 2003/55 (290), 05.11.03:

²⁶⁴ ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.05:

մածայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանակացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Սակայն կորպորատիվ օրենսդրությամբ կորպորացիայի մասնակցին վերապահված իրավագործությամբ մասնակիցը կարող է ստանալ այնպիսի տեղեկատվություն, որը, որպես կանոն, հասանելի չէ երրորդ անձանց և անհրաժեշտ է նրա կորպորատիվ իրավունքների լիարժեք իրականացման համար:

Մասնավորապես, ընկերությունը պարտավոր է իր բաժնետերերին հնարավորություն ընձեռել ծանոթանալու հետևյալ փաստաթղթերին. ընկերության պետական գրանցման վկայականին, կանոնադրությանը, կանոնադրությունում կատարված լրացումներին և փոփոխություններին, նոր խմբագրությամբ կանոնադրությանը, ընկերության հիմնադրման մասին որոշմանը և պայմանագրին, ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ ընկերության գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերին, ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած՝ ընկերության ներքին փաստաթղթերին, ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրություններին, ընկերության տարեկան հաշվետվություններին, ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագրերին, հաշվապահական հաշվառման փաստաթղթերին (հաշվապահական հաշվեկշիռ, շահույթի և վնասների հաշիվներ, հաշվեքննչական (աուդիտորական) եզրակացություններ և այլն), պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններին, ժողովների, խորհրդի, վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրություններին, հաշվիչ հանձնաժողովի արձանագրություններին և քվեաթերթիկներին, ընկերության վերստուգող հանձնաժողովի, ընկերության հաշվեքննությունն (աուդիտն) իրականացնող անձի, պետական և տեղական ինքնակառավարման ֆինանսական վերահսկողությունն իրականացնող մարմինների եզրակացություններին, ընկերության փոխկապված անձանց

(նրանց պատկանող բաժնետոմսերի քանակի մասին նշումով), ինչպես նաև նշանակալից և խոշոր բաժնետերերի²⁶⁵ ցուցակին, ընկերության կնքած պայմանագրերին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, ընկերության կանոնադրությամբ, ներքին փաստաթղթերով, ժողովի, խորհրդի և ընկերության կառավարման այլ մարմինների որոշումներով նախատեսված այլ փաստաթղթերի²⁶⁶:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածը թվարկում է փաստաթղթերի բավական լայն ցանկ, որոնք կորպորացիան պարտավոր է պահպանել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում՝ ապահովելով այդ փաստաթղթերի հասանելիությունը բաժնետերերին: Օրենքի այս նորմը կարևոր իրավական երաշխիք է կորպորացիայի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու՝ բաժնետերերի իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Բաժնետիրոջ պահանջով ընկերությունը պարտավոր է հնգօրյա ժամկետում²⁶⁷ նրան տրամադրել²⁶⁸ վերը նշված փաս-

²⁶⁵ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում այն չափորոշիչները, որոնց օգնությամբ մենք կկարողանայինք նշանակալից բաժնետիրոջը տարբերել սովորական բաժնետիրոջից, իսկ խոշոր բաժնետիրոջը՝ նշանակալից: Այդ հասկացություններին մենք կարող ենք հանդիպել «Արժեթղթերի շուկայի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» և այլ ՀՀ օրենքներում, որոնցում այդ հասկացությունների բանաձևումը տրվում է բացառապես այդ օրենքներով կարգավորվող խնդիրները լուծելու համար:

²⁶⁶ Ըստ էության, օրենքով սահմանված են բաժնետիրոջ՝ այնպիսի փաստաթղթերի ծանոթանալու իրավունքը, որոնցում պարունակվող տեղեկատվությունը բաժնետիրոջը հնարավորություն կտա տեղեկություն ստանալ ընկերության գործունեության, ֆինանսական վիճակի մասին և դրանց հիման վրա կայացնել անհրաժեշտ որոշումներ:

²⁶⁷ Այստեղ մենք կրկին հանդիպում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հերթական դեկլարատիվ բնույթի, նշված նորմը խախտելու համար որևէ սանկցիա չնախատեսող նորմի:

²⁶⁸ Կարծում ենք, որ օրենքով տեղեկատվության տրամադրման վայրի և եղանակի սահմանումն էապես կնպաստի կորպորացիայի մասնակցի՝ քննարկվող իրավունքի արդյունավետ իրականացմանը:

տաթղթերի պատճենները, ընդ որում, պատճենները տրամադրելու համար վճարի չափը չի կարող դրանց պատրաստման և փոստային առաքման ծախսերից ավելին լինել («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 95, կետ 4):

Բաժնետերն իրավունք ունի անվճար ստանալու վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի եզրակացության պատճենները:

Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ օրենքով սահմանված տեղեկատվության տրամադրման հնգօրյա ժամկետը միշտ չէ, որ պահպանվում է: Եվ դա պայմանավորված է հաճախ սուբյեկտիվ, երբեմն՝ օբյեկտիվ պատճառներով: Օրինակ, 2012 թվականի հունիսի 14-ին «Սետադամանդեյն գործարան» ԲԲԸ-ի 24 բաժնետոմս ձեռք բերած Ա-ն, որոնց կշիռը կանոնադրական կապիտալում կազմում է 1.46 %, դիմելով ընկերության տնօրենին՝ պահանջել էր տրամադրել հետևյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը.

- հաշվեհամարին փոխանցելու միջոցով կամ կանխիկ ձևով վճարել տվյալ բաժնետեմսերի դիմաց վերջին 5-6 տարիներին հաշվարկված, սակայն բաժնետոմսերի նախկին սեփականատերերին չվճարված շահութաբաժինները,

- տրամադրել քաղվածք տնօրենների խորհրդի անդամների ռեեստրից,

- հայտնել, թե 2002 թվականից մինչ օրս քանի անգամ են գումարվել բաժնետերերի ընդհանուր և արտահերթ ժողովներ, տրամադրել ժողովների արձանագրությունների պատճենները,

- տրամադրել 2002 թվականից մինչ օրս ընդհանուր ժողովների հաստատած հաշվապահական հաշվեկշիռների պատճենները,

- տրամադրել տեղեկատվություն 2002 թվականից մինչ օրս ընկերության կողմից կնքված խոշոր և շահագրգռվածություն ներառող գործարքների մասին,

- տրամադրել ուղղակի կամ անուղղակի ձևով գույքի

ծեռքբերման, օտարման կամ օտարման հնարավորություն ըն-
ծեռող 2002 թվականից մինչ օրս կնքված գործարքների պատ-
ճենները,

- տրամադրել ընկերության պետական գրանցման վկա-
յականի և կանոնադրության պատճենները,

- տրամադրել ընկերության հաշվեկշռում արտացոլված
գույքի նկատմամբ ընկերության գույքային իրավունքները հա-
վաստող փաստաթղթերի պատճենները,

- տրամադրել ժողովի և կառավարման այլ մարմինների
հաստատած՝ ընկերության ներքին փաստաթղթերի պատ-
ճենները,

- տրամադրել ընկերության առանձնացված ստորաբա-
ժանույնների և հիմնարկների կանոնադրությունների պատ-
ճենները.

- տրամադրել ընկերության տարեկան հաշվետվություն-
ները՝ 2002 թվականից մինչ օրս.

- տրամադրել հաշվապահական հաշվառման փաստաթղ-
թերի պատճենները (հաշվապահական հաշվեկշիռները, շահույ-
թի եւ վնասների հաշիվները, աուդիտորական եզրակացություն-
ները և այլն)՝ 2002 թվականից մինչ օրս.

- տրամադրել պետական կառավարման մարմիններին
ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվու-
թյունների պատճենները՝ 2002 թվականից մինչ օրս.

- տրամադրել ժողովների, խորհրդի, վերստուգող հանձ-
նաժողովի (վերստուգողի), կուլեգիալ գործադիր մարմնի միասե-
րի արձանագրությունների պատճենները՝ 2002 թվականից մինչ
օրս.

- տրամադրել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությու-
նների և քվեաթերթիկների պատճենները՝ 2002 թվականից մինչ
օրս.

- տրամադրել ընկերության վերստուգող հանձնաժողովի
(վերստուգողի), ընկերության աուդիտն իրականացնող անձի,
պետական և տեղական ինքնակառավարման ֆինանսական վե-

րահսկում իրականացնող մարմինների եզրակացությունների պատճենները՝ 2002 թվականից մինչ օրս.

- տրամադրել տեղեկատվություն ընկերության փոխկապակցված անձանց մասին (նրանց պատկանող բաժնետոմսերի քանակի մասին նշումով), ինչպես նաև ընկերության նշանակալից և խոշոր բաժնետերերի ցուցակները.

- տրամադրել 2002 թվականից մինչ օրս ընկերության կնքած պայմանագրերի պատճենները:

Պահանջվող տեղեկատվության ծավալուն լինելու և ընկերությունում միաժամանակ ընթացող հարկային մարմնի ստուգման պայմաններում բաժնետիրոջ այս պահանջն օրենքով սահմանված ժամկետում չի բավարարվել:

Ցանկանում ենք նշել, որ գործող օրենսդրությունը տրամադրվող տեղեկատվության ժամանակագրական սահմանափակում չի նախատեսում²⁶⁹ և չի բացառվում իրավիճակ, երբ բաժնետերն ընկերությունից պահանջի, ասենք, վերջին 20 տարիների ընթացքում կնքված պայմանագրերը, ժողովի արձանագրությունները կամ օրենքով նախատեսված բոլոր տեղեկությունները կամ փաստաթղթերը, որի արդյունքում ընկերության այս կամ այն ստորաբաժանման գործունեությունը կարող է մեկ շաբաթով կամ մեկ ամսով կազմալուծվել, որպիսի իրավիճակն առկա էր վերը նշված օրինակում:

Ուստի առաջարկում ենք օրենքով սահմանել տրամադրվող տեղեկությունների առավելագույն այնպիսի ժամկետ, որոնց ընթացքում կորպորացիայի կառավարման մարմինների կատարած այս կամ այն գործողությունը (կազմված փաստաթուղթը)

²⁶⁹ Օրինակ՝ կորպորացիայի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու՝ կորպորացիայի մասնակցի իրավունքն առավել մանրակրկիտ կարգավորված է Ֆրանսիայի օրենսդրությամբ, որը միաժամանակ բաժնետիրոջը տալիս է ընդամենը վերջին երեք տարիների ընդհանուր ժողովների արձանագրություններին ծանոթանալու հնարավորություն. այդ մասին առավել մանրամասն տես՝ Васильева Е. А., Гражданское и торговое право капиталистических государств. М., 1992, էջ 149:

կարող է բողոքարկվել կամ դրանց մասին տեղեկատվության առկայությունը մասնակցի իրավունքների իրականացման գործում կարող է էական նշանակություն ունենալ: Բացի դրանից, կորպորացիային ավելորդ պարտականություններ կատարելու բեռից ազատելու նպատակով, կարծում ենք, որ արդարացի կլինի կորպորացիային ազատել մասնակցի պահանջով արդեն իսկ հրապարակված տեղեկությունները տրամադրելու պարտականությունից:

Բաժնետերն իրավունք չունի ծանոթանալու այնպիսի փաստաթղթերի, որոնք պարունակում են գաղտնի տեղեկություններ, ինչպես նաև կոլեգիալ գործադիր մարմնի նիստերի արձանագրություններին, միանձնյա գործադիր մարմնի հրամաններին և հրահանգներին:

Կոլեգիալ գործադիր մարմնի նիստերի արձանագրությունները և միանձնյա գործադիր մարմնի հրամանները և հրահանգները, ինչպես նաև այլ գաղտնի փաստաթղթերը տրամադրվում են միայն խորհրդի անդամներին և վերստուգող հանձնաժողովին՝ վերջիններիս պահանջով:

Քանի որ կորպորացիայի կառավարմանը մասնակցելու իրավունքը հիմնականում կապված է ընդհանուր ժողովին կորպորացիայի մասնակցության հետ, ուստի կորպորացիայի մասնակցին տրամադրվող տեղեկատվությունը չի կարող վերաբերել կորպորացիայի գործունեության մյուս բնագավառներին, օրինակ՝ արտադրական գործընթացում կիրառվող տեխնոլոգիաներ: Բացի դրանից, կարծում ենք, որ կորպորացիայի մասնակցի կողմից պահանջվող տեղեկատվության տրամադրումը մերժելու գործում էական նշանակություն կունենա տեղեկատվություն ստանալու՝ մասնակցի իրավունքի սահմանների օրենքով նախատեսումը: Նման սահմաններ նախատեսելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի համգամանքներ, ինչպիսիք են՝ կորպորացիայի մարմինները, որոնք պարտավոր են տրամադրել հայց-

վող տեղեկատվությունը, հնարավորություն ունեն բնականոն իրականացնել իրենց աշխատանքը, և կորպորացիայի մասնակցին տեղեկատվությունը պետք է տրամադրվի այնպիսի ծավալով, որպեսզի վնաս չհասցվի կորպորացիայի շահերին:

Յետևաբար, օրենքով պետք է նախատեսվի ոչ միայն այն տեղեկությունների շրջանակը, որոնք չեն կարող տրամադրվել կորպորացիայի մասնակցին, այլև այն հիմքերի սպառնիչ շրջանակը, որոնց առկայության պայմաններում հայցվող տեղեկատվությունը կարող է չտրամադրվել: Օրինակ՝ նման իրավակարգավորում առկա է Գերմանիայում²⁷⁰:

Առաջարկում ենք օրենքով ամրագրել կորպորացիայի մասնակցի պահանջը մերժելու հետևյալ հիմքերը.

- հայցվող տեղեկատվության տրամադրումն արգելված է օրենքով,

- չեն ներկայացվել հայցվող փաստաթղթերի նույնականացման համար անհրաժեշտ տեղեկություններ,

- պահանջը ներկայացրել է այն անձը, ում համար նման տեղեկատվություն տարածելու դեպքում նախատեսված է պատասխանատվություն:

Նշվածը կարող է հանդիսանալ կորպորացիայի մասնակիցների իրավունքների պաշտպանության գործում միջոց, քանի որ կորպորացիայի մարմինները չեն կարողանա անհարկի խուսափել տեղեկատվություն տրամադրելու իրենց պարտականությունից, իսկ կորպորացիայի մասնակիցը նման պահանջով դիմելիս վստահ կլինի, որ առանց օրինական հիմքերի իր պահանջը չի մերժվի:

²⁷⁰ St'u Bergman В. Германское право. Ч. 2. Торговое уложение и другие законы, М., 1996, էջ 84:

2.2.3. Շահույթի բաշխմանը մասնակցության իրավունքը

Կորպորացիայի մասնակցի (բաժնետիրոջ) շահույթի բաշխմանը մասնակցության իրավունքը մասնակցի առանցքային իրավունքներից մեկն է²⁷¹: Որպես կանոն, կորպորացիայում ներդրում կատարելով՝ անձը հետապնդում է դրա գործունեության արդյունքում առաջացած շահույթից ստանալ որոշակի մասնաբաժին:

Շահույթի բաշխմանը մասնակցության իրավունքը բաժնետերերն իրականացնում է իրեն պատկանող բաժնետոմսերին համապատասխան շահութաբաժին ստանալու միջոցով²⁷², իսկ բաժնեմասի սեփականատերերի միջև՝ ըստ ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:

Հարկ ենք համարում նշել, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի տալիս «շահույթ» եզրույթի հասկացությունը, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն օգտագործում է «զուտ շահույթ» և «կուտակված շահույթ» հասկացությունները: Սովորաբար շահութաբաժին են անվանում զուտ շահույթի (այսինքն՝ շահույթ, որը մնացել է բոլոր տեսակի հարկերը և պարտադիր վճարումները կատարելուց հետո) այն մասը, որը բաժնետերերի միջև ենթակա է բաշխման բաժնետիրական ընկերությունում նրանց ունեցած մասնակցության բաժիններին համապատասխան և հաշվարկվում է մեկ բաժնետոմսի դիմաց²⁷³: Բացի

²⁷¹ Այս իրավունքի իրականացման առանձնահատկություններն աշխատանքում քննարկվում են առավելապես բաժնետիրոջ օրինակով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, քանի որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենսդրությունն այս հարցը մանրակրկիտ կարգավորման չի ենթարկում:

²⁷² Տե՛ս Могилевский С. Д. Акционерные общества, изд-во “Дело”, М., 1998, էջ 83:

²⁷³ Տե՛ս Комментарий к федеральному закону об акционерных обществах. изд-во “Юринформцентр”. М., 2002, էջ 240:

դրանից, բաժնետիրական ընկերությունների պարագայում թույլատրվում է շահույթի մեջ ներառել նաև նախորդ տարիներից գոյացած սակայն չվճարված շահույթը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 49, կետ 2):

Շահութաբաժին ստանալու՝ կորպորացիայի մասնակցի սուբյեկտիվ իրավունքն առաջանում է կորպորացիայի համապատասխան մարմնի կողմից շահույթը կորպորացիայի մասնակիցների միջև բաշխելու մասին որոշում կայացնելուց հետո, քանի որ վճարման ենթակա է միայն հայտարարված շահույթը: Շահութաբաժին վճարելու մասին ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի որոշումը հանդիսանում է այն միակ իրավաբանական փաստը, որի հետ կապված է շահութաբաժին ստանալու՝ կորպորացիայի մասնակցի իրավունքը և կորպորացիայի՝ որոշմամբ սահմանված ժամկետներում և կարգով վճարում կատարելու պարտականությունը:

Վ.Վ. Լապտևը գտնում է, որ նախքան կորպորացիայի կողմից համապատասխան որոշում կայացնելը, բաժնետերը (մասնակիցը) շահութաբաժին ստանալու սուբյեկտիվ իրավունք չունի, ինչն էլ նրան թույլ է տալիս խոսելու այս իրավունքի պայմանական լինելու մասին²⁷⁴: Իրոք, գործող իրավակարգավորման պայմաններում, մինչև համապատասխան որոշման կայացումը կորպորացիայի մասնակիցը շահութաբաժին ստանալու իրավունք չունի, իրավունք, որը հնարավոր է իրագործել ռեգուլյատիվ իրավահարաբերությունների շրջանակներում և կարող է պաշտպանվել դատական կարգով, իսկ կորպորացիան էլ չի կրում շահութաբաժին վճարելու պարտականություն:

Բաժնետիրական ընկերություններում շահութաբաժնի չափը՝ կախված բաժնետոմսի տեսակից ու դասից, կարող է տարբերվել: Որոշ հեղինակներ գտնում են, որ բաժնետիրական ընկերության արտոնյալ բաժնետոմսերի դեպքում, որոնց դիմաց վճարման ենթակա շահութաբաժնի չափը կանխորոշված է ըն-

²⁷⁴ Стів Лаптев В. В. Акционерное право. М., 1999, էջ 67:

կերության կանոնադրությամբ, որևէ որոշման ընդունում չի պահանջվում: Ենթադրվում է, որ նման բաժնետոմսերի դեպքում ընկերությունը պարտավոր է դրանց սեփականատերերին վճարել շահութաբաժին: Այն ընկերությունը, որը կիրառարվի նման բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ, կհամարվի իրավախախտ, իսկ բաժնետիրոջ մոտ կառաջանա չհայտարարված շահութաբաժին բռնագանձելու պահանջ ներկայացնելու իրավունք, բացառությամբ, եթե շահույթը վճարվել է մասնակի կամ որոշում է կայացվել ընդհանրապես շահութաբաժին չվճարելու մասին²⁷⁵: Մինչև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ օրենքի ընդունումը, ՌԴ-ում գործում էր Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից 1992 թ. հունվարի 10-ին հաստատված Կանոնակարգը բաժնետոմսերի դիմաց՝ շահութաբաժինների և պարտատոմսերի դիմաց տոկոսների վճարման կարգի մասին, որով նույնպես սահմանված էր, որ հասարակ բաժնետոմսերով շահութաբաժնի վճարումը չի համարվում ընկերության պարտականությունը, իսկ շահույթի առկայության դեպքում, որը բավարար է արտոնյալ բաժնետոմսերով ֆիքսված շահութաբաժին վճարելու համար, ընկերությունն իրավունք չունի հրաժարվել այն բաժնետոմսերի սեփականատերերին վճարելուց: ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշմամբ պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում պետական բաժնեմասից ստացվող շահութաբաժինների վճարման գործընթացը կանոնակարգելու նպատակով կառավարությունը սահմանել է այն դեպքը, երբ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացումն ընդհանուր ժողովի կողմից պարտադիր է, օրինակ՝ 50 տոկոսից ավելի պետության

²⁷⁵ Ст'ю Правовое регулирование деятельности акционерных обществ (Акционерное право), под ред. Е. П. Губина. М., 1998, էջ 152, Правовое регулирование деятельности акционерных обществ: Управление и корпоративный контроль в акционерном обществе/ Под ред. Е. П. Губина, 1999, էջեր 70-74:

սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում բաժնետերերի ընդհանուր ժողովների քվեարկությանն ու հաստատմանն է դրվում պետության մասնակցության դիմաց ստացված զուտ շահույթի 20 տոկոսը որպես տարեկան շահութաբաժին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու հարցը:

Կարծում ենք, որ ՀՀ-ում գործող իրավակարգավորման պայմաններում շահութաբաժիններ վճարելու մասին որոշում չկայացնելու դեպքում բաժնետերը զրկված է դատական կարգով ընկերությունից շահութաբաժիններ պահանջելու իրավունքից: Ավելին, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջն օրենքը հնարավորություն է տալիս նման դեպքերում հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար հիմունքներով մասնակցել ընկերության կառավարմանը, իսկ եթե երեք հաջորդ տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժինները չեն վճարվում՝ բաժնետերը կարող է, ընկերությունը դատական կարգով լուծարելու պահանջով, դիմել դատարան («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հոդվ. 38, կետ 7): Այս խնդրի հետ կապված ՀՀ վճարեկ դատարանը թիվ 3-789 (ՏԴ) գործով կայացված որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաշխման ենթակա շահույթի չափը որոշելն ընկերության բարձրագույն կառավարման մարմնի՝ ընդհանուր ժողովի բացառիկ լիազորությունն է²⁷⁶: Տվյալ գործով՝ առաջին ատյանի դատարանը բավարարել էր հայցվորի պահանջը, որոշել բաշխման ենթական շահույթի չափը (ըստ էության, ժողովի փոխարեն որոշում էր կայացրել շահութաբաժիններ վճարելու մասին) և ընկերությանը պարտադրել էր վճարել այն, այնինչ նշված հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքն ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ լիազորությունն է, այլ ոչ թե դատարանինը: Նշված

²⁷⁶ Տե՛ս ՀՀ վճարեկ դատարանի 18.05.2007 թիվ 3-789 (ՏԴ) քաղաքացիական գործով որոշումը:

գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, ըստ էության, պատասխանել է նաև այն հարցին, թե ընկերության մասնակցի մոտ երբ է ծագում շահութաբաժին ստանալու իրավունքը, այն պայմանավորելով լիազոր մարմնի կողմից համապատասխան որոշում կայացնելու հանգամանքով:

Կան երկրներ, որոնց օրենսդրությունն այս հարցում ցուցաբերել է այլ մոտեցում, օրինակ՝ Անգլիայում և ԱՄՆ-ում բաժնետերն իրավունք ունի դատական կարգով պահանջելու վճարել իրեն հասանելիք շահութաբաժինը նույնիսկ այն դեպքում, եթե ընկերությունը շահութաբաժիններ չի հայտարարել, սակայն կորպորացիայի գործունեությունից շահույթ է գոյացել: Նշված կարգի գործերով հայցվորները պետք է ապացուցեն, որ կորպորացիայում շահութաբաժիններ վճարելու համար անհրաժեշտ ֆոնդն առկա է, այդ ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը, շահութաբաժինների հայտարարելիս տնօրենների կամ հսկիչ փաթեթի սեփականատիրոջ կողմից իրավունքի չարաշահում թույլ տալը²⁷⁷:

Կարծում ենք, որ նման խնդիրների պատճառ է հանդիսանում շահութաբաժինների վճարման հարցում ՀՀ օրենսդրության անկատար լինելը: Մասնավորապես, չի կարելի ընկերության կառավարման մարմիններին հնարավորության տալ, օրինակ, 10 տարի անընդմեջ շահութաբաժիններ վճարելու մասին որոշում չկայացնել և գոյացած շահույթն ուղղել այս կամ այն ծրագրի իրականացմանը, քանի որ նման իրավիճակում կարող է ոտնահարվել փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքները: Պատկերացնենք մի իրավիճակ, երբ խոշոր բաժնետերը միաժամանակ հանդիսանում է ընկերության գործադիր տնօրեն, խորհրդի նախագահ և շահագրգռված չէ շահույթի բաշխման մասին որոշման կայացման հարցում, առանց այդ որոշման ստանում է բարձր աշխատավարձ, պարզավճարներ, զնում է իրեն սպասարկող թանկարժեք ավտոմեքենա, ծառայո-

²⁷⁷ Տե՛ս Мозолин В. П. Корпорации; монополии и право в США. М., 1996, էջ 349:

ղական բնակարան և այլն, իսկ փոքրամասնություն կազմող բաժնետերերը, գործող օրենսդրության պայմաններում, գրկված են նրա այդ գործողությունները վիճարկելու հնարավորությունից:

Առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ, և շահութաբաժիններ վճարելու մասին որոշման չկայացման ժամկետը սահմանափակել երկու տարով: Դրանից հետո ընկերության զարգացմամբ շահագրգռված բաժնետերերը կարող են ստանալ իրենց շահութաբաժինները, թողարկել լրացուցիչ բաժնետոմսեր և կրկին իրենց ներդրումը կատարել ընկերության զարգացման գործում: Կարծում ենք, որ այս եղանակով հնարավոր կլինի հավասարակշռել ինչպես կորպորացիայի, այնպես էլ փոքրամասնություն կազմող և խոշոր բաժնետերերի շահերը:

Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 49, կետ 1, մաս 1): Իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կարող է շահույթի բաշխման մասին որոշում ընդունել բացառապես տարեկան մեկ անգամ («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 24, կետ 1):

Ընկերությունը պարտավոր է վճարել բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի (դասի) համար հայտարարված շահութաբաժինները: Որպես կանոն, շահութաբաժինները վճարվում են դրամով, սակայն կանոնադրությամբ սահմանված դեպքերում շահութաբաժինները կարող են վճարվել նաև այլ գույքով, այդ թվում՝ ընկերության բաժնետոմսերով: Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսվում է շահութաբաժիններն այլ գույքով վճարելու հնարավորություն, ապա անհրաժեշտ է կանոնադ-

րությամբ հստակ սահմանել բաժնետերերին շահութաբաժիններն այլ գույքով վճարելու դեպքերը և կարգը: Կարծում ենք, որ բաժնետիրոջը դրամական տեսքով շահութաբաժնի փոխարեն վճարվող այլ գույք ասելով պետք է հասկանալ շրջանառությունից չհանված և սահմանափակ շրջանառություն չունեցող ցանկացած գույք, և այլ գույքով վճարումներ կատարելու իրավունքի տրամադրումը կարող է բազմաթիվ չարաշահումների տեղիք տալ: Օրինակ, այդ եղանակով ընկերության սեփականությունը հանդիսացող գույքը կարող է դառնալ բաժնետիրոջ կամ բաժնետերերի սեփականությունը, կամ գույքով շահութաբաժին վճարելու մասին որոշումը կայացնելիս կարող է որոշվել բաժնետերերի մի խմբին շահութաբաժինը վճարել գույքի մի տեսակով, մյուս խմբին՝ մեկ այլ տեսակով, օրինակ՝ պատրաստի արտադրանքը հանձնել խոշոր բաժնետիրոջը, իսկ կիսաֆաբրիկատները՝ փոքրամասնություն կազմող բաժնետերերին:

Նման իրավիճակները բացառելու նպատակով առաջարկում ենք գույքով շահութաբաժին վճարելու հնարավորությունը բացառել, եթե կորպորացիայի մասնակիցներից որևէ մեկն առարկում է դրա դեմ:

Շահութաբաժինները վճարվում են ընկերության զուտ շահույթից կամ կուտակված շահույթից: Իսկ որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել ընկերության՝ հատուկ այդ նպատակով ստեղծված հիմնադրամների հաշվից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամսյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը, իսկ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժինների չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժնի չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Իսկ տարե-

կան շահութաբաժինների չափը չի կարող լինել ավելին խորհրդի առաջարկածից և պակաս՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը՝ ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի, սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Իսկ եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի, սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափերից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը չի պատասխանում այն հարցին, թե ինչպես պետք է վարվել այն դեպքում, երբ տարեկան արդյունքներն ամփոփելիս պարզվում է, որ եռամսյակային շահութաբաժինները վճարելուց հետո, ֆինանսական տարվա արդյունքներով, ընկերությունը շահույթ չունի կամ աշխատել է վնասով: Գործող իրավակարգավորման պայմաններում շահութաբաժիններն ստացած բաժնետերերի որևէ պահանջ ներկայացվել չի կարող, բացառությամբ այն դեպքի, երբ կպարզվի, որ որոշումը կայացվել է տվյալ բաժնետիրոջ պարտադիր կատարման ենթակա ցուցումները կատարելու արդյունքում և ընկերությունը հայտնվել է սնանկության եզրին: Նման իրավիճակում ոտնահարվում են կորպորացիայի պարտատերերի, ինչու չէ՞ նաև կորպորացիայի շահերը:

Վերը նշված իրավիճակների առաջացման հնարավորությունը բացառելու նպատակով առաջարկում ենք միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման՝ խորհրդի իրավասությունը սահմանափակել և բաժնետիրական ընկերությանը հնարավորություն ընձեռել շահութաբաժինների

վճարման մասին որոշում կայացնել միայն ֆինանսական տարվա արդյունքներն ամփոփելուց հետո:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշմամբ, բայց ոչ ուշ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ, տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 49, կետ 4):

Գործող օրենսդրությամբ խորհրդին, միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշումը կայացնելուց 10 օր առաջ, շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակ կազմելու իրավասության տրամադրումը, մեր կարծիքով, կարող է խորհրդի անդամներին տարատեսակ չարաշահումներ թույլ տալու հնարավորություն ընձեռել: Օրինակ՝ խորհրդի նախագահը կամ նրա ընկերը, ազգականը միջանկյալ շահութաբաժին վճարելու մասին որոշումը կայացնելուց 7 օր առաջ վաճառել է իր բաժնետոմսերը կամ դրանց մի մասը և առաջարկում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմել որոշումն ընդունելուց 9 օր առաջ: Արդյունքում՝ շահութաբաժինն ստանում է ոչ թե բաժնետոմսի նոր սեփականատերը, այլ նախկին սեփականատերը, ինչը, մեր

կարծիքով, անընդունելի է:

Օրենքը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում շահութաբաժիններ չեն կարող վճարվել: Մասնավորապես, ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե՝ լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը, ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը, որոնք բաժնետիրոջ պահանջով ենթակա են հետգնման ընկերության կողմից, շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հատկանիշներին կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով, ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) վճարման մասին տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի և այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման մասին, որոնց համար սահմանված չէ շահութաբաժնի չափը, եթե որոշում չի ընդունվել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց շահութաբաժիններն ամբողջությամբ վճարելու մասին, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին նաև այն դեպքում, եթե տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, շահութաբաժիններն ամբողջությամբ վճարելու որոշում չի ընդունվել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնք վերոհիշյալ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնահերթության իրավունք են տալիս:

2.2.4. Կորպորացիայի լուծարման դեպքում ընկերության գույքից որոշակի բաժին ստանալու իրավունքը

Լուծարման դեպքում ընկերության գույքից որոշակի բաժին ստանալու իրավունքը ևս բաժնետիրոջ կարևորագույն բացարձակ իրավունքներից է²⁷⁸, որի իրականացման հարցում էական նշանակություն ունի անձի արտոնյալ կամ հասարակ բաժնետոմսի սեփականատեր լինելու հանգամանքը:

Պարտատերերի հանդեպ լուծարվող ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարային հանձնաժողովը, ժողովի կողմից հաստատված պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգին²⁷⁹ համապատասխան, բաժնետերերի միջև բաշխում է հետևյալ հաջորդականությամբ.

- առաջին հերթին կատարվում են վճարումներն այն բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն բաժնետերերի պահանջով²⁸⁰,
- երկրորդ հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները,
- երրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները,

²⁷⁸ Լուծարման ընթացքում ի հայտ եկող հիմնախնդիրներին մենք առավել մանրամասն անդրադարձել ենք սույն աշխատության 1-ին գլխի 4-րդ պարագրաֆում: Այս պարագրաֆի շրջանակներում հիմնականում անդրադարձ կկատարվի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը բաժնետերերի միջև բաշխելու հաջորդականության հետ կապված հիմնախնդիրներին:

²⁷⁹ Բաշխման կարգի հետ կապված խնդիրներին մենք առավել մանրամասն անդրադարձել ենք սույն աշխատանքի 1-ին գլխի 4-րդ պարագրաֆում:

²⁸⁰ Նման իրավակարգավորումը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին կետին և հասարակ բաժնետոմսի սեփականատիրոջը փաստացի հնարավորություն է տալիս արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալ ընկերության գույքի արժեքից:

- չորրորդ հերթին կատարվում է լուծարվող ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) և բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջև («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29, կետ 1):

Գույքի բաշխումը՝ յուրաքանչյուր հերթով, իրականացվում է նախորդ հերթի բաշխումը լիովին ավարտելուց հետո: Կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսերի առանձին դասերի լուծարային արժեքի վճարումներն իրականացվում են կանոնադրությամբ սահմանված հերթականությամբ, և յուրաքանչյուր հերթի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի լիովին վճարումից հետո:

Եթե ընկերության տրամադրության տակ գտնվող գույքը չի բավարարում արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համամասնորեն: Իսկ եթե ընկերության տրամադրության տակ գտնվող գույքը չի բավարարում կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

Հարկ ենք համարում նշել, որ արտոնյալ բաժնետոմսերի շրջանառության դեպքերը մեր հանրապետությունում սակավաթիվ են²⁸¹, իսկ նման ընկերությունների լուծարման դեպքեր չեն գրանցվել, որի արդյունքում վեր կհանվեին մեր կողմից քննարկվող հիմնախնդիրները:

Խոսելով արտոնյալ բաժնետոմսերի մասին, ինչպես տե-

²⁸¹ Կատարված ուսումնասիրության ընթացքում մեզ հաջողվեց ՀՀ-ում որպես փաստացի շրջանառության մեջ գտնվող արտոնյալ բաժնետոմսեր թողարկած միակ կազմակերպություն ուսումնասիրել «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության փորձը:

սանք, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում օգտագործվում է բաժնետոմսի «լուծարային արժեք» հասկացությունը, որը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետում մեկնաբանվում է որպես ընկերության լուծարման ժամանակ վճարվող արժեք, որի չափը սահմանվում է դրամական տեսքով կամ որպես տոկոսադրույթ՝ այդ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ²⁸²: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրվում է արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ նախապատվության իրավունքը մյուս բաժնետերերի նկատմամբ նախապատվության իրավունքով²⁸³ ստանալ բաժնետիրական ընկերության լուծարումից հետո մնացած գույքի մասը:

Նման իրավակարգավորման պայմաններում հարց է ծագում. արտոնյալ բաժնետոմսի լուծարային արժեքն արդյոք նույնական է լուծարման ժամանակ մնացած գույքից մաս ստանալու իրավունքի հետ, թե՛ ոչ: Օրինակ՝ «Ձարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 6-րդ հոդվածի 7-րդ կետի գ) ենթակետում, որպես նշված նորմերի գործնական կիրառության արդյունք, առկա է հետևյալ ձևակերպումը. արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի բանկի լուծարման դեպքում ստանալ բանկի գույքի

²⁸² Արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող լուծարային արժեքը համարվում է սահմանված նաև այն դեպքում, եթե կանոնադրությամբ նախատեսված է դրա որոշման կարգը:

²⁸³ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք 29-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին կետի համեմատության արդյունքում ակնառու է նշված նորմերի միջև առկա հակասությունը: Մասնավորապես, օրենսգրքով հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հանդեպ սահմանված արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքը օրենքում վերացվել է, և սահմանվել լուծարվող ընկերության մնացած գույքը հասարակ (սովորական) և բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջև բաշխելու հնարավորությունը:

իր հասանելիք մասը²⁸⁴, ընդ որում՝ բանկի լուծարման դեպքում բանկի արտոնյալ բաժնետոմսի լուծարային արժեքը չպետք է պակաս լինի անվանական արժեքի 15 տոկոսից²⁸⁵: Այսինքն, նշվածից կարելի է ենթադրել, որ արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը կարող է ստանալ և իրեն հասանելիք գույքի մասը և բաժնետոմսի լուծարային արժեքը: Սակայն նման դեպքում հարց է առաջանում, թե որն է բաժնետոմսի լուծարային արժեքի առավելագույն չափը և որ դեպքում այն պետք է վճարվի: Կամ տեսականորեն չի բացառվում այն իրավիճակը, երբ արտոնյալ բաժնետոմսեր թողարկելիս որպես լուծարային արժեքի չափ սահմանվի բաժնետոմսի անվանական արժեքի հարյուրապատիկը գերազանցող գումար: Նման իրավիճակում 1000 դրամ վճարած բաժնետերն ընկերության լուծարման դեպքում կարող է ստանալ 100000 դրամ լուծարային արժեքի փոխհատուցում, դրանից հետո էլ մասնակցել մնացած գույքի բաշխմանը: Նման իրավիճակը նախ և առաջ անտրամաբանական է, երկրորդ՝ նման անկատար օրենսդրությունը խոշոր բաժնետերերի համար ստեղծում է իրավունքի չարաշահում թույլ տալու և փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքները ոտնահարելու լայն հնարավորություն: Մենք կիսում ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ բոլոր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը պետք է ամրագրվի ընկերության կանոնադրությունում, որպեսզի կանխվի մեկ հասարակ բաժնետոմս մեկ ձայն սկզբունքի վերացումը²⁸⁶: Բացի դրանից,

²⁸⁴ Ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հստակ չեն տալիս այն չափորոշիչները, որոնց միջոցով կարող ենք որոշել բաժնետոմսի սեփականատիրոջը հասանելիք գույքի մասը: Առաջարկում ենք հստակ ամրագրել այն հանգամանքը, որ բաժնետոմսի սեփականատիրոջը հասանելիք գույքի մասը որոշվում է կանոնադրական կապիտալում նրա ունեցած մասնակցության չափով:

²⁸⁵ Տե՛ս http://armdb.com/images/Documents/Kanonadrutiun_2008.pdf:

²⁸⁶ Տե՛ս Bernard Black, Reinier Kraakman, Anna Tarassova, A Guide to the Russian Law on Joint Stock Companies, Kluwer Law International, 1998, Cambridge, Massachusetts, USA and the Netherlands, էջ 221:

օրենքում պետք է հստակ ամրագրվի այն մոտեցումը, ըստ որի՝ արտոնյալ բաժնետոմսի «լուծարային արժեք» հասկացությունը ներառում է լուծարման դեպքում մնացած գույքից մաս ստանալու արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքը, և լուծարային արժեքի չափը չի կարող գերազանցել պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքի արժեքի և կանոնադրական կապիտալում նրա ունեցած մասնակցության չափի տոկոսային հարաբերակցությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պարտատերերի հանդեպ լուծարվող ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարային հանձնաժողովը բաշխում է բաժնետերերի միջև կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցությանը համաչափ և պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգին համապատասխան՝ հետևյալ հաջորդականությամբ.

առաջին հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները, կատարվում են վճարումներն այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն սույն օրենքի 57-րդ հոդվածին համապատասխան,

երկրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները,

երրորդ հերթին կատարվում են վճարումներն այն հասարակ բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն սույն օրենքի 57-րդ հոդվածին համապատասխան,

չորրորդ հերթին կատարվում է լուծարվող ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի միջև:

§ 2.3. Կորպորացիայի մասնակցի՝ կորպորացիայի կազմակերպատիրավական ձևով պայմանավորված իրավունքները

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց կազմակերպատիրավական ձևերը բազմազան են, ուստի, հաշվի առնելով մեր կողմից ընտրված սույն հետազոտության շրջանակները, կորպորացիայի կազմակերպատիրավական ձևով պայմանավորված կորպորացիայի մասնակցի իրավունքները բաժանվում են բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին պատկանող ինքնատիպ իրավունքների:

Բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ ինքնատիպ իրավունքներն իրենց հերթին պայմանականորեն մեր կողմից բաժանվում են.

- բաժնետիրական ընկերության տեսակով պայմանավորված իրավունքների,

- արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջը պատկանող իրավունքների:

Իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների պարագայում.

- այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնենասը գնելու նախապատվության իրավունքի,

- ցանկացած պահի ընկերությունից դուրս գալու մասնակցի իրավունքի:

2.3.1. Բաժնետիրական ընկերության տեսակով պայմանավորված իրավունքները

Գործող իրավակարգավորման պայմաններում, բաժնետիրական ընկերությունները կարող են լինել երկու տեսակի՝ բաց և փակ²⁸⁷: Բաժնետիրական ընկերության տեսակից ելնելով՝ տարբերվում են բաց և փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը պատկանող իրավունքները:

Փակ ընկերության բաժնետերն ունի այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իրավունքից, ապա ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանցից հրաժարվելու մասին որոշումը կայացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Փակ ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժ-

²⁸⁷ Հարկ ենք համարում կրկին նշել, որ մեր կողմից ընդունելի չէ օրենքով իրավաբանական անձի միևնույն կազմակերպատիրավական ձևի տարբեր տեսակների նախատեսումը: Կարծում ենք, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպատիրավական ձևի առկայության, ինչպես նաև օրենքով որոշակի խումբ հարաբերությունները կանոնադրությամբ բաժնետերերի կողմից կարգավորելու հնարավորության ընձեռնան պայմաններում փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրելու ցանկություն ունեցող անձինք իրենց պահանջումներն առավել արդյունավետ կկարողանան բավարարել սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերության կազմակերպատիրավական ձևերի առկայության պայմաններում:

նետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի իրականացման կարգը և ժամկետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ: Սակայն նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կարող բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից 30 օրից պակաս և 60 օրից ավելի լինել:

Հարկ ենք համարում նշել, որ նախապատվության իրավունք նախատեսող նորմն ըստ էության ունի ձևական բնույթ և պրակտիկայում հեշտությամբ շրջանցվում է: Մասնավորապես, նախապատվության իրավունքը գործում է միայն բաժնետոմսերի վաճառքի դեպքում: Այսինքն, բաժնետոմսերը վաճառելուց բացի, այլ գործարքների միջոցով օտարելիս (նվիրատվություն, փոխանակություն) փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերը բաժնետոմսերը ձեռք բերելու հնարավորությունից զրկվում են: Բացի դրանից, միանշանակ կարող ենք նշել, որ Հայաստանի Հանրապետությունում գործող փակ բաժնետիրական ընկերությունների ճնշող մեծամասնության կանոնադրությունները կազմված են արդարադատության նախարարի կողմից հաստատված կանոնադրությունների տիպային ձևերի հիման վրա, որոնցով բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման կարգը սահմանված չէ, այլ բառացի արտացոլված է օրենքի նորմը: Այս առումով հետաքրքրական է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ 3-2027 (ՎԴ) քաղաքացիական գործով կայացված որոշումը և գործի նախապատմությունը²⁸⁸:

Դիմելով դատարան՝ հայցվորը խնդրել է կողմերի միջև կնքված «Ավտոմատիկա ԳՀԻ» ՓԲ ընկերության բաժնետոմսերի նվիրատվության և առուվաճառքի պայմանագրերը ճանաչել անվավեր և իրեն վերապահել իր՝ որպես բաժնետիրոջ, դրանք զնելու նախապատվության իրավունքը՝ իրեն փոխանցելով

²⁸⁸ Այդ նասին առավել մանրամասն տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2006թ. սեպտեմբերի 28-ի թիվ 3-2027 (ՎԴ) քաղաքացիական գործով կայացված որոշումը:

գնորդի իրավունքներն ու պարտականությունները:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 18.05.2006թ. վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.07.2006թ. վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ պատասխանողներ Խաչատուր Խաչատրյանի և Արայիկ Կոստանդյանի միջև 2005թ. դեկտեմբերի 5-ին կնքված և նոտարական կարգով վավերացված 99582 հատ 45.86% ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրով, պայմանագրի նույն պայմաններով գնորդի իրավունքները և պարտականությունները փոխանցվել են հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանին²⁸⁹:

Գործով վճռաբեկ բողոք ներկայացրած պատասխանողներ Արայիկ Կոստանդյանը, Խաչատուր Խաչատրյանը և Վարդգես Վարդերեսյանը խնդրել են բեկանել (ուժը կորցրած ճանաչել) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.07.2006թ. վճիռը և օրինական ուժ տալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 18.05.2006թ. թիվ 2/1007-2006թ. վճռին: Գործով բողոք է ներկայացրել նաև հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանը և խնդրել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.07.2006թ. վճիռը բեկանել մասնակի՝ նվիրատվության պայմանագրին վերաբերող մասով:

Քննելով վճռաբեկ բողոքները՝ նշված հիմքերի սահմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը պատասխանողների բողոքը բավարարել է հետևյալ հիմնավորումներով.

- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածները երաշխիքային նորմեր են սահմանում ընկերության բաժնետերերի համար ընկերության կողմից

²⁸⁹ Տարօրինակ է այն, որ վերաքննիչ դատարանը բողոքը բավարարելիս ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր բաժնային սեփականության և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47 և 48-րդ հոդվածներով կարգավորվող ընկերության կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման մասին կանոններով, ինչը, մեղմ ասած, զարմանք է առաջացնում: Այս խնդրին մենք առավել մանրամասն կանդիդատուանք սույն աշխատության հաջորդ գլխում:

բաժնետոմսեր թողարկելու դեպքում: Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով տվյալ գործում առկա փաստերը, գտավ, որ տեղի է ունեցել ոչ թե բաժնետոմսերի թողարկում, այլ բաժնետիրոջ կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսերի օտարում: Իրավաբանական հետևանքների առումով այս երկու փաստերը միմյանցից տարբերվում են նրանով, որ բաժնետոմսերի թողարկումը հանգեցնում է ընկերության կանոնադրական կապիտալի մեծացմանը, իսկ բաժնետոմսի օտարումը հանգեցնում է ընկերության մասնակիցների կազմի և/կամ մասնակիցների կողմից տնօրինվող բաժնետոմսերի քանակի փոփոխությանը և ոչ մի կերպ չի հանգեցնում կանոնադրական կապիտալի չափի փոփոխման: Հետևաբար, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածների կանոնները սույն վեճի նկատմամբ կիրառելի չեն:

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի կանոնները կիրառվում են բաժնային սեփականության հարաբերությունների նկատմամբ: Իսկ բաժնային սեփականությունը ենթադրում է գույքի նկատմամբ երկու կամ ավելի անձանց սեփականություն (ընդհանուր սեփականություն): Սույն գործով ընկերության բաժնետոմսերը (որոնցով կատարված գործարքները վիճարկվում են) սեփականության իրավունքով պատկանում են ընկերության համապատասխան բաժնետիրոջը, և դրանց նկատմամբ սեփականության իրավունքը չի պատկանում մեկից ավելի սուբյեկտների (մասնակիցների): Հետևաբար, ծագած իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածը կիրառելի չէ: Վճռաբեկ դատարանը գտավ, որ սույն գործում բացակայում է ընդհանուր սեփականության իրավահարաբերությունների վերաբերող վեճ, ինչը հիմնավորվում է բողոքի երկրորդ հիմքի կապակցությամբ տրված պատճառաբանություններով: Հետևաբար, սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի երկրորդ մասը նույնպես կիրառելի չէ:

- ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ գլխի նորմերը, եկել է այն եզրակացության, որ ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի մասն օտարելու դեպքում թույլ են տրվել մնացած համասեփականատերերի իրավունքների խախտումներ, որոնց վերականգնումը հնարավոր է դարձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով: Նշված հոդվածի 3-րդ մասի տրամաբանությամբ՝ ոչ թե սահմանված կարգի խախտմամբ կնքված գործարքը պետք է անվավեր ճանաչել, այլ ուղղակի պետք է այդ գործարքով գնորդի համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները փոխանցել ընդհանուր սեփականության համապատասխան սեփականատիրոջը:

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերն ունի այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Տվյալ դեպքում առկա է նվիրատվության գործարք, որի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով բաժնետիրոջ նախապատվության իրավունքը սահմանող համապատասխան դրույթը կիրառելի չէ:

- Դատական ակտը փոփոխելիս վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև հետևյալ պատճառաբանությունները. փակ բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի կողմից իրենց բաժնետոմսերն օտարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի երրորդ մասով: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի իրականացման կարգը և ժամ-

կետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ, իսկ նախապատվության իրավունքի ժամկետը չի կարող բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից 30 օրից պակաս եւ 60 օրից ավելի լինել: Տվյալ դեպքում ընկերության կանոնադրության 6.2-րդ կետում բառացիորեն վերարտադրված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված դրույթները, և ամրագրված է միայն բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը (գ.թ. 47): Ընկերության կանոնադրության մեջ բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման կարգի բացակայության պայմաններում բաժնետոմս վաճառող բաժնետերը չուներ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված՝ բաժնետոմսերի վաճառքի մասին ընկերության մնացած բոլոր բաժնետերերին տեղեկացնելու պարտականություն: Ընկերության կանոնադրության մեջ բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման կարգի բացակայության պայմաններում բաժնետոմսերի՝ ընկերության որեւէ բաժնետիրոջը վաճառելը չի կարող համարվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտում, քանի որ փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վաճառքի դեպքում ընկերության մնացած բաժնետերերն օտարվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն ընկերության կամ երրորդ անձի նկատմամբ, այլ ոչ թե միմյանց նկատմամբ:

Այսպիսով, վճռաբեկ դատարանը գտավ, որ հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ պատասխանողներ Արայիկ Կոստանոյանի, Խաչատուր Խաչատրյանի և Վարդգես Վարդերեսյանի վճռաբեկ բողոքը՝ բավարարման:

Նշվածից կարելի է հանգել այն եզրակացության, որ օրենքով իրավաբանական անձի որեւէ կազմակերպահրավական ձևի հետ կապված բաժնետոմսի, փայի կամ բաժնետոմսի ձեռքբերման նախապատվության իրավունք սահմանելու պարագայում,

օրենքով պետք է սահմանել նախապատվության իրավունքի իրականացման արդարացի կարգ, որը թույլ կտա հավասարակշռել բոլոր շահագրգիռ սուբյեկտների շահերը:

Ի տարբերություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի, բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերը մյուս բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունքից չեն օգտվում: Սակայն ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Իսկ բաց բաժանորդագրության միջոցով քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվությունից բաժնետերերն օգտվում են միայն այն դեպքում, եթե բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով, և այդ հնարավորությունը նախատեսված է ընկերության կանոնադրությամբ:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ կանոնադրությամբ սահմանված ժամկետներում²⁹⁰:

Սակայն բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշելու չկիրառել քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխվող բաժ-

²⁹⁰ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի լրջագույն թերություններից է հանդիսանում այն, որ օրենքը հնարավորություն չի ընձեռում թողարկել ածանցյալ արժեթղթեր կամ, այլ կերպ ասած, իրականացնել արժեթղթերի «անուղղակի» տեղաբաշխում, մասնավորապես, խոսքը վերաբերում է բազմաթիվ երկրներում լայն տարածում ունեցող բաժնետոմսերի ձեռքբերման օպցիոններին. այդ մասին առավել մանրամասն տես՝ Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. А. С. Тарасова, М., 1999, էջեր 240-241:

նետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը²⁹¹, ինչպես նաև սահմանել այդ որոշման գործողության ժամկետ, որը չի կարող գերազանցել որոշման ընդունման պահից սկսած մեկ տարին («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 47, կետ 3):

Նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման գործողության ժամկետը սահմանում է ժողովը, բայց որոշման ընդունման պահից ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

Բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման դեպքում ընկերության քվեարկող բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն ընկերության դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի փոխարկումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ պետք է ծանուցվեն վերը նշված նախապատվության իրավունքն իրականացնելու իրենց հնարավորության մասին:

Ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի՝

- տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի մասին,

- տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման գնի (այդ թվում տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող ընկերության բաժնետերերի համար տեղաբաշխման գնի) մասին,

- ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռք բերվող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի որոշման կարգի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետ-

²⁹¹ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ևս նախապատվության իրավունքը ենթարկվում է որոշակի սահմանափակումների:

ների մասին:

Ծանուցումն ստանալուց հետո բաժնետերն իրավունք ունի իրականացնելու իր նախապատվության իրավունքը՝ լրիվ ծավալով կամ մասնակիորեն, քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման մասին ընկերությանը գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

- բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձանց համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը,

- ձեռք բերվող բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի քանակը,

- բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Ծանուցումը բաժնետերը պետք է ներկայացնի ընկերության քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 48):

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հստակ չի կարգավորում այն իրավիճակը, երբ բաժնետոմսերը ձեռք բերելու իրենց իրավունքից բաժնետերերի մի մասը չի օգտվում կամ օգտվում է մասնակիորեն, և նման իրավիճակում կան բաժնետերեր, ովքեր ցանկություն ունեն ձեռք բերել ավելի շատ բաժնետոմսեր: Հարց է ծագում՝ արդյոք կարող են այդ անձինք ձեռք բերել այն բաժնետոմսերը, որոնք ձեռք չեն բերվել մյուս բաժնետերերի կողմից, եթե կարող են, ապա ինչպես պետք է իրականացնեն իրենց այդ իրավունքը: Մեր կողմից «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերությունում 2008 թվականին իրականացված լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման գործընթացի իրավական սպասարկման ժամանակ առաջացած նման իրավիճակը լուծվեց արժեթղթերի թողարկման կարգով, որով, արժեթղթերի թերտեղաբաշխումից

խուսափելու նպատակով, հստակ ամրագրվեց այն բաժնետերերի հնարավորությունը, ովքեր, մյուսների կողմից իրենց բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից չօգտվելու կամ մասնակի օգտվելու դեպքում, կարող էին ձեռք բերել այդ բաժնետոմսերը: Բացի դրանից, թողարկման կարգով սահմանվեց նաև ավել քանակով բաժնետոմսեր ձեռք բերելու ցանկություն ունեցող անձանց հնարավորությունն ավել քանակով ձեռք բերել նորից կանոնադրական կապիտալում իրենց ունեցած մասնակցությանը համամասնորեն: Մասնավորապես, թողարկման կարգով սահմանվեց, որ ավել քանակությամբ բաժնետոմսեր ձեռք բերելու ցանկություն ունեցող անձինք ծանուցման մեջ պետք է նշեն այդ մասին և ավել գումարը փոխանցեն թողարկողի համապատասխան հաշվեհամարին, որից հետո ընկերությունը, հաշվի առնելով ներկայացված պահանջները, վերը նշված սկզբունքով բաժնետոմսերը տեղաբաշխեց բաժնետերերի միջև²⁹²:

Բաժնետերերի վերը նշված նախապատության իրավունքը չի տարածվում ընկերության արտոնյալ բաժնետոմսերի այն սեփականատերերի վրա, ովքեր ծայնի իրավունք են ստացել ելնելով այն հանգամանքից, որ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ որոշում չի կայացվել նրանց շահութաբաժիններ վճարելու մասին կամ որոշում է կայացվել շահութաբաժինները ոչ լրիվ ծավալով վճարելու մասին:

²⁹² Կարծում ենք, որ նկարագրված իրավիճակում, խնդիրները շատ ավելի դյուրին կլուծվեին, եթե օրենքը հստակ կարգավորեր նշված իրավիճակում առաջացող իրավահարաբերությունները:

2.3.2. Արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքները

Թե բաց և թե փակ բաժնետիրական ընկերությունները կարող են թողարկել արտոնյալ բաժնետոմսեր, որոնք դրանց սեփականատերերին տալիս են որոշակի ինքնատիպ իրավունքներ, որոնցից մի քանիսին արդեն անդրադարձել ենք նախորդ պարագրաֆում:

Հարկ ենք համարում նշել, որ գործող օրենսդրությամբ արտոնյալ բաժնետոմսերին վերաբերող իրավակարգավորման խիստ դիսպոզիտիվ բնույթը, որոշակի դեպքերում երկիմաստ ձևակերպումները, ինչպես նաև դրանց սեփականատերերին կանոնադրությամբ ոչնչով չարդարացած, որևէ տրամաբանության մեջ չտեղավորվող արտոնություններ տրամադրելու հնարավորության նախատեսումը հանդիսանում է գործող օրենսդրության թերություններից մեկը, որն իրավունքի չարաշահման լուրջ վտանգ է պարունակում, փոքրամասնություն կազմող բաժնետերերի համար կորպորատիվ կառավարման մեխանիզմները դարձնում է անկանխատեսելի, նամանավանդ այն դեպքում, երբ նման արժեթղթերի թողարկման մասին որոշումը կայացվում է բաժնետիրոջ՝ ընկերությունում մասնակցություն ձեռք բերելուց հետո: Արտոնյալ բաժնետոմսի լուծարային արժեքի հետ կապված խնդիրը մեր կողմից արդեն իսկ ներկայացված է նախորդ պարագրաֆում, իսկ ստորև կներկայացվեն նաև այլ նմանատիպ խնդիրներ:

Արտոնյալ բաժնետոմսերն իրենց սեփականատիրոջը հնարավորություն են տալիս հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի համեմատությամբ օգտվել որոշակի արտոնություններից: Մասնավորապես.

- արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի ստանալու հաստատագրված, երաշխավորված շահութաբաժին,

- ընկերության լուծարման դեպքում մնացած գույքից՝ նախապատվության իրավունքով, մասնաբաժին:

Արտոնյալ բաժնետոմսն արժեթղթի տեսակ է, որը պարունակում է երկու տեսակի արժեթղթերի՝ պարտատոմսին և բաժնետոմսին բնորոշ հատկանիշներ: Չնայած այն հանգամանքին, որ արտոնյալ բաժնետոմսերն ունեն պարտատոմսերի հետ բազմաթիվ նմանություններ, սակայն դրանք պարտատոմսերից տաբերվում են հիմնականում նրանով, որ արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն ընկերության հանդեպ հանդես է գալիս ոչ թե որպես պարտատեր, այլ որպես մասնակից²⁹³: Արտոնյալ բաժնետոմսերը կարող են լինել մի քանի դասերի՝ հաստատագրված և փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլն:

Ընկերության կողմից պարտատոմսերի թողարկման փոխարեն արտոնյալ բաժնետոմսերի թողարկմանը նախապատվություն տալու հիմնական պատճառն այն է, որ ընկերությունը ցանկանում է փոխառու կապիտալի և սեփական կապիտալի հարաբերակցությունը պահել իր համար նախընտրելի մակարդակի վրա, որի արդյունքում նաև չի ավելացնում օրակարգի բոլոր հարցերի շուրջ ձայնի իրավունք ունեցող բաժնետերերի թվաքանակը:

Ընկերությունն արտոնյալ բաժնետոմսեր կարող է տեղաբաշխել միայն այն դեպքում, եթե կանոնադրությամբ այդ հնարավորությունը նախատեսված է: Որպես կանոն, արտոնյալ բաժնետոմսերը ձեռք են բերվում ընկերության հիմնադիրների կողմից, ինչը նրանց հնարավորություն է տալիս երաշխավորված պայմաններով ստանալ շահութաբաժին, միաժամանակ մասնակցել ընկերության կառավարմանը²⁹⁴: Արտոնյալ բաժնետոմսի յուրաքանչյուր դաս դրա սեփականատիրոջը տալիս է

²⁹³ Տե՛ս Фондовый рынок, под ред. Н. И. Берзона, М., 1998, էջ 38:

²⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 40:

նույնական իրավունքներ:

Կանոնադրությամբ պետք է սահմանվի ընկերության կողմից տեղաբաշխվող և հայտարարված յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը: Եթե կանոնադրությամբ նախատեսված չէ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը, ապա դրանց սեփականատերերը հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի հետ շահութաբաժիններ ստանալու հավասար իրավունք ունեն:

Եթե կանոնադրությամբ նախատեսված են արտոնյալ բաժնետոմսերի երկու կամ ավելի դասեր, ապա կանոնադրությամբ պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի համար: Կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ կամ մասնակի չվճարված շահութաբաժինը, որի մեծությունը սահմանված է կանոնադրությամբ, կուտակվում և վճարվում է հետագայում: Կանոնադրությամբ կարող են սահմանվել նաև որոշակի դասերի արտոնյալ բաժնետոմսերի, ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի կամ այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի փոխարկման հնարավորությունները և պայմանները: Բացառությամբ բաժնետոմսերի, արգելվում է արտոնյալ բաժնետոմսերը փոխարկել պարտատոմսերի և այլ արժեթղթերի²⁹⁵: Արտոնյալ բաժնետոմսերը հասարակ (սովորական) բաժնետոմսերով փոխարկելիս ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ, նրանց համաձայնությամբ, պարտավորվի պարտքերը վճարել այլ ձևով:

Որպես կանոն, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատե-

²⁹⁵ St u Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ, М., 2004, т2 115:

րերը բաժնետերերի ընդհանուր ժողովում չունեն ձայնի իրավունք, սակայն որոշակի պայմանների առկայության դեպքում արտոնյալ բաժնետոմսերն իրենց սեփականատերերին տալիս են ձայնի իրավունք: Արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը բաժնետերերի ընդհանուր ժողովին ձայնի իրավունքով կարող է մասնակցել.

- եթե քննարկվում են ընկերության վերակազմակերպման կամ լուծարման հարցերը,

- եթե քննարկվում են կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են այդ դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը, ինչպես նաև այլ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի վճարման հերթականության արտոնությունների տրամադրումը,

- առանձին դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը, որոնց հասանելիք շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, բացառությամբ կուտակային (կումուլյատիվ) արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի, իրավունք ունեն ձայնի իրավունքով մասնակցելու այն ժողովում բոլոր հարցերի քննարկմանը, որը հաջորդում է տարեկան այն ժողովին, որում չի ընդունվել որոշում՝ այդ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարելու մասին, կամ ընդունվել է որոշում՝ դրանք չվճարելու կամ ոչ լրիվ վճարելու մասին: Բաժնետիրոջ այդ իրավունքը դադարում է տվյալ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով շահութաբաժինների առաջին վճարումից հետո,

- առանձին դասերի արտոնյալ կուտակային (կումուլյատիվ) բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ձայ-

նի իրավունքով մասնակցելու այն ժողովում բոլոր հարցերի քննարկմանը, որը հաջորդում է տարեկան այն ժողովին, որում չի ընդունվել որոշում՝ այդ դասի արտոնյալ կուտակային (կուճույրատիվ) բաժնետոմսերի դիմաց բոլոր կուտակված շահութաբաժինները վճարելու մասին, կամ ընդունվել է որոշում՝ դրանք չվճարելու կամ ոչ լրիվ ծավալով վճարելու մասին: Բաժնետիրոջ այդ իրավունքը դադարում է տվյալ դասի արտոնյալ կուտակային (կուճույրատիվ) բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով բոլոր կուտակված շահութաբաժինների վճարումից հետո,

- ընկերության կանոնադրությամբ առանձին դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար կարող է նախատեսվել ձայնի իրավունք, եթե կանոնադրությամբ նախատեսված է նաև տվյալ դասի արտոնյալ բաժնետոմսերի՝ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկման հնարավորություն: Ընդ որում, նման արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերը պետք է ունենա ձայների այնպիսի քանակ, որը չպետք է գերազանցի ձայների այն քանակը, որը նա կունենար արտոնյալ բաժնետոմսերը հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկելու դեպքում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 39):

Եթե արտոնյալ բաժնետոմսն իր սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք, ապա քվեարկող բաժնետոմսերի քանակի հաշվարկման ժամանակ նշված արտոնյալ բաժնետոմսերի տված յուրաքանչյուր ձայն հաշվառվում է որպես առանձին քվեարկող բաժնետոմս («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 68, կետ 1):

Կարծում ենք, որ օրենսդրի կողմից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին, առանց արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքը հաշվի առնելու, հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար հիմունքներով ձայնի իրա-

վունքով օժտելը կանոնադրական կապիտալում կատարված ներդրմանը համաչափ կառավարմանը մասնակցելու սկզբունքի կոպիտ խախտում է, և կարող է հանգեցնել խոշոր բաժնետերերի կողմից փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների ոտնահարմանը: Նման իրավակարգավորման պայմաններում չի բացառվում այն իրավիճակը, երբ 1000 դրամ անվանական արժեք ունեցող 10 հատ արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը 100000 դրամ անվանական արժեք ունեցող 9 հատ հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հետ մեկտեղ հանդես գա ընդհանուր ժողովում և կանխորոշի ժողովի կողմից կայացվող որոշումները, քանի որ ունի ձայների պարզ մեծամասնություն:

Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման դեպքում, որոշմանը դեմ քվեարկած կամ ժողովին չմասնակցած բաժնետերերին պետք է վերապահվի բաժնետոմսի հետզման պահանջ ներկայացնելու իրավունք:

Եթե ընկերությունը երեք հաջորդող տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժինը չի վճարում, ապա տվյալ հանգամանքը կարող է ընկերության դատական կարգով լուծարման հիմք հանդիսանալ:

Որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի ինքնատիպ իրավունքներ մեր կողմից դիտվում են.

- այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասը գնելու նախապատվության և
- ցանկացած պահի ընկերությունից դուրս գալու մասնակցի իրավունքները:

2.3.3. Այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասը զննելու նախապատվության իրավունքը

Սահմանփակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի բաժնեմասը մասնակցից այլ անձանց փոխանցելու գործընթացն ունի որոշակի առանձնահատկություններ, որն իրականացվում է որոշակի ընթացակարգերի պահպանմամբ: Այսպես, ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների: Ընկերության մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձանց օտարել թույլատրվում է, եթե այլ բան նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ: Այսինքն, սահմանփակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցներն այլ մասնակիցների կողմից օտարվող բաժնեմասը ձեռք բերելու իրավունքից օգտվում են միայն այն դեպքում, երբ կանոնադրությամբ նրանց այդ իրավունքն ընձեռված է:

Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) զննելու նախապատվության իրավունքից (բացառությամբ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների եւ ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի): Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը), պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել ընկերությանը՝ նշելով գինն ու վաճառքի մյուս պայմանները: Ընկերությունն այդ մասին գրությամբ՝ պատվիրված նամակով կամ անձամբ հանձնելով, հայտնում է ընկերության մյուս մասնակիցներին: Այն դեպքում, երբ ընկերության մասնակիցները տեղեկացվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ ընկերության կանոնադրությամբ, կամ

Որա մասնակիցների համաձայնությամբ նախատեսված այլ ժամկետում չեն օգտվում գնելու նախապատվության իրավունքից, մասնակցի բաժնեմասը կարող է օտարվել երրորդ անձանց՝ նույն պայմաններով և ոչ պակաս այն գնից, որն առաջարկվել էր մասնակիցներին²⁹⁶:

Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել ընկերության մասնակցի բաժնեմասի (դրա մասի) ձեռքբերման ընկերության նախապատվության իրավունքն այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը: Բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 14):

Մեկ անձից կազմված ընկերության բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը հետաքրքիր իրավական դիրքորոշում է արտահայտել 2010 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ՎԴ/4342/05/09 գործով կայացված որոշմամբ: Մասնավորապես, վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենսդիրն ընկերությանն իրավունք է վերապահել օգտվել ընկերության մասնակցի բաժնեմասը գնելու իր նախապատվության իրավունքից միայն այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը գնելու իրենց նախապատվության իրավունքը: Այսինքն՝ ընկերության մասնակցի բաժնեմասը գնելու՝ ընկերության նախապատվության իրավունքն իրականացվում է այն դեպքում, երբ ընկերությունն ունի մեկից ավելի մասնակից: Հետևաբար, եթե ընկերության մասնակիցը մեկն է, ապա ընկերությանը պատկանող ընկերության մասնակցի բաժնեմասը «Սահմանափակ պա-

²⁹⁶ Ինչպես տեսանք, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների պարագայում, ի տարբերություն փակ բաժնետիրական ընկերությունների, օրենսդիրը նախապատվության իրավունքի իրականացման կարգը օրենքով որոշակիորեն սահմանել է:

տասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով հնարավոր չի լինի բաշխել ընկերության բոլոր մասնակիցների միջև ընկերության այլ մասնակիցներ չունենալու պատճառով: Նման պայմաններում ընկերության մասնակցի բաժնեմասի գնման նախապատվության իրավունքն օրենսդրի կողմից սահմանելն ինքնանպատակ չէ, այլ այն կոչված է ապահովելու և նպաստելու ընկերության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանությանը²⁹⁷:

Վերը նշված գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնեմասի վաճառքի դեպքում ընկերության ցանկացած մասնակից կամ ընկերությունը, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված է ընկերության նախապատվության իրավունքը, իրավունք ունի վեց ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել անվավեր ճանաչել այդ գործարքը, սկսած այն պահից, երբ նրանք իմացել են կամ պարտավոր էին իմանալ խախտման մասին:

Ընկերությունը պետք է գրավոր կերպով տեղեկացվի բաժնեմասի օտարման մասին՝ օտարման փաստը հաստատող ապացույցների ներկայացման հետ մեկտեղ: Բաժնեմասը ձեռք բերողին փոխանցվում են ընկերության մասնակցի՝ մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքները և պարտականությունները («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 15, կետ 3):

Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանափակվել նաև բաժնեմասը, առանց մյուս մասնակիցների համաձայնության, քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին անցնելու հնարավորությունը: Նման դեպքերում բաժնեմասը նշված անձանց անցնելու համար ընկերության մասնակիցների կողմից համաձայնություն չտալը

²⁹⁷ Տե՛ս Թորոսյան Գ. Գ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործնական մեկնաբանություններ, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը, Երևան, 2013, էջեր 98-99:

հանգեցնում է մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով²⁹⁸ դրա վճարման կամ դրա արժեքի հատուցման՝ ընկերության պարտականությանը:

Այն դեպքերում, երբ ընկերության կանոնադրությամբ նախատեսված է, որ կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը նրա ժառանգներին կամ իրավաբանական անձանց իրավահաջորդներին անցնելու համար անհրաժեշտ է ընկերության մասնակիցների համաձայնությունը, այն համարվում է ստացված, եթե ընկերության մասնակիցներին դիմելուց հետո երեսուն օրվա ընթացքում կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ ժամկետներում ստացվել է մասնակիցների գրավոր համաձայնությունը, կամ ոչ մի մասնակցից չի ստացվել գրավոր մերժում:

²⁹⁸ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշված նորմի թերություններին անդրադարձել ենք սույն աշխատության առաջին գլխում:

2.3.4. Ցանկացած պահի ընկերությունից դուրս գալու մասնակցի իրավունքը

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի հաջորդ ինքնատիպ իրավունքը ցանկացած պահի ընկերությունից դուրս գալու իրավունքն է: Ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից՝ անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21):

Այս իրավունքի իրականացման հետ կապված «Ազուր-Քոնփ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ Գոմիդաս Հարությունյանն ընդդեմ «Ազուր-Քոնփ» ՍՊԸ-ի թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործով 2011 թվականի հոկտեմբերի 14-ին կայացված որոշմամբ արտահայտված դիրքորոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ընկերության մասնակցի նշված իրավունքի իրացման համար որևէ նախապայման չի պահանջվում, և դա բացարձակապես կախված է մասնակցի կամահայտնությունից: Սա նշանակում է, որ նշված իրավունքի իրացման հիմքում ընկած չէ այս կամ այն սուբյեկտի պարտականությունը՝ դրսևորելու որոշակի վարքագիծ (գործողություն, անգործություն), որի կատարումն անհրաժեշտ կլինի մասնակցի այդ իրավունքի իրացման համար²⁹⁹:

Այս դեպքում ևս մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու հետ կապված հաշվարկները կատարվում են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով: Մասնավորապես, ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը փոխանց-

²⁹⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

վում է ընկերությանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ LԴ/0891/02/09 գործով 2011 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ արձանագրել է, որ այն պահից, երբ ընկերության մասնակիցը դիմում է ընկերությունից դուրս գալու համար, նրա բաժնեմասերն անցնում են ընկերությանը, իսկ այդ պահից սկսած վերջինս չի կարող ընկերության ընդհանուր ժողովի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով դիմել դատարան, քանի որ վերջինս, այդ բաժնեմասերի նկատմամբ արդեն չունենալով սեփականության իրավունք, չի համարվում ընկերության մասնակից: Միաժամանակ, օրենսդիրը պաշտպանում է ընկերությունից դուրս եկող անձի իրավունքը՝ պահանջելու վճարել իր բաժնեմասի արժեքը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով ՀՀ վերաքննիչ դատարանը հաստատված համարելով հայցվորների՝ 12.09.2007 թվականին ընկերությունից դուրս գալու դիմում ներկայացնելու փաստը, միաժամանակ նշել է, որ չի կարող հիմնավորված համարել հայցվորների՝ ընկերությունից դուրս գալու հանգամանքը, հետևաբար՝ հայցվորների 12.09.2007 թվականին ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացված լինելու պայմաններում վերջիններս համարվում են ընկերությունից դուրս եկած և ընդհանուր ժողովի որոշումները վիճարկելու իրավունք չունեն³⁰⁰: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման տրամաբանությունը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է հավելել, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալը վերջինիս չի զրկում իր բաժնեմասի արժեքը վճարելու դեպքում ընկերության կայացրած որոշումները վիճարկելու կամ գումարի բռնագանձման պահանջ

³⁰⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2011 թվականի թիվ LԴ/0891/02/09 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

ներկայացնելու իրավունքից³⁰¹:

Ընկերությունը պարտավոր է ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում մասնակցին վճարել բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը, որը որոշվում է ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում այն իրավիճակը, երբ մեկ անձից կազմված ընկերության մասնակիցն է ընկերությունից դուրս գալու դիմում ներկայացնում: Գործող իրավակարգավորման պայմաններում, դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասի նկատմամբ նրա սեփականության իրավունքը կդադարի և ընկերությունը կհայտնվի «զխատված» վիճակում, այսինքն՝ կունենանք գոյություն ունեցող իրավաբանական անձ առանց կառավարման բարձրագույն մարմնի՝ մասնակիցների ընդհանուր ժողովի, դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ: Կամ ինչպես պետք է վարվի ընկերությունն այն դեպքում, երբ մասնակցի բաժնեմասի արժեքը վճարելու դեպքում ընկերության մոտ ի հայտ կգան անվճարունակության հատկանիշներ:

Գտնում ենք, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին նման իրավունքի տրամադրումը կարելի է դասել իրավաբանական անձի այս կազմակերպատրավական ձևին բնորոշ ոչ թե առավելությունների, այլ թերությունների շարքը: Մենք կիսում ենք գրականության մեջ արտահայտված կարծիքն առ այն, որ մասնակցի կողմից այդ իրավունքի իրականացումը կարող է վնասել ոչ միայն ընկերության բնականոն տնտեսական գործունեությանը, այլև ընկերության պարտատե-

³⁰¹ Տե՛ս Թորոյան Գ. Գ., նշված աշխատությունը, էջ 101:

րերի շահերը³⁰²: Բացի դրանից, նման սահմանափակումների բացակայության պայմաններում, ընկերության մասնակիցը հեշտությամբ կարող է շրջանցել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված շահույթի բաշխման սահմանափակումները:

Առաջարկում ենք՝ մեկ անձից բաղկացած ընկերությունների պարագայում նման պահանջ ներկայացնելու՝ մասնակցի իրավունքն օրենքով արգելել, իսկ երկու կամ ավելի մասնակցի պարագայում՝ ենթարկել որոշակի սահմանափակումների: Մասնավորապես, ընկերությանն իրավունք վերապահել մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը մերժել, եթե.

- լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը.
- եթե դիմումը ներկայացնելու պահին ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է նրա կանոնադրական կապիտալից և պահուստային ֆոնդից կամ այդ չափից փոքր կդառնա բաժնեմասի արժեքը վճարելու արդյունքում.
- բաժնեմասի արժեքը վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության կամ սնանկության հատկանիշներին կամ դրանք ի հայտ կգան բաժնեմասի արժեքի վճարման հետևանքով:

³⁰² Տե՛ս Могилевский С. Д., Самойлов И. А. Корпорации в России, М., 2006, էջեր 110-111:

§ 2.4. Կորպորացիայի մասնակցի՝ որոշակի հանգամանքների ի հայտ գալով պայմանավորված իրավունքները

Օրենսդիրը կորպորացիայի մասնակիցներին օժտում է նաև այնպիսի իրավունքներով, որպիսիք կարող են ծագել ու իրականացվել բացառապես որոշակի հանգամանքների ի հայտ գալու արդյունքում:

Բաժնետիրական ընկերության դեպքում որոշակի հանգամանքների ի հայտ գալով պայմանավորված բաժնետիրոջ իրավունքները ծագում են.

- որոշակի քանակությամբ բաժնետոմսերի փաթեթ կուտակելու,

- բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման մասին որոշումներ ընդունելու, ընկերության կողմից խոշոր գործարք կնքելու կամ ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու,

- ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման արդյունքում³⁰³:

Իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարագայում որպես այդպիսին հանդես է գալիս ընկերության մասնակցին ընկերությունից հեռացնելու պահանջի իրավունքը:

³⁰³ Անգլո-սաքսոնական իրավական համակարգում բաժնետոմսերի ձեռքբերման և հետզման իրավունքների համարժեքն են հանդիսանում «appraisal rights» կոչվող իրավունքները, այդ մասին առավել մանրամասն տես՝ The Harvard Law School Forum on Corporate Governance and Financial Regulation- Daniel E. Wolf Kirkland, Ellis LLP, Appraisal Rights — The Next Frontier in Deal Litigation? Thursday May 16, 2013, Scott Hirst, Quasi-Appraisal: The Unexplored Frontier of Stockholder Litigation? Tuesday February 21, 2012, Charles M. Nathan, Latham, Watkins LLP, Appraisal Arbitrage: Will It Become a New Hedge Fund Strategy?, Wednesday May 23, 2007 և այլն <http://blogs.law.harvard.edu/corpgov/2013/05/16/appraisal-rights-the-next-frontier-in-deal-litigation/>:

2.4.1. Որոշակի քանակությամբ բաժնետոմսերի փաթեթ կուտակելու արդյունքում բաժնետիրոջ մոտ ծագող իրավունքները

Կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համպատասխան օրենսդիրը կորպորացիայի մասնակիցներին օժտում է հավելյալ իրավունքներով, օրինակ.

- ընկերության այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) համատեղ տնօրինում է (են) ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսին, իրավունք ունի (ունեն) խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության և տնօրինության անդամների, ինչպես նաև կառավարիչ կազմակերպության կամ կառավարչի դեմ հայցով դիմել դատարան՝ ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 90, կետ 5),

- ընկերության այն բաժնետերը (բաժնետերերը), ով (ովքեր) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն երկու տոկոսի սեփականատեր է (են), ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա կամ կանոնադրությամբ սահմանված այլ, ավելի երկար ժամկետի ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել խորհրդի և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամության թեկնածուներ, որոնց թվաքանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված թվաքանակը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 72, կետ 1),

- ընկերության այն բաժնետերերը, որոնք գրանցված են ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին, ծանոթանալու նպատակով կարող են ընկերությունից պահան-

ջել ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 70, կետ 5, մաս 1),

- ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով կարող է գումարվել արտահերթ ժողով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 74, կետ 1, մաս 1): Ընդ որում, արտահերթ ժողով գումարելու մասին ներկայացված պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը,

- ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը (բաժնետերերը), ցանկացած ժամանակ, կարող է (են) պահանջել, որպեսզի վերստուգող հանձնաժողովն իրականացնի ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 91, կետ 2, մաս 1),

- ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով կարող է իրականացվել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում հաշվեքննիչի (աուդիտորի) կողմից: Այդ դեպքում հաշվեքննիչի (աուդիտորի) ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 92, կետ 1, մաս 3),

- 25 տոկոսից ավելի քվեարկող բաժնետոմսեր ունեցող բաժնետերը կարող է արգելափակել բոլոր այն որոշումները, որոնց կայացման համար պահանջվում է ձայների 3/4-ը,

- 50 տոկոսից ավելի քվեարկող բաժնետոմսեր ունեցող բաժնետերը կարող է կանխորոշել ընդհանուր ժողովի կողմից կայացվող որոշումների ճնշող մեծամասնությունը, եթե, իհարկե, ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ

չի պահանջվում,

- 75 տոկոսից ավելի քվեարկող բաժնետոմսեր ունեցող բաժնետերը կարող է որոշումներ կայացնել ընկերության համար կենսական նշանակություն ունեցող հարցերի շուրջ (լուծարում, վերակազմակերպում և այլն), եթե, իհարկե, ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ չի պահանջվում,

- 100 տոկոսից ավելի քվեարկող բաժնետոմսեր ունեցող բաժնետերը կարող է միանձնյա կանխորոշել ընդհանուր ժողովի կողմից կայացվող բոլոր որոշումները³⁰⁴:

Հարկ ենք համարում նշել, որ հաճախ ընկերության կառավարման մարմինները կամ խոշոր բաժնետերերը բաժնետոմսերի որոշակի փաթեթի տիրապետող փոքրամասնություն կազմող բաժնետերերին խոչընդոտում են իրենց իրավունքների իրականացման հարցում: Եվ դրա հիմնական պատճառը կայանում է նրանում, որ նշված իրավունքները հիմնականում ունեն դեկլարատիվ բնույթ և դրանց խախտման համար որևէ սանկցիա նախատեսված չէ:

Ավելին, երբեմն դատարանների կողմից է այդ իրավունքների հարկադիր կարգով իրականացման հնարավորությունը սահմանափակվում: Օրինակ՝ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԵԴ/0248/02/11 քաղաքացիական գործով կայացված վճռով դատարանը մերժել է «Մետաղական կառուցվածքների գործարան» բաց բաժնետիրական ընկերության բաժնետեր, ընկերության քվեարկող բաժնետոմսերի 7 տոկոսից ավելիի սեփականատեր Արտեմ Մկրտչյանի պահանջը, որով վերջինս պահանջել էր, որպեսզի դատարանն ընկերությանը հարկադրի թույլ տալ իր կողմից ընտրված աուդիտորներին մուտք գործել ընկերություն և իր հաշվին իրականացնել աուդիտ: Դատարանը հայցապահանջը մերժել է այն պատճառաբանությամբ, որ ընկերություն-

³⁰⁴ Նման ընկերությունները համարվում են մեկ անձից կազմված ընկերություններ, որոնց կառավարման կարգի նկատմամբ գոյություն ունեն որոշակի առանձնահատկություններ:

նում աուդիտ արդեն իսկ անցկացվել է, ուստի կրկին աուդիտ անցկացնելու անհրաժեշտություն չկա³⁰⁵:

Հարկ ենք համարում նշել, որ օրենսդիրը, բաժնետիրոջը նման իրավունք վերապահելով, փորձում է ոչ թե լուծել ընկերությունում պարտադիր աուդիտ իրականացնելու խնդիրը, այլ այդ իրավունքը բաժնետիրոջ համար լրացուցիչ գործիք է՝ իր համար վստահելի աղբյուրից ընկերության գործունեության մասին ստանալ հավաստի տեղեկատվություն: Կարծում ենք, որ նման դատական պրակտիկան անհարկի խոչընդոտում է բաժնետիրոջ իրավունքների իրականացմանը և վկայում է դատարանի կողմից օրենքի սխալ կիրառման փաստի մասին:

³⁰⁵ Տե՛ս Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԷԴ/0248/02/11 քաղաքացիական գործով 2012 թվականի ապրիլի 3-ի վճռը:

2.4.2. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման մասին որոշումներ ընդունելու, ընկերության կողմից խոշոր գործարք կնքելու կամ ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու արդյունքում բաժնետիրոջ՝ ծագող իրավունքները

Բաժնետիրական ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող անձինք իրավունք ունեն ընկերությունից պահանջելու իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում:

Հետգնման իրավունքի տրամադրումը նպատակ ունի պաշտպանել, որպես կանոն, փոքրամասնություն կազմող, քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և երաշխավորում է նրանց ազատ կամահայտնությամբ իրենց պատկանող բաժնետոմսերը տնօրինելու իրավունքը³⁰⁶: Ընկերության քվեարկող (ձայնի իրավունք տվող) բաժնետոմս է համարվում այն հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսը, որը դրա սեփականատիրոջը ձայնի իրավունք է տալիս ժողովի օրակարգում ընդգրկված հարցերով քվեարկության ժամանակ³⁰⁷: Բաժնետերերի այդ իրավունքը ծագում է հետևյալ դեպքերում.

- երբ որոշում է ընդունվում ընկերության վերակազմակերպման մասին:

Ընկերության վերակազմակերպման մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ չի պահանջվում:

³⁰⁶ Ст'ю Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. М. Ю. Тихомирова, М., 2002, т. 361:

³⁰⁷ Ст'ю Могилевский С. Д. Акционерные общества, М., 1998, т. 92:

Այն դեպքում, երբ բաժնետերերն ընկերության վերակազմակերպմանը դեմ են քվեարկել կամ այդ հարցով քվեարկությանը չեն մասնակցել, ծագում է նրանց՝ ընկերությունից բաժնետոմսերի հետզնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզնում պահանջելու իրավունքը:

- Երբ որոշում է ընդունվել նախապատվության իրավունքի կասեցման մասին:

Ինչպես արդեն նշվեց, բաժնետիրական ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց ունեցած բաժնետոմսերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 47, կետ 1, մաս 1): Այն դեպքում, երբ ժողովը որոշում է ընդունում այդ նախապատվության իրավունքը չկիրառելու մասին, այն բաժնետերերը, ովքեր դեմ են քվեարկել կամ այդ հարցով քվեարկությանը չեն մասնակցել, իրավունք են ստանում ընկերությունից պահանջել բաժնետոմսերի հետզնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզնում:

- Երբ որոշում է ընդունվել խոշոր գործարք կնքելու մասին: Խոշոր են համարվում՝

ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը³⁰⁸ գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների

³⁰⁸ Հարկ ենք համարում նշել, որ խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը հանդիսանում է ոչ թե պայմանագրում նշված գինը, այլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված գույքի շուկայական արժեքը:

հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը.

բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում ընկերության հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի (բացառությամբ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի) տեղաբաշխումը, որը կազմում է ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 25 և ավելի տոկոսը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 60, կետ 1, մաս 1):

Մենք գտնում ենք, որ որպես խոշոր գործարք պետք է դիտվեն ոչ միայն հասարակ բաժնետոմսերի փոխարկվող, այլ նաև ցանկացած այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսերի թողարկումը:

Բաժնետիրոջ՝ ընկերությունից բաժնետոմսերի հետզման գնի որոշման և իրեն պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզման պահանջի իրավունքը ծագում է միայն այն դեպքում, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, և տվյալ բաժնետերը դեմ է քվեարկել կամ այդ հարցով քվեարկությանը չի մասնակցել:

- Երբ որոշում է կայացվել ընկերության կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ կատարելու մասին, կամ հաստատվել է նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունում է ժողովը կամ խորհուրդը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված է այդ իրավասությունը», իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետով լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալն ավելացնելու իրավունքը ներկայացվում է որպես ընդհանուր ժո-

ղովի բացառիկ իրավասություն: Օրենսգրքի 115-րդ հոդվածը կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելը ևս դասում է ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունների շարքը: Ուստի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի միջև հակասությունն ակնհայտ է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին կետի 2-րդ մասի համաձայն այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն օրենսգրքին):

Բացի դրանից, նշված իրավակարգավորման պայմաններում, տնօրենների խորհրդի կողմից կանոնադրական կապիտալի չափն ավելացնելու մասին որոշում կայացնելու հնարավորությունը սահմանափակում է բաժնետոմսերի հետգնում պահանջելու՝ բաժնետիրոջ իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք օրենսգրքով նախատեսված կանոնադրական կապիտալի չափի փոփոխման իրավասությունը ժողովի բացառիկ իրավասությունների շարքից հանել, իսկ 112-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի ընդհանուր ժողովի որոշմամբ, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում նաև տնօրենների խորհրդի որոշմամբ ավելացնել կանոնադրական կապիտալը բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով»: Բաժնետերերի իրավունքների պաշտպանության նկատառումներով՝ այն դեպքերում, երբ վերը նշված հանգամանքների առկայության պայմաններում կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները սահմանափակում են բաժնետերերի իրավունքները, և այդպիսի փոփոխությունները կատարվել են տնօրենների խորհրդի որոշմամբ, ապա նման դեպքերում ևս իրավունքները սահմանափակված բաժնետերերին պետք է հնարավորություն տրվի պահանջել բաժնետոմսերի կամ դրանց մասի հետգնում: Իսկ տնօրենների խորհրդի անդամ հանդիսացող, որոշմա-

նը կողմ քվեարկած բաժնետերերին նման իրավունքից զրկել, քանի որ նրանք այդ որոշմանն արդեն իսկ կողմ են քվեարկել:

Կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ կատարելու մասին որոշում ընդունելու կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու արդյունքում բաժնետերերի՝ ընկերությունից իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզնման պահանջի իրավունքը ծագում է միայն այն դեպքում, երբ դրա հետևանքով սահմանափակվում են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Ընկերությունից իրենց պատկանող բաժնետոմսերի հետզնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգում ընդգրկվել են հարցեր, որոնց վերաբերյալ որոշման ընդունումը կարող է հանգեցնել բաժնետերերի վերը նշված իրավունքների սահմանափակումների («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 57, կետ 2):

Կարծում ենք, որ օրենքում պետք է նշվեր ոչ թե «ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի» արտահայտությունը, այլ «ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ քվեարկելու իրավունք ունեցող բաժնետերերի» արտահայտությունը:

Ընկերության կողմից բաժնետոմսերի հետզնումը կատարվում է դրանց շուկայական արժեքով, որը որոշվում է առանց բաժնետոմսի գնահատման և հետզնման պահանջի իրավունք տվող՝ ընկերության գործողությունների հետևանքով առաջացած փոփոխությունները հաշվի առնելու:

Օրենքը սահմանում է ընկերության բաժնետոմսերի հետզնման պահանջի իրականացման հատուկ կարգ: Մասնավորապես, ընկերությունը պարտավոր է բաժնետերերին տեղեկացնել նրանց պատկանող բաժնետոմսերի հետզնման պահանջի իրա-

վունքի ծագման և իրականացման կարգի մասին: Ժողովի իրավիրման մասին ծանուցումը, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց առնչվող քվեարկությունը կարող է հանգեցնել բաժնետոմսերի հետզման պահանջի իրավունքի ծագման, բացի հետզման պահանջի իրավունքի և իրականացման կարգի մասին տեղեկություններից, տեղեկություններ պետք է պարունակի նաև բաժնետոմսերի հետզման գնի մասին, եթե վերջինս սահմանված կարգով մինչ այդ որոշվել է: Ընկերության բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի հետզման դեպքում բաժնետոմսերի շուկայական գինը որոշվում է անկախ գնահատողի կողմից («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 59, կետ 4):

Վերը նշված որոշումների ընդունման պահից յոթնօրյա ժամկետում ընկերությունը պարտավոր է հետզման իրավունք ունեցող բաժնետերերին ծանուցել նրանց՝ ընկերությունից բաժնետոմսերի հետզման պահանջի իրավունքի ծագման և հետզման կարգի մասին:

Այն բաժնետերերը, ովքեր ցանկանում են օգտվել նշված իրավունքից, ընկերությանը ներկայացնում են իրենց պատկանող բաժնետոմսերը հետ գնելու մասին գրավոր պահանջ, որը պետք է տեղեկություններ պարունակի հետզման ներկայացված բաժնետոմսերի քանակի և բաժնետիրոջ բնակության (գտնվելու) վայրի մասին:

Ընդ որում, այդ պահանջն ընկերությանը պետք է ներկայացվի ժողովի կողմից համապատասխան որոշումների ընդունման պահից սկսած ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում: Նշված 45-օրյա ժամկետի ավարտից հետո ընկերությունը պարտավոր է 30 օրվա ընթացքում հետ գնել հետզման գրավոր պահանջ ներկայացրած բաժնետերերի բաժնետոմսերը: Պարտատերերի իրավունքների պաշտպանության տեսանկյունից բաժնետոմսերի հետզմումը կարող է ունենալ նույն անբարենպաստ իրավա-

կան հետևանքները, ինչ շահութաբաժինների վճարումը³⁰⁹ կամ բաժնետոմսերի ձեռքբերումը: Նույնիսկ բաժնետոմսերի հետզհետեան ուղղվող միջոցների գումարի՝ ընկերության զուտ ակտիվների արժեքի 10 տոկոսի չգերազանցման օրենսդրի պահանջը նշված հիմնախնդրի լուծման իրական երաշխիքներ չի ապահովում:

Այս տեսանկյունից, հաշվի առնելով վերը նշված խնդիրները, հետաքրքիր իրավակարգավորում է պարունակում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, որի 36-րդ հոդվածի 7-րդ կետը բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկում մասնակցության հետզհետեան համար պահանջում է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Միաժամանակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում Կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնության տրամադրումը, մասնավորապես, եթե՝

- մասնակցության հետզհետեան դեպքում բանկն ի վիճակի չէ լինի լիովին բավարարել իր պարտատերերի պահանջները.
- կխախտի հիմնական տնտեսական նորմատիվները.
- մասնակցության հետզհետեան կհանգեցնի Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը:

Ուստի առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով բաժնետոմսերի հետզհետեան համար ևս նախատեսել բաժնետոմսերի ձեռքբերման պարագայում նախատեսված բոլոր սահմանափակումները:

Այսպես, ընկերությունն իրավունք չունի ձեռք բերելու իր տեղաբաշխած հասարակ (սովորական) բաժնետոմսերը, եթե՝

- լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը,
- ձեռքբերման պահի դրությամբ ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունա-

³⁰⁹ См. Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. А. С. Тарасова, М., 1999, т. 2 421:

կության (սնանկության) հայտանիշներին, կամ նշված հայտանիշներն ի հայտ կգան բաժնետոմսերի ձեռքբերման հետևանքով,

- բաժնետոմսերի ձեռքբերման պահին ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալի, պահուստային հիմնադրամի և տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի՝ կանոնադրությամբ սահմանված լուծարային արժեքի ու դրանց անվանական արժեքի տարբերության ընդհանուր գումարից կամ կպակասի բաժնետոմսերի ձեռքբերման հետևանքով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 55, կետ 1):

Ընկերությունն իրավունք չունի ձեռք բերելու իր տեղաբաշխած որոշակի դասերի արտոնյալ բաժնետոմսերը, եթե՝

- լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը,
- ձեռքբերման պահի դրությամբ ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին կամ նշված հայտանիշներն ի հայտ կգան բաժնետոմսերի ձեռքբերման հետևանքով,

- բաժնետոմսերի ձեռքբերման պահին ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալի, պահուստային հիմնադրամի և տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի՝ կանոնադրությամբ սահմանված լուծարային արժեքի ու դրանց անվանական արժեքի տարբերության ընդհանուր գումարից, որոնց սեփականատերերը ձեռք բերվող արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ արտոնյալ բաժնետոմսի լուծարային արժեքն ստանալու առաջնահերթության իրավունք ունեն, կամ կպակասի բաժնետոմսերի ձեռքբերման հետևանքով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 55, կետ 1),

- ընկերությունն իրավունք չունի ձեռք բերելու իր տեղաբաշխած բաժնետոմսերը, եթե ինքը հետ չի գնել բոլոր այն բաժնետոմսերը, որոնց հետգնման պահանջ է ներկայացվել օրենքով սահմանված կարգով:

Բացի դրանից, գտնուում ենք, որ նշված սահմանափակումներից բացի բաժնետոմսերի հետզնուումը պետք է արգելվի նաև այն դեպքում, երբ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները չեն վճարվել:

Չուտ ակտիվների արժեքը սահմանվում է ընկերությունից բաժնետոմսերի հետզնուումն իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող որոշումների ընդունման պահի դրությամբ: Եթե բաժնետերերի պահանջով հետզնուումն ենթակա բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցում է այն գումարը, որն ընկերությունը կարող է տրամադրել բաժնետոմսերի հետզնուումն համար, ապա բաժնետոմսերը հետ են գնվում բաժնետերերի ներկայացրած պահանջներին համամասնորեն:

Նշված իրավունքի իրականացման հնարավորության հետ կապված խնդիրներ են առաջանում նաև այն դեպքում, երբ ընկերությունը հետզնուումն իրավունք առաջացնող գործողությունը կատարելուց հետո, մինչ բաժնետիրոջ հետզնուումն պահանջի իրականացումը, ձեռնպահ է մնում այդ գործողության կատարումից կամ հրաժարվում է այն կատարելուց (օրինակ՝ ընկերությունը կայացրել է վերակազմակերպման մասին կամ խոշոր գործարք կնքելու մասին որոշում, սակայն հետագայում այդ որոշումը վերացրել է): «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ դատական պրակտիկան այս հարցի պատասխանը չեն տալիս: Նման իրավիճակում կարելի է համաձայնել ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի այն տեսակետին, ըստ որի՝ հետզնուումն իրավունքը ծագում է համապատասխան որոշման կայացման պահից և ունի կատարման սահմանափակ ժամկետ՝ անկախ հետագայում այդ որոշման փաստացի կատարումից³¹⁰:

Այն դեպքում, եթե բաժնետերերը համաձայն չեն հետզնուումն գնին, իրավունք ունեն ընկերության կողմից բաժնետերերին վճարումը կատարելու սահմանված օրվանից երեք ամսվա ընթացքում բաժնետոմսերի վերագնահատման պահանջով դիմե-

³¹⁰ Ст. 6 Корпоративное право, под ред. И. С. Шиткина, М., 2007, т. 2 386:

լու դատարան:

Հետզհետե քաժնետոմսերը գտնվում են ընկերության տնօրինության ներքո: Այդ քաժնետոմսերը ձայնի իրավունք չեն վերապահում, ձայների հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում և դրանցով շահութաբաժիններ չեն վճարվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման մեկ տարվա ընթացքում, հակառակ դեպքում ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված արժեթղթերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին:

Կարծում ենք, որ արդարացի կլիներ, եթե օրենսդիրն ընկերությանը հնարավորություն ընձեռեր քաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալը նվազեցնելու փոխարեն, զուտ ակտիվների հաշվին, մյուս քաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով կանոնադրական կապիտալը պահպանել նույն չափով կամ մեծացնել: Այս առաջարկի նպատակը կայանում է նրանում, որպեսզի անհարկի, ձևականորեն ընկերության պարտատերերին հնարավորություն չտրվի, կանոնադրական կապիտալի նվազմամբ պայմանավորված, ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

2.4.3. ԸՆԿԵՐՈՒՅՄԱՆ ԵՏԵՂԱՔԱՇԽԱԾ ԲԱԺՄՆԵՏՈՒՄՆԵՐԸ ԾԵՂՔԵՐԵՒԵԼԻՍ ԲԱԺՄՆԵՏԻՐՈՋ ՄՈՒ ԾԱԳՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Բաժնետիրական ընկերության կողմից բաժնետոմսերի ձեռքբերման ներքո ընդունված է հասկանալ գործարք, որի ուժով յուրաքանչյուր բաժնետեր իրավունք է ստանում իրեն պատկանող բաժնետոմսերը վաճառել ընկերությանը, իսկ ընկերությունը պարտավոր է ձեռք բերել դրանք: Ի տարբերություն բաժնետոմսերի հետգնման՝ ձեռքբերման դեպքում ընկերությունը բաժնետոմսերը ձեռք բերելու նախապես ստանձնած պարտականություն չունի, իսկ բաժնետերն էլ իր հերթին բաժնետոմսերը ընկերությանը վաճառելու պարտավորություն չունի³¹¹:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ գործող օրենսդրության պայմաններում, որոշակի իրավիճակներում, որին մենք արդեն իսկ անդրադարձել ենք բաժնետոմսերի կոնսոլիդացմանը վերաբերող խնդիրներն ուսումնասիրելիս, կոտորակային բաժնետոմսերի հետգնումն իրականացվում է մեխանիկորեն, առանց դրանց սեփականատերերի կամահայտնությունը հաշվի առնելու:

Բաժնետոմսերի ձեռքբերումը կարող է իրականացվել կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի, կամ խորհրդի որոշմամբ: Այն կարող է իրականացվել տարբեր շարժառիթներից ելնելով կանոնադրական կապիտալի նվազեցում, փոքրամասնություն կազմող բաժնետերերին ընկերությունից դուրս գալու հնարավորության տրամադրում, բաժնետերերի միջև ընթացիկ տարվա շահույթի բաշխման իրականացման այլընտրանքնային հնարավորություն³¹² և այլն:

Կանոնադրական կապիտալի նվազեցման մասին ժողովի որոշմամբ ընկերությունն իրավունք ունի ընկերության բաժնե-

³¹¹ Տե՛ս Bernard Black, Reinier Kraakman, Anna Tarassova, A Guide to the Russian Law on Joint Stock Companies, Kluwer Law International, 1998, Cambridge, Massachusetts, USA and the Netherlands, էջ 413:

³¹² Այդ մասին առավել մանրամասն տես՝ Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. А. С. Тарасова, М., 1999, էջ 417:

տոմսերի ընդհանուր քանակը պակասեցնելու նպատակով ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը, եթե դա նախատեսված է կանոնադրությամբ: Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցման միջոցով կանոնադրական կապիտալի նվազեցման մասին ժողովի որոշման հիման վրա ձեռք բերված՝ ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը նարվում են դրանց ձեռքբերման ժամանակ:

Ընկերությունն իրավունք ունի ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը խորհրդի որոշմամբ, եթե դա նախատեսված է կանոնադրությամբ³¹³:

Խորհուրդն իրավունք չունի տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման մասին որոշում ընդունել, եթե շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի անվանական արժեքների գումարը կնվազի կանոնադրական կապիտալի 90 տոկոսից³¹⁴:

Խորհրդի որոշմամբ ձեռք բերված տեղաբաշխված բաժնետոմսերը ձայնի իրավունք չեն տալիս, չեն հաշվարկվում ձայների քանակի հաշվարկման ժամանակ և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրաց-

³¹³ Կարծում ենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի թերություններից է նաև այն, որ օրենքը չի կարգավորում ընկերության կողմից թողարկված այլ արժեթղթերն ընկերության կողմից ձեռք բերելու ընթացակարգերը, ինչպես նաև ընկերության կողմից թողարկված արժեթղթերն ընկերությանը հետ վաճառելու պարտականություն ունեցող անձանց կողմից այդպիսիք իրականացնելու գործընթացները:

³¹⁴ Բաժնետոմսերի ձեռքբերման սահմանափակումներին մենք արդեն իսկ անդրադարձել ենք նախորդ իրավունքի քննարկման շրջանակներում: Միայն ցանկանում ենք հավելել, որ կանոնադրական կապիտալի նվազագույն չափի պահանջը վերացնելուց հետո «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասում պահպանվել է նախկին իրավակարգավորման տրամաբանությանը համապատասխանող հետևյալ սահմանափակումը. ընկերությունն իրավունք չունի բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցման նպատակով իր տեղաբաշխած բաժնետոմսերի մի մասի ձեռքբերման միջոցով կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշում ընդունել, եթե շրջանառության մեջ մնացող բաժնետոմսերի անվանական արժեքների գումարը կնվազի օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից:

վեն դրանց ձեռքբերման պահից մեկ տարվա ընթացքում: Հակառակ դեպքում ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի նվազեցման մասին, կամ ձեռք բերված բաժնետոմսերի մարման հաշվին ընկերության մնացած բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման մասին՝ անփոփոխ թողնելով կանոնադրությամբ սահմանված կանոնադրական կապիտալը:

Բաժնետոմսերի ձեռքբերման մասին որոշմամբ պետք է սահմանվեն՝

- ձեռք բերվող բաժնետոմսերի տեսակները և դասերը,
- ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը՝ ըստ դրանց տեսակների և դասերի,
- ձեռքբերման գինը, վճարման ժամկետները և ձևը,
- ժամկետը, որի ընթացքում իրականացվելու է բաժնետոմսերի ձեռքբերումը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 54, կետ 4, մաս 1):

Ընկերության կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են դրամական միջոցներով, իսկ ընկերության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում վճարումները կարող են կատարվել նաև այլ ձևերով: Ժամկետը, որի ընթացքում իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերումը, չի կարող 30 օրից պակաս լինել:

Այն դեպքում, երբ ընկերության կողմից կոնկրետ տեսակի կամ դասի բաժնետոմսերի ձեռքբերման մասին որոշում է կայացվում, ապա յուրաքանչյուր բաժնետեր իրավունք է ստանում իրեն պատկանող բաժնետոմսերը վաճառել, իսկ ընկերությունը պարտավոր է ձեռք բերել դրանք: Ընկերությունը պարտավոր է ընկերության համապատասխան տեսակի և դասի բաժնետոմսեր տնօրինող բաժնետերերին ծանուցել այդ բաժնետոմսերը ձեռք բերելու իր որոշման մասին՝ դրանց ձեռքբերման ժամկետն սկսվելուց առնվազն 30 օր առաջ:

Ընկերության կողմից հասարակ (սովորական) բաժնետոմսերը ձեռք են բերվում դրանց շուկայական արժեքով: Եթե բաժնետերերի հայտերով վաճառքի համար առաջարկվող բաժնետոմսերի քանակը գերազանցում է ընկերության կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի սահմանափակումների հաշվառմամբ ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը, ապա բաժնետոմսերը ձեռք են բերվում ներկայացված հայտերին համամասնորեն³¹⁵ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 54, կետ 4):

Արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերումն իրականացվում է կանոնադրությամբ նախատեսված գնով կամ դրանց շուկայական արժեքով:

Ինչպես բաժնետոմսերի հետգնման, այնպես էլ ձեռքբերման դեպքում պրակտիկայում հաճախակի վեճերի տեղիք է տալիս բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման հարցը: Խնդիրն ավելի է բարդանում բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ, քանի որ անկախ գնահատողի կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման պահանջ օրենսդիրը չի սահմանում, այլ այդ իրավասությունը վերապահում է խորհրդին³¹⁶: Գրականության մեջ ձեռք բերվող բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման իրավասությունը խորհրդին վերապահելը դիտվում է որպես այն բաժնետերերի իրավունքների պաշտպանության մեխանիզմ, ովքեր իրենց բաժնետոմսերի իրական արժեքի վերաբերյալ կարող է իրական պատկերացում չունենան³¹⁷:

³¹⁵ Գտնում ենք, որ պահանջներն ավելին լինելու դեպքում որպես բաժնետոմսերի ձեռքբերման չափորոշիչ պետք է հանդիսանա ոչ թե ներկայացված հայտերի համամասնությունը, այլ յուրաքանչյուր բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի քանակի համամասնությունը:

³¹⁶ Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 59, կետ 4:

³¹⁷ Տե՛ս Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. А. С. Тарасова, М., 1999, էջ 417:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածում գույքի շուկայական արժեք է համարվում, ներառյալ՝ ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի արժեքը, այն զինը, որով գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայներ վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայներ այդ գույքը ձեռք բերել: Իսկ ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ընկերության զուտ ակտիվների արժեքը, ինչպես նաև այն զինը, որն ընկերության բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի համար համաձայն է վճարել ընկերության գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր: Սույն կետով որոշվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է ընկերության զուտ ակտիվների արժեքը հիմք ընդունելով:

Գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի որոշմամբ, բացառությամբ՝

ա) ընկերության բնականոն գործունեության հետ կապված այն դեպքերի, երբ գործարքը կնքվում է Ընկերության ծախսերի և եկամուտների նախահաշվի շրջանակներում.

բ) սույն օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:

Հիսուն և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող ընկերությունում գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի՝ գործարքի կնքմամբ շահագրգռվածություն չունեցող, անկախ անդամների կողմից: Ընկերության բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի գների վերաբերող եւ համապատասխան զանգվածային լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 59):

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում այն դեպքերը, երբ գույքի արժեքը որոշվում է դատարանի կողմից, սակայն գույքի արժեքի վերաբերյալ վեճեր քննելիս դատարանն ստիպված է գնահատել, թե խորհրդի կողմից գույքի շուկայական արժեքը որքանով ճիշտ է որոշված: Օրինակ՝ ՀՀ վճառաբեկ դատարանը թիվ ՀՅՔԴ/0139/02/08 քաղաքացիական գործով 2010 թվականի մարտի 12-ին կայացված որոշմամբ արձանագրեց, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի համաձայն՝ խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով գույքի շուկայական արժեքի որոշումը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խորհրդի անդամները, ընկերության տնօրենը, ինչպես նաև կառավարիչ կազմակերպությունը և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարխիղճ ու ողջամիտ կերպով:

Նշված նորմերի վերլուծության արդյունքում դատարանը եկել է այն հետևության, որ գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի կողմից՝ ելնելով ընկերության շահերից:

Վերաքննիչ դատարանը դատական ակտի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում գույքի շուկայական արժեքի որոշումը, հետևաբար՝ անկախ գնահատողի կողմից տրված եզրակացությունը հիմք չէ շուկայական արժեքի որոշման համար: Մինչդեռ, հիմք ընդունելով վերոգրյալը և գործի փաստերը համադրելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ընկերության խորհրդի կողմից 10.06.2008 թվականին որոշված Կոտայքի մարզի Աղավանձոր գյուղում գտնվող 1,01 հա մակերեսով հողատարածքի՝ 1 քմ հողամասի համար սահմանված շուկայական արժեքը, այն է՝ 1400 ՀՀ դրամ վաճառքի գինը, էականորեն տարբերվում է ոչ միայն գործում առկա «Արթին Էնթերփրայս» ՍՊԸ-ի գնահատման գործակալության 26.01.2009 թվականի հաշվետվությամբ սահմանված հողի շուկայական արժեքից (այն է՝ 62460000 դրամ), այլև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայացված արժեքից (այն է՝ 30164000 դրամ):

Այսինքն, նշված օրինակում ակնհայտ է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը խորհրդի անդամների գործողություններին գնահատական տալու և խորհրդի անդամներից ընկերությանը պատճառված վնասի հատուցման հարցը լուծելու համար, հաշվի առնելով օրենքով տրված շուկայական արժեքի որոշման չափորոշիչները, ստիպված է գնահատել խորհրդի կողմից գույքի շուկայական արժեքի ճիշգրիտ որոշված լինելու հանգամանքը³¹⁸:

³¹⁸ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՀՅԲԴ/0139/02/08 քաղաքացիական գործով 2010 թվականի մարտի 12-ի որոշումը:

2.4.4. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին ընկերությունից հեռացնելու պահանջի իրավունքը

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին ընկերությունից հեռացնելն առավել բարդ կորպորատիվ գործընթացներից մեկն է: Սակայն այս իրավունքն է, որ ընկերության հիմնադիրներին հնարավորություն է տալիս իրենց իրավունքները պաշտպանել այն դեպքում, երբ ընկերության մյուս մասնակիցներն իրենց գործողություններով դժվարացնում կամ անհնարին են դարձնում ընկերության բնականոն գործունեությունը³¹⁹:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն տասը տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:

Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է ընկերությանը, որը պարտավոր է մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը:

Բաժնեմասի արժեքն ինչպես ընկերությունից դուրս գալիս, այնպես էլ հեռացնելիս որոշվում է ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու կամ ընկերությունից հեռացնելու մասին որոշումը կայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապա-

³¹⁹ Стен Колтунов И. В. Исключение участника из общества с ограниченной ответственностью // Акционерное общество: вопросы корпоративного управления, 2008, N 10, <http://koltunov-nn.ru/modules/pages/main/publications/isklyuchenieizooo.html>:

հական հաշվետվությունների հիման վրա: Մասնակցի բաժնեմասը փոխանցվում է ընկերությանը, և ընկերությունը պարտավոր է ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ վեց ամսվա ընթացքում մասնակցին վճարել բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ չրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը:

Ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերությունից դուրս եկող կամ հեռացվող մասնակցին, նրա համաձայնությամբ, կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք: Մասնակցի՝ որպես ավանդ ներդրված գույքի օգտագործման իրավունքն ընկերությունը պահպանում է մինչև օգտագործման իրավունքի ժամկետի ավարտը, եթե ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Այս իրավունքի իրականացման հարցում հիմնական դժվարությունը պայմանավորված է նրանով, որ օրենսդրությունը հստակ չի սահմանում այս գործընթացի իրականացման համար անհրաժեշտ պայմաններն ու չափորոշիչները: Արդյունքում՝ դատարանների կողմից կայացվում են տարաբնույթ, իրար հակասող որոշումներ, ինչը հանգեցնում է մասնակցի իրավունքների պաշտպանության արդյունավետության նվազմանը³²⁰:

Ըստ էության, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանի հայեցողությանն է մնում այս կամ այն գործողությունն ընկերության բնականոն գործունեությունը դժվարացնող կամ անհնարին դարձնող հանգամանքի որոշումը:

Նշված նորմի կիրառման դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որպես ընկերության բնականոն գործունեությունը խոչընդոտող անգործություն դատարանի

³²⁰ Стен Шишкина Е. Исключение участника из ООО // Юридический справочник руководителя, сентябрь 2012, <http://www.delo-press.ru/articles.php?n=10895>:

կողմից համարվել է կանոնադրական կապիտալում լրացուցիչ ներդրումներ չկատարելը և մասնակիցների ընդհանուր ժողովին չմասնակցելը: Այս գործով վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընկերության մասնակցի կողմից ընկերության կանոնադրական կապիտալի համալրման նպատակով որևէ գործողություն չկատարելը, այդպիսով ընկերության բնականոն գործունեությանը խոչընդոտելը, համարվում է նման մասնակցին ընկերությունից հեռացնելու պահանջ ներկայացնելու հիմք, քանի որ առանց ընկերության կանոնադրական կապիտալի համալրման՝ դրա հետագա գործունեությունը և կանոնադրական նպատակների իրականացումը անհնարին է: Բացի դրանից, դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է իրավական գնահատական տա ինչպես կողմերի գործողություններին, այնպես էլ անգործությանը և ընկերության բնականոն գործունեության վրա դրանց հնարավոր ազդեցությանը³²¹:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵՄԴ/1174/02/09 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմամբ կարևորել է այն հանգամանքը, որ նման գործերի լուծման համար էական նշանակություն ունի ընկերության մասնակցի գործողությունների կամ անգործության հետևանքով ընկերության բնականոն գործունեության դժվարացման կամ անհնարինության փաստի առկայությունը, որը պետք է ապացուցի մասնակցին ընկերությունից հեռացնելու մասին պահանջ ներկայացրած անձը³²²:

Կարծում ենք, որ, հաշվի առնելով բաժնետիրական ընկերության կազմակերպիրավական ձևի առանձնահատկությունները, նմանատիպ կառուցակարգի նախատեսումը բաժնետիրական ընկերությունների պարագայում ևս կառավարման ոլոր-

³²¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1270 (ՎԳ) 2007 քաղաքացիական գործով 2007 թվականի օգոստոսի 1-ի որոշումը:

³²² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/1174/02/09 քաղաքացիական գործով 2010 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումը:

տուն մեծապես կբարձրացնի կորպորատիվ բաժնետերերի պատասխանատվության մակարդակը:

Գտնում ենք, որ վերը նշված իրավիճակներից խուսափելու, ինչպես նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց մասնակիցներին իրավունքի չարաշահում թույլ տալու հնարավորությունից զրկելու համար անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հստակ սահմանել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց մասնակիցների պարտականությունները: Մասնավորապես, պետք են սահմանվեն կորպորացիայի մասնակցի հետևյալ պարտականությունները.

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, օրենքով և իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանված կարգով, չափով, ձևով և ժամկետներում մասնակցել կորպորացիայի գույքի ձևավորմանը,

- չիրապարակել կորպորացիայի գործունեության մասին գաղտնիք պարունակող տեղեկություններ,

- մասնակցել կորպորացիայի կողմից կայացվող այնպիսի որոշումների ընդունմանը, առանց որոնց կորպորացիան ի վիճակի չէ օրենքին համապատասխան շարունակել իր հետագա գործունեությունը, եթե տվյալ որոշման ընդունման համար նրա մասնակցությունն անհրաժեշտ է,

- ձեռնպահ մնալ կորպորացիայի շահերին հակասող գործողությունների կատարումից,

- կորպորացիայի մասնակցի համար օրենքով և կանոնադրությամբ կարող են սահմանվել այլ պարտականություններ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Կորպորատիվ իրավաբանական անձանց կառավարման
մարմինները և դրանց տեսակները

§ 3.1. Կորպորատիվ կառավարման ընդհանուր
բնութագիրը և կառավարման մարմինների
հասկացությունը

«Կառավարել» եզրույթը ծագել է լատիներեն administration և gubernare (ղեկավարում, համակարգում) բառերից: Է.Բ. Աղայանի բացատրական բառարանում «կառավարել» բառն ունի շատ լայն իմաստ, այն մեկնաբանվում է որպես գործունեությունը ղեկավարել, վարել, տնօրինել (գործերը), կարգավորել, ուղղության տալ, գործի գցել, բանեցնել և այլ իմաստներով³²³: Իսկ «կառավարել» կատեգորիան բավականին երկար ժամանակահատված է, ինչ հանդիսանում է փիլիսոփայության, տնտեսագիտության, հոգեբանության և կիրառական տնտեսագիտության առարկա: Այն ուսումնասիրվել է նաև իրավագետների կողմից, առավելապես՝ իրավահարաբերությունների հանրային իրավական կարգավորման մասով (սահմանադրական, վարչական և այլն)³²⁴: «Կառավարել» կատեգորիան յուրաքանչյուր գիտություն և հետազոտող, հաշվի առնելով հետազոտության օբյեկտի առանձնահատկությունները, իր առջև դրված նպատակները բնորոշում է յուրովի:

Մեր ուսումնասիրության հետաքրքրության շրջանակներում է «կորպորատիվ կառավարում» կատեգորիայի էության բացահայտումը: Միանշանակ կարելի է պնդել, որ կորպորատիվ կա-

³²³ Տե՛ս Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, ԱԶ, 1976թ., էջ 696:

³²⁴ Տե՛ս Корпоративное право, под ред. И. С. Шиткина, М., 2007, էջ 281:

ռավարման համընդհանուր սահմանում գոյություն չունի: Օրինակ, Վ.Վ. Դոլինսկայան կորպորատիվ կառավարման ներքո հասկանում է իրավանորմերով կարգավորվող կազմակերպական և գույքային հարաբերությունների համակարգ, որոնց օգնությամբ կորպորացիան իրականացնում, ներկայացնում և պաշտպանում է ներդրողների շահերը³²⁵: Ն.Ն. Պախամովան կորպորատիվ կառավարումը, դրա գործառնական տեսանկյունից, դիտում է որպես կորպորատիվ սեփականության հարաբերությունների իրականացման ձև³²⁶: Ս.Դ. Մոզիլսկին տնտեսական ընկերության կողմից իրականացվող կորպորատիվ կառավարումը բնորոշում է որպես սոցիալական կառավարման տարատեսակ, որն իրենից ներկայացնում է տնտեսական ընկերության գործունեության մեջ կորպորատիվ շահերով կամ աշխատանքային պայմանագրերով ներառված անձանց վարքագծի վրա անընդհատ և նպատակաուղղված ազդեցություն³²⁷: Համաշխարհային բանկի կողմից տրված բնորոշման համաձայն՝ կորպորատիվ կառավարումն օրենքների, իրավական այլ ակտերի և մասնավոր հատվածի կանավոր գործունեության այնպիսի միասնություն է, որը ձեռնարկություններին հնարավորություն է ընձեռում ներգրավել ֆինանսական և մարդկային կապիտալ, գործել արդյունավետ և այդպիսով հարատևել՝ իրենց բաժնետերերի համար ստեղծելով երկարաժամկետ տնտեսական արժեք, որը պետք է զուգորդվի շահագրգռված բոլոր կողմերի և, ընդհանուր առմամբ, հասարակության շահերի նկատմամբ ունեցած հարգանքով³²⁸:

³²⁵ Տե՛ս Долинская В. В. Акционерное право: основные положения и тенденции. М., 2006, էջեր 420-421:

³²⁶ Տե՛ս Пахамов Н. Н. Основы теории корпоративных отношений. Правовой аспект, Екатеринбург, 2004, էջեր 420-421:

³²⁷ Տե՛ս Могилевский С. Д. Органы управления хозяйственными обществами. (Правовой аспект), дисс.... д-ра юрид. наук, М., 2001, էջ 166:

³²⁸ Տե՛ս Maassen G. F. An International Comparison of Corporate Governance Models, Elst, the Netherlands, 2000, էջ 1:

Փաստորեն համաշխարհային բանկի կողմից տրված կորպորատիվ կառավարման բնորոշումը շատ ավելի տարածական է և ընդգծում է համաշխարհային տնտեսության զարգացման գործում կորպորատիվ կառավարման կարևորությունը:

Նշված տարողունակ սահմանումների կողքին ամենապարզ և դիպուկ սահմանումներից մեկը տրված է Միացյալ Թագավորության Քեդբլդրիի Կանոնագրքում, համաձայն որի՝ «Կորպորատիվ կառավարումը համակարգ է, որով ընկերությունները ղեկավարվում և վերահսկվում են»³²⁹:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) համընդհանուր ճանաչում գտած ստանդարտներում կորպորատիվ կառավարումը տնտեսական արդյունավետության և աճի բարելավման, ինչպես նաև ներդրողների վստահության ամրապնդման կարևոր տարր է համարվում: Այն դիտվում է որպես ընկերության ղեկավարության, խորհրդի, բաժնետերերի և այլ շահառուների միջև առկա հարաբերությունների համալիր: Կորպորատիվ կառավարումը նաև սահմանում է մեխանիզմներ, որոնց միջոցով ձևավորվում են ընկերության նպատակները, որոշվում են դրանց հասնելու, ինչպես նաև գործունեության վերահսկողության միջոցները: Լավ կորպորատիվ կառավարումը պետք է խթանի, որպեսզի ղեկավարությունը և խորհուրդը ձգտեն հասնելու ընկերության և բաժնետերերի շահերին համապատասխանող նպատակներին, ինչպես նաև նպաստի արդյունավետ վերահսկողությանը³³⁰:

Պատշաճ կորպորատիվ կառավարումն ընկերություններին հնարավորություն է տալիս բարձրացնել իրենց մրցունակությունը, տնտեսական գործունեության արդյունավետությունը և աճը, ներգրավել տնտեսական աճի համար անհրաժեշտ ֆինանսներ,

³²⁹ Տե՛ս «Կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 30.12.2010 թվականի թիվ 1769-Ա որոշումը (ՀՀՊՏ 2011/6 (809) 02.02.11):

³³⁰ Տե՛ս OECD Principles of Corporate Governance, Paris, 2004, էջ 3-4:

ինչպես նաև նպաստել ընկերության գործունեության մեջ օրինական շահ ունեցող շահառուների պաշտպանությանը և նրանց հետ համագործակցությանը:

Կորպորատիվ կառավարումը մեր ուսումնասիրության շրջանակներում ընկալվում է նեղ առումով, այն չի ներառում կորպորացիայի արտադրական գործընթացի կառավարումը, կամ այդ գործընթացի, այսպես կոչված, մենեջմենթը³³¹:

Կորպորատիվ կառավարման հիմնախնդրի ուսումնասիրման գործում էական նշանակություն ունի կորպորատիվ կառավարմանը մասնակցող սուբյեկտների կազմի տարրոշումը:

Նրանց թվին կարելի է դասել.

- կորպորացիային որպես այդպիսին,
- կորպորացիայի հիմնադիրներին (մասնակիցներին),
- կառավարման մարմիններին:

Որոշակի իրավիճակներում նման սուբյեկտների շարքը կարող են դասվել այն անձինք, ովքեր կորպորացիայի վիճակի և դրա զարգացման վրա կարող են ներազդել արտաքուստ՝ չգտնվելով կորպորացիայի ներսում (պետություն, արժեթղթերի պահառու, կորպորացիայի պարտատերեր և այլն):

Կորպորատիվ կառավարման սուբյեկտային կազմի նման բազմազանությունը ենթադրում է տարբեր շահերի առկայություն, որոնց բխումը հաճախ հանգեցնում է կորպորատիվ կոնֆլիկտների:

Է. Բ. Ադայանի բացատրական բառարանում «կոնֆլիկտ» բառը մեկնաբանվում է որպես հակադիր շահերի՝ ձգտումների՝ հայացքների բխում՝ ընդհարում, վեճ, տարածայնություն³³²:

³³¹ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Beasley M. S. An Empirical Analysis of the Relation Between Corporate Governance and Management Fraud, doctoral dissertation, Michigan State University, 1994, Boch F.A.J. van den and Maljers F.A. Strategic Management and Corporate Governance, a Comperativr Approach, Project Description Ph.D. Program, ERASM, Erasmus Rotterdam School of Management, Rotterdam, 1994:

³³² Տես Ադայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, ԱԶ, 1976թ., էջ 757:

«Կոնֆլիկտ» կատեգորիային տեսության մեջ մվիրված են բազմաթիվ աշխատություններ³³³, իսկ Ա. Ա. Դանիելյանի առավել ընդգրկուն բնորոշմամբ՝ կորպորատիվ կոնֆլիկտը վեճ է կորպորացիայի անդամների կամ կորպորացիայի անդամների և կորպորացիայի միջև, որի օբյեկտ են հանդիսանում կորպորատիվ իրավահարաբերությունները, ինչպես նաև այլ իրավահարաբերություններ՝ կապված կորպորացիայի գործունեության կամ կորպորացիայի շահերից բխող պահանջների հետ: Այդ թվում վեճը կորպորացիայի կամ կորպորացիայի անդամների միջև մի կողմից, և այլ անձանց (կորպորացիայի գործադիր մարմինների, ռեեստրավարի, ներդրողների) միջև՝ մյուս կողմից, եթե այն շոշափում է կամ կարող է շոշափել կորպորացիայի ներսում ծավալվող հարաբերությունները, որոնք պայմանավորված են վեճի կողմերի՝ կորպորացիան կառավարելու կապակցությամբ առաջացած հակընդդեմ նպատակներով ու շահերով³³⁴:

Կորպորատիվ կոնֆլիկտներին մասնակից սուբյեկտների կազմը շատ ավելի ընդարձակ է: Մասնավորապես, Ե. Յու. Պաշկովան արդարացիորեն գտնում է, որ կորպորատիվ կոնֆլիկտների սուբյեկտային կազմը որոշելիս անհրաժեշտ է գնահատել կորպորացիայում անձի մասնակցության փաստը: Դա թույլ կտա սուբյեկտների կազմում ընդգրկել նաև այնպիսի անձանց, ովքեր կորցրել են կորպորացիայում մասնակցության իրավունքը այլ անձանց գործողությունների (անգործության) հետևանքով և բողոքարկում են նման գործողությունները: Դատական կարգով լուծման ենթակա կորպորատիվ վեճերի սուբյեկտների կազմում անհրաժեշտ է ընդգրկել նաև այն անձանց, ում վերապահվել են կորպորացիայի կամ նրա անդամների լիազորությունները: Նման սուբյեկտների թվին կարող է դասվել, օրինակ, ընկերության ռեեստրավարը: Այդ սուբյեկտները փաս-

³³³ Ст'и Габов А. В. Сделки с заинтересованностью. Практика акционерных обществ, М., 2004, էջեր 16-20:

³³⁴ Ст'и Даниельян А. А., Корпорация и корпоративные конфликты: Автореф. дисс. ... канд. юрид. наук, М., 2006, էջեր 3, 9:

տացի իրականացնում են կորպորացիայի կամ նրա անդամների իրավունքները կամ պարտականությունները, և դրանց բացառումը կորպորատիվ վեճերի սուբյեկտների շարքից կարող է հանգեցնել դատական ենթակայությունից արժեթղթերի շարժի հետ կապված մի շարք կոնֆլիկտների դուրսբերմանը³³⁵:

Կորպորացիայի տնտեսական գործունեության զարգացման հարցում կոնֆլիկտը կարող է ունենալ ինչպես կառուցողական, այնպես էլ ապակառուցողական դերակատարություն:

Կորպորացիայի մասնակցի պահանջով որոշակի գործողություններ կատարելու պարտականություն ունեցող կորպորացիան³³⁶ այդպիսիք կատարում է ոչ միայն դրանց հարկադիր կատարման և վնասների փոխհատուցում ստանալու երաշխիքների առկայության, այլև բաժնետիրական ընկերության և նրա մարմինների նկատմամբ համապատասխան վարչական սանկցիաների կիրառման սպառնալիքով: Ներկայումս կորպորատիվ իրավահարաբերությունների մեջ մտնելու կարևոր նախապայման է հանդիսանում նման հարաբերությունների վերահսկման համար օրենսդրական խիստ երաշխիքների առկայությունը, ինչպես նաև մասնակիցների իրավունքների ու շահերի պաշտպանության համար հստակ մեխանիզմների նախատեսումը՝ ինչպես դատական, այնպես էլ արտադատական պաշտպանությունը: Երաշխիքների և պաշտպանության նման համակարգի բացակայությունը կամ ոչ արդյունավետ լինելը կնշանակի, որ կորպորատիվ իրավահարաբերություններում որպես ավելի թույլ կողմ հանդես եկող մասնակիցն իր սեփականությունը փոխարինում է կորպորացիայի հանդեպ բավարար չափով չերաշխավորված իրավունքներով: Կորպորացիայի մասնակիցը

³³⁵ Տե՛ս Пашкова Е. Ю. Подведомственность арбитражным судам споров, возникающих из корпоративных правоотношений, М., 2006, էջեր 9-10:

³³⁶ Այդպիսի գործնական օրինակներ մեր կողմից արդեն իսկ ներկայացվել են սույն աշխատության առաջին և երկրորդ գլուխներում:

պետք է ապահովված լինի անհրաժեշտ պաշտպանությամբ, ինչը պայմանավորված է նրա և կորպորացիայի միջև ծավալվող հարաբերությունների յուրահատկությամբ³³⁷:

Կորպորացիայի անդամի սուբյեկտիվ իրավունքն այդ անձի հնարավոր վարքագծի միջոցն է, իրավագոր անձի՝ օբյեկտիվ իրավունքով ճանաչվող իշխանության ոլորտը: Ուստի կորպորատիվ իրավահարաբերություններում սուբյեկտիվ իրավունքը բնութագրելիս անհրաժեշտ է ընդգծել այն իրավական միջոցների կարևորությունը, որոնք իրավագոր անձին հնարավորություն են տալիս իր իրավունքներն իրականացնել այլ անձանցից համապատասխան վարքագծի դրսևորում պահանջելու միջոցով: Օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելու սուբյեկտիվ իրավունքը չի կարող իրագործվել առանց այլ անձանց, մասնավորապես, ընկերության կառավարման մարմիններին համապատասխան գործողությունների, և մասնակցին՝ համապատասխան գործողություններ կատարելուն պարտադրելու հնարավորության ընձեռման:

Կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների նախատեսումը հանդիսանում է կարևոր նախապայման այնպիսի հանրային շահերի հասնելու համար, ինչպիսիք են տնտեսության մեջ մասնավոր ներդրումների ներգրավումը և քաղաքացիական շրջանառությունում հասարակական հարաբերությունների կայունության ապահովումը:

Կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները պայմանավորում են դրանց պաշտպանության ինչպես դատական, այնպես էլ կորպորացիայի, կորպորացիայի անդամների կողմից իրենց իրավունքների չարաշահումներից

³³⁷ Стену Гололобов Д. В. Акционерное общество против акционера: противодействие корпоративному шантажу, М., 2004, էջեր 33-35:

կորպորացիայի և դրա անդամների ինքնապաշտպանության տարբեր ձևերի կիրառման անհրաժեշտությունը: Այդ կապակցությամբ Վ.Վ Դոլինսկայան ընդգծում է, որ կորպորատիվ իրավունքների պաշտպանության ժամանակ տեղի է ունենում իրավունքների պաշտպանության և պահպանության ճյուղային միջոցների ու մեթոդների համատեղում³³⁸:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 16-րդ հոդվածը քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցներին օրենքով չարգելված բոլոր եղանակներով իրենց քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք է տալիս, որի իրականացման եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը և դուրս չգան խափանման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից: Իրավունքների պաշտպանության նման միջոցների նախատեսման համար հիմք է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, որում ամրագրված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

Իրավունքների ինքնապաշտպանությունը կորպորատիվ կոնֆլիկտների կանխման, ինչու չէ՞ նաև լուծման արդյունավետ միջոցներից է: Այն ենթադրում է առանց իրավասու պետական մարմինների դիմելու անձի կողմից օրենքով թույլատրված, ճանաչված կամ չարգելված գործողությունների իրականացում, որոնք ուղղված են իրավախախտումների կանխարգելմանը, ինչպես նաև խախտված սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը: Ինքնապաշտպանության եղանակները կոնկրետ գործողություններ են, գործողությունների համակարգ, որոնք իրականացվում են անձի կողմից իրավախախտումը կանխելու կամ մինչ իրավախախ-

³³⁸ Տե՛ս Դолинская В. В. Акционерное право: основные положения и тенденции. М., 2006, էջ 456:

տոււնը եղած դրութիւնը վերականգնելու համար: Ինքնապաշտպանութիւնից օգտվելը չի բացառում հետագայում իրավասու մարմիններին դիմելու միջոցով իրավունքների պաշտպանութիւնը իրականացնելու հնարավորութիւնը:

Կորպորատիվ իրավահարաբերութիւններում կարելի է առանձնացնել քաղաքացիական իրավունքների պաշտպանութեանը բնորոշ ինքնապաշտպանութեան հետևյալ հատկանիշները.

- ինքնապաշտպանութեան միջոցով իրավունքների պաշտպանութեան կարելի է դիմել իրավունքների խախտման կամ դրանց խախտման իրական սպառնալիքի առկայութեան դեպքում: Կորպորատիվ իրավահարաբերութիւններում, որպէս կանոն, ինքնապաշտպանութեան իրավունքը ծագում է, այսպէս կոչված, «շարունակական» բնույթ կրող իրավախախտումների դեպքում: Օրինակ՝ բաժնետիրական ընկերութիւնից մեծ քանակութեամբ փաստաթղթերի վերաբերյալ մեկանգամյա հարցման դեպքում ինքնապաշտպանութեան միջոցների կիրառումը և տեղեկատվութեան տրամադրումը համարժեք չի դիտվի, չնայած որ նման հարցումը կարող է կատարվել բաժնետիրական ընկերութեան կորպորատիվ և ֆինանսատնտեսական գործունեութեան վրա բացասական ազդեցութիւնը թողնելու նպատակով: Մինչդեռ ժամանակ, եթէ նույնաբովանդակ տեղեկատվութիւնը պահանջվի կրկին անգամ, ապա նման իրավիճակում ընկերութիւնը կարող է դիմել ինքնապաշտպանութեան և նույն գործողութիւնը կրկին չկատարել: Հարկ ենք համարում նշել, որ կորպորատիվ շանտաժ մասնակիցների կողմից իրականացվում է օրենքով վերապահված իրավունքների իրականացման սահմաններում:

- Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանութիւնն իրականացվում է միակողմանիորեն, իսկ կորպորատիվ իրավահարաբերութիւնների ոլորտում այս հատկանիշը ոչ միշտ է դրսևորվում, քանի որ հակազդեցութիւնը կորպորատիվ շան-

տաժին կարող է իրականացվել ոչ միայն ընկերության, այլև ընկերության մասնակիցների կամ նրանց խմբի կողմից:

- Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունն իրականացվում է միայն գործողությունների միջոցով: Տվյալ պնդումը կորպորատիվ իրավահարաբերությունների վրա տարածելն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ այս դեպքում այն կարող է իրականացվել նաև անգործություն դրսևորելու միջոցով, օրինակ, պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց խուսափելով:

- Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությանը բնորոշ է այն, որ կոնկրետ միջոցի կիրառման հնարավորությունը պետք է նախատեսված լինի օրենքով կամ պայմանագրով: Կորպորատիվ իրավահարաբերություններում դա դրսևորվում է մասնակիորեն: Օրինակ՝ գրինմեյլերի (greenmail - կորպորատիվ շանտաժ)³³⁹ գործողությունները համապատասխանում են օրենքի պահանջներին: Եթե կորպորատիվ շանտաժիստը ձեռնարկում է որևէ անօրինական գործողություն, ապա կորպորացիան օրենքով սահմանված կարգով կարող է մերժել նրա պահանջները կամ էլ համապատասխան հայցով դիմել դատարան: Բայց, քանի որ գրինմեյլինգն իրենից ներկայացնում է հենց գործողություն, որն այս կամ այն կերպ կապված է որպես կորպորացիայի մասնակից կորպորատիվ շանտաժիստի իրավունքների չարաշահման հետ, ապա դրանց հակազդեցությունը երբեմն որոշակի պայմաններում ևս դուրս է գալիս օրենքի ձևական պահանջների սահմաններից: Սակայն, որպես կանոն, հակազդեցությանն ուղղված գործողություններն օրենքի շրջանակներից դուրս են գալիս այնքանով, որքանով կորպորացիայի

³³⁹ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Keene A.M. Greenmail, New York, 1986, Governance, Directors and Boards, Edited by M. Ezzamel, Edward Elgar Publishing, 2005, էջ 293, Kester Carl W., Japanese Takeovers: The Global Contest for Control, Washington, 2003, էջ 246 և այլն:

բարեխիղճ անդամի գործողությունները վերածվում են կորպորատիվ շանտաժի:

- Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ժամանակ գործողություններն ուղղված են իրավունքների անձեռնմխելիությանը, իրավախախտումների բացահայտմանը, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանը: Կորպորատիվ իրավահարաբերությունների ոլորտում կորպորացիայի կամ իրենց իրավունքները պաշտպանող մասնակիցների գործողություններն ավելի հաճախ ուղղված են իրավունքների անձեռնմխելիության ապահովմանը, իրավախախտումների բացահայտմանը, քան դրանց հետևանքների վերացմանը: Հետևանքների վերացմանն ուղղված կորպորացիայի գործողությունները, որպես կանոն, կրում են համալիր բնույթ և ուղղված են կորպորացիայի ֆինանսատնտեսական և կորպորատիվ գործունեությունը կայուն մակարդակի վրա պահելուն և կապված չեն կորպորատիվ շանտաժիստի գործողություններին հակազդելու հետ:

- Ինքնապաշտպանությանը բնորոշ է նաև այն, որ իրավունքների ինքնապաշտպանությանն ուղղված գործողությունները կարող են բողոքարկվել դատարան կամ այլ իրավասու մարմիններ: Նշված հատկանիշը միանշանակ կարող է ի հայտ գալ նաև կորպորատիվ իրավահարաբերություններում³⁴⁰:

Կորպորատիվ հսկողությունը, որպես կորպորատիվ կառավարման բաղկացուցիչ մաս և կորպորացիայի գործունեության վրա ազդելու միջոց, հիմնված է կորպորացիայի գործունեությունը ղեկավարելու հնարավորությամբ պայմանավորված կոր-

³⁴⁰ Մենք կիսում ենք գրականության մեջ արտահայտված այն կարծիքը, ըստ որի՝ կորպորատիվ իրավահարաբերություններում ինքնապաշտպանությունը ձեռք է բերում իրականացման հատուկ ձևեր: Վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը հիմք է տալիս պնդելու, որ կորպորատիվ իրավահարաբերություններում ինքնապաշտպանությունն իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ձև է, այլ ոչ թե միջոց. տես՝ Залялова Т. О. Права и обязанности акционера по законодательству Российской Федерации, Иркутск, 2007, էջ 26:

պորացիայի անդամի իրավունքների ամբողջության վրա:

Կորպորատիվ հսկողություն իրականացնելու հնարավորություն ունեցող անձը կարող է ինքնական գործարքի միջոցով կամ այլ եղանակով հսկողության իրավունքը փոխանցել այլ անձի: Արդյունքում ընկերության բաժնետոմսերի հսկիչ փաթեթը ձեռք բերած նոր բաժնետերը բազմաթիվ հայցեր ներկայացնելու միջոցով ծանրաբեռնում է ընկերության գործունեությունը: Այս խնդիրը ներկայումս խիստ արդիական է, քանի որ մշտապես առաջանում են հարյուրավոր կոնֆլիկտներ, որոնցում կողմերը փորձում են կորպորացիայի նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավունք ստանալ: Կորպորատիվ կոնֆլիկտները, որոնք զանգվածային լրատվության միջոցներում ստացել են «կորպորատիվ պատերազմներ» անվանումը, հանգեցնում են խոշորագույն կորպորացիաների գործունեության դադարեցման կամ էլ մեծ վնասներ են հասցնում դրանց սեփականատերերին: Այս կապակցությամբ, գրականության մեջ արտահայտվել է այն տեսակետը, որ անհրաժեշտ է բաժնետոմսերը նոր ձեռք բերած բաժնետիրոջը զրկել բաժնետիրական ընկերության կառավարման մարմինների այն որոշումները կամ գործողությունները բողոքարկելու իրավունքից, որոնք ընդունվել են կամ իրականացվել նախքան բաժնետոմսերի ձեռքբերումը³⁴¹: Կարծում ենք, որ նման մոտեցումն արդարցված չէ և կարող է հանգեցնել բաժնետիրոջ իրավունքների անհարկի սահմանափակման: Գործող օրենսդրությունն արդեն իսկ հնարավորություն է տալիս իրավունքի չարաշահման դեպքում անձին զրկել իրավունքի պաշտպանության հնարավորությունից:

Կորպորատիվ կոնֆլիկտի կողմը կարող է կորպորատիվ կոնֆլիկտը լուծելու համար ընտրել վերը թվարկված և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված մի-

³⁴¹ Ст'ю Гуреев В. А. Проблемы защиты прав и интересов акционеров в РФ, М., 2007, էջ 11:

ջոցներից մեկը կամ մի քանիսը՝ միաժամանակ: Սակայն կորպորատիվ իրավունքների և շահերի պաշտպանության համար առավել արդյունավետ կլինի այն միջոցը, որն ընդունելի է նաև մյուս կողմի համար: Նման իրավիճակում կարելի է համաձայնել Ա. Ն. Կուզբագորովի այն կարծիքին, ըստ որի դատարանի կողմից կորպորատիվ կոնֆլիկտի լուծման՝ օրենսդրությամբ նախատեսված հայեցակարգը փոքր-ինչ ուտոպիստական է³⁴²: Տարիներով ընթացող գործերի քննությունն ստեղծում է մի իրավիճակ, երբ կորպորատիվ կոնֆլիկտը՝ մեծ, թե փոքր, տարիներով մնում է չկարգավորված, իսկ տարիներ անց լուծում ստանալու դեպքում կորցնում է իր արդիականությունը: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ ներկայումս արդիական է կորպորատիվ կոնֆլիկտների լուծման այլընտրանքային եղանակների ներդրումը, որոնց կիրառությունը թույլ կտա իրապես ապահովել կորպորատիվ իրավունքների և շահերի օպերատիվ պաշտպանությունը:

Կորպորացիայի կառավարման գործում էական դերակատարություն ունեն կորպորատիվ կառավարման սկզբունքները: Կորպորատիվ կառավարման սկզբունքներ ասելով հասկանում ենք այն ելակետային դրույթները, որոնք բնութագրում են կորպորացիայի կառավարման գործընթացը: Սկզբունքներն են, որ արտահայտվելով կառավարվող համակարգի բոլոր մակարդակներում՝ կանխորոշում են դրա կազմակերպական հիմքերը, համապատասխան կառավարող սուբյեկտների գործունեության, ինչպես նաև կառավարման օբյեկտի հետ փոխհարաբերությունների բնույթը³⁴³:

Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում կորպորատիվ կառավարման սկզբունքներն օ-

³⁴² Стів Кузбагоров А. Н. Примирение сторон по частноправовым конфликтам как социально-правовое явление в гражданском и арбитражном процессах, СПб, 2006, էջ 50:

³⁴³ Стів Козлов Ю. М., Фролов Е. С. Научная организация управления и право, М., 1986, էջ 82:

րենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված չեն, դրանք արտահայտվում են խորհրդատվական բնույթի փաստաթղթերում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում որպես այդպիսին հանդիսանում է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը»³⁴⁴: Իսկ մասնագիտական գրականության մեջ այդ սկզբունքները ենթարկվում են տարատեսակ դասակարգումների³⁴⁵: Սակայն մեզ համար ընդունելի է և ազգային մակարդակում կորպորատիվ կառավարման սկզբունքների մշակման համար հիմք է հանդիսանում ՏՀԶԿ-ի կողմից մշակված Կորպորատիվ կառավարման սկզբունքները, որոնք ի սկզբանե հրատարակվել են 1999 թվականին և համարվում են կորպորատիվ կառավարման միջազ-

³⁴⁴ Կանոնագիրքը Հայաստանի օրենսդրությամբ չկարգավորված կամ թերկարգավորված որոշակի հիմնախնդիրների վերաբերյալ սահմանում է դրույթներ, որոնք բխում են կորպորատիվ կառավարման լավագույն փորձից:

Ցուցակված և պետական ընկերությունները ֆոնդային բորսայի կանոններով և/կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, իսկ բանկերը, ապահովագրական ընկերությունները և իրավաբանական անձ հանդիսացող ներդրումային ֆոնդերը և այլ ընկերությունները Կանոնագիրքը սեփական նախաձեռնությամբ կիրառելու դեպքում, պարտավոր են կազմել Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիր (ԿԿ Հայտարարագիր) և կցել իրենց տարեկան հաշվետվությանը: ԿԿ Հայտարարագրում ընկերությունները պետք է հստակ նշեն Կանոնագրի դրույթներին իրենց հետևելու մասին կամ բացատրեն չհետևելու պատճառները:

Ընկերությունների՝ «հետևիր կամ բացատրիր» սկզբունքի հիման վրա Կանոնագրի դրույթներին հետևելու և իրենց համապատասխանության մակարդակի մասին տարեկան հաճախականությամբ հայտարարելու պարտավորությունն իրականացվում է տարեկան հաշվետվություններն ընկերությունների կայքէջում հրապարակելու միջոցով:

Կանոնագիրքը չի փոխարինում գործող օրենսդրությունը: Այն սահմանում է կորպորատիվ կառավարման միջազգային լավագույն փորձից բխող չափանիշներ՝ հաշվի առնելով Հայաստանում առկա փորձը և միջավայրը: Ըստ էության, Կանոնագիրքը սահմանում է ավելի բարձր չափանիշներ, քան ամրագրված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

³⁴⁵ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Maassen G. F. An International Comparison of Corporate Governance Models, Elst, the Netherlands, 2000, էջ 79, Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ, М., 2004, էջեր 167-180:

գային ուղենիշ³⁴⁶: Հաշվի առնելով 1999 թվականից հետո տեղի ունեցած զարգացումները՝ ՏՀԶԿ անդամ երկրների կառավարությունները 2004 թվականի ապրիլին հաստատեցին հետևյալ վեց նոր սկզբունքները.

- արդյունավետ կորպորատիվ կառավարման հիմքերի ապահովումը,
- բաժնետերերի իրավունքները և սեփականատերերի հիմնական գործառնությունները,
- բաժնետերերի նկատմամբ հավասար վերաբերմունքը,
- կորպորատիվ կառավարման մեջ շահագրգիռ անձանց դերը,
- տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը,
- խորհրդի իրավասությունները³⁴⁷:

Փաստաթղթում առկա են նաև յուրաքանչյուր սկզբունքին վերաբերող բացատրական ամփոփումներ՝ միջոցառումների շրջանակի նշումով, որոնք նոր սկզբունքների կիրառման համար համարվել են օգտակար:

ՏՀԶԿ սկզբունքները կառուցված են չորս հիմնական արժեքների վրա.

³⁴⁶ Բացի ՏՀԶԿ սկզբունքներից, ներքոհիշյալ փաստաթղթերը ևս կարող են դիտվել որպես կորպորատիվ կառավարման պրակտիկայի բարելավման աղբյուր. Եվրոպական միության հանձնաժողովի առաջարկը ցուցակված ընկերությունների խորհուրդների ոչ գործադիր կամ վերահսկիչ անդամների և խորհրդի հանձնաժողովների վերաբերյալ՝ ընդունված 2005 թվականի փետրվարին, Բանկային վերահսկման Բազելի կոմիտեի «Բանկային կազմակերպությունների կորպորատիվ կառավարման կատարելագործման ուղեցույցը» (2006), «ՏՀԶԿ ուղեցույցը զարգացող շուկաներում ցուցակված ընկերությունների կորպորատիվ կառավարման մասին» (2006), «ՏՀԶԿ ուղեցույցը պետական ընկերություններում կորպորատիվ կառավարման մասին» (2005), ՎՋԵԲ-ՏՀԶԿ Եվրասիայի բանկերի կորպորատիվ կառավարումը. Առաջարկների ժողովածու (2008) տես՝ <http://www.ebrd.com/pages/sector/legal/corporate/standards.shtml>, Եվրոպական միության դիրեկտիվների ժողովածուն (Acquis Communautaire) տես՝ http://ec.europa.eu/internal_market/company/index_en.htm:

³⁴⁷ Տես OECD Principles of Corporate Governance, Paris, 2004, էջ 7:

➤ Արդարություն. Կորպորատիվ կառավարման համակարգը պետք է պաշտպանի բաժնետերերի իրավունքները և ապահովի հավասար վերաբերմունք բոլոր բաժնետերերի, այդ թվում փոքրամասնություն կազմող և օտարերկրացի բաժնետերերի նկատմամբ: Բոլոր բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան արդյունավետորեն վերականգնելու իրենց խախտված իրավունքները:

➤ Պատասխանատվություն. Կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ճանաչի շահառու անձանց՝ օրենքով սահմանված իրավունքները և խրախուսի ընկերությունների և շահառուների ակտիվ համագործակցությունը՝ ուղղված հասարակության բարեկեցության աճին, աշխատատեղերի ստեղծմանը և ֆինանսապես առողջ ընկերությունների կայունությանը:

➤ Թափանցիկություն. Կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ապահովի բոլոր այն էական փաստերի ժամանակին և ճշգրիտ բացահայտումը, որոնք վերաբերում են ընկերությանը, ներառյալ ընկերության ֆինանսական վիճակին, գործունեության արդյունքներին, սեփականության կառուցվածքին և կառավարմանը:

➤ Հաշվետվողականություն. Կորպորատիվ կառավարման համակարգը պետք է լինի ռազմավարական ուղեցույց՝ խորհրդի կողմից ընկերության կառավարման, գործադիր մարմնի գործունեության արդյունավետ վերահսկման, ինչպես նաև ընկերության և նրա բաժնետերերի առջև խորհրդի հաշվետվողականության ապահովման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձինք իրավաբանական անձի կազմակերպահրավական ձևերից են, ուստի «կորպորատիվ տիպի իրավաբանական անձի մարմին» հասկացությունն անխզելիորեն կապված է «իրավաբանական անձի մարմին»³⁴⁸ հասկացության

³⁴⁸ Հարկ ենք համարում նշել, որ անգլիական իրավունքում «իրավաբանական անձի մարմին» հասկացությունը կիրառելի չէ: Այդ մասին առավել մանրամասն տես՝ Дубовицкая Е. А. Европейское корпоративное право, М., 2004, էջ 94:

հետ:

Ինչպես արդեն նշեցինք իրավաբանական անձն իրավունքի արհեստածին սուբյեկտ է, ստեղծված որոշակի նպատակների հասնելու համար³⁴⁹, և իր վերացական լինելու փաստի ուժով այն չի կարող իրագործել ոչ իր իրավունակությունը, ոչ էլ՝ գործունակությունը³⁵⁰: Նշված նպատակներին հասնելն անհնարին կլինի, եթե չձևավորվեն ընկերության կառավարման այնպիսի մարմիններ, որոնք կկարողանան առավելագույնս ապահովել իրավաբանական անձի արդյունավետ գործունեությունը: Նման պայմաններում կարելի է պնդել, որ կորպորատիվ կառավարման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում կորպորացիայի կառավարումը նրա մարմինների, այլ ոչ թե մասնակիցների միջոցով իրականացնելը: Հիմքում ունենալով այս տրամաբանությունը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին կետում սահմանվում է, որ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին, այլ իրավական ակտերին և նրա կանոնադրությանը համապատասխան:

Մասնագիտական գրականության մեջ իրավաբանական անձի մարմինը միշտ դիտարկվում է իրավաբանական անձի և նրա իրավունակության պրիզմայում³⁵¹: Իրավաբանական անձի մարմիններն են, որ ձևավորում և արտահայտում են իրավունքի սուբյեկտի կամքը, որի արդյունքում նրա մարմինների գործողությունները դիտվում են որպես իրավաբանական անձի գործողություններ:

Հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական անձի մարմինը հանդես չի գալիս որպես քաղաքացիական իրավահարա-

³⁴⁹ Տե՛ս Шершеневич Г. Ф. Учебник русского гражданского права, М., 1907, էջեր 89-91:

³⁵⁰ Տե՛ս Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ, М., 2004, էջ 145:

³⁵¹ Տե՛ս Мейер Д. И. Русское гражданское право, ч 2, М., 1997, էջ 126, Трубецкой Е. Н. Энциклопедия права, СПб., 1998, էջ 145 և այլն:

բերությունների ինքնուրույն սուբյեկտ, որպես բոլոր տեսակի իրավահարաբերությունների իրական սուբյեկտ հանդես է գալիս իրավաբանական անձը³⁵², իսկ նրա կառավարման մարմինները, ինչպես արդեն նշվեց, կարող են հանդես գալ որպես կորպորատիվ կառավարման սուբյեկտ:

Նման իրավիճակում կարելի է եզրահանգել, որ եթե իրավաբանական անձի մարմինն իրավունքի ինքնուրույն սուբյեկտ չէ, այլ հանդիսանում է իրավաբանական անձի բաղկացուցիչ մաս կամ առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում, հետևաբար՝ այն չի կարող համարվել ներկայացուցիչ: Այս խնդիրն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Իրավաբանական անձի մարմինները նրա ներկայացուցիչների թվին դասելու հարցում տեսաբանները միասնական կարծիք չունեն: Որոշ հեղինակներ իրավաբանական անձի միանձնյա գործադիր մարմինն դիտարկում են որպես ընկերության բաղկացուցիչ մաս, իսկ հեղինակների մեկ այլ խումբ ենթադրում է, որ, օրինակ, միանձնյա գործադիր մարմինը հանդիսանում է նրա ներկայացուցիչը:

Դեռ 1950-60-ական թվականներին իրավաբանական գրականության մեջ ակտիվ բանավեճ էր ընթանում իրավաբանական անձի մարմինն որպես նրա ներկայացուցիչ ճանաչելու հնարավորության վերաբերյալ³⁵³: Այսպես, որոշ հեղինակներ գտնում են, որ իրավաբանական անձի մարմնի կողմից իր ղեկավարած ձեռնարկության անունից հանդես գալն էականորեն տարբերվում է ներկայացուցչի գործունեությունից³⁵⁴: Առկա այլ

³⁵² Տե՛ս Черепакин Б. Б. Волеобразование и волеизъявление юридического лица, Труды по гражданскому праву, М., 2001, էջ 36:

³⁵³ Տե՛ս Иоффе О. С. Советское гражданское право. Л., 1958, էջ 160, Новицкий И. Б. Советское гражданское право. В 2 т., 1 т., М., 1959, էջ 189:

³⁵⁴ Տե՛ս Черепакин Б. Б. Волеобразование и волеизъявление юридического лица, Труды по гражданскому праву, М., 2001, էջ 479, Грибанов В. П., Корнеев С. М. Советское гражданское право. М., 1961. էջ 209:

տեսակետի համաձայն՝ իրավաբանական անձի մարմինը հանդիսանում է նրա օրինական ներկայացուցիչը. «օրինական ներկայացուցչության տարատեսակ է հանդիսանում, այսպես կոչված, «կանոնադրային» ներկայացուցչությունը, երբ կանոնադրության ուժով իրավաբանական անձը կամ որոշակի պաշտոն զբաղեցնող ղեկավար աշխատակիցն օժտված է իրավաբանական անձի կամ քաղաքացու անունից հանդես գալու լիազորությամբ»³⁵⁵:

Բ. Բ. Չերեպախինը գտնում էր, որ «Որևէ դեպքում չի կարելի ասել, որ մարմինը ներկայացուցչություն է իրականացնում իրավաբանական անձի անունից: Իրավաբանական անձի ներկայացուցիչներ են հանդիսանում իրավաբանական անձի մարմնի կողմից լիազորված (կամավոր ներկայացուցչություն) կամ օրենքի ուժով համապատասխան լիազորություններով օժտված (պարտադիր ներկայացուցչություն) անձինք (քաղաքացիները կամ իրավաբանական անձինք)»³⁵⁶: Նույն կարծիքին էին Վ.Պ. Գրիբանովը և Ս.Մ. Կորնեևը³⁵⁷: Իսկ, օրինակ, Օ.Ա. Կրասավչիկովը գտնում էր. քանի որ ներկայացուցչի կնքած գործարքների իրավական հետևանքները ծագում են անմիջականորեն ներկայացվողի համար, ապա իրավաբանական անձի մարմնի (տնօրենի, վարչության նախագահի) կողմից գործարք կնքելը չի կարելի համարել ներկայացուցչություն: Իրավաբանական անձի մարմինը չի հանդիսանում ներկայացուցիչ, այլ իրականացնում է իրեն պատկանող և կանոնադրությամբ նախատեսված իրավունքները և պարտականությունները: Մարմնի գործողությունները հանդիսանում են իրավաբանական անձի

³⁵⁵ Советское гражданское право. В 2 ч. /под ред. В. А. Рясенцева. М., 1986, ч. 1, т. 232:

³⁵⁶ Черепяхин Б. Б. Волеобразование и волеизъявление юридического лица, Труды по гражданскому праву, М., 2001, т. 134:

³⁵⁷ Ст'я Грибанов В. П., Корнеев С.М. «Советское гражданское право», М., 1961, т. 209:

գործողություններ³⁵⁸:

Սակայն գրականության մեջ առկա է նաև հակառակ տեսակետը: Այսպես, Ի.Վ. Շերեշևսկին իրավաբանական անձի մարմնին համարում էր նրա օրինական ներկայացուցիչը³⁵⁹: Նման կարծիքի էր հակված նաև Ս.Ն. Բրատուսը, որն իրավաբանական անձի մարմիններին դիտում էր որպես նրանց կանոնադրային ներկայացուցիչներ³⁶⁰: Հետագայում, Ս.Ն. Բրատուսն ընդունեց, որ մարմնի գործողությունները հանդիսանում են իրավաբանական անձի գործողություններ, քանի որ նրա կամքի ձևավորումը և իրականացումն արտացոլված է այդ մարմնի՝ կանոնադրությամբ կամ կանոնակարգով նախատեսված լիազորություններում³⁶¹: Ս.Ն. Լանդկոֆը կանոնադրական ներկայացուցչություն էր համարում մարմնի կողմից իրավաբանական անձի անունից հանդես գալը³⁶²: Այդ տեսակետն էր զարգացնում Դ.Մ. Չեչոտը, որը, մարմիններին համարելով իրավաբանական անձի օրինական ներկայացուցիչներ, սխալական և ողջամիտ չէր համարում իրավաբանական անձի մարմնին՝ ի դեմս դրա ղեկավարի, իրավաբանական անձի հետ նույնացնելը³⁶³:

Անհրաժեշտ է նշել, որ այն հարցը, թե արդյոք ընկերության տնօրենը հանդիսանում է նրա ներկայացուցիչը, գոյություն ունի ոչ միայն մասնավոր-իրավական կարգավորման շրջանակներում, այլ նաև հանրային-իրավական կարգավորման շրջանակներում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի³⁶⁴ 23-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված

³⁵⁸ Տե՛ս Красавчиков О. А. «Советское гражданское право» М., 1968, էջեր 275-276:

³⁵⁹ Տե՛ս Шерешевский И. В. Представительство (Поручение и доверенность). М., 1925, էջ 165:

³⁶⁰ Տե՛ս Гражданское право: Учебник. В 2 т., 1т., М., 1944, էջ 201:

³⁶¹ Տե՛ս Братусь С. Н. Субъекты гражданского права. М., 1950, էջ 98:

³⁶² Տե՛ս Ландкоф С. Н. Основы гражданского права. Киев, 1948, էջ 132:

³⁶³ Տե՛ս Чечот Д. М. Участники гражданского процесса. М., 1960, էջ 157:

³⁶⁴ ՀՀ ՊՏ 2004/18(317), 31.03.04:

է, որ վարչական վարույթում որպէս մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միանձնյա գործադիր մարմինն ընկերության անունից գործում է առանց լիազորագրի, ուստի վարչական վարույթում կազմակերպության ղեկավարը չի կարող ճանաչվել որպէս նրա լիազոր ներկայացուցիչ: Հետևաբար, միանձնյա գործադիր մարմինը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն, դասվում է կազմակերպության օրինական ներկայացուցիչների շարքը:

Այս հարցի հետ կապված դատական պրակտիկան ևս միանշանակ պատասխան չի տալիս: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ 3-192 ՎԴ 2008թ. քաղաքացիական գործով³⁶⁵ «Հիդրոմասնագետշին» ՓԲԸ լուծարային հանձնաժողովի նախագահ Հ. Սիմոնյանի կողմից ինքն իր հետ կնքված լուծարվող ընկերության պահանջի զիջման մասին պայմանագիրը ճանաչել է անվավեր այն պատճառաբանությամբ, որ իրավաբանական անձի կառավարման մարմնի ղեկավարը հանդիսանում է ներկայացուցիչ, հետևաբար՝ ՀՀ քաղ. օր-ի 318-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարքներ կնքել անձամբ իր նկատմամբ, չի կարող գործարք կնքել մեկ այլ անձի նկատմամբ, որի ներկայացուցիչն է միաժամանակ: Նշված գործի վերլուծությունից ելնելով կարելի է պնդել, որ վճռաբեկ դատարանն իրավաբանական անձի մարմնին դիտում է որպէս նրա ներկայացուցիչ և այդ հարաբերությունների նկատմամբ կիրառում է ներկայացուցչության դրույթունը, ինչը մեր կողմից ընդունելի չէ: Նման իրավիճակում, օրինակ, բաժնետոմսերի ձեռքբերման պարագայում բաժնետոմսերը վաճառող կամ գնող ընկերության գործադիր մարմնի

³⁶⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2102 թվականի թիվ 3-192 ՎԴ 2008թ. քաղաքացիական գործով կայացված որոշումը:

ղեկավարն ինչպես պետք է կնքի այդ պայմանագիրը:

ՌԴ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ ևս այս հարցի պատասխանը միանշանակ տրված չէ: Օրինակ՝ ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի (այսուհետ՝ ԲԱԴ) նախագահության 1998 թվականի ապրիլի 21-ի N 33 տեղեկատվական նամակում³⁶⁶, ՌԴ ԲԱԴ-ի նախագահության 1998 թվականի հունվարի 27-ի N 7035/97 որոշմամբ³⁶⁷, ՌԴ ԲԱԴ-ի նախագահության 2000 թվականի սեպտեմբերի 5 N 0384/00 որոշմամբ³⁶⁸ միանձնյա գործադիր մարմինը դիտարկվում է որպես իրավաբանական անձի ներկայացուցիչ: Մասնավորապես, ՌԴ ԲԱԴ-ի նախագահության թիվ 7035/97 որոշմամբ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիրը ճանաչվել է առոչինչ գործարք այն հիմքով, որ նշված պայմանագիրը կնքվել է ՌԴ քաղ. օր.-ի 182-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, համաձայն որի՝ ներկայացուցիչը չի կարող կնքել գործարքներ ներկայացվողի անունից այլ անձի հետ, որի ներկայացուցիչն է հանդիսանում ինքը: Սույն գործով հայցվորի անունից լիազորագրի հիման վրա առուվաճառքի պայմանագիր ստորագրած անձը միաժամանակ հանդիսանում էր նաև պատասխանողի ներկայացուցիչ՝ զբաղեցնելով «Կիրովյան անվադողերի գործարան» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնը, այդ իսկ պատճառով չէր կարող հանդիսանալ վաճառողի օրինական ներկայացուցիչը: ՌԴ ԲԱԴ-ի նախագահության 1999 թվականի փետրվարի 9-ի N 6164/98³⁶⁹, 2002 թվականի հոկտեմբերի 8-ի N 6113/02³⁷⁰, 2000 թվականի մայիսի 30-ի N9507/99³⁷¹, 2002 թվականի հոկտեմբերի 8-ի N

³⁶⁶ Ст'ю Вестник ВАС, 1998, N 6:

³⁶⁷ Ст'ю Вестник ВАС, 1998, N 5:

³⁶⁸ Ст'ю Вестник ВАС, 2000, N 4:

³⁶⁹ Ст'ю Вестник ВАС, 1999, N 8:

³⁷⁰ Ст'ю Вестник ВАС, 2002, N 9:

³⁷¹ Ст'ю Вестник ВАС, 2000, N 4:

6112/02³⁷² որոշումները, ընդհակառակը, հենվելով ՌԴ քաղ. օր.-ի 53-րդ հոդվածի վրա, սահմանում են, որ իրավաբանական անձի մարմինները, որոնց շարքին է դասվում նաև ղեկավարը, չեն կարող դիտվել որպես քաղաքացիական իրավահարաբերության ինքնուրույն սուբյեկտներ և հանդիսանում են իրավաբանական անձի մաս, այսինքն՝ իրավաբանական անձի մարմինը չի հանդիսանում վերջինիս ներկայացուցիչը, այդ իսկ պատճառով մարմնի կողմից լիազորությունների գերազանցմամբ կնքված գործարքի դեպքում ՌԴ քաղ. օր.-ի 183-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի չէ: Այս խնդիրն առավել արդիական է մեկ անձից կազմված ընկերությունների պարագայում:

Նման տարատեսակ մեկնաբանությունների հնարավորություն է տալիս նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը, համաձայն որի՝ ընկերության տնօրենը ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում, իսկ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ընկերության գործադիր մարմինը՝ առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ:

Գտնում ենք, որ իրավաբանական անձի գործադիր մարմինը հանդիսանում է իրավաբանական անձի կառավարման մարմին, որն օրենքի ուժով արտահայտում է իրավաբանական անձի կամահայտնությունը, օժտված է դրա անունից ներկայացուցչություն իրականացնելու լիազորություններով, հետևաբար, գործադիր մարմնի ղեկավարը դասական առումով չի կարող դիտվել որպես իրավաբանական անձի ներկայացուցիչ և այդ հարաբերությունների նկատմամբ ներկայացուցչության կանոններն ամբողջությամբ կիրառելի չեն: Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Բաժնետիրական ընկերություն-

³⁷² См. u Вестник ВАС, 2002, N 9:

ների մասին» ՀՀ օրենքում և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում ընկերության միաձնյա գործադիր մարմնի իրավական էության որոշակիացման մասով կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ, ինչը հնարավորություն կընձեռի վերը նկարագրված իրավիճակներում համադրել կորպորացիայի և ղեակավար մարմիններում աշխատող անձանց շահերը, սահմանել նման իրավիճակներում գործարքներ կնքելու նոր ընթացակարգեր և կանոններ:

Այսպիսով, կորպորատիվ տիպի իրավաբանական անձի մարմինները մեկ կամ մի քանի անձանց կողմից ներկայացվող իրավաբանական անձի բաղկացուցիչ մասեր են, որոնք օրենքով և(կամ) կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ձևավորում և արտահայտում են իրավաբանական անձի կամքը, դրանով իսկ ապահովելով նրա իրավասությունները: Իսկ կորպորացիայի կամքի ձևավորումը և արտահայտությունն իրականացվում է համապատասխան մարմինների կողմից հատուկ ակտերի ընդունմամբ³⁷³:

Այժմ, ընկերությունների օրինակով, ընդհանուր գծերով ներկայացնենք կորպորացիայի կառավարման մարմինների կառուցվածքը և իրավասությունները, քանի որ հենց դրանից է կախված կառավարման մոդելի ճշգրիտ տարրոշման հնարավորությունը:

Կորպորացիայի կառավարման մարմինների կառուցվածքը տարբեր է³⁷⁴: Որպես կանոն, կառավարման մարմինների կառուցվածքի ընտրությունը, իրավասության որոշումն իրակա-

³⁷³ Տե՛ս Корпоративное право, под ред. И.С. Шиткина, М., 2007, էջ 282:

³⁷⁴ Անհրաժեշտ է նշել, որ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ընկերության կառավարման մարմինների համակարգում մեր կողմից չի ընդգրկվել և սույն աշխատանքի շրջանակներում չի ուսումնասիրվել, քանի որ վերստուգող հանձնաժողովը վերահսկում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը և այդ տեսանկյունից չի դասվում կառավարում իրականացնող մարմինների շարքին:

նացվում են ընկերությունը ստեղծելիս, ամրագրվում են կանոնադրության մեջ և կախված են կորպորացիայի կազմակերպարավական ձևից, գործունեության ոլորտից, բաժնետերերի (մասնակիցների) քանակից, ընկերության ֆինանսական ներուժից, ընկերության կառավարման մարմինների կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումներից պաշտպանվելու ցանկության աստիճանից և մի շարք այլ գործոններից³⁷⁵: ԱՄՆ-ում և Անգլիայում գործում է կառավարման մարմինների երկաստիճան համակարգ, որը ենթադրում է բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի՝ որպես կառավարման բարձրագույն մարմնի և ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող ընկերության գործադիր մարմնի (խորհրդի) առկայությունը: Գերմանիայում կիրառվում է եռաստիճան մոդելը, այսինքն՝ յուրաքանչյուր ընկերության համար պարտադիր է բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) և ընկերության գործադիր մարմնի առկայությունը: Ֆրանսիայում երկու մոդելն էլ միաժամանակ կիրառվում են: Եվրոպական միությունը բաժնետիրական ընկերությունների կառավարման կառուցվածքը կարգավորող միասնական նորմեր սահմանելու նպատակ հետապնդող տարիների քննարկումներից հետո առաջարկում է ներդնել եռաստիճան համակարգ: Միևնույն ժամանակ, Եվրոպական միության անդամպետությունները կարող են կառավարման կառուցվածքի վերաբերյալ հարցը փոխանցել կազմակերպությունների հայեցողությանը³⁷⁶: ՀՀ օրենսդրությամբ թույլատրվում է կիրառել կառավարման երկաստիճան և եռաստիճան համակարգերը, իսկ գործունեության առանձին ոլորտներում ընդգրկված կազմակերպությունների համար նախատեսվում է կառավարման բացառապես եռաստիճան համա-

³⁷⁵ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ավետիսյան Վ.Դ., Բաժնետիրական իրավունք, Երևան, 2005, էջ 130:

³⁷⁶ Տե՛ս Торкановский Е. Управление акционерным обществом // Хозяйство и право, М., 1997, N6:

կարգ³⁷⁷:

Բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովը հանդիսանում է ընկերության կառավարման բարձրագույն մարմինը: Բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի իրավասությունը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ և 115-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածով և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով, իսկ գործունեության առանձին ոլորտներում ընդգրկված կազմակերպությունների պարագայում՝ գործունեության տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ: Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնի և ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) լուծմանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության խորհուրդն իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը: Ընկերության խորհրդի (դիտորդ խորհրդի) իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են վերապահված ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի կամ խորհրդի (դիտորդ խորհրդի) իրավասությանը վերապահված հարցերի: Ընկերու-

³⁷⁷ Օրինակ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21 և այլն:

յան գործադիր մարմինը կազմակերպում է ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի և խորհրդի (դիտորդ խորհրդի) որոշումների կատարումը: Գործադիր մարմինը հաշվետու է ընկերության խորհրդին (դիտորդ խորհրդին) և ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ և 89-րդ հոդվածները, ի տարբերություն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, թույլ են տալիս բաժնետիրական ընկերությունում ստեղծել միանձնյա գործադիր մարմին կամ միաժամանակ գոյություն ունենալ միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմիններ: Կոնկրետ տնտեսական ընկերության գործադիր մարմինների կառուցվածքը որոշվում է դրա կանոնադրությամբ: Գրականության մեջ, հաշվի առնելով փոքրամասնություն կազմող մասնակիցների կամ խոշոր մասնակիցների իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու կոնկրետ երկրի օրենսդրության առանձնահատկությունները, տարրորշվում են կառավարման առօրյա դերակազմի և ինսայդերական մոդելները³⁷⁸:

Առօրյա դերակազմի մոդելը կիրառելի է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Նոր Զելանդիայում: Կառավարման այս մոդելը կիրառելի է հրապարակային կորպորացիաների պարագայում, քանի որ հրապարակային կորպորացիաների ֆինանսավորման հիմնական աղբյուրը ոչ թե բանկերի կողմից տրամադրվող վարկերն են, այլ անհատ կամ ինստիտուցիոնալ ներդրողների միջոցները: Հետևաբար, մեծաքանակ փոքրամասնություն կազմող բաժնետերերի առկայությունը պահանջում է նրանց իրավունքների պաշտպանությանն ուղղված հատուկ իրավական կարգավորում, այդ թվում՝ ուղղված տեղեկատվության հրապարակմանն ու թափանցիկությանը, ինչպես նաև կորպորատիվ կառավարման վրա հնարավոր փոխկապվածության ազդեցության

³⁷⁸ St u Корпоративное право, под ред. И.С. Шиткина, М., 2007, т.2 306:

բացահայտմանը:

Ինսայդերական մոդելն առավել տարածված է Գերմանիայում, Ճապոնիայում, Շվեյցարիայում և Ֆրանսիայում: Կառավարման այս մոդելի պարագայում կորպորացիայի նկատմամբ հսկողությունը կենտրոնացված է անհատների կամ անձանց որոշակի խմբի ձեռքում: Կորպորացիայի ազդեցիկ բաժնետերերի շարքին են դասվում կառավարիչները, խորհրդի անդամները, վարկավորող բանկերը: Այս համակարգում արժեթղթերի շուկայի միջոցով կորպորացիայի ֆինանսավորումը բանկային վարկավորման նկատմամբ ունի երկրորդային բնույթ, իսկ կառավարման գործում փոքրամասնություն կազմող բաժնետերերի դերակատարությունը հասցված է նվազագույնի:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության, բաժնետիրական ընկերությունների մասնակիցների կազմի և դատական պրակտիկայի վերլուծությունը մեզ թույլ է տալիս պնդել, որ մեր երկիրը պատկանում է ինսայդերական մոդելին:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը³⁷⁹ սահմանելով ընկերության կառավարման մարմինների շրջանակը, դրանց լիազորությունները, միաժամանակ անուղղակի ձևով նախատեսում են բաժնետիրական ընկերության կառավարման մոդելներ:

Բաժնետիրական ընկերության կառավարման մոդելները կառավարման կոնկրետ համակարգեր են, որոնք իրենցից ներկայացնում են օրենքով սահմանված կառավարման մարմինների որոշակի հավաքածու, որից կախված է դրանցից յուրաքանչյուրի իրավասությունների շրջանակը³⁸⁰ և կորպորատիվ կառավարման արդյունավետության մակարդակը:

³⁷⁹ Կառավարման մոդելների ուսումնասիրությունն իրականացվում է բաժնետիրական ընկերությունների օրինակով, քանի որ առավել բարդ կառավարման համակարգն օրենսդրությամբ բաժին է ընկել բաժնետիրական ընկերություններին և դրանց օրինակի վրա կատարված ընդհանրացումներն ու եզրահանգումները կարող են կիրառվել նաև սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների պարագայում:

³⁸⁰ Տե՛ս Могилевский С.Д. Акционерные общества, М.,1998, էջ 98:

Այժմ կառավարման յուրաքանչյուր մոդելն ուսումնասիրենք առանձին-առանձին:

Կառավարման առաջին մոդելին բնորոշ է կառավարման մարմինների հետևյալ համակարգը.

- բաժնետերերի ընդհանուր ժողով և
- միանձնյա գործադիր մարմին:

Կառավարման այս ձևը կիրառելի է միայն այն բաժնետիրական ընկերություններում, որոնցում քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի թիվը չի գերազանցում 49-ը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հնարավոր է համարում, որ մինչև 50 բաժնետեր ունեցող ընկերությունում տնօրենների խորհուրդ (դիտորդ խորհուրդ) չստեղծվի: Եթե մինչև 50 բաժնետեր ունեցող ընկերությունում տնօրենների խորհուրդ (դիտորդ խորհուրդ) չի ստեղծվում, ապա նրա իրավասություններն իրականացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովը: Այդ դեպքում կանոնադրությունը պետք է դրույթներ պարունակի այն անձի կամ ընկերության այն մարմնի մասին, որն իրավունք ունի որոշում ընդունել տարեկան և արտահերթ ժողովների գումարման, ժողովի օրակարգի հաստատման, ինչպես նաև ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսի, ամսաթվի հաստատման և բոլոր այն հարցերի լուծման վերաբերյալ, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը:

Կառավարման այս ձևի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն առավել արդյունավետ է գործում, եթե բաժնետերերը գործադիր մարմնի հետ մշտապես գտնվում են սերտ համագործակցության մեջ և քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի թիվը չի գերազանցում 5-7-ը:

Կառավարման երկրորդ մոդելը ներկայումս Հայաստանում ամենալայն տարածում ունեցողն է: Այն կարող է արդյունավետ կիրառվել ցանկացած բաժնետիրական ընկերությունում և դրան բնորոշ է կառավարման մարմինների հետևյալ համակարգը.

- բաժնետերերի ընդհանուր ժողով,
- տնօրենների խորհուրդ (դիտորդ խորհուրդ),
- միանձնյա գործադիր մարմին:

Կառավարման երրորդ մոդելը բավականին հաճախ է կիրառվում բանկերում, վարկային կազմակերպություններում, ապահովագրական և ներդրումային ընկերություններում և դրան բնորոշ է կառավարման մարմինների հետևյալ համակարգը.

- բաժնետերերի ընդհանուր ժողով,
- տնօրենների խորհուրդ (դիտորդ խորհուրդ),
- միանձնյա գործադիր մարմին,
- կոլեգիալ գործադիր մարմին:

Կառավարման այս մոդելը կարելի է բնութագրել որպես առավել ժողովրդավարական, քանի որ բաժնետիրական ընկերության կողմից կայացվող որոշումների վրա միանձնյա գործադիր մարմնի ազդեցությունն այս դեպքում բավականին սահմանափակ է և կորպորատիվ կառավարման գործընթացում հնարավոր է կիրառել զսպումների և հակակշիռների արդյունավետ մեխանիզմներ:

Կառավարման չորրորդ մոդելի կիրառությունն առավել բարձր մակարդակի վրա է դնում ընկերության գործադիր մարմնի անդամների պատասխանատվության հարցը՝ նրանց կողմից այնպիսի որոշումներ կայացնելու դեպքում, որի արդյունքում ընկերության համար առաջանում են որոշակի անբարենպաստ տնտեսական հետևանքներ: Նման եզրակացության հանգելու հնարավորություն մեզ տալիս է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածը, որը համապարտ պատասխանատվություն է սահմանում կոլեգիալ գործադիր մարմնի անդամների համար, եթե վերջիններիս մեղքով ընկերությանը պատճառվում է վնաս: Եթե ընկերության կառավարման մարմինների բոլոր գլխավոր պաշտոնյաները միաժամանակ հանդիսանում են նաև կոլեգիալ գործադիր մարմնի անդամներ, ապա այդ հանգամանքը նրանց զերծ է պահում տնտեսապես չհիմնավորված որոշումների կայացումից, իսկ միանձն-

յա գործադիր մարմինը (որը միաժամանակ հանդես է գալիս որպես կոլեգիալ գործադիր մարմնի ղեկավար) հնարավորություն է ստանում պատասխանատվության իր բաժինը կիսել կոլեգիալ գործադիր մարմնի անդամների հետ:

Կառավարման այս մոդելը ևս կիրառելի է այն բաժնետիրական ընկերություններում, որոնցում քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի թիվը չի գերազանցում 49-ը: Կառավարման այս մոդելին բնորոշ է կառավարման մարմինների հետևյալ համակարգը.

- բաժնետերերի ընդհանուր ժողով,
- միանձնյա գործադիր մարմին,
- կոլեգիալ գործադիր մարմին:

Ընկերություն հիմնադրելիս կառավարման մոդելի ընտրությունն ու դրա հիման վրա կառավարման մարմինների լիազորությունների հաշվարկային սահմանումն ունեն կարևոր նշանակություն: Առաջին իսկ հանդիպած կառավարման մոդելի չզիտակցված ընտրությունը (օրինակ՝ ԶԶ արդարադատության նախարարի կողմից հաստատված կանոնադրությունների օրինակելի ձևեր) կարող է էական վնաս պատճառել ինչպես նոր ստեղծվող ընկերության հետագա արդյունավետ գործունեությանը, այնպես էլ նվազեցնել ընկերության վրա հիմնադիրների կամ հիմնադիրների մի մասի ազդեցության հնարավորությունը: Կառավարման ճիշտ ընտրված մոդելն է, որ շահութաբեր բիզնես հիմնած անձին կարող է հնարավորության ընձեռել ընկերության նկատմամբ հսկողություն պահպանել նույնիսկ այն դեպքում, երբ ընկերության կանոնադրական կապիտալում նրա մասնակցությունը 100 տոկոսից իջնի 30, 20 կամ 10 տոկոս:

§ 3.2. Ընդհանուր ժողովը որպես կառավարման բարձրագույն մարմին

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց բնորոշ կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների (բաժնետերերի) ընդհանուր ժողովն է: Այս մոտեցումն արտացոլված է ինչպես քաղաքացիական օրենսգրքում, այնպես էլ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց տարբեր կազմակերպահրավական ձևերը կարգավորող օրենքներում³⁸¹: Ընդհանուր ժողովն է, որ դասվելով կորպորացիայի կամքը ձևավորող մարմինների շարքը³⁸², իրավասու է կայացնել կորպորացիայի գործունեության համար առավել կարևոր նշանակություն ունեցող որոշումները:

Մասնագիտական գրականության մեջ ընդհանուր ժողովի՝ կառավարման մարմին լինելու հանգամանքը երբեմն վիճարկվում է³⁸³: Որպես փաստարկ ներկայացվում է այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասն իրավաբանական անձի մարմինների ձևավորումը պայմանավորում է օրենսգրքով, օրենքով և (կամ) կանոնադրությամբ ընտրության կամ նշանակման սահմանված կարգի առկայությամբ: Մինչդեռ բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ոչ ընտրվում են և ոչ էլ նշանակվում, հետևաբար, ժողովը որպես կառավարման մարմին դիտվել չի կարող: Կարծում ենք, որ այս փաստարկը

³⁸¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներ 99, 115 և 119, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 66, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 35 և այլն:

³⁸² Տե՛ս Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ, М., 2004, էջ 159:

³⁸³ Տե՛ս Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. А. С. Тарасова, М., 1999, էջ 294:

բավարար չափով հիմնավոր չէ, օրենսգրքով և առանձին օրենքներով ժողովին որպես կառավարման մարմին հռչակելը, անկախ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված նորմի անկատար բնույթից, բավարար է այն որպես այդպիսին դիտելու համար:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը, մինչև բաժնետիրական ընկերության ստեղծումը, կարգավորում է դեռևս չստեղծված ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովի գումարման և անցկացման հետ կապված հարաբերությունները, իսկ 66-րդ հոդվածի 1-ին կետը, ժողովների գումարման պարբերականությունից ելնելով, տարանջատում է արդեն իսկ ստեղծված ընկերության ընդհանուր ժողովի երկու տեսակ՝

- բաժնետերերի տարեկան և
- բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով³⁸⁴:

Բաժնետիրական ընկերության առաջին ընդհանուր ժողովն անվանվում է բաժնետերերի հիմնադիր ժողով: Հիմնադիր ժողովի գումարումը պարտադիր է այն ընկերությունների ստեղծման ժամանակ, որոնց հիմնադիրների թիվը երկու կամ ավելի է: Այն դեպքում, երբ ընկերությունը հիմնադրվում է մեկ անձի կողմից, ապա ընկերության հիմնադրման համար որևէ ժողովի գումարում չի պահանջվում, և ժողովի իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ որոշումները կայացնում է այդ հիմնադիրը՝ միանձնյա:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի ամենատարածված տե-

³⁸⁴ Այս դասակարգումը լայն տարածում ունի զարգացած շուկայական տնտեսություն ունեցող բազմաթիվ երկրներում. այդ մասին առավել մանրամասն տես՝ Frank Dornseifer (Ed.), *Corporate Business Forms in Europe*, München, 2005, *United States Company Law and Regulations Handbook*, *Corporate Laws and Regulations in The Selected States of The United States*, Volum 2, Delaware Corporation, International Business Publications, USA, Washington, 2009, էջ 46:

սակը տարեկան ընդհանուր ժողովն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովների գումարման միջոցով են բաժնետերերն իրականացնում քվեարկելու և ընկերության հետագա գործունեության ուղղությունները որոշելու իրենց իրավունքները:

Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո: Տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո³⁸⁵՝ վեց ամսվա ընթացքում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն առանձնակի ընդգծում է այն հարցերի շրջանակը, որոնք պարտադիր կերպով պետք է քննարկվեն բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովում: Այդպիսիք են.

- ընկերության տարեկան հաշվետվությունները,
- հաշվապահական հաշվեկշիռները,
- շահույթների և վնասների հաշիվը,
- շահույթների և վնասների բաշխման հաստատումը,
- տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը,
- տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- ընկերության խորհրդի թվական կազմի հաստատումը և դրա անդամների ընտրությունը,
- ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը:

Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունենում, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն

³⁸⁵ Բոլոր ընկերություններում ֆինանսական տարին Հայաստանի Հանրապետությունում ավարտվում է դեկտեմբերի 31-ին:

ընկերության լուծարման հարցը³⁸⁶ կամ ընկերության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, շահույթների և վնասների հաշիվը, շահույթների և վնասների բաշխման հաստատման, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման, տարեկան շահութաբաժինների չափի հաստատման հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր չեն կարող քննարկվել, բացառությամբ վերը նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 67, կետ 1, «Ժբ» ենթակետ):

Սեզ համար անընդունելի է օրենսդրի այն մոտեցումը, որ նախատեսում է սահմանված ժամկետում տարեկան ընդհանուր ժողով չգումարելու դեպքում արտահերթ ժողով գումարելիս վերը թվարկված հարցերից բացի այլ հարցեր քննարկելու հնարավորության սահմանափակում: Օրինակ՝ ինչ տրամաբանությամբ է օրենսդիրն ընկերությանն արգելում արտահերթ ժողովում ընտրել խորհրդի նոր կազմ կամ նշանակել նոր գործադիր տնօ-

³⁸⁶ Օրենքը չի տալիս այն հարցի պատասխանը, թե ով կարող է արտահերթ ժողովի գումարման պահանջ ներկայացնել կամ գումարել արտահերթ ժողով՝ այն դեպքում, երբ ժողով գումարելու պահանջ ներկայացնելու կամ գումարելու իրավունք ունեցող անձինք դա չեն իրականացնում: Օրինակ՝ 2006-2008 թվականների ընթացում «Չափիչ 1» ԲԲԸ-ի հետ կապված իրավիճակի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 800-ից ավելի մանր բաժնետեր ունեցող ընկերությունը, չունենալով խորհուրդ, գործադիր մարմին, որևէ ակտիվ, տարիներ շարունակ ժողովներ չէր գումարում և այդ ընկերության գոյությունը քաղաքացիական իրավահարաբերություններին հաղորդում էր անորոշություն: Օրինակ՝ դատարան հայց ներկայացնելու ժամանակ չկար որևէ մեկը, ով կստանար ծանուցումը, ռեեստրավարի հետ հարաբերությունները գտնվում էին կատարյալ անորոշության մեջ և այլն:

Կարծում ենք, որ նման իրավիճակներում պետական որևէ մարմնի (նման իրավակարգավորում նախատեսում էր «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ նախկին օրենքը) կամ կազմակերպության (օրինակ՝ ընկերության ռեեստրավարին) պետք է իրավասություն տրվի գումարել արտահերթ ժողով՝ ընկերության լուծարման օրակարգով: Իսկ ժողովի գումարման անհնարինության դեպքում, շահագրգիռ անձանց պահանջով, ընկերությունը պետք է ենթակա լինի դատական կարգով լուծարման:

րեն՝ այն դեպքում, երբ խորհրդի անդամները հրաժարվել են սահմանված ժամկետում գումարել տարեկան ժողով կամ խորհրդի անդամները կամ գործադիր տնօրենը մահացել են կամ այլ օբյեկտիվ պատճառներով ի վիճակի չեն եղել սահմանված ժամկետում գումարել ժողով: Նման իրավիճակներում, եթե ընկերությանը հնարավորություն չընձեռվի նախ և առաջ ձևավորել խորհուրդ կամ գործադիր մարմին, չի լինի այն սուբյեկտը, ով հնարավորություն կունենա ժողովի քննարկմանը ներկայացնել վերը նշված հարցերը:

Նման իրավիճակում հայտնված մի շարք ընկերությունների խոշոր բաժնետերերին («Տաքսի 1» ԲԲԸ, «Ջերմուկի հանքային ջրերի գործարան» ԲԲԸ և այլն) մեր կողմից մատուցված խորհրդատվությամբ օրենքի նշված արգելքը հեշտությամբ հաղթահարվեց՝ նույն օրը մեկ ժամ տարբերությամբ երկու ժողովներ գումարելու միջոցով:

Առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ժբ» ենթակետը փոփոխել և վերը նկարագրված իրավիճակներում թույլ տալ արտահերթ ժողովում, օրենքում նշված հարցերի հետ մեկտեղ, քննարկել ժողովի իրավասությանը ենթակա այլ հարցեր և:

Ինչպես պատկերավոր նշում է Վ. Բաշկինսկասը՝ երբ գարունն իր տեղը զիջում է ամռանը՝ բաժնետիրական ընկերություններում սկսվում է արտահերթ ժողովների շրջանը³⁸⁷: Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Որպես կանոն, բաժնետերերի արտահերթ ժողովները գումարվում են այդպիսիք հրավիրելու իրավունք ունեցող անձանց նախաձեռնությամբ: Սակայն այն դեպքում, երբ խորհրդի անդամների թիվը պակասում է կանոնադրությամբ սահմանված թվի կեսից, ապա ընկերությունը պետք է այն լրացնելու նպա-

³⁸⁷ St'u Bakshinskac B. Акционерам необходимо чаще встречаться (внеочередное собрание акционеров), Бизнес-адвокат, 2000, http://www.juristlib.ru/book_1856.html:

տակով գումարի արտահերթ ժողով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 87, կետ 2):

Գումարվող արտահերթ ժողովները, որպես կանոն, հետապնդում են երկու հիմնական նպատակ.

- կառավարման բարձրագույն մարմնի կողմից անհետաձգելի հարցերի օպերատիվ քննարկումը,

- արտահերթ ժողով գումարելու իրավունք ունեցող բաժնետերերի, այլ մարմինների և անձանց շտապ արձագանքումն այն դեպքերին, որոնք կարող են հանգեցնել ընկերության բնականոն գործունեության խաթարմանը³⁸⁸:

Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովն անցկացնելու համար տնօրենների խորհուրդը, իսկ այն ընկերություններում, որոնցում տնօրենների խորհուրդ չի ստեղծվել, այն անձը կամ ընկերության այն մարմինը, որին կանոնադրությամբ վերապահված է այդ իրավասությունը, որոշում են.

- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը³⁸⁹,

- ժողովի օրակարգը,

- ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,

- ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,

- բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը.

- քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունը կատարվելու է քվեաթերթիկներով,

³⁸⁸ Стен Ионцев М. Г. Акционерные общества, М., 2002, էջ 121:

³⁸⁹ Կարծում ենք, որ «վայր» բառի փոխարեն առվելի ճիշտ կլիներ, եթե օրենսդիրն օգտագործեր «տեղ» բառը, քանի որ «վայրը» շատ ավելի տարողունակ բառ է, քան «տեղը»: Օրինական, ծանուցման մեջ չի կարելի պարզապես նշել մի քանի դահլիճներ ունեցող շինության գտնվելու հասցեն, այլ անհրաժեշտ է նշել նաև կոնկրետ հարկը կամ այդ տեղը գտնվելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

- բաժնետերերի տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող հաշվիչ հանձնաժողովի անդամների թեկնածուների ցանկը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք հոդվ. 73):

Ժողովի գումարման վայրի ընտրության իրավունքը խորհրդին տրամադրելը գործնականում հանգեցնում է փոքրամասնություն կազմող բաժնետերերի ժողովին մասնակցելու իրավունքների ոտնահարման: Բնականաբար, ենթադրվում է, որ խորհուրդը ժողովի գումարման վայրը որոշելիս պետք է ղեկավարվի խելամտության շարժառիթներով (որպես կանոն, ժողովները գումարվում են կամ ընկերության գտնվելու վայրում, կամ էլ բաժնետերերի մեծամասնության գտնվելու վայրում), այնինչ հաճախ խոշոր բաժնետերերի շահերը սպասարկող խորհրդի անդամները որպես ժողովի գումարման վայր ընտրում են այն վայրը, որն առավել հարմար է խոշոր բաժնետերերին: Արդյունքում, մենք պրակտիկայում ունեցել ենք, օրինակ, երբ ընկերության 75 տոկոս բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող 4 խոշոր բաժնետերերն Արաբական Միացյալ Եմիրություններում հանգստանալիս անցկացրել էին բաժնետերերի ընդհանուր ժողով, իսկ ժողովի գումարման ծանուցմամբ մյուս բաժնետերերին ևս իրավիրել էին իրենց գտնվելու վայրը: Կարծում են, որ նշված օրինակում ակնհայտ է, որ 10000 դրամ անվանական արժեքով բաժնետոմսի սեփականատերը դժվար թե գներ ինքնաթիռի տոմս, վճարեր հյուրանոցում բնակվելու համար, որպեսզի մասնակցեր բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին:

Այդ իսկ պատճառով առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի ա) ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «: Ժողովի գումարման տեղ կարող է հանդիսանալ կանոնադրության մեջ նշված տեղը կամ այն տեղը որտեղ ժողովին կմասնակցեն ընկերության բոլոր բաժնետերերը»:

Նման իրավակարգավորման պայմաններում բաժնետոմսեր ձեռք բերող անձի համար, ընկերության բաժնետեր դառնալու մասին որոշումը կայացնելու պահին, կանխատեսելի կլինի ժողովի գումարման վայրը, իսկ հետագայում կանոնադրության մեջ վայրի փոփոխություն կատարելու դեպքում դեմ քվեարկած բաժնետերը ձեռք կբերի բաժնետոմսերի հետգնում պահանջելու իրավունք: Իսկ այն դեպքում, երբ ժողովին կմասնակցեն բոլոր բաժնետերերը, ապա կանոնադրությամբ մատնանշված սահմանափակումն այլևս կիրառելի չի լինի, քանի որ բաժնետիրոջ կարևորագույն իրավունքներից մեկը՝ ժողովին մասնակցելու իրավունքը, չի խախտվի:

Հաշվի առնելով տարեկան ժողովի գումարման համար օրենքով սահմանված գործողությունների հաջորդականությունը՝ դրանք պայմանականորեն կարելի է բաժանել չորս փուլերի:

Առաջին փուլում տնօրենների խորհրդի կողմից որոշում է կայացվում բաժնետերերի տարեկան ժողով գումարելու մասին: Ինչպես արդեն նշվեց, բաժնետիրական ընկերությունը պետք է բաժնետերերի տարեկան ժողով գումարի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Տնօրենների խորհուրդն իր հայեցողությամբ կարող է տարեկան ժողովը գումարելու համար ստեղծել կազմակերպիչ հանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել նաև ընկերության գործադիր մարմնի անդամները: Հաշվի առնելով բաժնետերերի տարեկան ժողովի կարևորությունը՝ կազմակերպիչ հանձնաժողովի անդամները պետք է սերտորեն համագործակցեն միմյանց հետ, որպեսզի բաժնետերերի տարեկան ժողովի կազմակերպման ընթացքում հնարավոր լինի խուսափել խոչընդոտների առաջացումից, իսկ այդպիսիք առաջանալու դեպքում՝ հաղթահարել դրանք:

Երկրորդ փուլում տնօրենների խորհուրդը ձեռնամուխ է լինում բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի ձևավորմանն ու հաստատմանը:

Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը կարող է ձևավորվել ինչպես բաժնետերերի, այնպես էլ խորհրդի անդամների կողմից:

Ընկերության բաժնետերը (բաժնետերերը), ով (ովքեր) ծայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են), ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա, կամ կանոնադրությամբ սահմանված այլ, ավելի երկար ժամկետի ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել խորհրդի և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների թիվը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված թիվը: Այս նախաձեռնությամբ բաժնետերը կարող է հանդես գալ անկախ այն հանգամանքից՝ խորհուրդը տարեկան ժողով գումարելու մասին որոշում կայացրել է, թե՛ ոչ:

Բոլոր առաջարկությունները պետք է ընկերության տնօրենների խորհրդին ներկայացվեն գրավոր և պարունակեն հետևյալ տեղեկությունները՝

- առաջարկության հիմնավորումը,
- առաջարկությունը ներկայացնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը),
- առաջարկությունը ներկայացնող բաժնետիրոջը (բաժնետերերին) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի,
- առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ ֆաքսիմիլային վերարտադրությունը:

Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ

ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, խորհրդին ներկայացվող տեղեկություններում պետք է նշվեն նաև՝

- թեկնածուի անունը,
- նրա՝ ընկերության բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը,

- նրան պատկանող՝ ընկերության բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի,

- առաջարկը ներկայացնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անունները) և նրան (նրանց) պատկանող ընկերության բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի:

Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովի օրակարգում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ դրանց ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

Տնօրենների խորհուրդը բաժնետերերի տարեկան ժողովի օրակարգ ընդգրկելու համար ներկայացված առաջարկությունները կարող է մերժել միայն հետևյալ դեպքերում՝

- եթե բաժնետերերն առաջարկությունը ներկայացրել են նախատեսված ժամկետի խախտմամբ,

- առաջարկ ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չեն տնօրինում ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն երկու տոկոսը,

- բաժնետերերի ներկայացրած առաջարկները լրիվ չեն կամ բացակայում են վերը նշված տվյալները,

- առաջարկը չի համապատասխանում օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

Տնօրենների խորհուրդը պարտավոր է ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին հիմնավորված որոշումը՝

դրա ընդունման պահից 3 օրվա ընթացքում, ուղարկել առաջարկը կամ թեկնածու ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերին):

Ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով³⁹⁰:

Օրակարգը կազմելիս բաժնետերերի տարեկան ժողովին ներկայացվող յուրաքանչյուր հարց պետք է հստակ ձևակերպված լինի: Օրակարգում չեն կարող ընդգրկվել, օրինակ, «այլ հարցեր»³⁹¹ անվանումը կրող ընդհանուր բնույթի հարցեր, քանի որ դա կսահմանափակի բաժնետերերի ժողովի օրակարգի վերաբերյալ տեղեկացված լինելու և օրակարգային հարցերին վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու՝ բաժնետիրոջ իրավունքը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է ընկերության բաժնետերերի տարեկան ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող նյութերի ու տեղեկությունների մոտավոր ցանկը, դրանք են՝

- ընկերության տարեկան հաշվետվությունը,
- ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) և ընկերության աուդիտո (հաշվառություն) իրականացնող անձի եզրակացությունը,

³⁹⁰ Այստեղ մենք կրկին հանդիպում ենք բաժնետիրոջ իրավունքների դատական կարգով պաշտպանության ուսուպիստական մեխանիզմին: Գործնականում մինչ գործի քննության ավարտը կարող է ժողովը գումարվել, և այդ դեպքում բաժնետիրոջ, թեկուզև դատարանի կողմից բավարարված պահանջը, որևէ գործնական կիրառություն չի ունենա:

³⁹¹ Կարծում ենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը պետք է բաժնետերերին հնարավորություն ընձեռի՝ այն դեպքում, երբ ժողովին մասնակցում են բոլոր բաժնետերերը և օրակարգի փոփոխությունը բացասականորեն չի անդրադառնա նրանց իրավունքների իրականացման վրա, օրակարգում կատարել լրացումներ կամ փոփոխություններ:

- տեղեկություններ խորհրդի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամության թեկնածուներ առաջադրվող անձանց մասին,

- կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ նոր խմբագրությամբ կանոնադրության նախագիծը,

- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ տեղեկություններ:

Օրենքը չի կարգավորում այն իրավիճակը, երբ ներկայացված տեղեկությունների վերաբերյալ բաժնետիրոջ նոտ առաջանում է պարզաբանումներ ստանալու անհրաժեշտություն: Խնդիր է առաջանում, թե նման իրավիճակում ընկերության որ մարմինն է պարտավոր բաժնետիրոջը պարզաբանումներ տալ կամ պատասխանել նրա հարցերին, կամ ժողովի ընթացքում արդյոք բաժնետերն իրավունք ունի հարցեր ուղղել զեկուցողներին կամ ժողովին հրավիրված այլ անձանց: Այս առումով գտնում ենք, որ, հաշվի առնելով ՏՀԶԿ սկզբունքներում առկա առաջարկները, անհրաժեշտ է օրենքով հստակ ամրագրել բաժնետիրոջ՝ հարցեր տալու իրավունքը և այդ իրավունքի իրականացման սահմաններն ու մեխանիզմները:

Երրորդ փուլում տնօրենների խորհրդի հաջորդ խնդիրը բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի, ինչպես նաև այլ անձանց³⁹² ցուցակը կազմելն է:

Բաժնետերերի ժողովին մասնակցելու իրավունք ունեն հետևյալ անձինք՝

- ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի

³⁹² Օրինակ՝ բանկային գործունեություն իրականացնող բաժնետիրական ընկերությունները պարտավոր են ՀՀ կենտրոնական բանկին ժողովի գումարումից առնվազն 15 օր առաջ ծանուցել այդ մասին («Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 21.2):

սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,

- ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,

- ընկերության բաժնետեր չհանդիսացող՝ խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

- ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը),

- ընկերության աուդիտն (հաշվեքննությունն) իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

Որոշակի հետաքրքրություն և բարդություն է ներկայացնում բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմումը: Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու և ստանալու համար տնօրենների խորհուրդը պարտավոր է դիմել ընկերության ռեեստրավարին, որի հետ ընկերության փոխհարաբերությունները կարգավորվում են ռեեստրավարի ներքին կանոններով: Ռեեստրավարի կողմից ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսի, ամսաթվի դրությամբ ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ըն-

դումունը և մինչև ժողովի գումարումը 60 օրից ոչ ուշ³⁹³:

Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

Տնօրենների խորհրդի կողմից բաժնետերերի ցուցակի կազմումը նպատակ է հետապնդում՝

- որոշել բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին,
- բաժնետերերին ծանուցել բաժնետերերի տարեկան ժողովի գումարման մասին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնետոմսերի՝ ըստ դրանց տեսակների և դասերի, մասին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքները և շահերը վերականգնելու նպատակով:

Ընկերության բաժնետիրոջ պահանջով ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է ծանոթացման նպատակով տրամադրվի ընկե-

³⁹³ Գործունեության այլ ոլորտներում ընդգրկված ընկերությունների համար սահմանված են ժողովի ամսաթվի որոշման այլ ժամկետներ, տես՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 21.2, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 25 և այլն:

րության այն բաժնետերերին, ովքեր գրանցված են ընկերության բաժնետերերի ռեստրում և տիրապետում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին³⁹⁴:

ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

Եթե բաժնետերերն իրենց բաժնետոմսերը վաճառել են մինչև բաժնետերերի տարեկան ժողով գումարելը կամ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակները կազմելուց հետո, ապա այդ բաժնետերերը պարտավոր են մինչև բաժնետերերի տարեկան ժողովն իրենց ձայնի իրավունքը փոխանցել բաժնետոմսերի նոր սեփականատերերին³⁹⁵:

Երրորդ փուլում բաժնետերերը պետք է ծանուցվեն բաժնետերերի տարեկան ժողովի գումարման մասին: Բաժնետերերի կողմից ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի իրականացման կարևոր երաշխիքներից է բաժնետերերի ժողովի գումարման մասին պատշաճ կերպով ծանուցված լինելը: Օրենքը սահմանում է ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց գումարվող ժողովի մասին ծանուցելու երեք եղանակ՝

- գրավոր ծանուցում ուղարկելով,
- ժողով գումարելու մասին որոշումը հրապարակելով,
- ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ եղա-

³⁹⁴ Կարծում ենք, որ օրենքով սահմանված 10 տոկոսանոց շեմը շատ բարձր է և բաժնետոմսերի փոքր փաթեթներին տիրապետող անձանց հնարավորություն չի տալիս լիարժեք կերպով իրականացնել իրենց իրավունքները: Այդ իսկ պատճառով, առաջարկում ենք այդ շեմը նվազեցնել մինչև 1 տոկոս, քանի որ 1 տոկոսի սեփականատեր հանդիսացող անձը, որը կարող է կառավարման մարմինների անդամներից, մեր կողմից կատարված առաջարկի պայմաններում՝ նաև խոշոր բաժնետիրոջից պահանջել ընկերության պատճառված վնասների հատուցում:

³⁹⁵ Այս ընթացքում ի հայտ եկող խնդիրներին մենք արդեն անդրադարձել ենք սույն աշխատության 2-րդ գլուխ:

նակով:

ժողովի գումարման մասին ծանուցման ձևը, այդ թվում՝ նաև մամուլի այն միջոցը, որում պետք է հրապարակվի ծանուցումը, սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ:

Եթե կանոնադրությամբ ծանուցման ձև սահմանված չէ, ապա ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցվում են պատվիրված նամակի կամ ծանուցման մասին նամակն անձամբ հանձնելու միջոցով³⁹⁶:

Որպես կանոն, ժողովի գումարման մասին ծանուցելու ժամկետը սահմանվում է կանոնադրությամբ, իսկ 50-ից ավելի բաժնետերեր ունեցող ընկերությունները պարտավոր են ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ:

ժողովի մասին ծանուցումը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը,
- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
- ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը,
- ժողովում քննարկվող հարցերին վերաբերող այն տեղեկություններին և նյութերին ծանոթանալու կարգը, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում:

ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս դրան մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթեր-

³⁹⁶ Ներկայումս լայն տարածում է գտել էլեկտրոնային փոստով ծանուցման եղանակը, որը ժողովների գումարման գործընթացը բավականին դյուրին է դարձնում:

թիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են օրենքով սահմանված կարգով ծանոթանալու համար բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը:

Եթե ընկերության բաժնետերերի ռեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, ուն շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ իր և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 71, կետ 6):

Չորրորդ փուլում վերը թվարկված գործողությունների կատարումից հետո անցկացվում է բաժնետերերի տարեկան ժողովը, որը տեղի է ունենում որոշակի ընթացակարգով:

Նախ և առաջ անցկացվում է ժողովին ներկա բաժնետերերի գրանցում: Գրանցումը սովորաբար կատարվում է ընկերության կանոնադրությամբ նշված մարմնի կամ անձանց կողմից: Գործնականում բաժնետերերի գրանցումը կատարում են այն անձինք, ովքեր բաժնետերերին ծանուցել են տարեկան ժողովի մասին կամ զբաղվել ժողովի գումարման կազմակերպչական հարցերով:

Բաժնետերերին գրանցելու համար գրանցումն իրականացնող անձինք պարտավոր են`

- ստուգել բաժնետերերի կամ նրանց ներկայացուցիչների` ժողովին մասնակցելու իրավունքը հաստատող փաստաթղթերը,
- գրանցել ժողովին մասնակցող բաժնետերերին կամ նրանց ներկայացուցիչներին:

Ընկերության վերակազմակերպման, ընկերության լուծարման, բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման,

ինչպես նաև ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման հարցերով պետությանը կամ համայնքին պատկանող բաժնետոմսերով ընկերությունների ընդհանուր ժողովներում լիազորված պետական մարմինը (մարմինները) կամ վերջիններիս կողմից լիազորված անձը (անձինք) որոշումների ընդունմանը մասնակցում են միայն կառավարության (պետությանը պատկանող բաժնետոմսերով) կամ համայնքի (համայնքին պատկանող բաժնետոմսերով) ղեկավարի (ավագանու համաձայնությամբ) համապատասխան որոշման առկայության դեպքում:

Հնարավոր են դեպքեր, երբ ժողովը կարող է տևել մեկ օրից ավելի: Նման դեպքերում յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է ժողովի մասնակիցների գրանցում:

Գրանցումն ավարտելուց հետո, մինչև ժողովը բացելը, բաժնետերերին կամ նրանց ներկայացուցիչներին գրանցող մարմինը կամ անձինք ստուգում և հավաստում են բաժնետերերի տարեկան ժողովի քվորումը: Քվորումը որոշվում է՝ ելնելով անձանք ներկա կամ լիազորված անձի միջոցով ներկայացված բաժնետերերի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի քանակից: Բաժնետերերի տարեկան ժողովը կարող է բացվել միայն քվորումի առկայության դեպքում:

Ժողովն իրավասու է, եթե գրանցման ավարտի պահին գրանցվել են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 տոկոսից ավելիին տիրապետող բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները: Իսկ եթե ընկերության բաժնետերերին քվեաթերթիկներ են ուղարկվել, ապա քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվում նաև մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը ստացած քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր

ժողովի գումարման տարին, ամիսը և ամսաթիվը³⁹⁷: Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30 տոկոսից ավելին տիրապետող բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 77, կետ 3):

Բաժնետերերին նոր ժողով տեղի ունենալու մասին ծանուցվում է ընդհանուր կարգով, ժողովի գումարումից առնվազն 10 օր առաջ: Եթե ժողովի գումարման օրը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

Բաժնետերերի գրանցումն ավարտելուց և քվորումն ապահովելուց հետո է միայն տեղի ունենում բաժնետերերի տարեկան ժողովի բացումը:

Այնուհետև ժողովը բացող անձն առաջարկում է ձևավորել հաշվիչ հանձնաժողով, ընտրել ժողովի նախագահ և ժողովի քարտուղար: 50-ից ավելի բաժնետեր ունեցող ընկերություններում ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով: Անհրաժեշտ է նշել, որ եվրոպական մի շարք երկրների բաժնետիրական ընկերությունների մասին օրենսդրության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ երկրների օրենսդրությունը հաշվիչ հանձնաժողովի մասին որևէ դրույթ չի պարունակում, և այդ հարցերը հիմնականում կարգավորվում են բաժնետիրական ընկերությունների կանոնադրություններով³⁹⁸: Հանձնաժողովի թվական կազմը և անդամները, ինչպես նաև լիազորությունների ժամկետը սահման-

³⁹⁷ Ինչպես տեսանք, օրենքը չկայացած ժողովի փոխարեն նոր ժողով գումարելու մասին ծանուցման մեջ ժողովի գումարման ժամը և վայրը նշելու պահանջ չի սահմանում, ինչը, մեր կարծիքով, կարող է հանգեցնել ժողովին մասնակցելու իրավունքի իրականացման անհնարինության:

³⁹⁸ St' u Aktsionerное общество и товарищество с ограниченной ответственностью, сборник зарубежного законодательства. М., изд-во "БЕК", 1995:

վում են ժողովի որոշմամբ՝ խորհրդի ներկայացմամբ³⁹⁹ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 75, կետ 1): Օրենսդիրը որևէ արգելք չի սահմանում նաև 50-ից պակաս բաժնետեր ունեցող ընկերություններում հաշվիչ հանձնաժողով ստեղծելու հարցում: Սակայն օրենսդրի կողմից չի կարգավորվում այն հարցը, թե 50-ից պակաս բաժնետեր ունեցող ընկերություններում հաշվիչ հանձնաժողով չստեղծելու դեպքում ով պետք է իրականացնի հաշվիչ հանձնաժողովին վերապահված իրավասությունները: Կարծում ենք, որ նման դեպքերում հաշվիչ հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացման պարտականությունը պետք է կատարի ժողովի նախագահը, քանի որ նա է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար սահմանված պատասխանատվությունը:

Հաշվիչ հանձնաժողովի կազմը չի կարող 3 անձից պակաս լինել, ինչպես նաև հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել խորհրդի անդամները, վերահսկիչ հանձնաժողովի անդամները (հսկիչը), տնօրենը (գլխավոր տնօրենը) կամ ընկերության տնօրինության, վարչության անդամները, ինչպես նաև այն անձինք, ովքեր առաջադրված են որպես այդ պաշտոնների թեկնածուներ:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը նման սահմանափակումներ մտցնելով ցանկացել է նվազագույնի հասցնել քվեարկությունների արդյունքների ամփոփման վրա ընկերության գործադիր մարմնի ազդեցության հնարավորությունը և ապահովել հանձնաժողովի անդամների անկախությունը:

500-ից ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում հաշվիչ հանձնաժողովի գործառույթները կարող են վերապահվել մասնագիտացված գրանցողին («Բաժնետիրական ընկերություններ-

³⁹⁹ Հաշվիչ հանձնաժողովը կարող է ստեղծվել ինչպես որպես ընդհանուր ժողովին կից մշտապես գործող մարմին, այնպես էլ մեկ տարի կամ ավելի կամ պակաս ժամկետով գործող մարմին կամ այդ լիազորությունը ժողովը կարող է պատվիրակել ընկերության ռեսուրսավարին:

րի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 75, կետ 3): Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների իրականացման իրավասությունը մասնագիտացված գրանցողին կարող է հանձնվել նաև 500-ից պակաս բաժնետեր ունեցող ընկերություններում: Այն դեպքում, երբ հաշվիչ հանձնաժողովի գործառույթների իրականացման իրավասությունը հանձնվում է մասնագիտացված գրանցողին, ապա ընկերության և գրանցողի միջև պետք է կնքվի համապատասխան պայմանագիր, որով պետք է սահմանվի նաև մասնագիտացված գրանցողի կողմից մատուցվող ծառայությունների գինը և ծառայությունների մատուցման այլ պայմանները:

Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումից հետո այն ձեռնարկում է լինում իրեն վերապահված գործառույթների իրականացմանը: Հաշվիչ հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- որոշում է ժողովի քվորումը,
- բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացառություններ է տալիս ժողովում օրակարգի հարցերով քվեարկության կարգի վերաբերյալ,
- ապահովում է քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը,
- իրականացնում է ձայների հաշվարկը,
- ամփոփում է քվեարկության արդյունքները,
- դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություններ և քվեաթերթիկները փոխանցում է ընկերության արխիվ:

Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումից հետո տեղի է ունենում ժողովի նախագահի ընտրությունը: Բաժնետերերի տարեկան ժողովը, որպես կանոն, նախագահում է տնօրենների խորհրդի նախագահը, եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Եթե տնօրենների խորհրդի նախագահը նաև ընկերության գլխավոր տնօրենն է, ապա ցանկալի է, որպեսզի բաժնետերերի տարեկան ժողովը նախագահի տնօրենների խորհրդի մեկ այլ անդամ: Ընկերության կանոնադրությու-

նը և ներքին կանոնակարգող փաստաթղթերը կարող են առավել մանրամասնել բաժնետերերի տարեկան ժողովի նախագահի ընտրության կարգը:

Այնուհետև, ընտրվում է ժողովի քարտուղար, որն ապահովում է ժողովում քննարկված կամ բարձրացված հարցերի, ինչպես նաև ընդունված որոշումների արձանագրումը:

Որոշ դեպքերում ընկերությունը կարող է բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու համար հրավիրել նաև ընկերության բաժնետեր չհանդիսացող հնարավոր ներդրողների, ընկերության աշխատակիցների, պետական պաշտոնատար անձանց, լրագրողների, փորձագետների և այլ անձանց ու կազմակերպությունների ներկայացուցիչների: Այդ դեպքում բաժնետերերը պետք է լուծեն հյուրերի ներկա գտնվելու նպատակահարմարության հարցը: Այս հարցն օրենքում իր կարգավորումը չի գտել, սակայն բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու համար հյուրեր հրավիրելու կարգը կարող է առավել հստակ կարգավորվել ընկերության կանոնադրությամբ ու ներքին կանոնակարգող այլ փաստաթղթերով:

Վերը նշված հարցերի լուծումից հետո, ժողովի նախագահը՝ բաժնետերերին է ներկայացնում ժողովի օրակարգը, պարզաբանում է ժողովի վարման կարգը և նրա հանձնարարությամբ հաշվիչ հանձնաժողովի նախագահը բաժնետերերին բացատրում է քվեարկության կարգը:

Մեկ կամ մի քանի հարց քննարկելուց հետո ժողովի նախագահն առաջարկում է անցկացնել դրանց առնչությամբ քվեարկություն: Բաժնետերերը չեն կարող քվեարկել այն հարցերի առնչությամբ, որոնք ընդգրկված չեն ընկերության բաժնետերերի տարեկան ժողովի օրակարգում:

50-ից ավելի բաժնետեր ունեցող ընկերություններում ընդհանուր ժողովների ժամանակ քվեարկությունները կատարվում

են քվեաթերթիկների միջոցով⁴⁰⁰: Քվեաթերթիկը տպագրված փաստաթուղթ է, որը հնարավորություն է տալիս քվեարկել բաժնետերերի տարեկան ժողովում: Քվեաթերթիկների միջոցով քվեարկությունը բաժնետերերին թույլ է տալիս գաղտնի պահել իրենց որոշումները, քանզի քվեարկության անհատական արդյունքների մասին տեղյակ են լինում միայն հաշվիչ հանձնաժողովի անդամները: Քվեաթերթիկների միջոցով քվեարկությունը կարևոր է նաև բաժնետերերի իրավունքները պաշտպանելու և իրացնելու համար (օրինակ՝ բաժնետոմսերի հետզնում պահանջելիս): Քվեաթերթիկը բաժնետիրոջը հնարավորություն է ընձեռում հավաստելու բաժնետերերի տարեկան ժողովի ընթացքում օրակարգի հարցերի վերաբերյալ իր տված քվեները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այն կարող է դատարանում ծառայել որպես ապացույց՝ հաստատելու այն հանգամանքը, թե այս կամ այն հարցի վերաբերյալ բաժնետիրոջ ցուցաբերած մոտեցումն ինչպիսին է եղել, այսինքն՝ քվեարկել է կողմ, դեմ, թե մնացել է ձեռնպահ:

Քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը հաստատվում են ընկերության տնօրենների խորհրդի կողմից, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ընկերության ֆիրմային անվանումը,
- ժողովի գումարման տարին, անիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
- քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և դրա քննարկման հերթականությունը,

⁴⁰⁰ 50-ից պակաս բաժնետեր ունեցող ընկերություններում գործնականում լուրջ խնդիրներ են առաջանում քվեարկության դրված այս կամ այն հարցի շուրջ կոնկրետ բաժնետիրոջ արտահայտած դիրքորոշման ապացուցման հետ կապված: Մասնավորապես, դժվար է լինում ապացուցել, թե կոնկրետ հարցի վերաբերյալ ով է կողմ քվեարկել և ով՝ դեմ: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք օրենքով բոլոր դեպքերի համար սահմանել քվեաթերթիկների միջոցով քվեարկության պարտադիր պահանջ:

• քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ»⁴⁰¹,

• լրացված քվեաթերթիկներն ընկերության կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը, եթե բաժնետերերը քվեարկում են հեռակա կարգով,

• ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (ներկայացուցչի) կողմից,

• քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը,

• խորհրդի, վերստուգող հանձնաժողովի անդամի (վերստուգողի) ընտրության դեպքում քվեաթերթիկը թեկնածուի անունից բացի պետք է պարունակի նաև նրան անհատականացնող այլ տեղեկություններ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 79, կետ 3):

Քվեաթերթիկի ձևը կախված է բաժնետերերի տարեկան ժողովի քվեարկության ընթացակարգից: Քվեաթերթիկը կարող է իրենից ներկայացնել մեկ փաստաթուղթ, որում նշված են քվեարկության դրվող բոլոր հարցերը: Այս դեպքում հաշվիչ հանձնաժողովը քվեարկության արդյունքները ներկայացնում է ժողովի նախագահին՝ օրակարգի բոլոր հարցերի շուրջ քվեարկելուց հետո: Քվեաթերթիկը կարող է նաև բաղկացած լինել մի քանի էջից, որոնցից յուրաքանչյուրում նշվում է քվեարկության դրվող հարցը (հարցերը): Այս դեպքում հաշվիչ հանձնաժողովը քվեար-

⁴⁰¹ Գտնում ենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը բաժնետիրոջը չպետք է իրավունք վերապահի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ ունենալ չեզոք դիրքորոշում և քվեարկել ձեռնպահ: Ձեռնպահ քվեարկելու հնարավորության տրամադրումը բաժնետիրոջ կողմից պատասխանատվությունից խուսափելու ոչնչով չհարդարացված միջոց է: Բաժնետերը պետք է հասկանա, որ ընկերությունում մասնակցություն ձեռք բերելու հանգամանքը նրանից պահանջում է ընկերության կառավարման հարցում ցուցաբերել անհրաժեշտ շրջափայլացություն և հոգածություն, ինչը ներառում է նաև հստակ որոշումներ կայացնելու ունակություն:

կության արդյունքները ներկայացնում է ժողովի նախագահին յուրաքանչյուր էջում նշված հարցի (հարցերի) վերաբերյալ քվեարկությունից հետո:

Քվեաթերթիկը վավեր է միայն այն դեպքում, եթե բաժնետերը քվեաթերթիկը լրացնում է օրենքով սահմանված կարգով, հակառակ դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր: Քվեաթերթիկը ճիշտ լրացնելու համար քվեարկողը թողնում է իր համար նախընտրելի պատասխանի մեկ տարբերակը, իսկ մյուս երկուսը ջնջում է: Այս մեթոդը թույլ է տալիս կանխել քվեաթերթիկի հետագա փոփոխությունները: Եթե քվեաթերթիկը բովանդակում է քվեարկության դրված մի քանի հարց, ապա մեկ հարցի վերաբերյալ սխալ քվեարկելը չի հանգեցնում ամբողջ քվեաթերթիկի անվավերության:

Եթե ընկերությունն ունի 500-ից ավելի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր, ապա քվեաթերթիկները բաժնետերերին պետք է ուղարկվեն պատվիրված նամակով կամ անձամբ հանձնելու միջոցով՝ ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Ձայների հաշվարկը կարող է կատարվել ինչպես մեկ հարցի վերաբերյալ քննարկումն ավարտելուց անմիջապես հետո կատարված քվեարկության, այնպես էլ մի քանի հարցերի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո կատարված քվեարկությունների հիման վրա, որից հետո հաշվիչ հանձնաժողովն արձանագրության մեջ ամփոփում է քվեարկության արդյունքները և ներկայացնում բաժնետերերի տարեկան ժողովի նախագահին:

Օրակարգում տեղ գտած բոլոր հարցերը քննարկելուց և դրանց առնչությամբ քվեարկություններից հետո նախագահը փակում է բաժնետերերի տարեկան ժողովը:

Հաշվիչ հանձնաժողովը կամ հանձնաժողովի գործառույթներն իրականացնող անձը պետք է արձանագրի բաժնետերերի

տարեկան ժողովում կայացած քվեարկությունների արդյունքները և.

առաջին՝ կազմի արձանագրություն՝ նշելով բաժնետերերի տարեկան ժողովի քվեարկության արդյունքները,

երկրորդ՝ ապահովի, որպեսզի հաշվիչ հանձնաժողովի անդամներն ստորագրեն հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները (եթե հաշվիչ հանձնաժողովի գործառույթներն իրականացնում է այլ անձ, ապա արձանագրությունն ստորագրում է այդ անձը),

երրորդ՝ արձանագրությունն ստորագրելուց անմիջապես հետո զմռսի քվեաթերթիկներն ամփոփող ծրարը և այն հանձնի ընկերության արխիվ՝ պահպանության համար:

Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ ժողովում, կամ ժողովի ավարտից հետո բաժնետերերը իրազեկվում են քվեարկությունների արդյունքների մասին՝ հաշվետվության հրապարակման կամ այն բաժնետերերին ուղարկելու միջոցով: Բաժնետերերն իրավունք ունեն ժանոթանալու քվեարկությունների արդյունքների արձանագրություններին:

Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում կազմվում է երկու օրինակից բաղկացած ժողովի արձանագրություն, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար պատասխանատվություն է կրում ժողովի նախագահը: Արձանագրությունում պարտադիր կարգով նշվում են՝

- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,
- ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը,
- ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը,
- ժողովի նախագահը և քարտուղարը, ժողովի օրակարգը,

- ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները,
- քվեարկության դրված հարցերը և դրանց վերաբերյալ քվեարկության արդյունքները,
- ժողովի ընդունած որոշումները:

Որպես կանոն, արձանագրությունները կարվում են ընկերության արձանագրությունների գրքում, որը պահվում է ընկերության այլ գրքերի և գրանցամատյանների հետ: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները կցվում են բաժնետերերի տարեկան ժողովի արձանագրությանը: Բաժնետերերը տարեկան ժողովի որոշումների, ինչպես նաև քվեարկության արդյունքների վերաբերյալ պետք է տեղեկացվեն ժողովի ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում:

Բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությունը սովորաբար անց է կացվում «ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների ընտրության և օրենքով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կոմուլյատիվ) քվեարկության սկզբունքը⁴⁰² («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 78, մաս 1):

Բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝

- ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.
- ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

Ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմս է համարվում այն հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսը, որն իր սեփականատիրոջը տալիս է քվեարկվող հարցի վերա-

⁴⁰² Գումարային (կոմուլյատիվ) քվեարկության դեպքում յուրաքանչյուր քվեարկող բաժնետոմս ունի խորհրդի ընտրվող կամ վերընտրվող անդամների թվաքանակին հավասար թվով ձայներ:

բերյալ քվեարկությանը մասնակցելու իրավունք: Բաժնետիրոջ քվեարկությանը մասնակցելու իրավունքը որոշակի հանգամանքներում կարող է սահմանափակվել, օրինակ, դատարանի որոշմամբ՝ որպես հայցի ապահովման միջոց⁴⁰³:

Օրենքը հնարավոր է համարում, որ արտոնյալ բաժնետոմսն իր սեփականատիրոջը տա մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք: Եթե արտոնյալ բաժնետոմսն իր սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք, ապա քվեարկող բաժնետոմսերի քանակի հաշվարկման ժամանակ նշված արտոնյալ բաժնետոմսերի տված յուրաքանչյուր ձայն հաշվառվում է որպես առանձին քվեարկող բաժնետոմս: Այսինքն՝ այս դեպքում «ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքը կիրառելիս արտոնյալ բաժնետոմսերի տված ձայների քանակի հաշվարկն իրականացվում է վերը նշված կարգի պահպանմամբ:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի, գումարվող բոլոր ժողովները համարվում են արտահերթ: Չնայած բաժնետերերի արտահերթ ժողով գումարելու կարգը մեծամասամբ նման է բաժնետերերի տարեկան ժողովի գումարման կարգին, այնուամենայնիվ, արտահերթ ժողովի գումարման հետ կապված գոյություն ունեն որոշակի առանձնահատկություններ և տարբերություններ:

Բաժնետերերի արտահերթ ժողովներ գումարելն ինքնապատակ չէ և, որպես կանոն, դրանք գումարվում են ընկերության գործունեության հետ կապված անհետաձգելի հարցերը քննարկելու և լուծելու անհրաժեշտությունից ելնելով:

Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝

⁴⁰³ Դատարանների կողմից կիրառվող հայցի ապահովման նման միջոցի իրավաչափության և սահմանների մասին առավել մանրամասն տես Boyle A. J. *Minority Shareholders' Remedies*, Cambridge Studies in Corporate Law, Cambridge, 2004, էջ 81-83, ԳԳ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1246/02/09 քաղաքացիական գործով 2010 թվականի դեկտեմբերի 27-ին կայացված որոշումը:

- խորհրդի սեփական նախաձեռնությամբ,
- ընկերության գործադիր մարմնի,
- վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի),
- ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ
- պահանջը ներկայացնելու դրությամբ ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի)՝ արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում, և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:

Եթե արտահերթ ժողով գումարելու պահանջը ներկայացվում է ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից⁴⁰⁴, ապա այն պետք է պարունակի պահանջը ներկայացնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:

Արտահերթ ժողով գումարելու պահանջը պետք է ստո-

⁴⁰⁴ Մենք համաձայն ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետին, որ օրենքն անհարկի սահմանափակում է բաժնետիրոջ իրավունքը նրան միայն արտահերթ ժողովներ գումարելու իրավասություն տրամադրելով, այնինչ պրակտիկայում քիչ չեն այն դեպքերը, երբ ընկերության կառավարման մարմինները հրաժարվում են գումարել տարեկան ժողով և այն գումարելու միակ շահագրգիռ անձը մնում է բաժնետերը (այդ մասին առավել մանրամասն տես՝ Семенов А. С. Нормативно-правовые и прикладные проблемы регулирования подготовки и проведения общего собрания акционеров // Акционерное общество. Вопросы корпоративного управления, 2006, N 1 /20/, էջ 34):

րագրված լինի ժողովը գումարելու պահանջ ներկայացրած անձի (անձանց) կողմից:

Արտահերթ ժողով գումարելու մասին պահանջը ներկայացնելու ամսաթվից սկսած 10 օրվա ընթացքում խորհուրդը պետք է որոշում ընդունի արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին:

Եթե խորհուրդը որոշում է կայացնում արտահերթ ժողովի գումարման մասին, ապա այն պետք է գումարվի պահանջը ներկայացնելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ նախ և առաջ պետք է սահմանվի արտահերթ ժողովի գումարման ձևը՝

- բաժնետերերի համատեղ ներկայությամբ,
- հեռակա կարգով քվեարկության միջոցով⁴⁰⁵:

Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին: Խորհուրդն իրավունք չունի նաև փոփոխություններ մտցնելու արտահերթ ժողովի գումարման պահանջը ներկայացրած անձի կողմից առաջարկվող օրակարգում, ինչպես նաև փոփոխելու օրակարգի քննարկման ենթակա հարցերի առաջարկվող ձևակերպումները, բացառությամբ այն դեպքի, երբ առաջարկվող օրակարգի հարցերն օրենքով և կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ժողովի իրավասության առարկա:

Ինչպես նշվեց, բաժնետերերի արտահերթ ժողովը կարող է անցկացվել նաև հեռակա կարգով, դրանով իսկ բաժնետերերին հնարավորություն ընձեռելով ժողովներում քվեարկել և որոշում-

⁴⁰⁵ Գրականության մեջ առաջարկվում է նաև ժողովի անցկացման խառը ձևի կիրառությունը, ինչը, մեր կարծիքով, տրամաբանական չէ. այդ մասին առավել մանրամասն տես՝ *Корпоративное право, под ред. И.С. Шиткина, М., 2007, էջ 318:*

ներ ընդունել հեռակա կարգով⁴⁰⁶: Այսինքն՝ բաժնետերերի ընդհանուր ժողով կարող է անցկացվել առանց բաժնետերերի կամ նրանց ներկայացուցիչների ֆիզիկական ներկայության: Հեռակա կարգով անցկացվող բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 50 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը մասնակցել են քվեարկությանը:

Այն դեպքում, երբ ժողովի գումարման ձև է ընտրվում հեռակա կարգով քվեարկությունը, ապա խորհրդի որոշմամբ պետք է սահմանվեն՝

- քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը.
- ընկերության բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերն առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- բաժնետերերի լրացած քվեաթերթիկների՝ ընկերության կողմից ընդունման վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:

Բաժնետերերը կարող են հեռակա կարգով քվեարկել և որոշումներ ընդունել բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը ենթակա գրեթե բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ հետևյալ հարցերի.

- ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների,
- շահույթների և վնասների հաշվի,
- շահույթների և վնասների բաշխման հաստատման,
- տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաս-

⁴⁰⁶ Օրենքը հստակ չի կարգավորում հեռակա քվեարկության կարգով ժողովի անցկացման կարգը, մասնավորապես, պարզ չի այս դեպքում հաշվիչ հանձնաժողով ստեղծվում է, թե՛ ոչ, ուղարկված ծրարները երբ են բացվում, ում կողմից և այլն: Կարծում ենք, որ նման պայմաններում ընկերությունները պետք է այդ ընթացակարգերը հստակեցնեն իրենց կանոնադրություններում:

տատման:

Խորհուրդն արտահերթ ժողով գումարելու պահանջը մերժելու մասին որոշումը կարող է ընդունել միայն այն դեպքում, եթե՝

- խախտվել է օրենքով սահմանված արտահերթ ժողովի գումարման պահանջը ներկայացնելու կարգը.

- արտահերթ ժողովի՝ գումարման պահանջը ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) տնօրինում օրենքով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսեր.

- արտահերթ ժողովի օրակարգի հարցերից ոչ մեկը չի վերաբերում օրենքով և կանոնադրությամբ սահմանված ժողովի իրավասությանը.

- ժողովի օրակարգում ընդգրկելու համար առաջարկված հարցը չի համապատասխանում օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

Արտահերթ ժողովի գումարման կամ դրա գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պահանջը ներկայացրած անձանց ուղարկվում է որոշման ընդունման պահից՝ եռօրյա ժամկետում:

Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Եթե տնօրենների խորհուրդը մերժում է արտահերթ ժողով գումարելու մասին պահանջը կամ պահանջն ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում որոշում չի ընդունում բաժնետերերի արտահերթ ժողով գումարելու վերաբերյալ, ապա պահանջ ներկայացնող անձինք կարող են գումարել բաժնետերերի արտահերթ ժողով՝ իրենց հաշվին: Կարծում ենք, որ նման դեպքերի համար օրենքը պետք է արձանագրեր նաև այն հանգամանքը, որ այդ անձին են անցնում ժողովը գումարելու իրավունք ունե-

ցող անձի բոլոր իրավասությունները⁴⁰⁷: Նման դրույթն առավել դյուրին կդարձնի ռեեստրավարի և այդ գործընթացում ընդգրկված այլ անձանց հետ փոխհարաբերությունները: Այս դեպքում ժողովը կարող է որոշում կայացնել ժողովի գումարման հետ կապված ծախսերն ընկերության միջոցների հաշվին հատուցելու մասին⁴⁰⁸:

Որոշ հեղինակներ գտնում են, որ 10 տոկոս քվեարկող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրոջը նման իրավունքի տրամադրումը տարատեսակ խարդախությունների համար պարարտ հող է ստեղծում, արդյունքում՝ ընկերությունը և մյուս բաժնետերերը դառնում են 10 տոկոս քվեարկող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրոջ «ահաբեկչական գործողությունների» զոհ: Որպես լուծում առաջարկվում է այս իրավունքի իրականացման գործում սահմանել լրացուցիչ արգելք, այն է՝ խորհրդի որոշումը դատական կարգով վիճարկելուց հետո միայն բաժնետիրոջը հնարավորություն տալ օգտվել այդ իրավունքից⁴⁰⁹:

Նշված տեսակետը մեր կողմից ընդունելի չէ, քանի որ այս իրավունքի տրամադրումը բաժնետիրոջ իրավունքի ինքնապաշտպանության արդյունավետ հնարավորություն է, իսկ դատական կարգով խորհրդի գործողությունը վիճարկելուց հետո բաժնետիրոջն արտահերթ ժողով գումարելու հնարավորության

⁴⁰⁷ Օրինակ, «Տաքսի 1» ԲԲԸ-ի 10 տոկոս և ավելի տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականտիրոջը մեր կողմից մատուցված իրավաբանական խորհրդատվության ժամանակ պարզվեց, որ խորհրդի անդամներն արտահերթ ժողով գումարելուց հրաժարվում էին պարզապես այն պատճառով, որ օրակարգում ներառված էր նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը:

⁴⁰⁸ Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ բաժնետիրոջ մախաձեռնությամբ գումարվել են բաժնետերերի արտահերթ ժողովներ և կայացվել են ընկերության կենսագործունեության համար էական նշանակություն ունեցող որոշումներ, օրինակ՝ «Ջերմուկի մայր գործարան» և «Տաքսի 1» ԲԲԸ-ների կողմից 2004 և 2005 թվականներին գումարված արտահերթ ժողովները:

⁴⁰⁹ Տե՛ս Цепов Г.В. Акционерные общества: теория и практика, М., 2006, էջ 157:

ընձեռունը որևէ տրամաբանության մեջ չի տեղավորվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները բաժանում է երկու խմբի՝ ժողովի բացառիկ իրավունքների և ոչ բացառիկ իրավունքների (ՀՀ քաղ. օր-ի հոդվ. 115, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 67): Ժողովի բացառիկ իրավունքների թվին են դասվում այն հարցերը, որոնց վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունքը ոչ մի պարագայում չի կարող փոխանցվել խորհրդին կամ գործադիր մարմնին: Իսկ ոչ բացառիկ իրավունքների թվին դասվում են այն հարցերը, որոնց վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավունքը կարող է փոխանցվել կամ խորհրդին, կամ գործադիր մարմնին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն է վերապահում հետևյալ հարցերի վերաբերյալ որոշումների կայացումը.

- կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելը, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
- ընկերության վերակազմակերպումը,
- ընկերության լուծարումը,
- ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
- խորհրդի թվական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի թվական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

- հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

- բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ընկերության ձեռք բերած կամ հետ գնած բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

- ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Այդ հարցերն արտահերթ ժողովում կարող են քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

- ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

- ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

- ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի ձեռքբերման` ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

- ժողովի վարման կարգը,

- հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

- ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի տրման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային

լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

- բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը), բաժանումը,

- շահագրգռության առկայության դեպքում գործարքների կնքման մասին օրենքով սահմանված կարգով որոշումներ կայացնելը,

- ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին օրենքով սահմանված կարգով որոշումներ կայացնելը (եթե գործարքի արժեքը կնքելու պահին կազմում է ընկերության ակտիվների արժեքի 50 տոկոսից ավելին),

- ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամների, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի ոչ բացառիկ իրավունքների թվին են դասվում.

- բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

- ընկերության գործադիր մարմնի (կոլեգիալ կամ միանձնյա) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին,

- ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,

- դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

- դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը,

- հողդինգային ընկերությունների⁴¹⁰, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,

- հողդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը:

Դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման, դուստր և կախյալ ընկերություններում մասնակցության, հողդինգային ընկերություններին, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրմանը, հողդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությանը վերաբերող հարցերով վերապահված լիազորությունները ժողովի կողմից իրականացվում են այն դեպքում, եթե դրանք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ վերապահված չեն տնօրենների խորհրդին:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կամ կանոնադրությամբ ընկերության տնօրենների խորհրդին կարող են վերապահվել հետևյալ իրավասությունները՝

- բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

- ընկերության գործադիր մարմնի (կոլեգիալ կամ միանձնյա) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը (այս իրավունքի իրականացումը խորհրդին կարող է վերապահվել ինչպես ժողովի որոշմամբ, այնպես էլ կանոնադրությամբ),

- ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,

- դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

- դուստր և կախյալ ընկերություններում մասնակցություն-

⁴¹⁰ Ցանկանում ենք նշել, որ ՀՀ օրենսդրությունը հողդինգային ընկերությունների հասկացությունը չի բանաձևում և այս առումով որոշում կարող է կայացվել միայն այլ պետություններում նմանատիպ ընկերություններում մասնակցության մասին:

նը,

- հողդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,

- հողդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը:

Իսկ գործադիր մարմինն՝

- դուստր և կախյալ ընկերություններում մասնակցության,
- հողդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրման,

- հողդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցության իրավասությունները:

ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք օրենքով չեն սահմանվել որպես նրա իրավասություն («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 67, կետ 3): Ըստ էության, օրենսդիրը սահմանում է իրավասությունների կոնկրետ շրջանակ, որից ընդհանուր ժողովը դուրս գալ չի կարող:

Մենք կիսում ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ օրենքով ընդհանուր ժողովի իրավասությունները չպետք է սահմանափակվեն, քանի որ մյուս մարմինների իրավասություններն անմիջականորեն բխում են ժողովի իրավասություններից⁴¹¹, հետևաբար, օրենքով պետք է նախատեսվեն այն իրավիճակները, երբ ժողովը կարող է ստանձնել այս կամ այն մարմնի լիազորությունները⁴¹²:

ժողովի քննարկմանը ներկայացված հարցերով որոշում-

⁴¹¹ St'u Долинская В.В. Акционерное право: основные положения и тенденции, М., 2006, էջ 519, Комментарий к Федеральному закону об акционерных обществах, под ред. М.Ю. Тихомирова, М., 1996, էջ 255-256:

⁴¹² Օրինակ, խորհուրդը կամ գործադիր մարմինը սուբյեկտիվ կամ օբյեկտիվ պատճառներով չի կատարում իր լիազորությունները և անհրաժեշտ է օպերատիվ կարգով կայացնել ընկերության համար կենսական նշանակություն ունեցող որևէ որոշում:

ներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ կամ որակյալ մեծամասնությամբ: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել ձայների որակյալ մեծամասնության երեք տեսակ.

- ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով,

- ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից ոչ պակաս,

- կանոնադրությամբ նախատեսված դեպքերում կարող է սահմանվել ձայների ավելի բարձր քանակ:

Ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով որոշումներն ընդունվում են.

- կանոնադրության հաստատման, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու,

- ընկերության վերակազմակերպման,

- ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատման, լուծարային հանձնաժողովի նշանակման,

- հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանման,

- խոշոր գործարք կնքելու մասին որոշում ընդունելու դեպքերում:

Խոշոր գործարք կնքելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից, եթե.

ա) գործարքի առարկան է այն գույքը, որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 տոկոսը (եթե գործարքը կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել),

բ) գործարքի առարկան է այն գույքը, որի արժեքը գործարք-

քը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին:

Իսկ ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից ոչ պակաս, որոշումներն ընդունվում են.

- ընկերության լուծարման.
- բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ընկերության կողմից ձեռք բերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման դեպքերում:

Կանոնադրությամբ ձայների ավելի բարձր քանակ կարող է սահմանվել հետևյալ հարցերով որոշումներ կայացնելիս.

- կանոնադրության հաստատման, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելիս,

- շահագրգռվածություն ներառող գործարք կնքելիս:

Եթե ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է միայն մեկ անձ, ապա ժողովի որոշումները կարող են ընդունվել այդ անձի գրավոր որոշմամբ⁴¹³: Բաժնետեր իրավաբանական անձի որոշումը պետք է ընդունվի վերջինիս կանոնադրությամբ նման լիազորություններ ունեցող մարմնի կողմից:

Եթե ժողովի որոշումն ընդունվել է ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի կամ ան-

⁴¹³ Կարծում ենք, որ նման դեպքերում ժողովի գումարման կարգի հետ կապված ձևականությունները պահպանելու անհրաժեշտությունը բացակայում է, ուստի օրենքով ուղղակի պետք է սահմանել, որ այդ կարգով կայացված որոշումները չեն համարվում օրենքի խախտմամբ կայացված որոշումներ:

վանատերերի միաձայնությամբ, ապա վերը թվարկված մի շարք ընթացակարգերի չպահպանումը չի կարող հիմք հանդիսանալ այդ հիմքերով ժողովի որոշումն անվավեր ճանաչելու համար⁴¹⁴:

Իրավասու պետական կամ հասարակական մարմնին նյութական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հայցով դիմելու հնարավորությունն իրավագոր անձին պատկանող իրավունքի պաշտպանության բովանդակության մեջ ունի կարևոր դերակատարություն: Այս առումով, կորպորացիայի անդամների իրավունքների և օրինական շահերի, այդ թվում՝ նաև կառավարմանը մասնակցելու իրավունքի պաշտպանության միջոցների մեջ կարևոր նշանակություն ունի դատական եղանակը:

Օրինակ, Ռուսաստանի Դաշնության մինչհեղափոխական օրենսդրությամբ բաժնետիրոջ ընդհանուր ժողովի որոշումը վիճարկելու հնարավորություն ընձեռված չէր, սակայն որոշմանը դեմ քվեարկած բաժնետիրոջը տրվում էր հատուկ կարծիք արտահայտելու իրավունք, ինչը ներառվում էր ընդհանուր ժողովի արձանագրության մեջ: Միաժամանակ, առանձին կազմակերպությունների կանոնադրություններում ամրագրված էր օրենքի և կանոնադրության խախտմամբ ընդունված ընդհանուր ժողովի որոշումը դատական կարգով վիճարկելու՝ բաժնետիրոջ իրավունքը: Այդ իրավունքից օգտվում էին միայն այն բաժնետերերը, ովքեր դեմ էին քվեարկել այդ որոշմանը⁴¹⁵:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետը նախատեսում է բաժնետիրոջ իրավունքը դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով, իսկ նույն օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ կետը բաժնետիրոջն իրավունք է

⁴¹⁴ Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 68, կետ 12:

⁴¹⁵ Տե՛ս Руднев П. А. Анализ прав и обязанностей акционеров, М., 1927, էջ 17:

վերապահում դատական կարգով բողոքարկել այդ նույն օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի ընդունած որոշումը⁴¹⁶:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԵԴ/1246/02/09 քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ արտահայտված դիրքորոշմամբ նշել է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝

- բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը կարող է ազդել քվեարկության արդյունքների վրա և
- որոշումն ընդունելիս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտումը պետք է լինի էական⁴¹⁷:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրահանգելու, որ բաժնետերը կարող է օրենքի էական խախտումներով կայացված ժողովի որոշումը դատական կարգով բողոքարկել, սակայն այն չի բավարարվի, քանի որ վերը նշված պայմանները առկա չեն: Ինչը, մեր կարծիքով, դատական կարգով իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորության անհարկի սահմանափակում է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի դատական

⁴¹⁶ Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ օրենքի 49-րդ հոդվածի 7-րդ կետը նույնպես պարունակում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների բողոքարկման մասին ընդհանուր դրույթներ: Մասնավորապես, բաժնետերն ընդհանուր ժողովի կողմից օրենքի, այլ իրավական ակտերի կամ ընկերության կանոնադրության խախտմամբ ընդունված որոշումն իրավունք ունի բողոքարկել դատարան այն դեպքերում, երբ, ի տարբերություն մեր օրենքի, բաժնետերը չի մասնակցել ընդհանուր ժողովին կամ դեմ է քվեարկել այդ որոշմանը, և այդ որոշմամբ խախտվել են նրա իրավունքներն ու օրինական շահերը:

⁴¹⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/1246/02/09 քաղաքացիական գործով 2010 թվականի դեկտեմբերի 27-ին կայացված որոշումը:

կարգով պաշտպանության օրենսդրական սահմանափակումները որոշակի պայմանների առկայության դեպքում որպես Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում չի դիտում, գտնելով, որ չնայած այն հանգամանքին, որ օրենսդրական սահմանափակումների շահառուները մասնավոր անձինք են, դա դեռ չի նշանակում, որ սահմանափակումների նախատեսումը չի հետապնդում հանրային շահ. կանխել ընկերության որոշումների վիճարկման չարաշահումները, ինչն իր հերթին կնպաստի շուկայի կայունությանը: Սակայն միաժամանակ դատարանն արձանագրել է, որ սահմանափակումները և վերոնշյալ իրավաչափ նպատակները պետք է լինեն համաչափ⁴¹⁸, ինչը վերը նշված իրավիճակում, մեր կարծիքով, օրենսդրի կողմից չի ապահովվում:

Կարծում ենք, արդարացի չէ բաժնետիրոջ՝ ընդհանուր ժողովի որոշումների վիճարկման հնարավորության սահմանափակումը բացառապես վերը նշված պայմաններով, օրինակ, բաժնետերը կարող է մասնակցել ժողովին և օրակարգում ներառված հարցի վերաբերյալ կողմ քվեարկել, սակայն հետագայում պարզվի, որ կառավարիչների կողմից նրան բավարար տեղեկություններ չեն տրամադրվել քվեարկվող հարցի վերաբերյալ, որի արդյունքում նա քվեարկել է օրենքի էական խախտում պարունակող որոշման օգտին: Գտնում ենք, որ մյան դեպքերում ևս բաժնետիրոջը պետք է տրվի ընդհանուր ժողովի որոշումները վիճարկելու իրական հնարավորություն: Բաժնետիրոջն օրենքի էական խախտումներով կայացված որոշումը վիճարկելու հնարավորություն պետք է տրվի նույնիսկ այն դեպքում, երբ նրա ունեցած ձայների քանակությունը տվյալ որոշման կայացման գործում ազդեցիկ չէ:

ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ

⁴¹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 15-ի Կոհլիոֆերը և Մինարիկն ընդդեմ Չեխիայի վճիռը (application 32921/03, 28464/04):

չավեց գտնել օրենքի նշված նորմի կիրառմանը վերաբերող այնպիսի օրինակ, որում դատարաններն ընդհանուր ժողովի կողմից թույլ տրված այս կամ այն խախտումը կդիտեին որպես օրենքի էական խախտում: Այս առումով հետաքրքրական է ՌԴ ԲԱԴ պլենումի 2003 թվականի նոյեմբերի 18-ի թիվ N19 որոշման մեջ տրված՝ օրենսդրության էական խախտումներով ընդունված բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման հասկացությունը: Այս որոշման 26-րդ կետում դատարանը թվարկում է բաժնետիրոջ կողմից վիճարկվող ժողովի որոշումներում էական խախտում համարվող գործողությունների ցանկը՝

- որոշումն ընդունվել է ընդհանուր ժողովի իրավասությունների խախտմամբ,
- ընդհանուր ժողովի անցկացման համար անհրաժեշտ քվորումի բացակայության պայմաններում,
- կայացվել է որոշում ժողովի օրակարգի մեջ չընդգրկված հարցերի վերաբերյալ⁴¹⁹:

Մենք կհստակ ենք գրականության մեջ դեռևս 100 տարի առաջ արտահայտված այն տեսակետը, որ ներկայումս ևս «դատավարության բարդության և ծայրահեղ դանդաղ ընթանալու պայմաններում նմանատիպ գործերով վերջնական որոշումը կարող է կայացվել միայն ընդհանուր ժողովի որոշումը կատարելուց հետո՝ մի քանի տարի անց, իսկ նման երկարատև ժամկետի ավարտից հետո որոշումը վերացնելու հնարավորություն նախատեսելը բաժնետիրական ընկերության և երրորդ անձանց համար կառաջացնի անցանկալի հետևանքներ»⁴²⁰:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների վիճարկմանը վերաբերող դատական գործերի ուսումնասիրությունը թույլ է տալիս այնդեմ, որ կորպորատիվ իրավահարաբերություններին կայունություն հաղորդելու և կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների շահերի պաշտպանության

⁴¹⁹ См в Вестник ВАС РФ, 2004, N 1:

⁴²⁰ См в Гуссаковский П.Н. Вопросы акционерного право, Пг., 1915, էջ 90:

արդյունավետությունը բարձրացնելու առումով անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հարակից օրենքներով հստակեցնել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց կառավարման մարմինների որոշումների գործարք հանդիսանալու հանգամանքը⁴²¹, սահմանել կառավարման մարմինների որոշումների բողոքարկման վաղեմության հատուկ ժամկետ, ինչպես նաև նման որոշումների անվավերության կիրառման հետևանքների առանձնահատկությունները՝ հաշվի առնելով կորպորատիվ իրավահարաբերությունների բոլոր մասնակիցների շահերի հավասարակշռման անհրաժեշտությունը:

Վերը նշված խնդիրների լուծումն ապահովելու նպատակով, հաշվի առնելով Ռուսաստանի Ղաշնության, Ուկրաինայի Հանրապետության, Ղազախստանի և մի շարք այլ երկրների՝ նշված ոլորտում կատարված օրենսդրական վերջին բարեփոխումները, մեր կողմից բերված փաստարկները, առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել հետևյալ լրացումները.

«Գլուխ 18.1. Ժողովի որոշումները

Հոդված 317.1. Ընդհանուր դրույթներ

1. Ժողովի որոշումները, որոնց հետ օրենքը կապում է քաղաքացիաիրավական հետևանքներ, իրավական հետևանքներ է առաջացնում ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այդ թվում կորպորատիվ տիպի իրավաբանական անձի մասնակիցների, կառավարման մարմինների անդամների, համասեփականատերերի, սնանկության դեպքում՝ պարտատե-

⁴²¹ Օրինակ՝ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածում 2012 թվականի դեկտեմբերի 30-ին կատարված լրացումների արդյունքում ժողովների որոշումները նշվեցին որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առաջացման ինքնուրույն հիմք, Վրաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում դրանք համարվում են գործարքներ:

րերի, և այլ անձանց համար (քաղաքացիաիրավական շրջանառության մասնակիցներ), ինչպես նաև այլ անձանց համար, եթե դա նախատեսված է օրենքով կամ բխում է իրավահարաբերության էությունից:

2. Սույն գլխի կանոնները կիրառվում են, եթե օրենքով կամ դրա հիման վրա հաստատված կարգերով (կանոնադրություն, կանոնակարգ և այլն) այլ բան նախատեսված չէ:

Հոդված 317.2. Ժողովի որոշումների ընդունումը

1. Ժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե ժողովին մասնակցել են իրավաբանական անձի մասնակիցների (անդամների, փայատերերի) ընդհանուր թվի 50 տոկոսից ավելին և որոշման օգտին կողմ է քվեարկել ժողովի մասնակիցների մեծամասնությունը:

Ժողովի որոշումը կարող է ընդունվել հեռակա քվեարկության կարգով:

2. Ժողովի օրակարգում մի քանի հարցերի առկայության պարագայում դրանցից յուրաքանչյուրով կայացվում է առանձին որոշում, եթե այլ բան նախատեսված չէ ժողովի մասնակիցների միաձայն որոշմամբ:

3. Ժողովի կողմից որոշում կայացնելու մասին կազմվում է գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է ժողովը նախագահողի և քարտուղարի կողմից:

4. Առկա քվեարկության արդյունքների մասին արձանագրության մեջ պետք է նշվեն.

- 1) ժողովի անցկացման ամսաթիվը, ժամը և տեղը,
- 2) ժողովին մասնակցած անձանց անունները,
- 3) յուրաքանչյուր հարցով քվեարկության արդյունքները,
- 4) ձայների հաշվարկն իրականացրած անձանց անունները,
- 5) այն անձանց անունները, ովքեր դեմ են քվեարկել որոշմանը և պահանջել են, որ այդ մասին նշվի արձանագրության մեջ:

5. Հեռակա քվեարկության արդյունքների մասին արձանագրության մեջ պետք է նշվեն.

1) քվեարկության փաստը հաստատող փաստաթղթերն ընդունելու վերջնաժամկետը,

2) քվեարկությանը մասնակցած անձանց անունները,

3) յուրաքանչյուր հարցով քվեարկության արդյունքները,

4) ձայների հաշվարկն իրականացրած անձանց անունները,

5) արձանագրությունն ստորագրած անձանց տվյալները:

Հոդված 317.3. Ժողովի որոշման անվավերությունը

1. Ժողովի որոշումն անվավեր է օրենքով նախատեսված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչվելու ուժով (վիճարկելի որոշում) կամ անկախ նման ճանաչումից (առաջինը որոշում):

Ժողովի անվավեր որոշումը վիճարկելի է, եթե օրենքից չի բխում, որ այն առաջինը է:

2. Եթե ժողովի որոշումը հրապարակված է, ապա դատարանի կողմից այն անվավեր ճանաչվելու մասին որոշումը պետք է հրապարակվի նույն եղանակով այն անձանց հաշվին, որոնց վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դրված են դատական ծախսերը: Եթե ժողովի որոշման մասին տվյալները գրանցվել են համապատասխան գրանցամատյաններում, ապա դատական ակտի մասին տեղեկությունները նույնպես պետք է գրանցվեն այդ գրանցամատյաններում:

Հոդված 317.4. Ժողովի որոշման վիճարկումը

1. Ժողովի որոշումը դատարանը կարող է ճանաչել անվավեր օրենքի պահանջները խախտելու դեպքում, այդ թվում, եթե՝

1) թույլ են տրվել ժողովի հրավիրման, նախապատրաստման, անցկացման կարգի էական խախտումներ, որոնք ազդել

են ժողովի մասնակցի կամահայտնության ձևավորման և արտահայտման վրա,

2) ժողովի իրավասությանը վերապահված հարցով որոշում կայացնելիս մասնակիցների նկատմամբ տեղի է ունեցել օրենքով արգելված միջամտություն կամ մասնակիցների անունից հանդես եկող անձը չի ունեցել համապատասխան լիազորություններ, կամ առկա են այլ հիմքեր, որոնք թույլ են տալիս քվեարկությունը՝ որպես կամահայտնություն, ճանաչել անվավեր,

3) թույլ են տրվել արձանագրությունը կազմելու կանոնների էական խախտումներ, այդ թվում՝ արձանագրության գրավոր ձևը չպահպանելը,

4) որոշմամբ դրա ընդունմանը կողմ քվեարկած անձանց կամ որոշ մասնակիցների դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած անձանց համեմատությամբ տրվել են օրենքով չնախատեսված արտոնություններ:

2. Ժողովի որոշումը, որը վիճարկվում է դրա ընդունման կարգի խախտման հիմքով, չի կարող վիճարկվել, եթե դրանք կրկնակի որոշմամբ վերացվել են մինչև դատարանի կողմից այն անվավեր ճանաչելը:

3. Ժողովի որոշումը դատարանում կարող է վիճարկել կորպորատիվ տիպի իրավաբանական անձի այն մասնակիցը, ով այդ ժողովին չի մասնակցել կամ վիճարկվող որոշմանը քվեարկել է դեմ, կամ օրենքի պահանջների խախտում պարունակող որոշմանը կողմ է քվեարկել կառավարման մարմինների կողմից կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն տրամադրելու արդյունքում:

4. Ժողովի որոշումը չի կարող ճանաչվել անվավեր, եթե այդ մասնակցի քվեարկությանը մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա կամ այդ անձի համար չեն առաջացել էական անբարենպաստ հետևանքներ:

5. Ժողովի որոշումը կարող է վիճարկվել երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ անձը, որի իրավունքները խախտվել են այդ որոշմամբ, իմացել է կամ պետք է իմանար որոշման ընդունման մասին, բայց մեկ տարվանից ոչ ուշ՝ հաշված այն օրվանից, երբ այդ որոշման ընդունման մասին տեղեկությունները հրապարակվել են կամ այլ կերպ դարձել հանրամատչելի:

6. Ժողովի որոշումը վիճարկող անձը պարտավոր է նման հայցով դատարան դիմելու իր մտադրության մասին ժամուցել մյուս մասնակիցներին և նրանց տրամադրել գործին վերաբերող այլ տեղեկություններ: Եթե մյուս մասնակիցները, որոնք ունեն այդ որոշումը վիճարկելու այլ հիմքեր, քաղաքացիական դատավարությամբ սահմանված կարգով չեն միանում այդ հայցին՝ հետագայում նման հայցով դատարան դիմելու իրավունքից զրկվում են, եթե դատարանը դատարան դիմելու այդ պատճառները հարգելի չհամարի:

7. Դատարանի կողմից անվավեր ճանաչված ժողովի որոշումն անվավեր է դրա ընդունման պահից:

Պոլված 317.5. Ժողովի առոչինչ որոշումը

Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա ժողովի որոշումն առոչինչ է այն դեպքերում, երբ՝

1) որոշում է ընդունվել ժողովի օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն դեպքի, երբ ժողովին մասնակցել են իրավաբանական անձի բոլոր մասնակիցները,

2) որոշումն ընդունվել է անհրաժեշտ քվորումի բացակայության պայմաններում,

3) որոշումն ընդունվել է ժողովի իրավասությանը չվերաբերող հարցի մասին,

4) որոշումը հակասում է իրավակարգի կամ բարոյակաճության հիմքերին:»:

§ 3.3. Խորհուրդը որպես ընդհանուր ղեկավարումն իրականացնող մարմին

Խորհուրդը հանդիսանում է կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց ընդհանուր իրավասության մշտապես գործող կոլեգիալ մարմինը: Կորպորատիվ կառավարման գործում խորհրդի դերակատարությունն էական է, քանի որ այս մարմինն է, որ ապահովում է կորպորացիաների հաշվետվողականությունը, ինչպես նաև ժամանակակից բարոյական ու տնտեսական չափորոշիչներին կորպորացիայի համապատասխանությունը⁴²²: Այն հանդիսանում է կորպորացիայի կամքը ձևավորող և կամահայտնությունն արտահայտող կառավարման կենտրոնական օղակը⁴²³, որն իրականացնում է նրա գործերի ընդհանուր ղեկավարումը:

Հայաստանի Հանրապետությունում տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) (այսուհետ՝ խորհուրդ) հետ կապված հարաբերություններն առավել մանրամասն կարգավորված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում, իսկ բանկային և ապահովագրական գործունեության ոլորտում ընդգրկված իրավաբանական անձանց պարագայում՝ գործունեության տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ⁴²⁴:

Որպես ընկերության գործերի ընդհանուր ղեկավարումն իրականացնող մարմին խորհուրդը կարող է ստեղծվել ցանկացած բաժնետիրական ընկերությունում, իսկ 50-ից ավելի բաժնետեր ունեցող ընկերություններում խորհրդի ստեղծումը պար-

⁴²² Stéu Demb A., Neubauer F. The Corporate Board, Confronting the Paradoxes, Long Range Planning, International Journal of Strategic Managment, 1992, էջ 25:

⁴²³ Stéu Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ. М., 2004, էջ 263:

⁴²⁴ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը խորհրդի ստեղծումն ընկերությունում պարտադիր չի համարում, այլ միայն բավարարվում է մասնակիցներին խորհուրդ ստեղծելու հնարավորության ընձեռնամբ:

տադիր է («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 83): Խորհրդի ստեղծումը, անկախ իրավաբանական անձի կազմակերպարավական ձևի առանձնահատկություններից, պարտադիր է նաև գործունեության այս կամ այն ոլորտում ընդգրկված իրավաբանական անձանց համար ևս, օրինակ՝ բանկային, ապահովագրական⁴²⁵ և այլն:

Բաժնետիրական ընկերության կազմակերպարավական ձևին բնորոշ հիմնական հատկանիշներից է նաև այն, որ ընկերության ընդհանուր ղեկավարումն իրականացնող և տնտեսական գործունեության ռազմավարությունը կանխորոշող վերահաս կոլեգիալ մարմնի իրավասությունները տարանջատվում են ընկերության ընթացիկ գործունեությունը ղեկավարող, ստորահաս գործադիր մարմնի իրավասություններից⁴²⁶:

«Բաժնետիրական ընկերությունների մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և այլ ՀՀ օրենքների ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս պնդել, որ Հայաստանի Հանրապետությունում հնարավոր է կիրառել խորհրդի և՛ ամերիկյան, և՛ գերմանական մոդելները: Սասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, աչքի ընկնելով առավել ճկունությամբ, հնարավորություն է տալիս ստեղծել տնօրենների խորհրուրդ՝ գլխավոր կառավարչի առկայությամբ, որին «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն անվանում է գործադիր մարմին (ամերիկյան մոդել), ինչպես նաև դիտորդ խորհրդի և կառավարման խորհրդի առկայությամբ, որին «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն անվանում է կոլեգիալ գործադիր մարմին (գերմանական մոդել): Այստեղից կարելի է եզրակացնել, որ ՀՀ օրենսդիրը

⁴²⁵ Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, գլուխ 5:

⁴²⁶ Տե՛ս Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. А.С. Тарасова, М., 1999, էջ 365:

փորձել է նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որն ընկալելի կլինի Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ կատարելու ցանկություն ունեցող ինչպես ամերիկյան, այնպես էլ գերմանական մոդելներին ծանոթ ներդրողների համար⁴²⁷:

Որպես կանոն, մինչև 50 բաժնետեր ունեցող ընկերություններում տնօրենների խորհուրդ չի ստեղծվում, ուստի նման դեպքերում տվյալ մարմնի գործառնությունների իրականացման պարտականությունը դրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի վրա: Այս դեպքում ընկերության կանոնադրությունը պարտադիր կերպով դրույթներ պետք է պարունակի նաև այն մասին, թե «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված տարեկան և արտահերթ ժողովների գումարման, ժողովների օրակարգի հաստատման, դրանց մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսի, ամսաթվի հաստատման, ինչպես նաև ժողովների գումարման և նախապատրաստման հետ կապված հարցերի շուրջ որոշումները որ անձի կամ ընկերության որ մարմնի կողմից են կայացվում:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հաճախ ընկերությունների կանոնադրությամբ վերը նշված հարցը չի կարգավորվում և նման ընկերությունների համար գործնականում առաջանում են բազմաթիվ խնդիրներ: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածում հստակ ամրագրել այն հանգամանքը, որ տարեկան և արտահերթ ժողովների գումարման, ժողովների օրակարգի հաստատման, դրանց մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսի, ամսաթվի հաստատման, ինչպես նաև ժողովների գումարման և նախապատրաստման հետ կապված հարցերի

⁴²⁷ Խորհրդի մոդելների մասին առավել մանրամասն տես՝ Maassen G.F. An International Comparison of Corporate Governance Models, Elst, the Netherlands, 2000:

շուրջ որոշում կայացնելու իրավունքը կանոնադրությամբ այլ անձի վերապահված չլինելու դեպքում իրականացնում է ընկերության գործադիր մարմինը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում են խորհրդին վերապահված բացառիկ լիազորությունները, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացությանը, որ օրենքում թվարկված լիազորությունների մի մասն այնքան էլ բացառիկ բնույթ չի կրում, և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում դրանց մի մասը կարող է իրականացվել կամ գործադիր մարմնի, կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Ուստի խորհրդին վերապահված բացառիկ լիազորությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբերի.

- խորհրդի «անվերապահ» բացառիկ իրավասությունների,
- խորհրդի «վերապահունով» բացառիկ իրավասությունների:

Խորհրդի «անվերապահ» բացառիկ իրավասության մեջ մտնող հարցերի շրջանակը (որոշ բացառությունների հստակ մատնանշումով) որոշված է օրենքով, և դրանց շուրջ որոշումների կայացումը՝ ընթացակարգային առումով, իրականացվում է բացառապես խորհրդի կողմից: Այսինքն, օրենքով այդ հարցերը լուծելու այլ կարգ սահմանված չէ: Դրանք են՝

- ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
- տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ այն դեպքի, երբ արտահերթ ժողովն օրենքով սահմանված կարգով գումարվում է նման պահանջ ներկայացրած անձի կողմից.
- ժողովների օրակարգի հաստատումը.
- ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնե-

տերերի ցուցակը կազմելու տարվա, ամսի, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.

- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

- պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

- օրենքով սահմանված կարգով գույքի շուկայական արժեքի որոշումը.

- ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

- ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձավճարի չափի սահմանումը.

- ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

- ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

- ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

- այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

- օրենքով նախատեսված դեպքերում ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը.

- օրենքով նախատեսված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը.

- ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:

Խորհրդի «վերապահումով» բացառիկ իրավասությունների մեջ են մտնում այն հարցերը, որոնց շուրջ որոշումներ կայացնելու իրավասությունը խորհրդի համար առաջանում է միայն այն դեպքում, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան այդպիսիք վերապահված են: Դրանցից են՝

- բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը.

- ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները.

- դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:

Օրենքով և կանոնադրությամբ տնօրենների խորհրդին կարող են վերապահվել այլ իրավասություններ ևս:

Ընդհանուր կանոնի համաձայն խորհրդի բացառիկ իրավասությանը ենթակա հարցերն ընկերության գործադիր մարմնի լուծմանը փոխանցվել չեն կարող: Դա պայմանավորված է նրանով, որ խորհուրդը հանդիսանում է ոչ պրոֆեսիոնալ կառավարիչներից կորպորացիան պաշտպանող բաժնետերերի առաջին շարասյունը⁴²⁸, ուստի անհրաժեշտ է ապահովել գործադիր մարմնի նկատմամբ խորհրդի ունեցած վերահսկողական գործառնությունների արդյունավետ իրականացման հնարավորությունը: Սակայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասը նշված ընդհանուր

⁴²⁸ Stet u Weisbach M.S. Outside Directors and CEO Turnover, Journal of Financial Economics, N20, North-Holland, 1988, էջ 431:

կանոնից սահմանում է բացառություն, որով հնարավոր է համարում կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ խորհրդի բացառիկ իրավասությունների մեջ մտնող մի շարք հարցերի լուծման իրավունքը փոխանցել գործադիր մարմնին: Նման լիազորությունների մեջ են մտնում.

- բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը,

- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,

- ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին ներկայացվող առաջարկությունների նախապատրաստումը,

- ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

- ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

- ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

Խորհրդի անդամներն ընտրվում են կամ բաժնետերերի տարեկան, կամ էլ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կապակցությամբ հրավիրված արտահերթ ժողովների կողմից:

Խորհրդի անդամների ընտրությունները կատարվում են կամ ուղղակի, կամ էլ՝ գումարային (կումուլյատիվ) քվեարկության միջոցով:

Այն բաժնետիրական ընկերությունները, որոնք ունեն 500 և ավելի քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր՝ խորհրդի անդամների ընտրությունը կատարում է գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ, իսկ մինչև 500 բաժնետեր ունեցող ընկերություններում քվեարկությունների անցկացումը թույլատրվում

է կատարել կունուլատիվ կարգով, եթե դա նախատեսված է տվյալ ընկերության կանոնադրությամբ:

Ուղղակի քվեարկության միջոցով խորհրդի անդամների ընտրության դեպքում խորհրդի կազմում ընտրված են համարվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուները:

Իսկ գումարային (կունուլատիվ) քվեարկության դեպքում յուրաքանչյուր քվեարկող բաժնետոմս ունի խորհրդի ընտրվող կամ վերընտրվող անդամների թվաքանակին հավասար թվով ձայներ: Այս քվեարկության ժամանակ բաժնետերերն իրավունք ունեն իրենց ձայները տալ մեկ թեկնածուի կամ բաշխել մի քանի թեկնածուների միջև: Գումարային քվեարկության դեպքում ևս խորհրդի կազմում ընտրված են համարվում առավելագույն թվով ձայներ ստացած թեկնածուները:

Խորհրդի անդամների ընտրությունները գումարային քվեարկության միջոցով անցկացնելը կոչված է ապահովելու փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պաշտպանությունը, քանի որ նրանք, որոշակի պայմանների առկայության դեպքում, հնարավորություն են ստանում խորհրդի կազմում ունենալ իրենց նախընտրած անդամներին⁴²⁹: Կունուլատիվ քվեարկությունը որպես փոքրամասնություն կազմող բաժնետերերի ընկերության կառավարմանն արդյունավետ մասնակցություն ունենալու միջոց նախատեսված է ինչպես ԱՊՀ մասնակից պետություններում⁴³⁰, այնպես էլ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ⁴³¹, Անգլիա, Գերմանիա, ճապոնիա և այլն, սակայն ընկե-

⁴²⁹ Ст'и Ионцев М. Г. Акционерные общества, изд-во "Ось-89", М., 2002, էջ 182:

⁴³⁰ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Investor Protection in The CIS, Legal Reform and Voluntary Harmonization, Edited by Dragneva R., Leiden, The Netherlands, 2007:

⁴³¹ ԱՄՆ-ում կունուլատիվ քվեարկության, որպես փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պաշտպանության միջոցի, պատմության մասին առավել մանրամասն տես՝ Moore B.F. The History of Cumulative Voting and Minority Representation in Illinois, 1870-1919, Urbana, The University of Illinois, 1920:

րությունները քվեարկության այս ձևի կամավոր օգտագործումից հիմնականում խուսափում են⁴³²: Այն կիրառում են միայն այն դեպքում, երբ քվեարկության այդ ձևի կիրառությունը պարտադրվում է օրենքով:

Քվեարկության այս ձևի գոյությունն է, որ ընկերությունը հիմնադրած և հետագայում փոքրամասնություն կազմող բաժնետիրոջ կարգավիճակում գտնվող անձին, իհարկե, կառավարման նախապես ճիշտ ընտրված մոդելի պարագայում, կարող է հնարավորություն ընձեռել ընկերության նկատմամբ հսկողություն պահպանել նույնիսկ այն դեպքում, երբ բաժնետիրոջ մասնակցությունը 50 տոկոսից կնվազի մինչև 10 տոկոս:

Կունուլյատիվ քվեարկության կիրառությունն առավել արդիական է այն դեպքում, երբ ընկերության բաժնետոմսերի հսկիչ փաթեթին տիրապետում է մեկ անձ կամ որոշակի անձանց խումբ: Նման պայմաններում, եթե տնօրենների խորհրդի անդամների ընտրություններն իրականացվեն ուղղակի քվեարկության միջոցով, ապա հսկիչ փաթեթին տիրապետող անձը կամ անձանց խումբը պարզապես կողմ կքվեարկի իր նախընտրած թեկնածուների օգտին, և փոքրամասնություն կազմող բաժնետերերը կզրկվեն իրենց նախընտրած թեկնածուին խորհրդի կազմում ընտրելու հնարավորությունից: Օրինակ՝ ենթադրենք, ընկերության խորհրդի կազմը բաղկացած է տասն անձից: Խոշոր բաժնետերը տիրապետում է ընկերության կողմից տեղաբաշխված 100 քվեարկող բաժնետոմսերից 60-ին: Ուղղակի քվեարկության ժամանակ նա կարող է 60 ձայնը տալ իր կողմից նախընտրելի 10 թեկնածուներին և խորհրդի կազմը ձևավորել իր կողմից նախընտրելի անձանցից: Իսկ գումարային քվեարկության դեպքում խոշոր բաժնետիրոջը պատկանող ձայների թիվը կկազմի 600 ձայն ($60 \times 10 = 600$), փոքրամասնություն

⁴³² St'eu Enriques L., Hansmann H., Kraakman R., *The Anatomy of Corporate Law, A Comparative and Functional Approach*, Second Edition, Oxford, 2012, էջ 91:

կազմող բաժնետերերինը, որոնք տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի 40 տոկոսին, կկազմի 400 ձայն ($40 \times 10 = 400$): Նման պայմաններում խոշոր բաժնետերն ստիպված է իր կողմից նախընտրելի թեկնածուներից յուրաքանչյուրին տալ 100 ձայն, որպեսզի խորհրդի կազմում ունենա վեց ներկայացուցիչ, իսկ փոքրամասնություն կազմող բաժնետերերը իրենց նախընտրած թեկնածուներին տալով յուրաքանչյուրին 100 ձայն՝ խորհրդի կազմում կունենան չորս ներկայացուցիչ: Նշված պատկերը՝ կախված բաժնետոմսերի փաթեթների չափից և բաժնետերերի թվաքանակից, յուրաքանչյուր դեպքում կարող է յուրովի փոփոխվել:

Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին: Այս իրավունքից օգտվում են նաև բաժնետոմսերի անվանատերերը: Յուրաքանչյուր բաժնետեր վերը նշված կարգով խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 85, կետ 2): Սակայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի մանրամասնում այդ իրավունքն իրականացնելու համար պահանջվող հետագա գործողությունների ընթացքը:

Նշված խնդրի լուծման տեսանկյունից հետաքրքիր իրավակարգավորում է առկա «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21.3-րդ և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածներում: Մասնավորապես, վերը նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն ընկերության մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ

ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում: Նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

1) ընկերության միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող՝ ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.

2) միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ սույն օրենքով սահմանված տեղեկությունները.

3) նշում այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

4) միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկներն ընկերության կողմից ընդունվելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու ընկերության խորհրդի կազմում:

Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակից է համարվում տվյալ ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, ով չի կնքել վերը նշված պայմանագիրը:

Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության:

Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզ դրանց թիվը կազմի մեկ: Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում վերը նշված պայմանագիրը կնքած ընկերության մասնակիցները:

Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրության, առաջադրման և ընկերության խորհրդում ընդգրկման կարգը սահմանվում է կանոնադրությամբ: Ընդ որում, ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին օրենքով պահանջվող տեղեկատվությունը խորհուրդը ներկայացնում է ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկներն ընկերության կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ⁴³³:

Խորհրդի թվական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, սակայն չի կարող 3 անդամից պակաս լինել («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 85, կետ 4): Այս թվի մեջ չեն մտնում այն անձինք, ովքեր իրավունք ունեն խորհրդի կազմում ընդգրկվել առանց ընտրության: Ամեն դեպքում, ընկերության կանոնադրության մեջ խորհրդի անդամների ընդհանուր թիվը պետք է հստակ սահմանված լինի: Կախված ընկերության գործունեության ոլորտից՝ խորհրդի անդամների

⁴³³ Կարծում ենք, որ նման իրավակարգում կարելի է նախատեսել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում, ինչը մեծապես կնպաստի փոքրամասնություն կազմող բաժնետերերի ընկերության կառավարմանը մասնակցելու հնարավորության բարձրացմանը:

թվաքանակին կարող են ներկայացվել այլ պահանջներ ևս, օրինակ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21.3-րդ հոդվածի համաձայն բանկի խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը՝ 15 անդամից, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առնվազն 5 և առավելագույնը՝ 13 անդամից⁴³⁴:

Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունն օրենքով չի սահմանափակվում, և այդ հարցի լուծումը թողնված է բաժնետերերի ընդհանուր ժողովի հայեցողությանը: Սակայն յուրաքանչյուր դեպքում խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրությունից հետո, ինչպես նաև ժողովի որոշման հիման վրա խորհրդի անդամի (անդամների) լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 85, կետ 1): Եթե խորհրդի անդամներն ընտրվել են գումարային կարգով, ապա խորհրդի բո-

⁴³⁴ Սեզ համար հասկանալի չէ օրենսդրի այն տրամաբանությունը, երբ մի դեպքում որպես խորհրդի անդամների առավելագույն թիվ սահմանում է 15-ը, իսկ մեկ այլ դեպքում՝ 13-ը: Բացի դրանից, նշված օրենքները չեն պատասխանում այն հարցին, թե ինչպես պետք է վարվի ընկերությունն այն դեպքում, երբ, օրինակ՝ կանոնադրությամբ որպես խորհրդի անդամների առավելագույն թվաքանակ սահմանված է 7-ը, իսկ հետագայում 10 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող ևս 9 բաժնետեր ցանկանում են ընդգրկվել խորհրդի կազմում, արդյոք ընկերությունը նրանց բոլորին պետք է վարձատրի: Կամ արդյոք ընկերությունում պետք է անցկացվի խորհրդի անդամների ընտրություններ այն դեպքում, երբ ընկերության կանոնադրությամբ սահմանված է 5 անդամի տեղ և 10 տոկոս կամ ավելի մասնակցություն ունեցող 5 բաժնետերերն արդեն իսկ ընդգրկվում են խորհրդի կազմում կամ խորհրդում նշանակում են իրենց ներկայացուցիչներին:

Գտնում ենք, որ խորհրդի կազմում օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով պետք է ընտրվեն սահմանված թվաքանակին համապատասխան անձինք, իսկ խորհրդում իր ներկայացուցչին նշանակելու կամ անձամբ ընդգրկվելու հնարավորություն պետք է տրվի միայն ընկերությունում 50 տոկոսից ցածր մասնակցություն ունեցող անձանց: Բացի դրանից, բանկեր և ապահովագրական ընկերությունների համար սահմանված խորհրդի անդամների վերին շեմը պետք է վերացվի:

լոր անդամների լիազորությունները պետք է դադարեցվեն միաժամանակ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով խորհրդի անդամների լիազորությունների դադարման հիմքերը և պահը հստակ սահմանված չեն, ինչը գործնականում առաջացնում է բազմաթիվ խնդիրներ:

Այս խնդիրը լուծելու փորձ է կատարվել. օրինակ՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը սահմանում է. «1. Ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

1) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով օրենքի համաձայն նրան արգելվում է լինել Ընկերության ղեկավար.

3) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից.

4) օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

5) մահացել է:

2. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված վարձատրությունը Ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Ընկերությունն իրավունք ունի խորհրդի անդամի պաշտոն-

նից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն մասի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված վարձատրությունը՝ դատարանում ապացուցելով խորհրդի անդամի կողմից պաշտոնական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:»:

Ներկայացված իրավակարգավորումը ցույց է տալիս, թե ինչպիսի չլուծված խնդիրներ է պարունակում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված այլ օրենքները:

Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ինչպես նաև այլ հարակից օրենքներում հստակ կարգավորել կառավարման մարմինների լիազորությունների դադարման հիմքերը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում⁴³⁵ իրավաբանական անձի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարաբերությունները:

Բացի դրանից, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի պատասխանում այն հարցին, թե խորհրդի անդամն ընկերության հետ ինչպիսի իրավահարաբերությունների մեջ է գտնվում՝ աշխատանքային, թե՛ քաղաքացիաիրավական⁴³⁶: Դրանից բխում է նաև խորհրդի անդամի մոտ իր պարտականությունների կատարման պահին որոշակիություն հա-

⁴³⁵ Արտակարգ իրավիճակներ ասելով նկատի ունենք այն դեպքերը, երբ խորհրդի կամ գործադիր մարմնի անդամները սուբյեկտիվ կամ օբյեկտիվ պատճառներով չեն կատարում իրենց վրա դրված պարտականությունները: Օրինակ՝ ընդունենք մի իրավիճակ, երբ ավտովթարի պատճառով խորհրդի բոլոր անդամները մահանում են: Նման պայմաններում հարց է ծագում, թե ով պետք է իրականացնի ժողովի գումարման համար անհրաժեշտ գործողությունները, մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունը ովքեր պետք է լուծեն խորհրդի իրավասությանը վերապահած հարցերը: Սույն իրավիճակը կարող է ի հայտ գալ նաև միանձնյա գործադիր մարմնի ղեկավարի պարագայում:

⁴³⁶ Գտնում ենք, որ այդ հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառելի լինեն նույն կանոնները, ինչ միանձնյա գործադիր մարմնի պարագայում, որին առավել մանրամասն կանդիդատանք սույն գլխի 4-րդ պարագրաֆում:

դորդելու հարցը: Մասնավորապես, պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բաժնետիրական ընկերություններում, որպես կանոն, խորհրդի անդամների հետ որևէ պայմանագիր չի կնքվում, երբեմն խորհրդի կազմում ընտրված անձինք նույնիսկ տեղյակ չեն լինում այն հանգամանքի մասին, որ իրենք որևէ ընկերությունում հանդիսանում են խորհրդի անդամ: Եվ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ խորհրդի անդամին խորհրդի կազմում ընտրելուց առաջ նրա ցանկությունն արտահայտող որևէ ընթացակարգ չի նախատեսվում, այդպիսիք բացակայում են նաև անձին խորհրդի կազմում ընտրելուց հետո:

Գտնում ենք, որ օրենքի նշված բացերը շուտափույթ շտկման կարիք ունեն, ինչը մեծապես կնպաստի խորհրդի անդամների պարտականությունների արդյունավետ կատարման և նրանց պատասխանատվության ենթարկելու հետ կապված խնդիրների լուծմանը:

Խորհրդի կազմում կարող են ընտրվել ինչպես ընկերության բաժնետեր հանդիսացող, այնպես էլ ընկերության բաժնետեր չհանդիսացող անձինք: Կան երկրներ, որոնք կարևորում են խորհրդի կազմում ընկերության աշխատակիցների ներկայությունը, օրինակ՝ Չեռմանիայում 2000-ից ավելի աշխատակից ունեցող ընկերություններում խորհրդի անդամների 50 տոկոսը պետք է կազմեն աշխատակիցների ներկայացուցիչները⁴³⁷, նմանատիպ իրավակարգավորում առկա է նաև Եվրոպական ընկերությունների պարագայում⁴³⁸:

Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները խորհրդում մեծամասնություն կազմել չեն կարող («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 85, կետ 5,

⁴³⁷ Տե՛ս Bernard Black, Reinier Kraakman, Anna Tarassova, A Guide to the Russian Law on Joint Stock Companies, Kluwer Law International, 1998, Cambridge, Massachusetts, USA and the Netherlands, էջ 367:

⁴³⁸ Տե՛ս Directive 2001/86/EC, http://eur-lex.europa.eu/smartapi/cgi/sga_doc?smartapi!celexapi!prod!CELEXnumdoc&lg=EN&numdoc=32001L0086&model=guichett:

մաս 2)⁴³⁹:

խորհրդի անդամ կարող են ընտրվել չափահաս, գործու-
նակ անձինք: Խորհրդի անդամների նկատմամբ կանոնադրու-
թյամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով կա-
րող են նախատեսվել այլ սահմանափակումներ և պահանջներ:
Օրինակ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օ-
րենքի 21.4-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդի անդամները
չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն, խորհրդի ան-
դամները և տվյալ բանկի գործադիր մարմնի անդամները չեն
կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք և այլն:

Խորհրդի անդամը պետք է վայելի ընկերության բաժնետե-
րերի, տնօրենների խորհրդի այլ անդամների և գործադիր
մարմնի աշխատակիցների վստահությունը, ընդունակ լինի կա-
յացնել ընկերության բոլոր բաժնետերերի շահերը պաշտպանող
և հիմնավորված որոշումներ, ունենա համապատասխան աշ-
խատանքային փորձ, կրթություն, կապեր և այլն:

Ընկերությունը պարտավոր է վարել խորհրդի անդամների
ռեեստր⁴⁴⁰, որտեղ պետք է տեղեկություններ պահպանվեն
խորհրդի անդամների հետևյալ տվյալների մասին՝

- անվան, ծննդյան տարեթվի, ամսի և ամսաթվի,
- աշխատանքի, բնակության վայրի ու հեռախոսահամա-
րի,
- զբաղմունքի, մասնագիտության և կրթության,
- խորհրդի կազմում ընտրվելու տարեթվի, ամսի և ամ-
սաթվի, և եթե նա ազատվել է անդամությունից, ապա՝ ազատվե-
լու տարեթվի, ամսի և ամսաթվի,
- քանի անգամ է ընտրվել խորհրդի կազմում,

⁴³⁹ Մենք գտնում ենք, որ խորհրդի կազմում գործադիր մարմնի անդամնե-
րի մասնակցությունը պետք է օրենքով արգելվի, քանի որ նման իրավա-
կարգավորման պայմաններում գործադիր մարմնի նկատմամբ խորհրդի
վերահսկողական գործառույթը խիստ թուլանում է:

⁴⁴⁰ Հարկ ենք համարում նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մա-
սին» ՀՀ օրենքի այս պահանջը բաժնետիրական ընկերությունների ճնշող
մեծամասնության կողմից չի պահպանվում:

- տվյալ խորհրդի անդամին պատկանող ընկերության քվեարկող բաժնետոմսերի քանակի,

- այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նա զբաղեցնում է ղեկավար պաշտոններ, ինչպես նաև կանոնադրությանը և խորհրդի կանոնակարգով նախատեսված այլ տվյալներ: Ընկերության բոլոր անդամներն ազատորեն կարող են ծանոթանալ այդ տվյալներին («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 83, կետ 3):

Ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար կարող են սահմանվել պարզևավճար և (կամ) փոխհատուցում՝ նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Յուրաքանչյուր դեպքում տնօրենների խորհրդի անդամներին վճարվող պարզևավճարների կամ փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Այս առումով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի թրություններից կարելի է համարել այն, որ օրենքը չի սահմանում տնօրենների խորհրդի անդամի կողմից իր պարտականությունների կատարման կապակցությամբ կրած վնասների փոխհատուցման կոնկրետ դեպքերը և յուրաքանչյուր դեպքում դա թողնում է ժողովի հայեցողությանը:

Խորհրդի անդամներն իրենց իրավունքները և ընկերության հանդեպ ունեցած պարտականությունները պետք է կատարեն ելնելով ընկերության շահերից, իրենց իրավունքները և ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափեն անձնական և ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից:

Սա նշանակում է, որ տնօրենների խորհրդի անդամը պետք է գործի ազնվորեն, անտարբեր չլինի խորհրդի նիստերում քննարկվող հարցերի նկատմամբ և անհրաժեշտության դեպքում ընկերությանը զերծ պահի անօրինական քայլերից: Խորհրդի անդամը, մասնավորապես, պետք է կանոնավոր կերպով հաճախի խորհրդի նիստերին, ակտիվորեն մասնակցի

հարցերի քննարկմանը, անհրաժեշտ վերահսկողություն իրականացնի գլխավոր տնօրենի և վարչության անդամների նկատմամբ, քննարկվող հարցերի վերաբերյալ ճիշտ որոշում կայացնելու նպատակով գործադիր մարմնից պահանջի բավարար տեղեկություններ և այլն:

Ինչպես արդեն նշվեց, տնօրենների խորհրդի անդամներն իրենց լիազորությունները պետք է իրականացնեն ելնելով ընկերության շահերից: Այս առումով ցանկալի է, որպեսզի խորհրդի անդամները մրցակից ընկերություններում մասնակցություն չունենան, ընկերության գույքը չօգտագործեն անձնական կարիքների համար, տնօրենի պաշտոն զբաղեցնելու շնորհիվ ստացած տեղեկություններն ու ընձեռված հնարավորությունները չօգտագործեն հոգուտ անձնական շահերի և այլն:

Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության կամ այլ հանգամանքների ուժով ընկերության որոշումների վրա էականորեն ազդելու հնարավորություն ունեցող անձը չպետք է դրդի խորհրդի անդամներին կայացնելու այնպիսի որոշումներ, որոնք հակասում են ընկերության շահերին կամ այն բաժնետերերի օրինական շահերին, որոնք էական ազդեցություն չեն կարող ունենալ ընկերության որոշումների վրա:

Խորհրդի անդամները, օրենքներով սահմանված կարգով, ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությանը պատճառած վնասի համար: Այն դեպքում, երբ ընկերությանը վնաս է պատճառվում խորհրդի մի քանի անդամի կողմից, ապա նրանք ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Խորհրդի անդամների հրաժարականը, պաշտոնից հետ

կանչելը կամ ազատելը չի ազատում նրանց՝ ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

Խորհրդի անդամների պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները:

Անձն ազատվում է ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությունը կկրի վնասներ:

Ինչպես արդեն նշվեց, ընկերությունը⁴⁴¹ կամ ընկերության այն բաժնետերը (բաժնետերերը), ով (ովքեր) համատեղ տնօրինում է (են) ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 1 և ավելի տոկոսը, իրավունք ունի (ունեն) ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով, խորհրդի անդամների դեմ հայցով դիմել դատարան: Արևմտյան մի շարք երկրների բաժնետիրական օրենսդրությամբ տնօրենների խորհրդի անդամները պատասխանատվություն են կրում նաև ընկերության բաժնետերերին տրամադրվող տարեկան հաշվետվության և այլ տեղեկատվության ճշգրտութ-

⁴⁴¹ Եվրոպական հանձնաժողովը և Եվրոպական դատարանը սահմանափակում են բաժնետիրոջ՝ ընկերությունից անկախ առանձին բողոք ներկայացնելու իրավունքը: Սակայն որոշ գործերով առանձին բաժնետերերի բողոքներն ընդունվել են այն հիմքով, որ դիմումատուները կամ ընկերության խոշոր բաժնետերեր (սեփականատերեր) են եղել, կամ իրենց սեփական բիզնեսն են իրականացրել ընկերության միջոցով, և, հետևաբար, ընկերության դեմ ուղղված կոնկրետ գործողություններն ուղղակիորեն ազդել են նրանց վրա: Այն փաստը, որ կոնկրետ գործողությունները խախտել են ոչ թե իրենց բաժնեմասի նկատմամբ իրավունքը, այլ ընդհանրապես վնասել են ընկերության իրավունքները, ինչը հանգեցրել է բաժնեմասերի արժեքի կորստին, չի ազդել նրանց՝ իրավունքների պաշտպանություն հայցելու հնարավորության վրա (տես՝ Yarrow P.L.C. et al v. United Kingdom (App no 9266/81) (1983) 30 DR 155 at p. 185 ECommHR Decision on Admissibility, GlasNadezhda EOOD » Anatoliy Elenkov v. Bulgaria, Appl. 14134/02, para. 40, Judgment of October 11, 2007, GJ v. Luxembourg, Appl. 21156/93, para. 24, Judgment of October 26, 2000 գործերով կայացված որոշումները):

յան համար ևս⁴⁴²:

Խորհրդի գործունեության արդյունավետությունն ու ներկայացուցչությունն ապահովելու նպատակով Խորհրդի անդամներն իրենց կազմից ընտրում են Խորհրդի նախագահ: Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ: Բաժնետերերի ընդհանուր ժողովը Խորհրդի նախագահ ընտրելու իրավունք չունի:

Մինչև 500 քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր ունեցող ընկերություններում տնօրենների Խորհրդի և տնօրենի (գլխավոր տնօրենի) պաշտոնները կարող են համատեղվել («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 86, կետ 1, մաս 3)⁴⁴³: Բացի վերը նշված դեպքից, գործող իրավակարգավորման պայմաններում, Խորհրդի նախագահն ընկերությունում վճարովի այլ պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է Խորհրդի նախագահի իրավասությունների շրջանակը: Մասնավորապես, Խորհրդի նախագահը՝

- կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
- գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
- կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
- նախագահում է ժողովներում, եթե կանոնադրությամբ

այլ բան նախատեսված չէ:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում, Խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

⁴⁴² Ст'я Акционерное общество и товарищество с ограниченной ответственностью, сборник зарубежного законодательства, М., 1995, էջ 205:

⁴⁴³ Ինչպես արդեն նշվեց, Խորհրդում գործադիր մարմնի ներկայացուցիչների առկայությունը, առավել ևս գործադիր տնօրենի Խորհրդի նախագահի պարտականությունները համատեղելու հնարավորություն ընձեռող իրավակարգավորումը մեր կողմից ընդունելի չէ:

Արևմտյան մի շարք երկրներում հաճախ տնօրենների խորհուրդներին կից ձևավորվում են հատուկ հանձնաժողովներ, որոնք ինչպես տնօրենների խորհրդի, այնպես էլ ընկերության այլ մարմինների իրավասությանը վերապահված հարցերի շուրջ որոշումներ կայացնելու իրավասություն չունեն և նրանց գործունեությունը կրում է զուտ խորհրդատվական բնույթ⁴⁴⁴: Ցավոք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում այս հարցի առնչությամբ որևէ իրավակարգավորում չկա:

Տնօրենների խորհուրդն իր վրա դրված գործառույթները հիմնականում իրականացնում է նիստեր գումարելու միջոցով:

Տնօրենների խորհրդի նիստերը գումարվում են.

- խորհրդի նախագահի,
- խորհրդի անդամների,
- ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի),
- աուդիտն անցկացնող անձի,
- գործադիր մարմնի,
- ինչպես նաև ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով:

Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ընկերության կանոնադրությամբ կամ ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգով: Խորհրդի կողմից որոշումները, բացի ավանդական եղանակից, կարող են կայացվել նաև հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով), եթե ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Որոշումների կայացման այս ձևը լայն կիրառություն ունի այնպիսի ընկերություններում, որոնց խորհրդի անդամները բնակվում են տարբեր պետություններում կամ բացակայում են իրենց մշտա-

⁴⁴⁴ Տե՛ս Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ. М., 2004, էջ 269:

կան բնակության վայրից⁴⁴⁵։

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով տնօրենների խորհրդի նիստերի գումարման պարբերականությունը սահմանված չէ։ Դրանք, որպես կանոն, գումարվում են ամիսը մեկ անգամ կամ էլ՝ անհրաժեշտության դեպքում։ Խորհրդի նախագահը, որոշում կայացնելով ժողովի գումարման մասին, նախապատրաստում է ժողովի օրակարգը և խորհրդի բոլոր անդամներին տեղյակ է պահում նիստի անցկացման օրվա, ժամի և տեղի մասին։

Նիստի անցկացման մասին ծանուցումը կազմվում է գրավոր ձևով և նախապես ուղարկվում խորհրդի բոլոր անդամներին, որպեսզի նրանք հասցեն նախապատրաստվել նիստին։ Ծանուցման մեջ պետք է նշվեն նիստի անցկացման օրը, ժամը, տեղը, ինչպես նաև օրակարգում ընդգրկված հարցերը։ Միաժամանակ ուղարկվում են նաև քննարկվող հարցերին վերաբերող համապատասխան նյութերը։ Նիստում կարող են քննարկվել նաև օրակարգում նախապես չընդգրկված հարցեր։

Խորհրդի նիստերի քվորումը սահմանվում է կանոնադրությամբ, սակայն այն չի կարող խորհրդի անդամների թվի կեսից պակաս լինել։ Եթե խորհրդի անդամների թիվը նվազում է կանոնադրությամբ սահմանված թվի կեսից, ապա ընկերությունն այն լրացնելու նպատակով պետք է գումարի արտահերթ ժողով։ Այս հարցի շուրջ որոշումը կայացնում է խորհուրդը։ Սա միակ որոշումն է, որը կարող է կայացվել խորհրդի կողմից քվորումի բացակայությամբ։ Այդ, ինչպես նաև ժողովի գումարմամբ պայմանավորված այլ որոշումներից բացի, խորհուրդն այլ որոշումներ ընդունելու իրավունք չունի։

⁴⁴⁵ Օրինակ՝ «ՆԱՍՊԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ին մատուցված իրավական սպասարկման շրջանակներում մեր կողմից ներդրվեց դիտող խորհրդի նիստերի հեռակա կարգով անցկացման ընթացակարգ, սակայն այդ ընթացակարգի թերություններից մեկը համոզման է այն, որ խնդիր առաջանալու պարագայում այս կամ այն հարցի վերաբերյալ խորհրդի անդամի արտահայտած դիրքորոշումը դժվար է ապացուցել այն դեպքում, երբ խորհրդի անդամը հրաժարվում է ստորագրել տվյալ նիստի արձանագրությունը։

խորհուրդը որոշումները կայացնում է միստին ներկա գտնվողների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենքով⁴⁴⁶, կանոնադրությամբ կամ խորհրդի կանոնակարգով այլ կարգ սահմանված չէ: Զվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցում խորհրդի մեկ անդամից մյուսին կամ երրորդ անձի՝ չի թույլատրվում:

Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Խորհրդի միստերն արձանագրվում են, իսկ միստի ավարտից հետո 5-օրյա ժամկետում կազմվում է միստի արձանագրությունը:

Արձանագրության մեջ պարտադիր կարգով պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

- միստի գումարման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
- միստին ներկա անձինք,
- միստի օրակարգը,
- քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները,
- միստում ընդունված որոշումները:

Խորհրդի միստի արձանագրությունն ստորագրում են միստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

⁴⁴⁶ Օրինակ՝ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից՝ միաձայն: Այդ դեպքում խորհրդի դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 61, կետ 1):

§ 3.4. Գործադիրը որպես ընթացիկ դեկավարումն իրականացնող մարմին

Գործադիր մարմինը հանդիսանում է կորպորացիայի կա-
մահայտնությունն արտահայտող այն մարմինը, որի միջոցով
կորպորացիան հանդես է գալիս արտաքին հարաբերություննե-
րում, ձեռք է բերում իրավունքներ և ստանձնում պարտակա-
նություններ⁴⁴⁷: Սակայն գործադիր մարմնի գործառույթները
ձևական առումով ավելի ընդարձակ են⁴⁴⁸, մասնավորապես,
գործադիր մարմնին է պատկանում բոլոր այն հարցերի լուծման
իրավասությունը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ վե-
րապահված չեն ժողովին կամ խորհրդին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի
88-րդ հոդվածը նախատեսում է գործադիր մարմնի ձևավորման
երեք տարբերակ.

- միանձնյա գործադիր մարմին (տնօրեն, գլխավոր տնօ-
րեն),
- կոլեգիալ (վարչություն, տնօրինություն) և միանձնյա
գործադիր մարմններ⁴⁴⁹,
- գործադիր մարմնի լիազորություններն առևտրային
կազմակերպությանը (կառավարող կազմակերպության) կամ
անհատ ձեռնարկատիրոջը (կառավարչի) տրամադրելը:

Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը և դրա լիազո-
րությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում են
բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, եթե ընկերության

⁴⁴⁷ Стен Корпоративное право, под ред. И.С. Шиткина, М., 2007, էջ 343:

⁴⁴⁸ Стен Комментарий Федерального закона об акционерных обществах,
под ред. А.С. Тарасова, М., 1999, էջ 405:

⁴⁴⁹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ կետի վերլու-
ծությունը թույլ է տալիս պնդել, որ քաղաքացիական օրենսգրքը կոլե-
գիալ մարմնի գոյությունը հնարավոր է համարում առանց միանձնյա գոր-
ծադիր մարմնի առկայության, որպիսի հնարավորությունը «Բաժնետիրա-
կան ընկերությունների մասին» ՀՀ օրենքով անհարկի սահմանափակվել է:

կանոնադրությամբ այդ հարցերը վերապահված չեն խորհրդի իրավասությանը: Այլ պետություններում ձևավորված պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ճնշող մեծամասնությամբ գործադիր մարմնի ձևավորման և դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման լիազորությունը վերապահվում է խորհրդին, քանի որ գործադիր մարմնի գործունեության վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվության տիրապետում է խորհուրդը⁴⁵⁰:

Եթե ընկերության կանոնադրությամբ նրա գործերի ընթացիկ ղեկավարումն իրականացնում են միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինները, ապա կանոնադրությամբ պետք է հստակ սահմանազատվեն տնօրենի և վարչության իրավասությունների շրջանակները⁴⁵¹: Այս դեպքում՝ այն անձը, ով իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի՝ տնօրենի (զլխավոր տնօրենի) գործառույթները, իրականացնում է նաև կոլեգիալ գործադիր մարմնի նախագահի գործառույթները: Գործող իրավակարգավորման պայմաններում կառավարման յուրաքանչյուր մարմին օժտված է իր սեփական լիազորություններով, ուստի կորպորացիայում միաժամանակ միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինների առկայությունը չի վկայում այն մասին, որ այն միասնական գործադիր մարմին է, և նման դեպքում միանձնյա գործադիր մարմինը գործում է որպես կոլեգիալ գործադիր մարմնի բաղկացուցիչ մաս⁴⁵²:

Գտնում ենք, որ միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինների միաժամանակյա գոյությունն արդարացված չէ, պրակտիկայում խնդիրներ են առաջանում երկու մարմինների լիազորությունների սահմանազատման, կոլեգիալ մարմնի նիստերի

⁴⁵⁰ Տե՛ս Комментарий Федерального закона об акционерных обществах, под ред. А.С. Тарасова, М., 1999, էջ 407:

⁴⁵¹ Տե՛ս Могилевский С. Д. Правовые основы деятельности акционерных обществ, М., 2004, էջ 282:

⁴⁵² Տե՛ս Фроловский Н. Г. Управление предпринимательскими корпорациями в Российской Федерации (Правовой аспект). Автореферат дисс. ... канд. юрид. наук, Самара, 2006, էջ 145:

գումարման պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց, քվորումի և բազմաթիվ այլ հարցերի հետ կապված: Ուստի առաջարկում ենք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով գործադիր մարմնին վերաբերող հարաբերությունները կարգավորելիս բացառել կոլեգիալ գործադիր մարմնի հետ միաժամանակ միանձնյա գործադիր մարմնի գոյության հնարավորությունը, ներդնել կոլեգիալ գործադիր մարմնի ղեկավարի ինստիտուտը և կոլեգիալ գործադիր մարմնի նկատմամբ, որոշակի բացառություններով, կիրառել խորհրդին վերաբերող օրենքով նախատեսված ընթացակարգերը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերության գործադիր մարմնի լիազորությունների իրականացումը պայմանագրով կարող է տրվել առևտրային կազմակերպության (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռներեցի (կառավարչի): Գործադիր մարմնի լիազորությունները կառավարող կազմակերպությանը տալը հետապնդում է ընկերության կառավարման գործընթացում ներգրավել բարձրակարգ կառավարիչների: Եվրոպական երկրներում կառավարող կազմակերպությունների ներգրավումը լայն տարածում ունի, և նման որոշումները, որպես կանոն, կայացվում են մրցութային կարգով⁴⁵³:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է միանձնյա գործադիր մարմնի (տնօրենի, գլխավոր տնօրենի) իրավասությունների նոտավոր շրջանակը: Մասնավորապես, տնօրենը (գլխավոր տնօրենը) իրավասու է.

- տնօրինել ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
- ընկերության անունից կնքել գործարքներ,
- ընկերությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

⁴⁵³ St'u Андронов М., Верозуб М. Использование управляющей компании. Опыт "ЕЧН Энерго"// Управление компанией, 2002, № 5 /12/, էջ 36:

- ընկերության անունից գործել առանց լիազորագրի, ինչպես նաև ընկերության անունից գործելու լիազորագրեր տալ,

- սահմանված կարգով կնքել պայմանագրեր, այդ թվում՝ նաև աշխատանքային,

- բանկերում բացել ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

- տնօրենների խորհրդի հաստատմանը ներկայացնել ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը,

- իրականացնել ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի հետգնումը կամ ձեռքբերումը, եթե ժողովի որոշմամբ կամ կանոնադրությամբ այդ լիազորությունը վերապահված է գործադիր մարմնին,

- իր իրավասության սահմաններում արձակել հրամաններ, հրահանգներ, տալ կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,

- սահմանված կարգով աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել ընկերության աշխատակիցներին,

- աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Ընկերության կանոնադրությամբ գործադիր մարմնին կարող են վերապահվել նաև այլ իրավասություններ:

Անհրաժեշտ է նշել, որ ընկերության միանձնյա գործադիր մարմնին ինքնուրույն կարող է կնքել միայն այնպիսի գործարքներ, որոնց առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսից պակաս: Օրենքով նախատեսված սահմանափակումներից բացի, գործարքներ կնքելիս միանձնյա գործադիր մարմնի համար կանոնադրությամբ ևս կարող են սահմանվել այլ սահմանափակումներ:

Ընկերության գործադիր մարմինը պարտավոր է կազմակերպել ժողովի և խորհրդի որոշումների կատարումը, ապահովել ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և կանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասությունը հանդիսացող հարցերի:

Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության (տնօրինության) անդամները, ինչպես նաև կառավարիչ կազմակերպությունը և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն ելնելով ընկերության շահերից, իրենց իրավունքներն իրականացնեն և ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափեն անձնական և ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 90, կետ 1):

Ինչպես միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմնի անդամները, այնպես էլ կառավարիչ կազմակերպությունն ու կառավարիչն ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությանը պատճառած վնասի համար:

Հարկ է նշել, որ կորպորատիվ իրավահարաբերություններում գործողության (անգործության) դրսևորման պահանջը կարող է բխել ինչպես օրենքից, այնպես էլ կանոնադրությունից, ներքին կանոնակարգող փաստաթղթերից, պայմանագրերից և այլն⁴⁵⁴:

Ինչպես բաժնետիրական ընկերությունների, այնպես էլ կորպորատիվ տիպի բոլոր իրավաբանական անձանց համար կառավարման մարմինների բարեխիղճ և ողջամտ կերպով գործելու պահանջն ունի առանձնահատուկ նշանակություն: Տեսա-

⁴⁵⁴ Տե՛ս Шиткина И.С. Гражданско-правовая ответственность членов органов управления хозяйственных обществ: классическая доктрина и современные тенденции правоприменения // Хозяйство и право, 2013, N 3, էջ 5:

կան գրականության մեջ «բարեխղճություն» եզրույթը կամ բարեխղճության սկզբունքը միակեպ չի ընկալվում⁴⁵⁵, այն չի բանաձևավում նաև օրենքով և յուրաքանչյուր դեպքում դատարանի հայեցողությանն է թողնվում կառավարման մարմնի անդամի գործողությունն անբարեխիղճ կամ ոչ ողջամիտ որակելու հարցը: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունում դատական պրակտիկան ևս չի տալիս այս հարցի պատասխանը⁴⁵⁶: Սակայն Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել այն դեպքերը, երբ դատարանի կողմից կառավարման մարմնի գործողությունները դիտվել են որպես անբարեխիղճ և ոչ ողջամիտ: Դրանք են.

- առանց ընկերության շահերը հաշվի առնելու գործարք կնքելը,
- պարտականությունների կատարման նկատմամբ ձևական վերաբերմունքը,
- անձնական շահագրգռվածությունից ելնելով ընկերության գույքն էժան գնով օտարելը,
- գործողություններ, որոնց արդյունքում ընկերությունը կրել է չհիմնավորված ծախսեր և բաժնետերերի միջև բաշխման ենթակա շահույթի չափը նվազել է,
- ընկերության դրամական միջոցների անօրինական օգտագործումը կամ դրանց յուրացումը,
- ընկերության հանդեպ պարտականությունները ոչ պատշաճ կատարելը⁴⁵⁷:

⁴⁵⁵ Տե՛ս Микрюков В.А. Вопросы ограничения гражданских прав принципом добросовестности // Законодательство, 2013, № 1, էջ 11:

⁴⁵⁶ Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում լայն տարածում է ստացել ընկերության կողմից չկատարված հարկային պարտավորությունների համար գործադիր տնօրենին պատասխանատվության ենթարկելու պրակտիկան. այդ մասին առավել մանրամասն տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 12-ի թիվ ՀՅԲԴ 4/0139/02/08 գործով որոշումը:

⁴⁵⁷ Տե՛ս Бернард Блэк, Брайан Чэффинс, Мартин Гелтнер, Матиас Симс, Ричард Холан, Хва-Джин Ким, Анастасия Фарушина. Правовое регулирование ответственности членов управления: Анализ мировой практики, М., 2010, էջեր 44-45:

Նման գործերով դատական քննության ժամանակ, եթե հայցվորը ներկայացնում է կառավարման մարմնի անդամի գործողություններում բարեխղճությունը և ողջամտությունը հերքող բավարար ապացույցներ, ապա նրա գործողությունների բարեխիղճ և ողջամիտ լինելու բնույթն ապացուցելու պարտականությունը փոխանցվում է պատասխանողին:

Ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, կառավարիչ կազմակերպության և կառավարչի պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները: Մասնավորապես, նման հարցեր քննելիս պետք է հաշվի առնվի գործարարական ռիսկի գործոնը: Գործարարական գործունեության հաջողության գրավականներից ամենակարևորը ռիսկերի գնահատման և կառավարման արդյունավետ ռազմավարության ընտրությունն է⁴⁵⁸, որովհետև գործարարական հարաբերություններում ցանկացած որոշում ապահովագրված չէ ձախողումից, ուստի կառավարման մարմինների անդամներին չի կարելի ենթարկել պատասխանատվության այն դեպքում, երբ նրանք թեև գիտակցել են իրենց որոշման արդյունքում ընկերության համար հնարավոր վնասների ի հայտ գալու ռիսկը, սակայն որոշումը կայացրել են գործարարական ռիսկի ողջամիտ սահմաններում:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են վարչության (տնօրինության) այն անդամները, ովքեր ընկերությանը վնասներ պատճառած որոշման կայացմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը նրանց չի ազատում ընկերությանը պատճառած

⁴⁵⁸ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնախնդիրները, Երևան, 2006, էջ 291:

վնասի համար պատասխանատվությունից:

Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, կառավարիչ կազմակերպությունը և կառավարիչն ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են, եթե գործել են բարեխիղճ և չգիտեին կամ չէին կարող իմանալ, որ իրենց գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությունը վնասներ կկրի:

Գործող օրենսդրությունը ուղղակի չի սահմանում կառավարման մարմինների անդամների պատասխանատվությունն իրենց գործողությունների կամ անգործության համար այն դեպքում, երբ վնասը պատճառվում է տվյալ կորպորացիայի կողմից վերահսկվող իրավաբանական անձանց: Մենք գտնում ենք, որ նման իրավիճակներում ևս կառավարման մարմինների անդամները, վերը նշված սկզբունքով, պետք է պատասխանատվություն կրեն այդ սուբյեկտներին պատճառված վնասի համար:

Թե՛ կոլեգիալ և թե՛ միանձնյա գործադիր մարմինների ներկայացուցիչների հետ ընկերությունը կնքում է պայմանագիր, որի պայմանները պետք է հաստատվեն խորհրդի կողմից⁴⁵⁹: Եթե կանոնադրությամբ խորհուրդը նման լիազորությամբ օժտված չէ, կամ եթե ժողովի որոշմամբ ընկերության գործադիր մարմնի լիազորությունների իրականացումը պայմանագրով տրվում է կառավարող կազմակերպությանը կամ կառավարչին, ապա պայմանագրի պայմանները հաստատվում են ժողովի կողմից:

Ընկերության անունից պայմանագրեր կնքելու իրավասությունը պատկանում է տնօրենների խորհրդի նախագահին կամ

⁴⁵⁹ Գործող օրենսդրության թերություններից է նաև այն, որ կառավարման մարմինների անդամների հետ կնքվող պայմանագրի պայմանների որոշման և նշանակող մարմնի կողմից դրանց հաստատման պարտադիր պահանջ օրենքով չի սահմանվում, ինչը գործնականում հնարավորություն է տալիս, օրինակ՝ խորհրդի նախագահին, գործադիր տնօրենի հետ պայմանագիրը կնքելիս նրան տալ բազմաթիվ իրավունքներ ու արտոնություններ, որպիսիք այլ պայմաններում կոլեգիալ մարմնի կողմից չէին տրամադրվի:

խորհրդի կողմից լիազորված այլ անձի: Եթե խորհրդի նախագահի պաշտոնն զբաղեցնում և միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն իրականացնում է միևնույն անձը, ապա տնօրենի հետ պայմանագիրը, խորհրդի որոշմամբ, կնքում է խորհրդի անդամներից մեկը:

Այն դեպքում, երբ ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում կամ խորհուրդը զրկված է գործադիր մարմին ձևավորելու իրավասությունից, կամ եթե ժողովի որոշմամբ ընկերության գործադիր մարմնի լիազորությունների իրականացումը պայմանագրով տրվում է կառավարող կազմակերպությանը կամ կառավարչին, ապա պայմանագրի պայմանները հաստատելու հետ միաժամանակ ժողովը որոշում է նաև այն անձին, ով իրավունք ունի ընկերության անունից կնքելու վերը նշված պայմանագիրը:

Անհրաժեշտ է ընկերության աշխատակիցների հետ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվող աշխատանքային պայմանագիրը տարբերել միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրից: Ընկերության և միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն իրականացնող անձի միջև ծագած հարաբերությունների վրա աշխատանքային օրենսդրությունը տարածվում է այնքանով, որքանով որ չի հակասում կորպորատիվ օրենսդրության պահանջներին:

Միանձնյա գործադիր մարմնի իրավական վիճակի առանձնահատկությունը մեծապես պայմանավորված է նրա «երկմիասնությամբ»: Մասնավորապես, այս անձը միաժամանակ հանդես է գալիս որպես երկու խումբ իրավահարաբերությունների սուբյեկտ. կորպորատիվ, որտեղ կոչվում է միանձնյա գործադիր մարմին, և աշխատանքային, որտեղ կոչվում է կազմակերպության ղեկավար⁴⁶⁰:

⁴⁶⁰ Ст'я Шиткина И.С. Отдельные проблемы правового регулирования образования и деятельности единоличного исполнительного органа // Хозяйство и право, 2011 год, № 4, էջ 3:

Միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինների անդամների իրավական վիճակի որոշման հարցում կորպորատիվ և աշխատանքային օրենսդրության փոխհարաբերության հարցը ներկայումս մասնագիտական գրականության մեջ հանդիսանում է բանավիճային⁴⁶¹: Դրա լուծման միակ ճանապարհն օրենքով գործադիր մարմնում ընդգրկվող անձանց հետ կնքվող պայմանագրի քաղաքացիաիրավական բնույթի և պայմանագրի էական պայմանների հստակ ամրագրումն է:

Միանձնյա գործադիր մարմնի (տնօրենի, գլխավոր տնօրենի) հետ կնքվող պայմանագիրը, որպես կանոն, դրույթներ է պարունակում պաշտոնատար անձի իրավունքների և պարտականությունների, վարձատրության և աշխատանքային ժամերի, պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության, հավելավճարների և այլ արտոնությունների, պարտականությունները կատարելիս առաջացած վնասների ապահովագրության, պայմանագրի տևողության, պայմանագրի գործողության ընթացքում և դրա դադարումից հետո որոշակի ժամանակահատվածում գաղտնի կամ գույքային տեղեկատվության չիրապարակման, պայմանագրի գործողության ընթացքում և դրա դադարումից հետո որոշակի ժամանակահատվածում մրցակցող ընկերություններում չաշխատելու (եթե պաշտոնատար անձն ունի փորձառություն, որն էական նշանակություն ունի ընկերության մրցակցային դիրքի համար), պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու հիմքերի և այլնի վերաբերյալ:

Չարկ ենք համարում նշել, որ գործադիր մարմնի անդամների հետ կնքվող պայմանագիրն իր բնույթով գործադր է, հետևաբար, եթե դրանք իրենցից ներկայացնում են խոշոր կամ շահագրգռվածություն ներառող գործարքներ, այդպիսիք պետք է

⁴⁶¹ Տե՛ս, օրինակ՝ Карабельников Б. Р. Трудовые отношения в хозяйственных обществах, М., 2003, Пашин В. М. Правовой статус единоличного исполнительного органа хозяйственного общества: мнимый конфликт гражданского и трудового права // Законодательство, 2006, № 5:

կնքվեն օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ:

Միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն իրականացնող անձի կողմից այլ կազմակերպություններում վճարովի պաշտոններ զբաղեցնելը թույլատրվում է միայն խորհրդի համաձայնությամբ:

Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու միանձնյա գործադիր մարմնի հետ կնքված պայմանագիրը, եթե այդ խնդիրը կանոնադրությամբ վերապահված չէ խորհրդի իրավասությամբ:

Որպես կանոն, միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն իրականացնող անձի հետ կնքված պայմանագիրը լուծվում է վերջինիս անձեռնհասության, պաշտոնը չարաշահելու, գաղտնի տեղեկություններ հրապարակելու, օրենքը և ընկերության կանոնադրությունը խախտելու, ընկերության և նրա բաժնետերերի շահերին հակասող գործողություններ կատարելու և այլ գործողությունների համար:

Սակայն միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն իրականացնող անձի հետ կնքված պայմանագիրը կարող է լուծվել նաև առանց որևէ պատճառաբանության: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ընկերության և միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն իրականացնող անձի միջև կնքված պայմանագրով հստակ սահմանել այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում ընկերությունն իրավունք կունենա վաղաժամկետ լուծել պայմանագիրը: Ինչպես նաև, ելնելով միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմնի լիազորություններն իրականացնող անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, պայմանագրով պետք է կարգավորվեն այդ անձանց տրվող արդարացի փոխհատուցման հետ կապված հարբերությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը և իրավաբանա-

կան անձի այլ կազմակերպարավական ձևերին վերաբերող օրենքները չեն կարգավորում այն իրավիճակը, երբ միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն իրականացնող անձը որոշակի հանգամանքների բերումով չի կատարում իր պարտականությունները, օրինակ՝ գտնվում է արձակուրդում⁴⁶², հիվանդության պատճառով ի վիճակի չէ կատարել պարտականությունները կամ մահացել է: Նման իրավիճակներում հնարավոր է, որ ընկերությունը տևական ժամանակահատվածի ընթացքում մնա առանց գործադիր մարմնի կամ գոյություն ունեցող միանձնյա գործադիր մարմինը չկատարի իր պարտականությունները, որպիսի հանգամանքն ինչպես ընկերության, այնպես էլ այլ անձանց համար կարող է ունենալ անբարենպաստ հետևանքներ (հարկային հաշվետվությունների ուշացում, պարտատերերին գործող պայմանագրերի հիման վրա վճարումների չկատարում, աշխատավարձերի ուշացում և այլն):

Այսինքն, հնարավոր է երկու տարբերակ, երբ գործադիր մարմնի գործառույթները չեն իրականացվում.

- գոյություն չունի ձևավորված գործադիր մարմին,
- ձևավորված գործադիր մարմինը ժամանակավորապես չի կատարում իր ստանձնած պարտականությունները:

Նման իրավիճակում հարց է առաջանում, թե մինչ արդեն իսկ ձևավորված գործադիր մարմնի աշխատանքների վերսկսումը կամ օրենքով սահմանված կարգով ձևավորումը գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես ով պետք է իրականացնի, ինչպիսին են այդ անձի լիազորությունները, և արդյոք այդ անձը հանդիսանում է իրավաբանական անձի գործադիր մարմին կամ նրա ներկայացուցիչ:

Գործնականում միանձնյա գործադիր մարմնի բացակայության ժամանակ, նրա կողմից տրված լիազորագրի հիման

⁴⁶² Այդ մասին առավել մանրամասն տես՝ Шиткина И.С. Генеральный директор в отпуске // Акционерное общество: вопросы корпоративного управления, 2012, № 10 (101), էջեր 33-40:

վրա⁴⁶³ միանձնյա գործադիր մարմնի որոշ գործառույթներ իրականացնում է տնօրենի (գործադիր տնօրենի) տեղակալը⁴⁶⁴, եթե այդպիսիք ընկերությունում կան, կամ տնօրենի կողմից որոշված մեկ այլ անձ: Նման իրավիճակում, եթե կանոնադրությամբ նախատեսվում է տնօրենի բացակայության դեպքում տեղակալի կողմից նրան փոխարինելու մասին դրույթ, ապա այդ անձը կարող է այդ լիազորություններն իրականացնել նաև առանց լիազորագրի: Հարկ ենք համարում նշել, որ այդ անձինք կարող են իրականացնել գործադիր մարմնի միայն այն լիազորությունները, որոնք օրենքով կարող են փոխանցվել այլ անձանց:

Սակայն Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների ճնշող մեծամասնությունում տնօրենի տեղակալի հաստիքը, ինչպես նաև կանոնադրությամբ վերը նշված կանոնակարգումը բացակայում են: Եվ քիչ չեն այն դեպքերը, երբ տնօրենն առանց որևէ մեկի լիազորելու բացակայում է հանրապետությունից, կամ հիվանդանում, կամ մահանում է: Նման իրավիճակներում անհրաժեշտություն է առաջանում ապահովել ընկերության բնականոն գործունեությունը, ինչը հնարավոր է միայն, օրենքով սահմանված կարգով, գործադիր մարմնի օպերատիվ փոխարինման ինստիտուտի ներդրմամբ:

Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և իրավաբանական անձի այս կամ այն կազմակերպարավական ձևին վերաբերող օրենքներով նախատեսել կառավարման մարմինների գործունեության անհնարինության պայմաններում դրանց օպերատիվ փոխարինման ինստիտուտ, որը թույլ կտա տնօրենի (գործադիր տնօրենի) կամ կառավարող կազմակեր-

⁴⁶³ Լիազորագրի հիման վրա գործած անձի կողմից ընկերությանը պատճառված վնասի համար տնօրենը կրում է համապարտ պատասխանատվություն:

⁴⁶⁴ Հայաստանի Հանրապետությունում տնօրենի տեղակալի հաստիքի պարտադիր պահանջ սահմանված է միայն բանկային և ապահովագրական գործունեության ոլորտում ընդգրկված կորպորացիաների համար:

պության (կառավարչի) կողմից պարտականությունների չկատարման կամ այդպիսիք կատարել չկարողանալու դեպքում դրանք դնել տնօրենների խորհրդի նախագահի վրա, իսկ խորհրդի բացակայության դեպքում՝ բաժնետոմսերի (բաժնեմասի, փայի) անենամեծ փաթեթին տիրապետող անձի վրա: Այս եղանակով հնարավոր կլինի ձևավորել ժամանակավոր գործադիր մարմին, որը կգործի այնքան ժամանակ, որքան որ անհրաժեշտ է, օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով, նոր գործադիր մարմնի ձևավորման համար:

Բաժնետիրական ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի (վարչության, տնօրինության) անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև ընկերության և կոլեգիալ գործադիր մարմնի անդամի միջև կնքված պայմանագրով: Կոլեգիալ գործադիր մարմնի անդամի հետ ընկերության անունից պայմանագիրն ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

Գործող իրավակարգավորման պայմաններում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կոլեգիալ գործադիր մարմինը՝ միանձնյա գործադիր մարմնի հետ միաժամանակ, իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը:

Եթե ընկերության կանոնադրությամբ նրա գործերի ընթացիկ ղեկավարումն իրականացնում է նաև կոլեգիալ գործադիր մարմինը, ապա կանոնադրությամբ պետք է հստակ սահմանազատվեն տնօրենի (գլխավոր տնօրենի) և վարչության (տնօրինության) իրավասությունների շրջանակները: Այս դեպքում այն անձը, ով իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի՝ տնօրենի (գլխավոր տնօրենի) գործառույթները, իրականացնում է նաև կոլեգիալ գործադիր մարմնի նախագահի գործառույթները⁴⁶⁵:

⁴⁶⁵ Տե՛ս, օրինակ, «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ի վարչության կանոնակարգը, www.armdb.com:

Որպես կանոն, կանոնադրությամբ ընկերության կոլեգիալ գործադիր մարմնին վերապահվում են հետևյալ լիազորությունները.

- բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի որոշումների կատարման ապահովումը,

- ընկերության օպերատիվ գործունեության կազմակերպման ապահովումը,

- ընկերության գործունեության եռամսյակային, կիսամյակային և տարեկան ծրագրերի մշակումը,

- ընկերության ընթացիկ գործունեության քաղաքականության մշակումը, շուկայի ուսումնասիրությունը,

- ընկերության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ ծրագրերի մշակումը,

- ընկերության գործունեության հարկային և տնտեսական պլանավորումը,

- ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսից ցածր գործարքների կնքումը և այլն:

Կոլեգիալ գործադիր մարմինը գործում է ինչպես կանոնադրության, այնպես էլ խորհրդի կողմից հաստատված՝ ընկերության ներքին փաստաթղթերի (կանոնակարգեր, աշխատակարգեր և այլ փաստաթղթեր) հիման վրա: Դրանք, որպես կանոն, սահմանում են կոլեգիալ գործադիր մարմնի լիազորությունները, նիստերի հրավիրման և անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

Կոլեգիալ գործադիր մարմինն իր գործունեությունն իրականացնում է նիստեր գումարելու միջոցով: Կոլեգիալ գործադիր մարմնի նիստերը կազմակերպում և վարում է ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը): Նիստերի գումարման հաճախականությունը, վարման կարգը և դրանց անցկացման հետ կապված մյուս հարցերը կարգավորվում են ընկերության կանոնադրությամբ կամ ներքին կանոնակարգող փաստաթղթերով:

Վարչության նիստերը պարտադիր կերպով արձանագրվում

են և խորհրդի, վերստուգող հանձնաժողովի, ընկերության աու-
դիտն իրականացնող անձի պահանջով ներկայացվում նրանց:
Տնօրենն ստորագրում է նիստերի ժամանակ կայացված որո-
շումները և կազմված արձանագրությունները: Նա պատասխա-
նատվություն է կրում արձանագրություններում առկա տեղե-
կությունների հավաստիության համար: Վարչության քարտու-
ղարը ևս պարտավոր է ստորագրել նիստերի արձանագրու-
թյունները, եթե դա նախատեսված է ընկերության կանոնադրու-
թյամբ կամ ներքին կանոնակարգող փաստաթղթերով: Կարծում
ենք, որ ճիշտ կլիներ, եթե նիստերի արձանագրություններն
ստորագրեին նիստին ներկա կոլեգիալ մարմնի բոլոր անդամ-
ները: Նման պայմաններում կոլեգիալ գործադիր մարմնի ան-
դամներին պատասխանատվության ենթարկելու և պատասխա-
նատվությունից ազատելու հետ կապված հարցերի ի հայտ գա-
լու դեպքում այդպիսիք կլուծվեն առավել հեշտությամբ, քանի
որ հնարավոր կլինի հստակ պարզել, թե ով որ հարցի վերաբեր-
մամբ ինչպիսի դիրքորոշում է ունեցել:

Տնօրենի և վարչության անդամների վարձատրության ու
ծախսերի փոխհատուցման չափը և կարգը որոշում է տնօրեննե-
րի խորհուրդը, եթե ընկերության կանոնադրությամբ այդ լիազո-
րությունը վերապահված է նրան: Եթե գլխավոր տնօրենն զբա-
ղեցնում է նաև տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը,
ապա այդ հարցի լուծման անաչառությունն ապահովելու հա-
մար առավել արդարացի կլինի, որպեսզի գլխավոր տնօրենի
աշխատավարձի չափը որոշեն խորհրդի այն անդամները, ով-
քեր ընկերությունում գործադիր պաշտոններ չեն զբաղեցնում:

Տնօրենի և վարչության կամ տնօրինության անդամների
չահագրգռությունը բարձրացնելու նպատակով ընկերությունը
կարող է խրախուսել նրանց՝ ինչպես դրամական պարգևավճար-
ներ տալու ձևով, այնպես էլ նրանց բաժնետիրացման հնարա-

վորություն տալով⁴⁶⁶: Ընկերության ղեկավարներին բաժնետիրացման հնարավորություն տալով՝ նրանք առավել շահագրգռված են լինում ընկերության արժեթղթերի արժեքի ավելացման և ընկերության շահութաբերության բարձրացման հարցում:

Ընկերության տնօրինության կազմը սահմանում է տնօրենը (գլխավոր տնօրենը) («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 89, կետ 3, մաս 2)⁴⁶⁷: Վարչության կազմում ընդգրկվում են տնօրենը (գլխավոր տնօրենը), նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը և ընկերության այլ պաշտոնատար անձինք:

Այս առումով հատկանշական է արևմտյան երկրների փորձը, որտեղ ընկերության վարչության (տնօրինության) կազմում, տնօրենից բացի, ընդգրկվում են՝ տնօրենի տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը (ֆինանսական գծով տնօրենը), իրավախորհրդատուն, մարքեթինգի գծով տնօրենը, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, կախյալ և դուստր ընկերությունների գլխավոր տնօրենները, ինչպես նաև վարչության (տնօրինության) քարտուղարը:

Տնօրենի տեղակալը (տեղակալները) հանդիսանում է ընդհանուր հարցերով ղեկավարը: Նա տնօրենի (գլխավոր տնօրենի) բացակայության ժամանակ փոխարինում է վերջինիս, կարող է պատրաստել ընկերության գործառնությունների և դրանց կատարման վերաբերյալ ամսական, եռամսյակային ու տարեկան հաշվետվությունները, ղեկավարել տեխնիկական անձնակազմի վերապատրաստման ծրագրերը և այլն: Գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել անհրաժեշտ գիտելիքներ և փորձ ունեցող ցանկացած ավագ պաշտոնատար

⁴⁶⁶ Այդ մասին առավել մանրամասն տես՝ Finkelstein S., Donald C.H., Albert A.C. Strategic Leadership: Theory and Research on Executives, Top Management Teams, and Boards, Oxford University Press, New York, 2009, էջեր 291-330:

⁴⁶⁷ Կարծում ենք, որ օրենսդրի նման մոտեցումն արդարացած չէ և կոլեգիալ մարմնի կազմը պետք է որոշվի ոչ թե միանձնյա գործադիր մարմնի, այլ խորհրդի կամ ժողովի կողմից:

անձ, իսկ կանոնադրությամբ և օրենքով գործադիր մարմնի անդամներին կարող են ներկայացվել լրացուցիչ պահանջներ:

Գլխավոր հաշվապահը (ֆինանսական գծով տնօրենը) ապահովում է ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ դրամի հոսքի մակարդակը և խելամիտ կերպով դրամի ծախսումը, վարչության մյուս անդամների հետ համատեղ, մասնակցում է ընկերության ռազմավարական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև կարևոր ֆինանսական և ներդրումային որոշումների կայացմանը: Ֆինանսական միջոցների խելամիտ և կշռադատված բաշխումն ապահովելու նպատակով ֆինանսական գծով տնօրենը նաև ղեկավարում և վերահսկում է հաշվապահության, ֆինանսների ու ներդրումային բաժինների աշխատանքը:

Ընկերության իրավական բաժնի ղեկավար հանդիսացող իրավախորհրդատուն նույնպես կարող է լինել վարչության անդամ: Նա ապահովում է ընկերության գործունեության համապատասխանությունը գործող օրենքներին և իրավական այլ ակտերին, համապատասխան մասնագիտական խորհուրդներ է տալիս ղեկավարությանն ու տնօրենների խորհրդին: Վարչության անդամների հետ մեկտեղ, իրավախորհրդատուն ևս մասնակցում է ընկերության ռազմավարական ծրագրերի մշակմանը, նախապատրաստում է ընկերության քաղաքականության ու գործունեության ուղղությունները սահմանող ներքին փաստաթղթերը, ինչպես նաև վերահսկում է դրանց իրագործումը: Իրավախորհրդատուն ապահովում է ընկերության բոլոր փաստաթղթերի ճշգրտությունն ու օրինականությունը: Նա հաճախ բանակցություններ է վարում ընկերության անունից և պաշտպանում է ընկերության շահերը դատարաններում, միջնորդ դատարաններում:

Մարքեթինգի գծով տնօրենը, հանդիսանալով վարչության (տնօրինության) անդամ, պատասխանատու է ընկերության ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկը

խթանելու, ընկերության արտադրանքի իրացման ծավալների ու շահույթի աճի ապահովման համար: Ֆինանսական գծով տնօրենի հետ մեկտեղ, նա մշակում է գնագոյացման ռազմավարությունը, պատասխանատու է շուկայի հետազոտությունների, գովազդային միջոցառումների և ապրանքների իրացմանն օժանդակող այլ գործունեության, ընկերության գործարար համբավի ստեղծման և բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների և այլնի համար:

Մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, կախյալ և դուստր ընկերությունների գլխավոր տնօրենները ևս ընդգրկվում են վարչության կազմի մեջ, քանի որ նրանք իրենց անդամակցությամբ կարող են օժանդակել հիմնական ընկերությանը՝ նրա գտնվելու հիմնական վայրից դուրս իրականացվող գործունեության հարցում:

Վարչության քարտուղարը, հանդիսանալով վարչության անդամ, օգնում է գլխավոր տնօրենին վարչության նիստերը կազմակերպելու և անցկացնելու գործում:

Կոլեգիալ գործադիր մարմնի անդամներն այլ կազմակերպություններում վճարովի պաշտոններ կարող են զբաղեցնել միայն խորհրդի համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Իրավունքի չարաշահման առանձնահատկությունները կորպորատիվ իրավահարաբերություններում

Ինչպես նկատեցինք, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող շուկայական տնտեսությանը ներհատուկ կազմակերպական հարաբերություններն սկզբունքորեն տարբերվում են խորհրդային ժամանակաշրջանի տնտեսության կազմակերպական հարաբերություններից: Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, ելնելով իրենց մասնավոր շահերից, կայացնում են կորպորացիայի ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումներ, կորպորացիայի կառավարման մարմիններն ընդունում և ապահովում են կորպորատիվ որոշումների իրականացումը, որոշում են համապատասխան կորպորացիայի զարգացման ռազմավարությունը, բաշխում են շահույթը կամ իրենց սոցիալական, մշակութային կամ ոչ ամբողջական շահերի իրացման համար ստեղծում են հավելյալ կառուցակարգեր: Արդյունքում՝ կորպորացիաների գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերի նոր լինելը, որոշ հարցերում նաև անկատարությունը, ինչպես նաև կորպորատիվ հարաբերություններում իրավակիրառ պրակտիկայի սակավաթվությունը հանգեցնում են տարաբնույթ իրավախախտումների, իրավաբանական կոնֆլիկտների, որոնց հիմքում ընկած է լինում կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտների կողմից թույլ տրված իրավունքի չարաշահումը:

Իրավունքի չարաշահման ինստիտուտը կիրառելի է իրավունքի տարբեր ճյուղերում, գոյություն ունի տարբեր իրավական համակարգերում և ծառայում է տարատեսակ նպատակների իրականացմանը⁴⁶⁸: Այս խնդրին իրենց աշխատություններ-

⁴⁶⁸ St'u Tridimas Takis, Abuse of Right in EU Law: Some Reflections with particular Reference to Financial Law. Queen Mary University of London, School of Law, Legal Studies Research Paper No. 27/2009, էջ 2:

րում անդրադարձել են նույնիսկ հռոմեացի իրավաբանները, որոնք գտնում էին, որ որևէ մեկը չի կարող իրավախախտ համարվել, եթե նա օգտվում է իր իրավունքից (nullus videtur dolo facere, qui suo jure utitur)⁴⁶⁹:

Խորհրդային շրջանի օրենսդրությունը, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության ներկայիս օրենսդրության, իրավունքի չարաշահման նույնաբովանդակ ուղղակի արգելք չէր նախատեսում: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով առաջին անգամ արգելվեց ինչպես քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, այսինքն՝ վնաս պատճառելու ուղղակի մտադրությամբ (չիկանա)⁴⁷⁰, այնպես էլ իրավունքի չարաշահումն այլ ձևերով, որոնք իրականացվում են առանց վնաս պատճառելու մտադրության, սակայն օբյեկտիվորեն վնաս են պատճառում այլ անձանց, այսինքն՝ անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ իրականացվող իրավունքի չարաշահում:

ԽՍՀ Միության և Հանրապետությունների 1961թ. քաղաքացիական օրենսդրության հիմունքների⁴⁷¹ 5-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում էր, որ քաղաքացիական իրավունքները պահպանվում են օրենքով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց իրականացումը հակասում է այդ իրավունքների նպատակին սոցիալիստական հասարակարգում՝ կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում: Իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս քաղաքացիները և կազմակերպությունները պետք է պահպանեն օրենքները,

⁴⁶⁹ Տե՛ս Գայուս, Դիգեստա, 50.17.55, Памятники римского права. М., изд. Зерцало, 1997:

⁴⁷⁰ Տե՛ս Բարսեղյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Եր., 2009, էջ 70:

⁴⁷¹ Տե՛ս Хрестоматия по истории отечественного государства и права 1917-1991 гг., М., 1997, էջ 361:

հարգեն սոցիալիստական համակեցության կանոնները և կոմունիզմը կառուցող հասարակության բարոյական սկզբունքները:

ՀԽՍՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածը բառացի վերարտադրում էր ԽՍՀ Միության և Հանրապետությունների 1961թ. քաղաքացիական օրենսդրության հիմունքների 5-րդ հոդվածի բովանդակությունը:

Հետագայում ԽՍՀ Միության և Հանրապետությունների 1991թ. քաղաքացիական օրենսդրության հիմունքների 2-րդ հոդվածի 2-ր կետով⁴⁷² սահմանվեց, որ քաղաքացիական իրավունքների իրականացումը չպետք է խախտի այլ անձանց իրավունքները և օրենսդրությամբ պահպանվող շահերը: Իրավունքներն իրականացնելիս քաղաքացիները և իրավաբանական անձինք պարտավոր են հարգել հասարակության բարոյական սկզբունքները և գործարար էթիկայի կանոնները: Քաղաքացիական իրավունքները պահպանվում են օրենսդրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք իրականացվում են դրանց նշանակությանը հակառակ:

Վ.Պ. Գրիբանովի կարծիքով վերոնշյալ հոդվածներում իր արտացոլումն է գտել խորհրդային քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ սոցիալիստական հասարակությունում իրավունքներն իրենց նշանակությանը համապատասխան իրականացնելու սկզբունքը, որը հանդիսանում է կոմունիզմ կառուցող հասարակությունում հասարակական և անձնական շահերի ներդաշնակ համադրման պահանջի իրավաբանական արտահայտությունը⁴⁷³:

Խորհրդային շրջանի օրենսդրությունը, որպես իրավունքների նշանակությանը հակառակ դրանց իրականացման հետևանք, նախատեսում էր այդ իրավունքները պաշտպանելուց պարտադիր հրաժարումը: Իսկ Հայաստանի Հանրապետության

⁴⁷² Стен Хрестоматия по истории отечественного государства и права 1917-1991 гг., М., 1997, էջ 560:

⁴⁷³ Стен Грибанов В. П., Пределы осуществления и защиты гражданских прав. М., 1972, էջ 16:

գործող քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ անձին պատկանող իրավունքները պաշտպանելուց հրաժարվելը հանդիսանում է դատարանի իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը: Յետևաբար, նույնիսկ այն դեպքում, եթե դատարանի կողմից սահմանվի, որ շահագրգիռ անձն իրեն պատկանող իրավունքներն իրականացրել է բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև տեղի է ունեցել այլ ձևերով իրավունքի չարաշահում, դատարանն իր հայեցողությամբ կարող է իրականացնել իրավախախտի իրավունքների պաշտպանություն: Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված սանկցիան դատարանի կողմից պարտադիր կիրառման ենթակա չէ:

Ի տարբերություն նախկինում գոյություն ունեցող՝ սոցիալ-տնտեսական նշանակությանը և հանրային շահին համապատասխան գործելու պահանջի, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման (ՀՀ քաղ. օր., հոդվ. 3, կետ 1) և քաղաքացիների ու իրավաբանական անձանց կողմից քաղաքացիական իրավունքների՝ իրենց կանքով և ի շահ իրենց ձեռքբերման և իրականացման մասին (ՀՀ քաղ. օր., հոդվ. 3, կետ 2) սկզբունքային դրույթներ: Միաժամանակ սահմանվում է, որ քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Ժամանակակից դատական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս հետևություն անել այն մասին, որ դատարանները որոշումներ կայացնելիս և կողմերն իրենց պահանջները հիմնավորելիս հազվադեպ են հղում կատարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածին: Օրինակ՝ armlaw.am, ԻՐՏԵԿ տե-

ղեկատվական համակարգում առկա են վերը նշված հոդվածի կիրառությանը վերաբերող՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ընդամենը չորս՝ թիվ 3-1518 (ՎԴ) 2007, 3-1546 (ՎԴ) 2007, ԵՔԴ/0595/04/08, ԱՐԴ1/0093/02/09⁴⁷⁴ գործերով կայացված որոշումները, որոնք կորպորատիվ իրավահարաբերությունների հետ ըստ էության առնչություն չունեն, սակայն որոշակիորեն արտացոլում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի կիրառման պրակտիկան:

Դատարանը որոշում կայացնելիս հղում է կատարում իրավունքի չարաշահման բացահայտված դեպքերին՝ որպես իրավունքների պաշտպանությունը մերժելու համար լրացուցիչ հիմք կամ հայցադիմումը բավարարելու հիմք, իսկ հաճախ պարզապես սահմանափակվում է սանկցիա կիրառելու հնարավորության մատնանշմամբ: Ըստ էության, դատարանի կողմից հաստատված՝ իրավունքի չարաշահման փաստը՝ որպես իրավունքների պաշտպանությունը մերժելու հիմք, գործնականում չի կիրառվում:

Կարծում ենք, որ դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի ոչ հաճախ կիրառման պատճառը նշված նորմերի ոչ հստակ կառուցվածքն է, ինչպես նաև իրավունքի չարաշահման օրենսդրական բնորոշման բացակայությունը: Գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածը դատական ակտեր կայացնելիս կարող է տարաբնույթ իրավունքի չարաշահումների տեղիք տալ: Այսպես՝ դրա չափազանց լայն մեկնաբանությունը կարող է հանգեցնել օրենքի վրա հիմնված, դատարանի կարծիքով արդար որոշումների կայացմանը, և օրենքը չկիրառելուն, որը դատարանի կարծիքով կդիտվի որպես անարդար (իրավունքի չարաշահում):

Իրավունքի չարաշահման ինստիտուտի օրենսդրական

⁴⁷⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1518 (ՎԴ) 2007, 3-1546 (ՎԴ) 2007, ԵՔԴ/0595/04/08, ԱՐԴ1/0093/02/09 գործերով կայացված որոշումները:

բնորոշման բացակայության պայմաններում, մի շարք տեսաբանների կողմից փորձ է կատարվել տալ իրավունքի չարաշահման տարաբնույթ գիտական բնորոշումներ: Օրինակ՝ Վ. Պ. Գրիբանովը պնդում է, որ իրավունքի չարաշահումը քաղաքացիական իրավախախտման առանձնահատուկ տեսակ է, որն իրականացվում է իրավագոր անձի կողմից իրեն պատկանող իրավունքներն իրականացնելիս՝ կապված իրեն թույլատրված ընդհանուր տեսակի վարքագծի շրջանակներում չթույլատրված կոնկրետ ձևեր օգտագործելու հետ⁴⁷⁵:

Ա. Պ. Սերգենն իրավունքի չարաշահումը բնորոշում է որպես քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների գործողություններ, որոնք իրականացվում են նրանց տրված իրավունքների շրջանակներում՝ սակայն խախտելով դրանց շրջանակները⁴⁷⁶: Իրավունքի չարաշահման հիմնական առանձնահատկությունը, Ա. Պ. Սերգենի կարծիքով, կայանում է նրանում, որ իրավախախտի գործողությունները ձևական առումով հենվում են նրան պատկանող իրավունքի վրա, սակայն դրա կոնկրետ իրացման ժամանակ ձեռք են բերում այնպիսի ձև և բնույթ, որ հանգեցնում են այլ անձանց իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտմանը:

Վ. Ի. Եմելյանովի կարծիքով, սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի չարաշահում է հանդիսանում իրավագոր անձի կողմից օրենքով կամ պայմանագրով սահմանված՝ չկանխատեսված պայմաններում այլ անձի օգտին սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքն իրականացնելու պարտականութ-

⁴⁷⁵ Տե՛ս Грибанов В. П. Пределы осуществления и защиты гражданских прав, М., Издательство МГУ, 1972, էջ 284:

⁴⁷⁶ Տե՛ս Гражданское право: Учебник.: в 3 т. /6-е изд., перераб. и доп. / Н.Д. Егоров, И. В. Елисеев и др.; Отв. Редактор А.П. Сергеев, Ю.К. Толстой.-М.: ТК Велби, Издательство Проспект, 2004. - 1т., էջ 320:

յան խախտումը⁴⁷⁷:

Ս. Գ. Ջայցևան ենթադրում է, որ «իրավունքի չարաշահում» հասկացությունը պետք է ներառի, անկախ իրականացման միջոցից, նորմատիվ նյութում տեղադրված հնարավորությունների իրացման այնպիսի դեպքերը, որոնցից խաթարվում է այլ անձանց իրավաբանորեն ճանաչված ազատությունը⁴⁷⁸:

Վ. Վ. Բորոդինը և Վ. Ի Կրուսն իրավունքի չարաշահումը դիտարկում են որպես մեղավոր վարքագիծ (գործողություն կամ անգործություն)՝ ուղղակի կամ անուղղակի ուղղված հասարակական հարաբերությունների արդարացի (սահմանադրական) կարգի դեմ, պատճառելով վնաս անձնական և/կամ հասարակական բարիքներին և անձանց ոչ անիրավաչափ շահերին՝ արտահայտված մարդու իրավունքներից և ազատություններից օգտվելու և իրավազոր իրավակիրառման կոնկրետացված ձևերում⁴⁷⁹:

Յա. Գ. Յաննև իրավունքի չարաշահումը բնորոշում է որպես գործողություններ կամ անգործություն, որոնք ոչ ուղղակիորեն, ոչ էլ անուղղակիորեն չեն խախտում իրավական նորմեր և իրավունքի սկզբունքներ, սակայն գտնվում են բարոյականության սկզբունքների և սոցիալիստական համակենցության կանոնների հետ հակասության մեջ, խախտում են այդ կանոնները, որոնց առնչությամբ օրենքը պահանջում է, որպեսզի դրանք հարգվեն և պահպանվեն⁴⁸⁰:

Ն. Ս. Մալեինի կարծիքով, օրենքի նորմերը չեն կարող և

⁴⁷⁷ Տե՛ս Емельянов В. И. Разумность, добросовестность, незлоупотребление правами, М.: Лекс-Книга, 2002, էջեր 56-57:

⁴⁷⁸ Տե՛ս Зайцева С.Г. Злоупотребление правом как правовая категория и как компонент нормативной системы законодательства Российской Федерации, Рязань: Поверенный, 2002, էջ 145:

⁴⁷⁹ Տե՛ս Бородин В. В., Крусс В. И. Некоторые философско-правовые аспекты проблемы злоупотребления правами и свободами человека. // Известия высших учебных заведений. Правоведение. 2002. N 6 (245). Издательство Санкт-Петербургского университета, էջ 39:

⁴⁸⁰ Տե՛ս Янев Я. Г. Правила социалистического общежития и их функции при применении правовых норм., Прогресс, М, 1980, էջ 190:

չպետք է սուբյեկտներին տրամադրեն այնպիսի իրավունքներ, որոնց իրացումը վնաս կպատճառի մյուս քաղաքացիներին, կազմակերպություններին և պետությանը: Նման իրավական կարգավորման դեպքում իրավունքի չարաշահումը կբացառվի⁴⁸¹:

Վերը նշվածի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ ամենակատարյալ օրենսդրական կարգավորման պայմաններում էլ իրավունքի չարաշահման հնարավորություն ընձեռող նորմերի գոյությունը հնարավոր չէ բացառել, և իրավունքի չարաշահումը կարել է բնորոշել որպես շեղվող վարքագիծ, իրավախախտման հատուկ տեսակ⁴⁸², որի դեպքում անձի կողմից իրեն պատկանող իրավունքների և օրինական շահերի իրականացումը երրորդ անձանց համար առաջացնում է վնաս, նման գործողությունների կատարումն ակնհայտորեն անհամաչափ է իրավունքներն ու օրինական շահերն իրացնող անձի անձնական շահին, օրենքի ոգուն և հակասում է իրավահարաբերությունների կարգավորման կարևորագույն սկզբունքներից՝ բարի կամքի և ազնվության սկզբունքներին:

Գտնում ենք, որ իրավունքի չարաշահման ինստիտուտի իրավական կարգավորումը միայն քաղաքացիական իրավունքով՝ զգալի արդյունք չի տա, քանի որ այն իրենից ներկայացնում է միջճյուղային կատեգորիա, մասնավորապես, կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահումը կարող է բացասական հետևանքներ առաջացնել իրավունքի այլ ճյուղերով երաշխավորված իրավունքների ու շահերի իրականացման համար, օրինակ՝ վարչական հարաբերություններում իրավունքի չարաշահման դեպքում, քրեական և քաղաքացիա-

⁴⁸¹ Стен Малейн Н. С. Гражданский закон и права личности в СССР.. М.: Юрид. лит., 1981, էջեր 70-71:

⁴⁸² Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ավետիսյան Վ.Դ., Սերոբյան Դ.Մ., Կորպորատիվ իրավահարաբերություններում բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից իրավունքի չարաշահումը որպես իրավախախտման տարատեսակ, «Դատական իշխանություն», 2012, N 12/161, էջեր 52-62:

կան դատավարության շրջանակներում դատավարական իրավունքներն իրականացնելիս և այլն: Քանի որ իրավունքի չարաշահումն ունի միջճյուղային բնույթ, ուստի իրավունքի չարաշահումից պաշտպանությունը պետք է իրականացվի պատասխանատվության մասնավոր և հանրային իրավական միջոցների կիրառման հիման վրա:

Կորպորատիվ իրավահարաբերություններում ևս՝ կորպորատիվ իրավահարաբերության մասնակցի կողմից իրեն պատկանող իրավունքների և օրինական շահերի իրականացումը, որի արդյունքում երրորդ անձանց պատճառվում է վնաս, նման գործողությունների կատարումն ակնհայտորեն անհամաչափ է իրավունքներն ու օրինական շահերն իրացնող անձի անձնական շահին, օրենքի ոգուն և հակասում է իրավահարաբերությունների կարգավորման բարի կամքի և ազնվության սկզբունքներին՝ հանդիսանում է իրավունքի չարաշահում:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը չի բանաձևում իրավունքի չարաշահման հասկացությունը, սակայն կորպորատիվ իրավահարաբերությունները կարգավորող որոշ իրավական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ օրենսդիրն ընդունում է կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման հնարավորությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված սանկցիայից իրավունքի չարաշահում թույլ տվող անձի համար նախատեսում է այլ սանկցիա: Օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն տասը տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնա-

րին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:»:
Նշված հոդվածի վերլուծությունից կարելի է ենթադրել, որ ընկերության բնականոն գործունեությունը դժվարացնող կամ անհնարին դարձնող գործողությունները կամ անգործությունը կարող են լինել ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ, կարող են հանդիսանալ նաև օրենքով վերապահված իրավունքի իրացման կամ չիրացման հետևանք: Օրինակ՝ ընկերության գործադիր մարմնի ղեկավար, միաժամանակ ընկերության 51 տոկոս բաժնեմասի սեփականատեր հանդիսացող մասնակցի կողմից կարող են կնքվել տարատեսակ գործարքներ, որոնց արդյունքում ընկերությունը զրկվում է բնականոն գործունեություն ծավալելու հնարավորությունից: Նման իրավիճակում, եթե նույնիսկ այդ գործողությունները կատարվել են օրենքի պահանջների պահպանմամբ, սակայն իրենց մեջ պարունակում են իրավունքի չարաշահման հատկանիշներ, ընկերության առնվազն տասը տոկոս բաժնեմաս ունեցող մասնակցի պահանջով տվյալ անձը, մեր կարծիքով, կարող է դատական կարգով հեռացվել ընկերությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահումն առկա է հետևյալ չորս պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում.

- իրավահարաբերության մասնակիցն իրավունքն իրականացնում է (գործողությունները կատարում է) գլխավորապես⁴⁸³ այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ,
- բացակայում է իրավունքի իրականացման (գործողութ-

⁴⁸³ Կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին կետում օգտագործված «բացառապես» բառը գործնականում անհնարին է դարձնում այդ նորմի կիրառությունը, ուստի առաջարկում ենք այն փոխարինել «գլխավորապես» բառով, քանի որ գործնականում շատ դժվար է, եթե ոչ անհնարին, ապացուցել այն հանգամանքը, որ անձը գործողությունները կատարում է բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, այլ միշտ կարող է մեջբերվել մի որևէ այլ մտադրություն, որն ունեցել է վնաս պատճառողը, սակայն նրա համար գլխավոր նպատակը հանդիսացել է երրորդ անձին վնաս պատճառելը:

յունների կատարման) համար անհրաժեշտ հիմնավոր կամ օրենսդրական շարժառիթ,

- իրավունքի իրականացումը (գործողության կատարումը) հակասում է հանրային բարքերին (բարոյական նորմերին), բարի կամքի և ազնվության սկզբունքին,

- իրավունքն իրականացվում է (գործողությունը կատարվում է) այդ իրավունքի իրականացման համար օրենքով ամրագրված նպատակին հակադիր կերպով⁴⁸⁴:

Ինչպես արդեն նշվեց, կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտային կազմի ուսումնասիրությունը թույլ է տալիս կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցներին բաժանել երկու խմբի.

- կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմին առնչվող սուբյեկտներ,

- կորպորատիվ իրավահարաբերությունների արտաքին կողմին առնչվող սուբյեկտներ:

Կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմին առնչվող սուբյեկտներ են կորպորացիայի մասնակիցները (անդամները, բաժնետերերը և այլն), կառավարման մարմինները, ինչպես նաև կորպորացիայի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները:

Կորպորատիվ իրավահարաբերությունների արտաքին կողմին առնչվող սուբյեկտների շարքն են դասվում կորպորացիայի գործունեությունը կարգավորող պետական մարմինները, կոնտ-

⁴⁸⁴ Նշված հիմքերի առկայությամբ ՀՀ-ում իրավունքի չարաշահման օրինակներին առավել մանրամասն անդրադարձել ենք՝ Аветисян В. Д. Особенности консолидации акций и проблемы правового регулирования в Республике Армения: “Правонарушение и юридическая ответственность”, Материалы международной научно-практической конференции, Тольятти, 2012, էջեր 1-13, Ավետիսյան Վ. Դ., Սերոբյան Դ. Մ. Կորպորատիվ իրավահարաբերություններում բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից իրավունքի չարաշահումը որպես իրավախախտման տարատեսակ, «Դատական իշխանություն», 2012, N 12/161, էջեր 52-62:

րագեները և այլն:

Գործնականում, կորպորատիվ իրավահարաբերություններում, հենց վերը նշված սուբյեկտներն են, որ հանդես են գալիս որպես իրավունքի չարաշահում թույլ տվող և դրա արդյունքում որպես տուժող հանդես եկող անձինք:

Կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումն իրենից ներկայացնում է բարդ իրավական երևույթ, որի էության ուսումնասիրման և բացահայտման գործում կարևոր նշանակություն ունի կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման դասակարգումը⁴⁸⁵, ինչը հնարավորություն կընձեռի համակարգել նշված հարցի վերաբերյալ գոյություն ունեցող գիտելիքները, ինչպես նաև տարբեր չափանիշների հիման վրա ստանալ կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահման վերաբերյալ նոր գիտելիքներ:

Օրինակ՝ ըստ Ի. Կլեպիցկիի,⁴⁸⁶ բաժնետիրական չարաշահումների հիմնական տեսակները պայմանականորեն կարելի է բաժանել երեք մեծ խմբի.

- կազմակերպության կառավարման նկատմամբ ոչ իրավաչափ վերահսկողություն,
- վստահության չարաշահում,
- չարաշահում արժեթղթերի շուկայում:

Կարծում ենք, որ վերը նշված դասակարգումն ամբողջությամբ չի արտահայտում կորպորատիվ իրավահարաբերություններում առկա իրավունքի չարաշահման տարբեր տեսակները, ուստի առաջարկում ենք կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահման դասակարգումն իրականացնել հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

- կախված իրավունքի չարաշահման ձևից՝

⁴⁸⁵ Տե՛ս Тимаева И.Т. Злоупотребление правом в корпоративных отношениях: вопросы квалификации, способы гражданско-правовой защиты, дисс. ... канд. юрид. наук, М., 2007, էջ 56:

⁴⁸⁶ Տե՛ս Клепичский И. Ответственность за акционерные злоупотребления. // Законность. 1996, N 5 (739), էջ 12:

✓ իրավունքի չարաշահում, որն իրականացվում է (գործողությունը կատարվում է կամ անգործությունը դրսևորվում է) գլխավորապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ,

✓ իրավունքի չարաշահում, երբ բացակայում է իրավունքի իրականացման (գործողության կատարման կամ անգործության դրսևորման) համար անհրաժեշտ հիմնավոր կամ օրենսդրական շարժառիթը,

✓ իրավունքի չարաշահում, երբ իրավունքի իրականացումը (գործողության կատարումը կամ անգործության դրսևորումը) հակասում է հանրային բարքերին (բարոյական նորմերին), բարի կամքի և ազնվության սկզբունքին,

✓ իրավունքի չարաշահում, երբ իրավունքն իրականացվում է (գործողությունը կատարվում է կամ անգործությունը դրսևորվում է) այդ իրավունքի իրականացման համար օրենքով ամրագրված նպատակին հակադիր կերպով:

- Կախված կորպորատիվ իրավահարաբերությունների տեսակից՝

✓ կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմի հետ կապված հարաբերություններում իրավունքի չարաշահում (օրինակ՝ մասնակիցների՝ ընկերության կառավարմանը մասնակցելուն և ընկերության գործունեությունը վերահսկելուն ուղղված հասարակական հարաբերությունները, մասնակիցների՝ միմյանց միջև առաջացող հարաբերությունները և այլն),

✓ կորպորատիվ իրավահարաբերությունների արտաքին կողմի հետ կապված հարաբերություններում իրավունքի չարաշահում (օրինակ՝ կորպորացիայի՝ որպես գործարարական գործունեության սուբյեկտի գործունեությանը վերաբերող հասարակական հարաբերությունները՝ կորպորացիաների ստեղծման և գործունեության դադարեցման գործընթացի պետական կարգավորումը և այլն):

- Իրավունքի չարաշահման սուբյեկտային կազմից կախված՝

✓ կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմին առնչվող սուբյեկտների կողմից իրավունքի չարաշահում՝ կորպորացիայի փոքրամասնություն կազմող և խոշոր մասնակցություն ունեցող մասնակիցներ (անդամներ, բաժնետերեր և այլն), կառավարման մարմիններ՝ ընդհանուր ժողով, խորհուրդ և գործադիր մարմին, ինչպես նաև կորպորացիայի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները,

✓ կորպորատիվ իրավահարաբերությունների արտաքին կողմին առնչվող սուբյեկտների կողմից իրավունքի չարաշահում՝ կորպորացիայի գործունեությունը կարգավորող պետական մարմիններ, կոնտրազենտները և այլն:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման հիմնախնդրի գիտական մակարդակով ուսումնասիրված չլինելը, պրակտիկայում կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման դեպքերի տարածվածությունը, մասնավորեցման արդյունքում ստեղծված կազմակերպություններում խոշոր բաժնետերերի կողմից փոքրամասնություն կազմող բաժնետերերից ձերբազատվելու անհագուրդ ցանկությունը, օրենսդրության անկատարությունը և իրավակիրառ պրակտիկայի սակավաթիվությունը ներկայումս արդիական են դարձրել սույն գլխում նշված հիմնահարցերի օրենսդրական մակարդակով կարգավորումը, ինչը դրական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետությունում կորպորատիվ հարաբերությունների բնականոն զարգացման և տնտեսության աճի վրա:

VAHRAM DAVID AVETISYAN

CONTEMPORARY PROBLEMS OF CORPORATE LEGAL RELATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA (AT AN EXAMPLE OF ECONOMIC SOCIETIES)

Summary

Upon the establishment of the independence of the Republic of Armenia, the society was faced with the fact of reconsideration and alteration of many public conscience values. Due to the transition to a market economy and in order to perform new economical systems, there came required to develop necessary legal concepts and mechanisms, among which the corporations and the corporate law have their special place.

The main form of citizens' collective participation in civil circulation is the form of legal entity. And modern social life, both in its private and public spheres, cannot be represented without various associations, created by their participants to achieve particular goals.

Organizational relationships inherent in modern market economy principally differ from those of the soviet period economy. Currently, the subjects of civil law make decisions to create, reorganize or liquidate a corporation, being guided by private and public methods of relationship regulation and based on their own interests; the authorities of the corporation adopt and ensure the implementation of corporate decisions, determine the development strategy for the corresponding corporation, distribute the profit or create additional mechanisms to accomplish their social, cultural, and nonprofit interests, that is, organize and direct corporation's activity by renewed civil law principles.

At present, corporate governance is considered an important element in improving the economic growth and efficiency, as well as in strengthening the investors' confidence. Effective corporate governance should encourage the pursuit of corporate governance bodies to achieve the objectives consistent with the interests of the society and its founders, as well as to facilitate the efficient control.

Proper corporate governance gives the societies the opportunity to enhance their competitiveness, efficiency and expansion of economic activity, raise the necessary finance for the economic growth, and promote the protection and cooperation with the beneficiaries having legal interest in the activity of the society.

The new reality has also set the civil law science in the face of qualitatively new actuals, and this allows to state the expansion of social relations circle regulated by civil legislation, and to characterize the corporate relationships as an independent, comprehensive type of civil relations, which, being based on private and public methods of regulation, handle the organizational and managerial relations connected with the benefits of closely associated property and non-property nature.

Entering the market economy in severe conditions of the transition to the new socio-economic relations, the law-making and law-enforcement practice in the Republic of Armenia demonstrated that hastily and superficially conducted legislative changes, as well as the legislation itself which is the result of inappropriate and almost mechanical adoption of different legal systems, can not comprehensively regulate economic relations and protect the rights and interests of business entities.

Ineffective regulation of a number of corporate relations by the legislation of the Republic of Armenia, lack of clear distinction between the interest of the society and of major shareholders, as well as foreign law adoption with no response to the national specifics, have created a situation in which principal shareholders

are able to free themselves from minor shareholders (members), take hold of their dividends without any justification and at the expense of society's public funds or shareholders' dividends, thus, easily implementing the vicious phenomenon of centralizing the capital in the hands of several individuals.

Taking into account all the above mentioned, currently there is certain need to reconsider and reevaluate the role and importance of corporate legal relations, corporate type legal entities, controlling and controlled corporations, and corporate governance, as well as to protect the rights of a corporation participant, and to solve both theoretical and practical problems encountered in the field.

Corporate relations specifics, as well as the problems that arise while establishing, reorganizing and liquidating the corporate type legal entities became the main subject of study in current research, based on the above mentioned observations. Special attention is paid to corporate securities, to the problems of implementation and protection of corporation members' rights, to corporate governance, management models, etc.

The paper also analyzes the jurisprudence related to mentioned issues, and presents comparative analysis of foreign countries legislation and legal practice, which allowed to reveal the existing problems in the Republic of Armenia and to present concrete proposals on alteration of the civil legislation of the Republic of Armenia and on improving its enforcement practice.

АВETИCЯН ВAГРAМ ДAВИДОВИЧ

**АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ КОРПОРАТИВНЫХ
ПРАВООТНОШЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(НА ПРИМЕРЕ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ)**

Резюме

После установления независимости в Республике Армения возникла необходимость переосмысления и изменения многих ценностей общественного сознания. С переходом к рыночной экономике для обслуживания новых экономических отношений возникла насущная потребность разработки новых правовых понятий и механизмов, в ряду которых свое особое место занимают корпорации и корпоративное право.

В гражданском обращении основной формой коллективного участия граждан является формат юридического лица, а современную общественную жизнь, как в частной, так и в общественной сфере, невозможно представить без разнообразных объединений людей, созданных их участниками для достижения той или иной цели.

Присущие современной рыночной экономике организационные отношения принципиально отличаются от организационных отношений экономики советского периода. В настоящее время субъекты гражданского права, руководствуясь частными и общественными методами регулирования отношений и исходя из своих частных интересов, принимают решения о создании, реорганизации и ликвидации корпорации, органы управления корпорации принимают и обеспечивают осуществление корпоративных решений,

определяют стратегию развития соответствующей корпорации, распределяют прибыль или создают дополнительные механизмы для осуществления своих социальных, культурных или некоммерческих интересов, то есть организуют и руководят деятельностью корпорации по обновленным гражданско-правовым принципам.

В настоящее время корпоративное управление считается важным элементом повышения эффективности и роста экономики, а также укрепления доверия инвесторов. Эффективное корпоративное управление должно стимулировать стремление органов корпоративного управления к достижению целей, соответствующих интересам общества и его учредителей, а также способствовать осуществлению эффективного контроля.

Должное корпоративное управление дает возможность обществам повысить свою конкурентоспособность, эффективность, привлечения необходимых для экономического роста финансов, а также способствовать сотрудничеству и защите прав бенефициаров, имеющих законные интересы в деятельности общества.

Новая действительность поставила перед качественно новыми реалиями также и науку гражданского права, что позволяет констатировать факт расширения круга общественных отношений, регулируемых гражданским законодательством, и характеризовать корпоративные правоотношения как самостоятельный, комплексный вид гражданских правоотношений, которые, основываясь на частных и общественных методах регулирования общественных отношений, регулируют организационно-управленческие отношения, связанные с благами имущественного и тесно связанного с ними неимущественного характера.

Как показала правотворческая и правоприменительная практика во входящей в рыночные отношения Республике Армения, поспешно и поверхностно проведенные законодательные изменения в тяжелых условиях перехода к новым социально-экономическим отношениям, а также законодательство, являющееся результатом неуместного, и практически механического заимствования из разных правовых систем, не в состоянии на должном уровне комплексно регулировать экономические отношения, обеспечить защиту прав и интересов хозяйствующих субъектов.

Несовершенное регулирование ряда корпоративных отношений законодательством Республики Армения, отсутствие четкого разграничения между интересами общества и крупных акционеров, заимствования иностранного права без учета национальных особенностей – создали ситуацию, в которой крупные акционеры без какого-либо обоснования могут за счет финансовых средств общества, а также полагающихся акционерам дивидендов, избавиться от составляющих меньшинство акционеров (участников), овладеть их дивидендами и беспрепятственно осуществить порочное явление централизации капитала в руках нескольких индивидуумов.

Учитывая вышеизложенное, в настоящее время необходимо переосмыслить и переоценить роль и значение корпоративных правоотношений, юридических лиц корпоративного типа, контролирующих и контролируемых корпораций, корпоративного управления, обеспечить защиту прав участника корпорации, решить как теоретические, так и практические проблемы, возникшие в данной сфере.

Исходя из вышеизложенного, в данной работе предметом изучения стали особенности корпоративных отношений, а также проблемы, возникающие при создании,

реорганизации и ликвидации юридических лиц корпоративного типа. Отдельное внимание уделено корпоративным ценным бумагам, проблемам реализации и защиты прав участников корпорации, корпоративному управлению, управленческим моделям и т.д.

В работе проведен анализ судебной практики, относящейся к указанным проблемам, а также сравнительный анализ законодательства и судебной практики иностранных государств, что позволило выявить имеющиеся в Республике Армения проблемы в данной области и представить конкретные предложения изменения гражданского законодательства Республики Армения и совершенствования практики его применения.

Ավետիսյան Վահրամ Դավիթի

***Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը
Հայաստանի Հանրապետությունում
(տնտեսական ընկերությունների օրինակով)***

Vahram David Avetisyan

***Contemporary Problems of Corporate
Legal Relations in the Republic of Armenia
(at an example of economic societies)***

Аветисян Ваграм Давидович

***Актуальные проблемы корпоративных
правоотношений в Республике Армения
(на примере хозяйственных обществ)***

Էջադրումը՝ Ա. Պետրոսյանի

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպաքանակը՝ 500:
Ծավալը՝ 28 տպ. մամուլ: